Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԱՂՕՐԵՔԻՐՔ

Օրի

ԱՏԵՐԱՊԱՏԱՐԱՆ

ՅԵ. ՊՈՒՆԱՅ ԽԵՍԽԽ

ՎԵՆԵՏԻԿ,
ի Ս. Ղազար
1849

21540

ՊՇՏԱԿԱՆ
ՄՈՒԶԵՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ
32590

ԲԱՆ ԱՌ ՎԵՐԾԱՆՈՂՍ

Մարմին ցաւադնեալ՝ հոգին վշտացեալ ոչ գտանէ յայսմ աշխարհի միխիթարութիւն, դառնայ յԱստուած գըտանել զիւր միխիթարութիւն. և զի ապօթքն է՝ որ յայսմ աշխարհի կենակցիլ տայ մարդոյ ընդ Աստուծոյ, փափադելով դիմէ յապօթան գտանել զիւր միխիթարութիւն։

Այսպէս ահա դէպ եղև և բարեյիշատակ անձինն, որոյ հարեալ՝ի ժանտախտէ և զերծեալ, բայց՝ի փարատելն ժանտախտին՝ եթող՝ի մարմնի նորա այլ խօթութիւն անբուժելի, ուստի բազում գեղոլիւք և բժշկաց սատարութեամբ ոչ կարացեալ զերծանել մինչև ցմահ իւր, վարէր հանապազօր կեանս վշտագինս, և ոչ կարէր գտանել ուստեք միխիթարութիւն, բայց եթէ քաղցրանալով յապօթս մշտամուռնչս։ Յետ զամս քանի այսպէս տա-

ռապէլոյ 'ի հիւանդութեան իւրում, այն ինչ մերձենայր օրհաս մահուն իւրոյ, կատկաւ պատուիրէր ձեռնտու լինել 'ի ծախս տպագրութեան այսր մատենի աղօթագրոց, առ 'ի նոյն փութացուցանել յաղօթասիրութիւն և զայլս։

Արդ ոչ կամեցեալ 'ի թագաւորեան յանծանօթս իմն թողուլ զնիշատակ գեղեցիկ երախտեացն, աղերս արկեալ աղաչեմք զընթերցողսդ, 'ի քաջալերանաչն եռանդեամբք թեւակոխելով 'ի մաղթանս աղօթից այսր փոքրիկ մատենիս, յիշել և զհանդուցեալ հոգի սորա, ընդ նմին և զաշխատասիրողն աղօթից։

ՀԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ԱՂՕԹԻՑ

Աղօթք ընելու շատ մեր պէտք է ունենանք, մանաւանդ աս իրիք պատճառին համար։ Մէյ-մը որ՝ ինչ որ պէտք է մեզի թէ հոգևոր և թէ մարմնաւոր, աղօթքով միայն կրնանք առնել Աստուծմէ. ինչպէս կը խրատէ սուրբ գիրքը. Խնդրեցէք և առնուցուք։ Ուստի աղօթք ընելը՝ է մեր շահիլը և մեր վաստակիլը։

Երկրորդ՝ աղօթք ընելով կը գովենք կը փառաբանենք զԱստուած աս աշխարհիս մէջ, որով Աստուած ալ իրը թէ պարտական կ'ըլլայ մեզի անդիի աշխարհքը վարձք հատուցանել իր արքայութիւնը։ Ինչպէս որ մէկ մենծ իշխանի մը գովասանք զուրցելու ըլլանք, ան իշխանն ալ հարկաւորապէս մէկ վարձք մը կուտայ. և առաւել Աստուած որ մեզ ատոր համար ստեղծեր է՝ որ զինքը սիրենք, զինքը պաշտենք, որ ինքն ալ մեր մեռնելէն ետև մեզի վարձք տայ իր արքայութիւնը, ինչպէս պզտիկուց կը սորվեցընէ ամենուն սուրբ եկեղեցին՝ քրիստո-

նէակեան խրատովը։ Արդ՝ զԱստուած պաշտել կըլլայ, մէյմը իրեն համար խաչ ու նեղութիւն քաշելով, մէյմըն ալ աղօթքով փառաբանելով։ Սատանկ ահա Պրիսոոս տէրն մեր գիշերները ինչուան լոյս միշտ աղօթքի հետ կըլլար, միայն զԱստուած փառաբանելով. անով զինքը օրինակ տալով մեզի սորվեցընել ուզեց. ասկէց Ի՛նչ զատ շատ հեղ պատուէրք ալ դրաւ որ աղօթքի հետ ըլլանք։

Երրորդ՝ թէ և մէկ շահ մը չունենայինք աղօթքէն, ան առնեն ալ պէտք էր որ սիրով աղօթքի վազէինք. վասն զի աղօթք ընել ըսելը՝ Աստուծոյ առջին ելլել, Աստուծոյ հետ խօսակցել ըսել է, արդ՝ աս միայն հերիք փառք պարծանք է մարդուս, ինչպէս կըսէ Խոսրով վարդապետը։

Ա՛ս է ահա որ սատանան մեր մէկ բանին անանկ չինախանձիր ինչպէս աղօթքի. ուրիշ ինչ աղէկ գործք ընենք, մենք մեզի ենք, ու իբր թէ Աստուծմէ հեռու. բայց աղօթք ընելու առնը մարդս շիտակ Աստուծոյ առջին կը կենայ, իրեն հետը կը խօսակցի կը խօսի։ Սատանան կը տեսնայ զինքը՝ որ թէպէտ մենք շատ գերազանց ստեղծուած մըն է, բայց չիկրնար Աստուծոյ առջին համարձակ ելլալ, չիկրնար բարեկամի կամ՝ զաւակի մը պէս Աստուծոյ հետ ընտանեբար խօսակցիլ. ասոր դէմ մեզ կը տեսնայ խեղճ հողէղէն ստեղծուած մը, բայց սըրտերնիս համարձակ կը բանանք Աստուծոյ դէմը՝ ինչպէս մէկ զաւակ մը իր հօրը կը բանայ. թէ որ մեղքի մէջ ենք՝ զղջումով աղօթք ընելով

թաղութիւն կառնենք մեղքերնուս. թէ որ արդար ենք՝ աւելի շնորհք կառնենք յԱստուծոյ։

Այս բանիս չիկրնալով դիմանալ ասոնցմէ, կերպ կերպ հնարքներ կը փնտռէ արդելք դնելու. երբեմն մէկ չուզելութիւն մը կը բերէ սրտին մէջը, մարդուս ծանր բան մը կերևցընէ աղօթքը. երբեմն իրաւցընէ սիրտը բռնել կուտայ. կը գոցուի, շունչ չիկրնար առնել. շատ հեղ մարդս աղօթքի նստելու ըլլայ, ան առենը քուն մը կը բերէ սատանան որ առաջ չունէր։ Եւ թէ որ մէկ քրիստոնէ մը աս բաներուս մէջ ոչիկ չիդնելով աղօթքի նստի, ան առենը շատ հեղ մէկ ձանձրութիւն մը՝ մէկ անհանդստութիւն մը կը բերէ որ՝ մարդս կը ջանայ աղօթքը շուտ լմնցընել՝ ան նեղութենէն խաղրտելու համար։ Երբեմն ալ մարդուս ընելու բաները գործքերը աղօթքի առեն պայծառ խտակ միտքը բերել կուտայ. ոմանց այնչափ ասատիկ կըլլայ աս փորձութիւնս որ իրենց աղօթք ընելու առենը՝ կ'ըլլայ աղէկ առեն իրենց դրսի ընելիք բաները մտածելու։ Շատ մարդու ալ միտքը կը տարտղնի կը ցնդի, անանկ որ՝ ինքն ալ չիգիտէ որ աղօթքի առեն ուր կը քալէ իր միտքը։

Անանկով շատ պատերազմ կը քաշէին աս բերը աղօթքի առեն, բայց իրենք Քրիստոսի օրինակին հետևելով անդադար աղօթքի հետ կըլլային, Աստուծմէ օգնութիւն կը խնդրէին. անանկ որ՝ ոմանք բոլորովին խաղրտեցան այն փորձութիւններէն. աղօթքի առեն պայծառ խտակ աստուածային բաները մտածելով կը

գմայլէին կը վերանային։ Ոմանք միշտ ջանալով պատերազմելու մարդերին ժողվելու համար՝ մեծ վարձք առին Աստուծմէ։

Աստոց և մանաւանդ Քրիստոսի օրինակին դուն ալ հետևելով նայէ որ աղօթքի փոյթ ունենաս, որչափ որ միտքդ ցնդի՝ չմոռնաս. միտքդ վրայ ժողվես, Աստուծոյ տանիս, ջերմեռանդութեամբ ընես առ դրբիս մէջի գրած աղօթքները, որ աշխարհաբառ ըլլալով քեզի հեշտ է հասկընալը։ Երբոր առանկ ջերմեռանդութեամբ աղօթքի հետ ըլլաս, յիշէ ան առնելը ան հոգին ալ որ պատճառ եղաւ առ աղօթքներս տալել տալու. և ան հոգին ալ որ աշխատեցաւ շինելու։

Rezzonico. A. Viviani inc.

Z przyczyny Pana Gwarantowanej
do pisma wolnego przystąpiłem.

ԱՌԱՔՈՏԵԱՆ

ԱՂՕԹՔ

Ի յառնելն յանկողնոյ.

Ամենասուրբ Երրորդութիւն և միասնաւորութիւն, անբաւ գոհութիւն ու շնորհակալութիւն մատուցանեմ, որ զիս անարժանս՝ ողջ առողջ հասուցեր ինչուան այս առտու, ու նորէն կեանք տուիր: Այսօր ալ պահէ զիս ամէն փորձանքներէ, երևելի ու անտեսանելի թշնամիներէ: Շնորհէ որ՝ այսօր առանց մեղաց քու ծառայութեանդ մէջը անցընեմ, քեզ փառաւորեմ, իմ ամէն խօսքս և գործս մարմնաւոր ու հոգևոր՝ 'ի փառս քո ընեմ:

Աղօթք առաւօտեան.

Տէր Եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո։ Դու տէր իմ, թէ որ իմ շրթունքս բանաս, այն առենը իմ բերանս ալ կը բացուի, քու օրհնութիւնդ կը կարդայ։ Դու տէր իմ, բերանս բաց, լեզուս շարժէ, սիրտս փղձկեցու, որ քու առջիդ աղօթք ընեմ։ Ճշմարիտ լոյսդ Քրիստոս, առաւաւն լուսոյն հետ լուսաւորէ կիս, որ միտքս բացուի, սիրտս շարժի քեզ օրհնել, քեզ փառաւորելու հետ ըլլալ, որ ես ալ սաղմոսերգուին հետ կարենամ գուրցել։ Պատրաստ է սիրտ իմ Աստուած, պատրաստ է սիրտ իմ, օրհնել և սաղմոսել քեզ փառք իմով։ Վասն զի զքեզ օրհնել՝ մարդուս փառք է, քեզի աղօթք ընել՝ մարդուս շահն է։ Լուսաւորէ կիս տէր իմ, մեղքին գէշութիւնը ճանչնալ, մեղքէն հետ կենալ, առաքինութիւնով բարեգործութիւնով զարդարուիլ, աղօթք ընելու ատէ

Աղօթք շնորհակալութեան.

Գոհութիւն և փառաբանութիւն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, որ անքաւ բարերարութեամբ կիս լցուց։ Ես ոչինչ էի, դու ամենասուրբ Երրորդութիւն և մի ստուածութիւն կիս մարդ ստեղծեցիր, այս աշխարհս ամ. մեն բարեօք զարդարեցիր, երկինքը աստղներով, գետինը գոյնզգոյն ծաղիկներով, օդը զանազան թռչուններով, ջուրը ձկներով։ Այս ամէն բանը ը. րիր. ինծի ալ հինգ զգայարանք տուիր որ վայելեմ. աչքս կը վայելէ զանազան գեղեցիկ գուներով ծաղիկները, ականջս կը լսէ թռչուններուն անուշ ձայնները, բերանս կառնէ անուշ պտուղներուն համերը։ Ասոնք ինծի համար ստեղծեցիր։ դիս ալ ամէն արարածոց վրայ թագաւոր դրիր։ Մինչ մը տուիր որ քանի նայիմ քու ստեղծուածներուդ վրայ, կիմանամ արարածոց գեղեցիկ հաճելիութիւնը, մէկմէկէ գեղեցկութիւնը, որ անասունները

չեն կրնար իմանալ. անկէց կիմանամ քու աղէկութիւնդ, իմաստութիւնդ ու ամենակարողութիւնդ։

Հիմա այս ամեն բարիքներուդ վը-րայ չնկրնալով ուզածիս պէս գոհութիւն մատուցանել քեզի, տէր իմ, ան ամեն արարածները մէկիկ մէկիկ կը կանչեմ սաղմոսերգուին հետ, որ քեզ գոհանան, քեզ օրհնեն։ Օրհնեցէք զԱստուած արեգակն և լուսին, օրհնեցէք զնա ամենայն աստեղք և լոյս։ Օրհնեցէք զԱստուած երկինք երկնից, և ջուրք։ Օրհնեցէք զԱստուած լերինք, ծառք պտղաբերք, աղբիւրք, ծովք և գետք։ Օրհնեցէք զԱստուած գազանք, և ամենայն անասունք, սողունք, և ամենայն թռչունք։ Օրհնեցեն զնա երկինք և երկիր, ծով, և ամենայն որ զեռայ 'ի նոսա։ Օրհնեցի և փառաւորեցի ամենասուրբ Երրորդութիւն այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Սաղմոս թ. և Ը.

Գոհացայց զքէն տէր բոլորով սրտիւ իմով, պատմեցից զամենայն սքանչելիս քո։

Ուրախ եղէց և ցնծացայց 'ի քեզ. սաղմոս ասացից անուան քում բարձրեալ։

Ո՞վ է մարդ, զի յիշես դու զնա. կամ որդի մարդոյ, թէ այց ինչ արասցես դու նմա։

Փոքր ինչ խնարհ արարեր զնա քան զհրեշտակս քո, փառաւք և պատուով պսակեցեր զնա, և կացուցեր զնա 'ի վերայ ամենայն ձեռակերտաց քոց։

Զամենայն ինչ հնազանդ արարեր 'ի ներքոյ ոտից նորա, զխաշն և զարջառս և զամենայն ինչ։

Տէր տէր մեր, զի՞ սքանչելի է անուն քո յամենայն երկրի։

Այլ աղօթք.

Ամենք ամենը մարմնաւոր բարիք. ներն են՝ որ ինծի տուիր, որպէս զի

վայելելով. քեզ սիրեմ, քեզ օրհնեմ, փառաւորեմ, ու քու պատուիրանք-ներդ պահեմ։ Հապա հոգւոր բարիք-ներուդ ու՞ր մէկը համրեմ, ու՞ր մէկը յի-շեմ, որ ամենէն աւելի ինծի պարգե-ւեցիր։ Ես չունէի լոյս հաւատոյ, դու տէր՝ վրս սուրբ ուղղափառ հաւատքի մէջ ստեղծեցիր, բարի ծնողաց մէջ ունուցիր, պահապան հրեշտակի յանձ-նեցիր, սուրբ աւազանին միրտուԹեան հատուցիր, Հոգւոյն սրբոյ շնորհացը արժանացուցիր։ Յոքը ես ապերախտս՝ երբոր կորանցուցի մեղքով իմ անմե-զուԹեան շնորհքս, դու Բանդ Աս-տուած մարմնացար, մարդ եղար, իմ քաշելու տանջանքներս դուն քաշեցիր. անդին արիւնդ խաչին վրայ Թափելով ինծի համար մեռար որ ես չմեռնիմ չի-դատապարտուիմ յաւիտենական տան-ջանօք։ Իմ մեղաւոր բնուԹիւնս դիտ-նալով, խորհուրդ խոստովանուԹեան ու ապաշխարուԹեան դրիր, որ Թէ որ մեղանչեմ, նորէն ապաշխարելով՝ քիչ մը աշխատելով խոստովանելով մեղացս ԹողուԹիւն ու արձակում՝

դանում։ Այահերկնք չեղաւ, գիտէիր որ՝ հոգիս սկար է, կերակուր կուզէ, քաւ սուրբ մարմնիդ ու արիւնդ, զքեզ ինքդ կերակուր կենդանարար տուիր ինձի. անով հոգիս կը զօրանայ, երկրաւոր բաներըը ոչինչ կերևնայ, երկնայիններըը անուշ կու գայ։

Այս ամեն ըրած բարիքներուդ ի՞նչ շնորհակալութիւն մատուցանեմ. քեզ տէր իմ, կամ ինչ խօսքերով գոհանամ. միայն սուրբ հրեշտակաց բերանը. քեզ կրնայ օրհնել. այն երկնային զօրութեանց օրհնէնքը գովասանքը. քեզ մատուցանեմ. անով. քեզ մեծացուցանեմ, ըսելով. Օրհնեցէք զնա ամենայն հրեշտակք նորա, օրհնեցէք զնա ամենայն զօրութիւնք նորա։

Այլ աղօթք.

Թագաւոր թագաւորաց, տէր և արարիչ ամենայնի, առատան ժամուս նոր կեանք կու տաս, նոր օր. ես որչափ անարժան եմ, դուն այնչափ յաւերբերարութիւնդ վրաս կը շատցնես,

որ մէկին շնորհակալ ըլլամ տէր իմ։ Երբոս հողը գնելով, գեղինը խնելով անանկ կաղաչեմ ու տէր իմ և Թագաւոր. այսքան ըրած բարերարութիւնդ յիշելով մի յիշեր իմ ապերախտութիւնս, որ ըրեր եմ քեզի դէմ մեղանչելով. մի յիշեր իմ ծուլութիւնս, իմ զանցառութիւնս, որ ինծի ըրած աղէկութիւնդ չեմ յիշած, չեմ շնորհակալ եղած, վայ ինծի պէս մեղաւորին՝ երբ Թէ բանի տեղ ալ չեմ սեպած։ Կաղաչեմ ու տէր իմ, պիս երբոսէ չինձես, այլ նորէն շնորհք տաս, որ քեզ աղէկ ճանչնամ, քեզ ամէն բանէն վեր սիրեմ։ Հաւատքս լուսաւոր ըլլայ մտքիս մէջը, քու բարերարութիւնդ աղէկ ու պայծառ ճանչնամ, և այսօր ամէն մեղքէ հեռանալով հաւատքիս կեօրէ գործք ալ ունենամ, քու պատուիրանքներդ պահեմ, ու ինչ որ քեզի հաճոյ է՝ միայն այն ընեմ։ Այսօր տէր իմ, ինչ մեղքի առիթ գայ, դու պահէ որ չբ՝ինիմ, ինչ մարմնաւոր փորձանք գայ՝ դու պահէ որ խալըսիմ։ Անչքա պահես ամէն չար նայուածքէն, ան-

կոչես մեղք լսելէն, բերանս մեղք զուրցելէն, սիրտս միտքս մեղք մտածելէն։ Այսպէս ողջոյն ասացէց քեզ յաւիտեանս յաւիտենից, և ասաց քեզ զաղօթս օր ըստ օրէ։

Այսէց եաքը առաջադրէ այն մեղքէն զգուշանալ՝ որուն մէջը որ շատ հեղ կ'ինայաս։ Առաջադրէ որ այսօր մէկ յատուկ բարեգործութիւն մը ընես։ Առաջադրէ նաև այս օրս մէկ բանի մը մէջ քու կամքդ կոտրես, ու քու աչքդ և լեզուդ զսպես, զբկելով զքեզ նաև անմեղ բաներէ ապաշխարանքի համար։

ԵՐԵԿՈՅԵԱՆ

ԱՂՕԹՔ

Գոհանամ դքէն տէր ամենակալ, որ այսօր քուկին դթութեամբդ ողջ առողջ պահեցիր, հոգևոր և մարմնաւոր վտանգներէ խալըսցուցիր, քուկին բարերարութեամբդ ամեն բարիքդ պարգևեցիր։ Ես որ մեղաւոր եմ, անարժան եմ քուկին բարերարութիւնդ վայելելու, քուկին ծառաներուդ պէս վայելցուցիր, հոգացիր մարմնաւոր ու հոգևոր բարեօք։ Ես ուրիշ բան չունեմ տալ բանիս փոխարէն հատուցանել, բայց եթէ գեղունը լինելով՝ երկրպագութիւն տալով անանկ շնորհակալ կ'ըլլամ քու առատ ողորմութեանդ տէր իմ։ և որչափ քուկին ծառաներդ՝ տուրքերդ՝ գոհութիւն կ

ան, անձնք ալ իմ գոհութեանս հետ էկաբեղ խառնելով կը մատուցանեմ ամենասուրբ Երրորդութեանդ։

Կը ցաւիմ կը զղջամ՝ի բոլոր սրտէս՝ որ այսօր փոխանակ քեզի ծառայութիւն ընելու, կամքդ կատարելու, մեղանչեցի։ Քու կամացդ դէմ գործեցի, պատուիրանքներդ կոտրեցի, քանի՛ բարի գործք կրնայի ընել, զանց ըրի՝ չըրի։ Դու տէր իմ, լուսաւորէ միտքս այս գիշերուան խաւարին մէջ, որ այսօրուան ըրած մեղքերս միտքս բերեմ, զղջամ, և հաստատուն որոշով առաջարկեմ վաղը չմեղանչելու։ Կ'աղաչեմ որ պահես իս յանկարծական մահուանէ, պահես զիս չիշերային գիւտական փորձութիւնէ, սատանայական ցնորքներէ։ Ո՛վ պահապան հրեշտակ, հեռացու ինծմէ սատանայական խաբէութիւնը ու բռնութիւնը. սատանաներուն տեղը՝ ձեր սուրբ հրեշտակներուդ ընկերութիւնը բնակի այս տեղս, որ խոցաղութեամբ մեզ պահեն յոյժ գիշերի և յանկարծակի համանակի։ Ո՛վ սրբոյն սուրբդ

պահեցէք զանազան փորձանքներէ. կրակէ, ժանտախտէ, թշնամիներէ, հոգևոր և մարմնաւոր չար պատահմունքներէ, որ կրնայ ձեզ դիշեր պատահիլ։ Տէր 'ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ, 'ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ։ Ինչպէս որ Որդին միածին խաչին վրայ զուրցեց, անոր խօսքին հետ իմ խօսքս ալ ընդունելով, պահեա իմ հոգիս՝ թէ որ կեանքս լմընելու ըլլայ ձեզ դիշեր. վասն զի ես որ հիմա մահճիս մէջ եմ թէ գերեզմանի մէջ կիջնամ, կրնայ ըլլալ որ կեանքս լմընայ, մեռնիլ հասնի։ Բարեխօսութեամբ պահապան հրեշտակիս և պաշտպան սուրբերուս պահես, ամէն, իմ հոգիս յաւիտենական կորստեանէ։

Հայր երկնաւոր խնայեա յիս. բարի Յիսուս ողորմեա ինձ. Հոգիդ սուրբ Աստուած զօրացո զիս։ Օրհնութիւն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ եղիցի 'ի վերայ իմ յայսմ դիշերի և յամենայն ժամանակի։ Ընկալ ամէն զինդրուածս իմ, որպէս զխունկ առաջի քո, պատարագ երեկոյեան։ Խաղաղութեամբ յայ-

որմ և'ի սոյն ննջեցուք և զարթեցուք, զի դու տէր միայն առանձին յուսով քով բնակեցուցեր զմեզ։ Ամենողորմեալ կոյս Մարիամ, որ յոյսդ ես մեզ աւուրաց բժիշկ հիւանդաց, սփոփիչ կարօտելոց, նաւահանգիստ ալեկոծելոց, բժշկեա, սփոփեա, պահեա, պահպանեա զիս յայսմ գիշերի և յամենայն ժամանակի. ամէն։

Աղօթք զղջման յերեկոյեան ժամուն.

Երբոր կը յիշեմ, տէր իմ, պզտիուցմէ ըրած իմ մեղքերս ու զանցառութիւններս, ինչ ապէկութիւններ կրնայի ընել իմ կեանքիս մէջը, և սակայն չըրի։ Երբոր կը յիշեմ իմ ապերախտութիւններս՝ որ քովէն ըրած ապէկութիւններդ չյիշեցի, բանի տեղ չնդրի, շնորհակալութիւն չըրի։ Երբոր կը յիշեմ մինակ քու առաջին տուրը պարուրանքդ, որ քեզ պէտք էր սիրել ամէն սրտով ու մտքով, ամէն ուժով, ես քեզ չէ թէ միայն չսիրեցի, հապա ատոր դէմ քեզի թշնամութիւն

ըրի։ մանաւանդ թէ քու թշնամիդ
հետ մէկ եղայ, անոր հետ մէկտեղ
քեզ անարգեցի։ Սոնք և սարդ նման
ուրիշ մեղքերս երբեմն կը յիշեմ տէր
իմ, ամէն գիտցէն յուսահատութեան
ծովի մէջ կիյնամ։ Հիմա ալ այսչափ
տարուան եմ եղեր, տարիներս օրերս
կանցընեմ, կուզեմ զղջում ընել, ա
ղօթքի ապաշխարութեան հետ ըլլալ
չեմ կրնար ընել, կը ծուլանամ, վա
ղուան կը ձգեմ։ Ես որ չեյտեմ, ին
չուան վաղը կրնամ ողջ մնալ։ Ես ո
տրված ալիտոր ըլլայի, չիտրված
պէս կը չիմանամ, ինչ ընելս չեյտեմ
Բայց հիմա արթընցալով իմ թմրու
թենէս, վախնալով իմ կեանքէս, չը
լայ թէ մահը գայ՝ յանկարծակի ի
քունիս մէջը գտնայ, ինչպէս որ դու
զգուշացուցիր տէր իմ՝ կը զղջամ, կը
ցաւիմ ամէն ըրած մեղքերուս վրայ
որ պզտիկուց ինչուան հիմա գործեցի։
Նաև անոնց վրայ որ այսօր գործեցի
կամայ և ակամայ, գիտութեամբ և ան
գիտութեամբ, շիտակ քեզի դէմ, հինգ
գգայարանքովս, սրտովս ու մտքովս։

Այս մեղքերուս թողութիւն առնելու համար ուրիշ ճար չունիմ որ՝ միայնակ քու մարդասիրութեան ոտքերդ բռնելով կաղաղակեմ. Տէր մի մոռանար՝ ի դատաստան ընդ ծառայի քում, զի ոչ արդարանայ առաջի քո ամենայն կենդանի. ինչպէս որ քուկին սիրելի ծառան Դաւիթ կաղաղակէր. Տէր, քուկին ստեղծուածդ եմ, քու ձեռագործդ եմ, իմ գէշութեանս համար քուկին ստեղծուածդ մի կորանցըներ։ Քու արարչական սէրդ յիշէ որ՝ յիս յաւիտենից գիտէիր, ու ստեղծեցիր։ Քու փրկչական սէրդ յիշէ որ իմ սիրոյս համար այսչափ չարչարանք քաշեցիր, ու ուրբ արիւնդ թափեցիր։ Որչափ որ իմ ամէն օրուան գործերս յիս կը յուսահատցընեն, այնչափ ալ ես միշտ այս խօսքս պիտոր ըսեմ ինչուան էտքի շունչս. Տէր, մեծ են, ծանր են իմ մեղքերս, բայց աւելի մեծ են քուկին ողորմութիւնդ, անոնք պարապ չերթան։ Թէ որ այս աշխարհս թագաւոր մը՝ ելլան մը՝ երբոր կուզէ՝ կը նեղէ, քանի աւելի դու թագաւոր թագաւորաց,

որ տէր էս բացարձակ, երբոր կուզես՝ կը ներ-էս. մէկը քու կամքիդ դէմ չի-կրնար դնել։ Սաղակին մէկ խօսքով ներ-եցիր. Զաքէոսը մէկ նայելով փրր-կեցիր. էս անոնցմէ աւելի վայելեր եմ քու շնորհքներդ. այսօր ալ ինծի լսեցուր այն ձայնը ըսելով. Այսօր եղև փրկութիւն տանս այսմիկ։ Տուր ինծի այս իրիկուան տուեն մէկ շնորհք մը զղջման, որ իմ մեղքերս լսեմ. տուր մէկ շնորհք մըն ալ յարատևութեան, որ այլ չիմեղանչեմ. բարեգործութեան հետ ըլլամ. անանկով մեռնելուս տուեն արդար գտնուելով, քու տեսոյդ արժանի ըլլամ։ Յօրեա յիս մշակաւ և տուրբ եղէց, լուա և քան զձիւն սպի-տակ եղէց։ Այս տուր տէր աչաց ի-մոց, զի մի երբէք ննջեցից 'ի մահ։ Զու էս պաշտպան իմ տէր, և 'ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ։

ԱՂՕԹՔ

ՎԱՍՆ ԱՒՈՒՐՑ ԵՕԹՆԵԿԻ

Ի ԿԻՒՐԱԿԷ Ի

Ի շնորհակալութիւն առհասարակ արարչագործութեան, և յարութեան Քրիստոսի։ Վասն Զգաստութեան, և Երախտագիտութեան։

Հայր մեր, որ յերկինս ես.

Օրհնեալ ես Աստուած, Հայր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, հայր գթութեան և Աստուած ամենայն մխիթարութեան։ Անբաւ են քու բարերարութիւնքդ՝ որ ըրեր ես ինծի տեր իմ. էլմընաբ մէկիկ մէկիկ յիշելով. այնչափ անհամար արարածներ ստեղծեցիր, բայց այնչափ ստեղծուածոց մէջ չես ընտրեալ յատուկ բանական մարդ ստեղծեցիր, քու պատկերիդ նման։ Զեռք տուիր որով կը բանիմ կը գոր-

ծեմ. ոտք տուիր որով ժուռ կուգամ, աչք՝ նայելու, ականջ՝ լսելու, հոտառութիւն՝ անուշ ծաղիկներուն հոտերը առնելու, բերան՝ համ առնելու։ Ներսի կարողութիւններ ալ տուիր, երևակայութիւն՝ պատկերացնելու, յիշողութիւն՝ միտք առնելու, բան իմացական՝ դատաստան կարգելու, բարին չարէն զատելու, ազէկը գէշէն ընտրելու։ Այսքան աշխարհս ալ ինծի բնակարան տուիր վայելելու, վրան վեց օր աշխատեցար գեղեցիկ զարդարելով. ամէն կենդանիները ինծի համար ըրիր, զանազան կանանչներ, պտուղներ, գետնէ եկած անբաւ բարիքներ ինծի կերակուր պատրաստեցիր։ Արեւուն լոյսը ինծի կենդանութիւն տուիր, օդը շունչ առնելու, զանազան տեղեր, աղուոր լեռներ, դաշտեր, քալելու համար տուիր։ Ասչափ զուարճալի բաներ ստեղծելով, ինծի ալ քու իսկոյդ հասկցուցիր որ՝ այս տեղս իմ պանդխտութեան տեղս է, ժամանակուան տունս է. թէ որ քու պատուիրանքներդ պահեմ, քիչ մը ատե-

նէն ինծի յատուկ տուն մը պիտոյ տաս, քու սուրբ արքայութիւնդ պիտոյ տանիս, որ յաւիտեան հոն նստիս, կատարեալ երանութիւնը վայելեմ։

Ո՛ր մէկ բանին շնորհակալ ըլլամ, Հայր նախախնամող. թէ որ գեղինը կոխեմ, դուն ես ստեղծեր. թէ որ երկինքը նայիմ արևը տեսնելու, դուն տուեր ես այն լոյսը՝ որով կը տեսնամ. թէ որ ոտքս քալելու առնեմ, դուն ինչ կը շարժես. թէ որ շունչս առնեմ, դուն ես որ ամէն օր ինծի շունչ կուտաս։ Ո՛ր բանի փակչիմ, ամէնը քուկինդ են, քեզմէ եմ առեր. ես մէկ բան մը ալ չունիմ. այն կենդանիները որ կը գործածեմ, քուկինդ են. այն պըտուղները որ կուտեմ՝ քուկինդ են, ես ալ քուկինդ եմ. մէկ հայր մը չեմ ճանչնար քեզի նման։ Բայց իմ չարութիւնս է որ՝ անանկ կապրիմ, որպէս թէ իմն են, որպէս թէ դուն չես տուած. անանկ կեցեր եմ, իբր թէ ես իմն եմ. վասն զի ես իս քեզի չեմ տըւած, մէկ երախտագիտութիւն մը, շը-

նորհակալութիւն մը չեմ ըրած, չեմ պաշտած, չեմ ծառայած։ Ես ինծի տէր եմ դրեր սրախս մէջը, չեմ մոռա-ծեր որ՝ այսօր ձեռքդ ինծմէն քաշես, կը ջնիմ կը մեռնիմ։

Բայց դու Հայր յաւիտենական բա-րեգութ, այս իմ ապերախտութիւնս տղայական սեպելով, մի՛ բարկանար. հապա խղճա, ողորմէ, ներէ, շնորհք տուր, որ ասկէց ետքը աղէկ ճանչնա-լով քու տէրութիւնդ իմ վրաս, և քու բարերարութիւնդ, քեզ պաշտեմ, քեզ սիրեմ, քեզ ծառայեմ ամէն օր, մանաւանդ այս տուրբ կիրակի օրս՝ ինչ որ պարտական եմ ընելու, աղօթքով և շնորհակալ ըլլալով պարտաւորու-թիւնս լմնցընեմ, որ Յիսուսին հետ յարութիւն առնելու արժանի ըլլամ։ Ան եղաւ այսօր մեզի առաջին պտուղ, և յոյս յարութեան, որ մեռելներուն մէջէն նոր ծաղիկ մը կենդանութեան բուսաւ, և կենդանութեան յոյս բու-քեց բոլոր աշխարհի։ Անոր կենդա-նութիւնը՝ տուրբ արեան զօրութիւնը՝ դիս մեռելներուն մէջէն հանէ, արքայ-ութեան փառաց արժանի ընէ. ամէն։

Այլ աղօթք.

Ամենակալ արարիչ նախախնամող ամենայնի, Հայր սուրբ, որ չէ թէ մինակ յոչընչէ կը ստեղծես, հապա կը պահես, կը հոգաս, կը նախախնամես. ուրչափ փորձանքներէ յիս պահեր էս պղտիկութենէ մինչուան այսօր, քանի հիւանդութենէ, քանի մահուան փորձանքներէ յիս խալըսեր էս պահապան հրեշտակին ձեռքովը։ Ես որ իմ մեղքերովս քեզի դէմ թշնամի եմ եղեր, գութ ինձ չխտեանելով արժանաւոր ծառաներուդ պէս հոգացեր էս, կերակրեր էս, հօր պէսյիս նայեր էս, ու մինչուան այս օրս հասուցեր էս։ Պատուիրանք դրեր էս որ՝ կիրակի օրը սուրբ բռնեմ, բանս գործքս ձգեմ, մինակ քու ստեղծագործութիւնդ յիշելով շնորհակալ ըլլամ, բարիք ընեմ։ Սրանց քու պատուիրանքդ լսելու՝ էս ինծմէն պէտք էր որ յիշէի քու ըրածներդ, ու շնորհակալ ըլլայի. բայց անչափ է եղեր դէշութիւնս որ՝ պատուէրքդ ալ

չեմ բռնած, կիրակի օրերս պարապ անցուցեր եմ, ոչամոց քիչ մը աղօթք եմ ըրեր, ամենևին չեմ յիշած քու ըրած աղէկութիւններդ, որ անչափ յօժարութենով ինծի համար այս աշխարհս առեղծեցիր, որ երբև թէ քու աշխատիլդ ինծի ցուցընելու համար, կամաց կամաց վեց օրուան մէջ առեղծեցիր։ Ինչ ըսեմ հապա՝ որ շնորհակալութեան տեղը՝ կիրակի օրերը մեղանչեր եմ, քու պատուիրանքներդ ոտքի տակ առեր եմ, քեզ բարկացուցեր եմ։

Երբոր քու ասչափ ըրած բարերարութիւններդ մէկ դիացէն կը յիշեմ տէր իմ, խիստ կամաչեմ. մէկալ դիացէն ալ երբոր իմ ապերախտութիւններս կը յիշեմ, խիստ կը դողամ կը սարսափիմ. ինչ պատասխան պիտոր տամ դատաստանին օրը, երբոր ասչափ ըրած աղէկութիւնդ ու իմ ըրած ապերախտութիւնս առջևս գնես։ Հիմա լալով կաղաչեմ, Հայր բարեգութ, այս օրուան տուրբ կիրակի օրս զգաստութեան շնորհք տաս, որ ասկէց

ոքը էս յիս շանկեմ, երախտագէտ ըլ-
ամ։ Կիրակի օրերը չիմեղանչեմ, սուրբ
ահեմ, մանաւանդ բարեգործութիւն
նելու հետ ըլլամ։

ՑԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

Նիշատակաւ արարչագործութեան և բարե-
խօսութեան Հրեշտակաց։
Վասն Աղօթասիրութեան։

Սուրբ եղիցի անուն քո.

Ամենակարող Հայր բարեգութ,
սուրբ էս, և սուրբ է անուն քո. և
միշտ փառաւորեմ որ սուրբ և փառաւո-
րեալ ըլլայ անուն քո։ Որ այսօր ա-
րարչագործութեամբ այս աշխարհս
Ջուրերը բաժնելով կարգաւորեցիր.
երկինքը դաս դաս Հրեշտակաց ստեղ-
ծեցիր. մարդս որ աշխարհս վրայ
դրիր, որովհետև կերպ կերպ մեղքե-
րու մէջ ելնելով հոգևոր հիւանդու-
թեամբ, կուրութեամբ, կաղալով,
գօտանալով հիւրընդցաւ, դիթալով մար-

գուս վրայ՝ մէկ իմանալի աւազան մը դրեր Պրոբատիկէ աւազանին նմանութեամբ, քու հրեշտակներուդ յանձնեցիր, որպէս զի անոնց գալովը օգնելովը՝ այն հիւանդութիւններէն խալըսի։ Եռքը քուկին միածին Որդիդ աշխարհք իջուցեցիր, որ այն իմ հինցած շատ տարուան հիւանդութիւնս՝ որ հրեշտակները չկրցան բուժնցընել, նոր աւազան միրտուութեան սահմանելով, մէկ խօսքով բուժնցուց միածին Որդին, ոտք հանեց շնորհօք, պատուիրելով ինծի. Ահաւադիկ ողջացար, մի՛ ևս մեղանչեր, զի մի՛ չար ևս ինչ լինիցի քեզ։ Իսկ ես իր խօսքին մտիկ չդնելով, նորէն հիւանդութեանց մէջ ձգեցինքս. նորէն կարօտ եղայ խորհրդոյ տպաշխարութեան, կարօտ եղայ բարեխօսութեան և օգնութեան սրբոց հրեշտակաց։

Հիմա ծունր դնեմ առ Հայրդ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. ուստի ամենայն նահապետութիւն յերկինս և յերկրի, Սքոռք, Տէրութիւնք, Պետութիւնք, Իշխանութիւնք, Սերոբէք

և Գեբրոեէք. աղաչելով որ անոնց բարեխօսութիւնը ինծի համար ընդունիս, որ բարեկամ են ազգի մարդկան, միջնորդ մահու և յարութեան. մանաւանդ սրբոյն Միքայելի հրեշտակապետի և Գաբրիելի և Ռափայելի բարեխօսութիւնը քեզ մատուցանելով կաղաչեմ շնորհք տաս որ՝ ինչպէս հրեշտակները երկինքը քուկին անուանդ կը փառաւորեն միշտ երգելով Սուրբ, Սուրբ, Սուրբ, Տէր զօրութեանց, և որչափ երգելով փառաբանեն՝ այնչափ աւելի կը զմայլին, ես ալ երկրիս վրայ սուրբ պահեմ քուկին անուանդ՝ փառաբանութիւն երգելով և աղօթելով։ Սուրբ պահեմ քուկին անուանդ նաև բարի գործելով. որպէս զի իմ բարի գործքերս տեսնալով՝ ուրիշներն ալ փառաւորեն զքեզ Հայր մեր՝ որ յերկինս ես. որպէս զի օր մը ալ արժանի ըլլամ հրեշտակաց հետ մէկտեղ երկինքը զքեզ փառաւորելու յաւիտեան, ամէն։

ՑԵՐԵՔՇԱՒԱԹԻՒ

Յիշատակաւ արարչագործութեան, և բարեխօսութեան Յոհաննու Մկրտչի։
Վասն Սպաշխարութեան։

Եկեսցէ արքայութիւն քո.

Հայր երկնաւոր յաւիտենական, որ այսօր բանիւդ այնչափ ծառեր, ծաղկուներ, կանանչներ ստեղծեցիր, և զանազան գեղեցկութեամբ զարդարեցիր այս աշխարհս։ Վասն զի դրիր աշխարհիս մէջ վայելելու, և քեզ փառաւորելու։ Իսկ ես նմանեցայ մէկ ճամբորդի մը՝ որ աւազակներու հանդիպելով, ինչ որ ունէր առին թալանեցին, և զինքն ալ վիրաւորելով կիսամեռ թողուցին ճամբու մէջ։ Ասանկ ալ ատանանները ինծմէն անմեղութեան շնորհքը առին կողոպտեցին. իմ հոգիս ալ զանազան մեղքերով խոցելով մահուան դուռը հասուցին իմ կենացս ճամբուն մէջ։

Կաղաղակէր իմ հոգիս մէկին մէկալին՝ մարդարէներուն, վկայներուն, մէկ փրկիչ մը կը փնտռէր, մէկը չիկար որ ինծի օգնէր։ Իսկ դու Հայր բարեգութ, դթալով իմ վրայ, հաճեցար խրկել քու միածին Որդիդ Բանն Աստուած փրկիչ և բժիշկ ինծի. որ երկնային թագաւորական աթոռէն աշխարհ եկաւ, Դաւթի աթոռը նստաւ ճշմարիտ թագաւորն Հրէից և մեզ հաւատացեալց. որպէս զի ինքս փրկելով, բժշկելով՝ երկնային արքայութեան Հօրդ հասցընէ։ Բայց աշխարհ անիկայ չի ճանչցաւ, սամարացիի տեղ դրաւ. և որպէս զի ճանչնայ աշխարհ՝ առաջ կարապետ և աւետաւոր արքայութեան և դալստեան Յիսուսի խրկեցիր զտուրքն Յոհաննէս Մկրտիչ, որ եկաւ ճամբայ պատրաստեց այն փրկչին, որ սատանայի թագաւորութիւնը հալածելով, արքայութիւնն Աստուծոյ պիտոր բերէր. ցրցուց Յիսուսին դալուստը, խնամ վարուք և ճշնութեամբ ապաշխարութիւն և խոստովանութիւն մեղաց քարոզեց. օրինակ տուաւ որ՝ մար-

դիկ պատրաստ ըլլան արքայութիւնն Աստուծոյ ընդունելու, մեր ազգին ալ եղաւ յատուկ բարեխօս և պաշտպան։

Հիմա սրբոյն Յոհաննու Մկրտչի բարեխօսութեամբ կաղաչեմ, Հայր երկնաւոր, որ իմ մեղքերուս խոցերը բժշկես, իրեն ճշնութեան ապաշխարութեան օրինակը սրտիս մէջը տպաւորես, որ ապաշխարելով թողութիւն գտնամ իմ մեղքերուս, առջի կորսընցուցած շնորհքները նորէն վառաբկիմ. բժշկուի իմ կիսամեռ հոգիս՝ որ ջարդաջար վերաւորեցաւ այս աշխարհիս ճամբուն մէջ։ Ես որ դուրս ընկած էի արքայութենէն Աստուծոյ, և հիմա Յիսուսին շնորհաց արքայութեան մէջ մտայ, որ զմեզ ժառանգակից ըրաւ արքայութեան քոց փառաց. տակէց էրքը Յիսուս թագաւորէ իմ սրտիս մէջ, որուն թագաւորութեան վախճան պիտոր չըլլայ։ Զըլլայ որ՝ Հրէից պէս չիճանչնամ զթագաւորն Քրիստոս, այլ անմեղ մանկանց պէս ուխտանա էրգելով ընդունիմ զարքայն խաղաղարար զՔրիստոս։ Տէր մեր արքայ

թագաւորէ իմ վրաս, որպէս զի ես ալ թագաւորեմ ընդ քեզ յերկինս։ Հայր բարեգութ, տակէց էութիւնը չի թագաւորեն իմ մարմնոյս վրայ մեղքերը, այլ միայն արքայութիւն քո Որդւոյդ սիրելւոյ։ Վասն զի ես տառապեալս և վիրաւորեալս այս երկան Համբարդութեան և պանդխտութեան մէջ ինչ բանի կրնամ ցանկալ, բայց եթէ արքայութեան քոց փառաց։ Երանի թէ օր մը առաջ գայ հասնի արքայութիւն քո, արքայութիւն յաւիտենից, որ է տուն երկնաւոր Հօրդ, ուր օթևանք բազումք։ ուր լաւ է նստիլ մէկ օր, քան հազար օր աշխարհիս թագաւորութեանը մէջ։

Ի ՁՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Ցիշատակաւ արարչագործութեան և մարդեղութեան Բանին 'ի սրբոյ կուսէն։
Վասն Հնազանդութեան և Խոնարհութեան։

Եղիցին կաւք քո որպէս յերկինս և յերկրի.

Դու էս ամենակարող ամենաբարի Հայր բարեգութ, որ միշտ իմ աղէկութեանս համար աշխատելով, առաջ աշխարհիս ստեղծման առեալ՝ այսօր ամէն բուսոց մէջ սերմունք սերմանեցիր, որ միշտ պտղաբեր ըլլան, ինծի համար պտուղ տան։ Նոքը քու միածին Որդիդ աշխարհ իրկեցիր, որ էկաւ մարդկային կերպարանքով մէկ երկնային սերմանացան մը եղաւ. իրեն խօսքերը եղան մէյմէկ շնորհաց սերմունք, որպէս զի իմ հոգիս ընդունելով այն սերմունքը, քեզի պտուղ տայ

բարեգործութեամբ, երկնաւոր Հօրդ-
կամքը կատարելով։ Բայց այն սերմը՝
որ ճամբու վրայ ընկաւ, կոխուեցաւ,
թռչուններուն կերակուր եղաւ. ան
որ ապառաժ քարի վրայ ընկաւ, առջ-
ջի բերանը կանանչցաւ, եռքը չորցաւ.
այն որ փուշերուն մէջ ընկաւ, փուշե-
րէն խղդուեցաւ. ասանկով ամէնն ալ
անպտուղ եղան. միայն այն տուաւ
պտուղ, որ աղէկ կակուղ գետնի վը-
րայ ընկաւ։

Ասանկ իմ սրտիս մէջն ալ շատ հո-
գևոր սերմեր սերմանեց Որդին միա-
ծին աւետարանին խօսքերով, նեբսէն
միտքս արթնցընելով, և քարոզչաց
խօսքեր լսեցընելով։ Բայց իմ սիրտս
երբեմն ճամբու վրայ ընկածին նմանե-
ցաւ, որ ատոնան փրցուց, անպտուղ
եղաւ. երբեմն ապառաժ քարի նմա-
նեցաւ, որ առջի բերանը իր խօսքին
մոխիկ դրաւ, եռքը ձգեց թողուց. եր-
բեմն փուշերու մէջ ընկածին նմանե-
ցաւ, որ աշխարհիս գրաղման մէջ
կնելով պտուղ չիտուաւ. ասանկով
բոլոր իմ կեանքս անպտուղ անցաւ
գնաց։

Հիմա կ'աղաչեմ Հայր երկնաւոր, կակղցու իմ սրտիս կարծրութիւնը, որ ամէն եռքը աղէկ կակուղ դեռնի նման ըլլալով, հարիւրապատիկ բարի պտուղ բերեմ առաքինութիւններով, քուկին կամքդ կատարելով, ինչպէս որ երկինքը հրեշտակները կը կատարեն։ Դու ես այն մարդասէրը, Հայր երկնաւոր, որ աշխարհիս ստեղծման առեն առաջ լոյս ստեղծեցիր, արեգակն ու լուսին հաստատեցիր, անով իմ խաւարած աչքս կը տեսնայ կը վայելէ ամէն բան. եռքը Բանն Աստուած աշխարհ խրկեցիր, որ մարմնանալով 'ի սրբոյ կուսէն Մարիամայ՝ եղաւ իմ հոգւոյս լման արեգակն արդարութեան՝ լուսաւորելով իմ հոգիս. իսկ ամէնօրհնեալ սուրբ կոյսն լման լուսին մխիթարութեան գիշերուան մէջ, որ մեղքերով խաւարած հոգիս կը լուսաւորէ։

Օրհնեալ ըլլայ կամք երկնաւոր Հօրդ՝ որ սանկ բարի կամեցաւ մեզի. օրհնեալ ըլլայ և քուկին կամքդ, ով Բանդ Աստուած Յիսուս Քրիստոս, միածին Որդի Աստուծոյ, որ կամեցար

երկինքը թողուլ, երկիրս ինձնալ, Աստուած ըլլալով հոգեղէն ըլլալ, մարմնանալ 'ի սրբոյ կուսէն Մարիամայ, երկնաւոր Հօրդ կամքը կատարելու համար։ Այս ինչ սէր է սէր իմ, ինչ սէր է որ կը յուզենես իմ վրայ։ Ի սիրելուդ համար մոռցար քու փառքդ, քու ատուածութիւնդ։ Յիշէ, սէր իմ, այս քու անճառելի խոնարհութիւնդ. առաջնորդէ ինծի քու հնազանդութեանդ ճամբան հեւանիլ ու խոնարհութիւն ունենալ, որ քու ձայնդ լսելով երկնաւոր Հօրդ կամքը՝ ես ալ կատարեմ։ և քու փոխանորդներուդ կամքը՝ որ գրեր ես աշխարհիս վրայ։ Վասն զի դուն եղար մեզի առաջին ծընող, իսկապէս նախահայր Ադամ, ոչ անհնազանդ որպէս առաջինն Ադամ, այլ հնազանդելով կամաց Հօրն երկնաւորի ծնար զմեզ յարչարանօք աբեամբ խաչի։ Եւ քուկին ծնողդ ալ ամենասրբուհի կոյսն Մարիամ եղաւ իսկապէս նոր Եւա, բնակարան ամենամաքուր Բանիդ Ատուծոյ, ծնող Որդւոյդ միածնի, և մայր կենդանու-

թեան, յորոյ մաքուր արդանդի փրկութիւն աշխարհի սկզբնաւորեցաւ, գործ նախասահմանութեան մերոյ որ նորին եցաւ, երեն յանձնելով զմեզ մահուանդ առեալ մանաւոր յանձնարարութեամբ։

Առջի մեր նախամայրն Եւա մեզի անէծք բերաւ, հիմա մեզի նորն Եւան կեանք փրկութեան բերաւ, տալով զքեզ միածին Որդիդ՝ պտուղ կենարար, պտուղ անմահական, որով վերցուեցաւ հին անէծքը, ուրախացան ամէն մեղաւորք։ Դու նորդ Ադամ, Բանդ Աստուած մարմնացեալ՝ եղար միջնորդ 'ի մէջ Հօր Աստուծոյ և մարդոյ, իսկ նորն Եւա եղաւ միջնորդ և բարեխօս 'ի մէջ մեր և քո, և հարան Հոգւոյն որոյ ընծայեալ յերկրէ յերկինս։ Երբեր արդար դատաւորդ նրատես արդարութեան դատաստանը, այս հղօր բարեխօսն է մեր յոյսը, որ քուկին արդար բարկութիւնդ անցընէ, և ողորմութիւնդ շարժէ մեր վրայ գթալ և ներել։

Ի ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

Յիշատակաւ արարչագործութեան, և Հաղորդութեան սուրբ խորհրդոյ, և բարեխօսութեան առաքելոց։

Վասն Ապաւինութեան ՅԱստուած։

Զիարց մեր հաւատարիմ տուր մեզ այսօր.

Աչք ամենեցուն 'ի քեզ յուսան, Հայր ամենատուր, որ տաս կերակուր նոցա 'ի ժամու. բանաս զձեռն քո, լցուցանես զամենեսեան քաղցրութեամբ կամաց քո։ Քանզի առատապարգևութեամբդ հերիք չեսեպեցիր աշխարհիս ստեղծման ատենը այնչափ պտուղներըը մարդու համար կերակուր ստեղծել, այլ նաև ձկներ, կենդանիներ, թռչուններ ստեղծեցիր, մարդուս կերակուր տուիր՝ որ ուզածին պէս վայելէ։ Ետքն ալ երբոր մարդս անապատ

ոչ մէջ կարօտ եղաւ կերակուրի, դու երկնքէն մանանայ ինչեցընելով կերակրեցիր այնչափ ատեն. բայց մարդս անոնք 'ի փառս քո չնվայելեց, այլ որկրամոլութեամբ, շուայտութեամբ շատ անգամ մեղանչեց: Եթէ այս բանիս դէմ՝ քուկին միածին Որդիդ աշխարհ իջեցիր այն սովորեցուց իրեն պատուիրանքը՝ օրինակովը և քարոզութեամբը՝ որկրամոլութիւնը զսպել, և կերակուրը միայն պիտանաւորութեան համար 'ի փառս Աստուծոյ վայելել: Երբոր հինգ հազար մարդ անապատի մէջ կարօտ եղան հացի, առաքեալները բարեխօս եղան իրեն աղաչեցին. ինքը սովորեցուց հացը օրհնելով՝ հինգ հազար մարդ կերակրել. սովորեցուց հոգ չընել մարմնաւոր հացի համար. վասն զի Աստուած է՝ որ մարդուս մարմնոյն համար հաց կը պատրաստէ, քիչովը շատ մարդ կը կերակրէ, և մարդուս հոգւոյն համար հաց հոգևոր բանին Աստուծոյ կը պատրաստէ:

Մարգարէները՝ առաքեալները եղան մարմնաւոր հովիւ և ճկնորս այն

մարմնաւոր ոչխարներուն ու ձկներուն որ դուն ստեղծեցիր այսօր։ իսկ Ադամին միածին խրկեցիր հովիւ և ձկնորս հոգևոր, որով այն մարմնաւոր ձկնորսք ձկներուն տեղը մարդիկ որսացին հոգևոր կերակրով քարոզութեան բանիւն Աստուծոյ։ Անոնք ալ տրվեցուցին որ՝ մարդ մարմնաւոր հացի համար շատ չհոգայ։ երբոր աղօթիւք Աստուծոյ դիմէ՝ կը գտնայ, թէ և անապատի պէս տեղ մնալով բոլորովին կարօտ ըլլայ հացի։ վասն զի լիութիւն հացի և գինւոյ քովին ձեռքդ է տէր իմ, զաշխարհ լցիս իւրով դու հաստատեցեր։

Բայց փառք մարդասիրութեանդ, ով հովիւ երկնային Յիսուս միածին, որ փոխանակ ոչխարներուն կաթն ու միսը ճաշակելու տեղը՝ դուն կուտաս անոնց թէ մարմնաւոր կերակուր՝ և թէ հոգևոր կերակուր՝ քու անապական մարմնիդ և արիւնդ։ Առաքեալներուդ ալ կուտաս զօրութիւն, որ մեկ երկնային հացով հազարաւոր մարդիկ հոգևորապէս կը կերակրեն ինչուան աշխարհիս

ետքը, ասանկով ինչպէս որ մարմինը հանապազորդեան կերակրոյ կարօտ ըլլալով, կը գտնայ ամէն տեղ, ասանկ ալ հոգին ամէն օր իր կերակրոյն կարօտ ըլլալով՝ ամէն տեղ կը գտնայ այն հացն կենդանի, այն հացն հրեշտակաց, որ թէպէտ Բեթղեհէմ բուսաւ անբանից մսրոյն մէջ, բայց աշխարհ ամէն կը վայելէ այս սրբազան աղնիւ կերակուրը, որ մենք չենք սերմաներ, չենք ժողվեր. այլ դու տէր չարչարանքովդ սերմանեցիր, և քու մահուանդ մանգալովը հնձեցիր, եկեղեցւոյ շտեմարանին մէջ ժողվեցիր, որով աշխարհ ամէն կը կերակրուի առաքեալներուն ձեռքովը։

Աղաչեմ, տէր իմ բարեխօսութեամբ նոյն սուրբ առաքելոց, չեպակսի իմ մարմնաւոր հացս՝ որուն իմ կենացս ճամբուն մէջ կարօտ եմ։ Զի պակսի նաև հոգևոր հացն երկնային, որուն այս պանդխտութեան ճամբուն մէջ կարօտ եմ. վասն զի հանապազօր կը մեղանչեմ, հանապազօր ալ կարօտ կըլլամ երկնային հացին բժշկութեան։

Ցուր նաև շնորհք որ՝ մարմնաւոր կերակուրի և ապրուստի համար շատ չհոգամ, և չափաւորապէս վայելեմ. զբլայ որ մարմին ծանրանալով վար քաշէ իմ հոգիս շուայտութեամբ և արբեցութեամբ. և որչափ որ ինչուան հիմա անկարգաբար վայելեր եմ՝ նեղրուն տաս: Իմ ըրած անկարգութեանցս քաւութիւն գտնալու համար քեզ կը նուիրեմ Յիսուսին պաքը, ծարաւը, ժուժկալութիւնը, որ գոհանալով քեզ Հօր երկնաւորի կընծայէր. անոնք ընդունելով՝ քաւես իմ որկրամոլութիւնս կամ աւելորդ հոգս որ իմ կեանքիս մէջ ըներ եմ ապրուստի ու կերակրոյ համար: Շնորհք ապաւինութեան տաս 'ի քեզ ՅԱստուած, որ նաև Հայրերուն՝ Ճրնճղուկներուն՝ կերակուր կուտաս ամէն օր:

Ի ՅՈՒՐԲԱԹԻ

Յիշատակաւ արարչագործութեան, և պահոց,
և հարշարանաց Քրիստոսի։
Վասն ժուժկալութեան, և ճգնութեան։

Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողուցուք պարտապանաց։

Երկիր պագանեմ քեզ, Հայր երկայնամիտ, որոյ յատուկ է հայրութեան անունը, յատուկ է ներել և թողուլ մեր պարտքը, և պատժելու տեղ միշտ բարերարութիւն ընել։ Որ աշխարհիս սկզբնաւորութեան առեն՝ այսօր նախատեղծ մարդն Ադամ ստեղծեցիր նման քոյ. պատկերիդ, դրախտին մէջը դրիր վայելել ամէն բարիք. մարդս ապերախտ գտնուելով քեզի դէմ էլաւ. սատանայի խօսքին մտիկ դնելով որկրամոլութեան մեղքով մեղանչեց, քե-

զն թշնամի դարձաւ։ Անկէց ետքը իր կեանքը դարձաւ եղաւ նման խուլ ու համր դիւահարի, որ ուր որ կերթար՝ հանգստութիւն չէր ունենար, մէկ մեղքէ մէկալ մեղքը կկնար. երբեմն ցանկութեան կրակին մէջ, երբեմն գաղջութեան ջուրին մէջ կը ձգէր սատանան որ կորսնցնէ։ Մարդը կը փրփրար, ակռաները կը կրճտէր, ճար մը չէր գտնար խալասելու. մարդարէք կաղաղակէին, դէղ մը չէին կրնար գտնալ, առաքեալները կը ջանային՝ չէին կրնար խալասելը։

Իսկ դաւ Յիսուս միածին, երկնաւոր Հօրդ հրամանովը ինչպէս բարձր լեռնէն երկնքէն՝ բժշկելաց անբժշկելի ցաւը մարդուս. արքայութենէդ հեռացար, աշխարհ եկար. սատանաները հալածէցիր, մարդը ողջընցուցիր, և տրվեցուցիր որ սատանկ սատանան՝ որ շատոնցուրնէ պզտիկուց տիրեր է հոգւոյն վրայ, իրեն ունակութիւն դարձուցեր է մեղքը, սատանկը միայն պատիժով և աղօթքով կրնայ ելլել։ Առաջ քուկին կեանքդ օրինակ տուիր, որ մենք ալ ա-

նանկ ընելով փրկութիւն գտնանք։ Սատանան նախանձելով քու երկնային վարքիդ, ու չիճանչնալով Աստուած ըլլալդ, Ադամայ պէս քուկին քովդ ալ եկաւ փորձելու, մեղքի մէջ խօթելու. դուն որ անկարօտ էիր օգնութիւն գտնալու, իբր կարօտ անոր ձեռքէն խալըսելու համար՝ երկու բան ըրիր օրինակ տալու համար մարդուս. մէյմը պաքէ պահել, մէյմըն ալ անդադար աղօթք ընել. քառասուն օր սատանան չէ հեռացաւ՝ քեզ փորձել ուզէց, քառասուն օր ալ դուն պահեցիր ու աղօթքի հետ եղար մեզի սորվեցընելու համար։ Ա՛ս հերիք չեղաւ, եաքը դու քուկին կեանքդ մարդուս համար տուիր. այս ուրբաթուան օրը՝ երբոր մարդս ստեղծուեցաւ, այս օրս դուն ալ զանազան չարչարանքներով խաչին վրայ գամուելով՝ քեզ պատարագ մատուցիր Հօրն երկնաւորի, որ մարդուս մեղքերուն թողութիւն քաւութիւն ըլլայ, և Հայրը Աստուած հաշտուի մարդուս հետ, անոր հաշտուելովը՝ մարդուս անբժշկելի յաւը բժշկութիւն գտնայ։

Հիմա, Հայր բարեգութ, երես անկեալ կը խոստովանինք որ անհամար բիւր մեղքերու պարտականութիւն ունինք, բայց մեզի բարեխօս ահա քու միածին Որդիդ է, որ այսօր խաչին վրայ կախուած ըլլալով իր թշնամիներուն և խաչ հանողներուն համար թողութիւն կը խնդրէ. Հայր, թող դոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն: Վայ ինծի, ես անոնցմէ մէկն եմ՝ որ Յիսուս միածինը խաչ հանեցի: Վայ ինծի. քանի՞ քանի՞ ծանր մեղքեր ունիմ, անոնց պարտքին տակը ընկած եմ. բայց ահա տէր, քու ողորմութիւնդ քուկին առջեւդ է. մեզի փրկութիւն քու միածինդ է, որ մեր վրայ գթալով մեզի տուիր: Քու Որդիդ միածինն է՝ որ անմեղ ա-նարատ այսօր խաչին վրայ խոցուելով՝ մեր պարտքերը կատարեալ վճարեց. ոչ ապականացու արծըթով, այլ իրեն պատուական արիւնովը. և ինչ թշնամութիւն որ նախաստեղծն Ադամ ըրեր էր գիտութեան ծառին տակը, այսօր միածինն Յիսուս այս տուրը, ծառին խաչափայտին վրայ կախուելով,

վերցուց, և զմեզ երկնաւոր Հօրդ հետ հաշտեցուց, իրեն սուրբ արիւնը մեզի դանձ թողուելեան աւանդեց։

Հիմա այս դանձը ահա քեզի կը մատուցանենք. Հայր սուրբ, որչափ որ պարտք ունինք՝ այս անհուն դանձէն առնելով մեր պարտքը ջնջես։ Թող մեզ զպարտիս մեր՝ որոնց համար այսչափ բարերարութիւն ըրիր, այսչափ հոգ տարիր։ Թող մեզ զպարտիս մեր. զի թէ դու զանօրէնութիւնս մեր քննես, ո՞վ կրնայ քու առջեւդ երեւնալ, ո՞վ կըրնայ թողուլ մեր մեղքը. ոչ եղբայր, և ոչ հայր. չկայ մէյմը որ փրկէ ու ազատեցնէ, միայն քեզմէ է, ո՞վ Հայր լուսոյ, ողորմութիւն առատ առաջի քոգի փրկութիւն։ Կը տեսնես դիտես որ մեր միտքը՝ կամքը՝ պզտիկուց չարին ընելու կը վազէ, պզտիկուց մեղքը ունակութիւն ըրեր է, դու որպէս Հայր մի բարկանար, այլ նեղէ, անտես ըրէ։

Ենորհք տուր, այսօրուան պաքը որ սուրբ եկեղեցին դրեր է, ես ալ ապաշխարութեամբ պահեմ, չէ թէ մի-

նակ բերան։ Հապա ամէն զգայարանք-
ներս, ամէն մեղքերէ սուրբ պահեմ
հոգիս ալ մարմինս ալ։ Եւ ինչպէս որ
սուրբերը իրենց թշնամիներուն՝ հա-
լածիչներուն կը ներէին, բարիք կը-
նէին, ես ալ իմ մօտիկներուս՝ իմ
թշնամիներուս՝ ինծի չարարարներուն՝
լեզուագարներուն՝ բամբասողներուն՝
ամէնուն ալ թողում իրենց պարտ-
քերնին, որ դուն ալ իմ մեղացս
պարտքերը թողուս. ինչպէս որ սոր-
վեցուց մեզի Յիսուս քու միածին Որ-
դիդ։ Թող տուր կաղաչեմ Հայր սուրբ՝
Յիսուսի արդեանցը համար՝ իմ ամէն
կերպ մեղքերուս, թէ որ իմ թշնամի-
ներուս չիներեցի, ինծի դէմ եղողները
չիսիրեցի, և ուրիշ ինչ մեղք որ գործ-
ծեցի 'ի մանկութենէ ինչուան հիմա։

Ի ՇԱԲԱԹՈՒ

Յիշատակաւ արարչագործութեան, և բարեխօսութեան ամենայն սրբոց։
Վասն Աբիութեան։

Եւ մի տանիր զմեզ 'ի փորձառքիւն. այլ փրկեա 'ի չարէ.

Յերեսս անկեալ աղաղակեմք առ քեզ ով Հայր մեր, ով դատաւոր մեր, ով փրկիչ մեր, փրկէ զմեզ ամենի փորձութենէ. մի թողուր որ չարիք մեր վրայ եկնեն։ Դու որ վեց օրուան ամենի արարչագործութիւնը լմընցընելէն ետև՝ եօթներորդ օրը հանգիստ առիր, և պատուէրք դրիր որ՝ մարդն ալ այն օրը հանդչի իր ամենի գործքերէն, հանդչեցուր մեզ աւելի սատանայական փորձութենէ, և աշխարհիս փորձանքներէ, որ ալէկոծութեան պէս վրանիս կը ժողվուին։ Դու, Հայր ողոր-

մութեան, որ տեսնալով մարդկային աչէկոծեալ կեանքը այս աշխարհիս մէջ, խղճալով խրկեցեր երկինքէն Որդիդ միածին, որ եկաւ մէկ վարպետ նաւապետի մը պէս մտաւ եկեղեցւոյ նաւուն մէջ, անցընելով մեզ այս աշխարհիս սարսափելի փորձանքներով աչէկոծեալ ծովուն մէջէն. ուսկից ելլելոյն մեզ փրկեալ ոչ մարդարէք, ոչ առաքեալք, այլ աղաղակեցին այս երկնային նաւապետին ու փրկչին. Տէր փրկեա զմեզ, զի կորնչիմք աւասիկ:

Իսկ դու Յիսուս միածին, եղար արթընցար անոնց աղաղակելովը, անոնց բարեխօսութեամբը, մէկ սաստելով մը խաղաղացուցեր աշխարհիս աչէկոծութիւնը. սրբեցուցեր ինչ պէտք է ընել որ՝ մեզաց աչէկոծութիւնը դադրի. ցրցուցեր որ մէկ հատիկ Ճար՝ հաւատքով գիմելն է Աստուծոյ՝ որ ամէն մէկ քրիստոնէն և եկեղեցւոյ նաւը սատանայի որոգայթէն և մեղքի մէջ ընկղմելէն կը խաղաղցընէ: Գուցէ վարդ ալ օրինակ տուեր, ցրցուցեր ինչպէս պէտք է հաւատքով, յուսով,

պաքով, աղօթքով, փորձութենէ խա-
լըսիլ, առաջ նեղութիւն քաշէլ, եաքը
հանդչիլ։

Հիմա ես ալ այս աշխարհիս ծովուն
մէջ ընկեր կերթամ, կը վախնամ որ
ինչպէս օձը խաբեց նախառաջնորդ մար-
դը փորձութեամբ, ասանկ ալ իրեն
խորամանկութեամբը յիս խաբէ՝ Աս-
տուծմէ հեռացընէ. վասն զի ամէն
փորձութեան տակը ընկած է մարդուս
կեանքը. մանաւանդ թէ ինքը ինքնի-
րեն փորձութիւն է։ Բայց դու գիտես
որ ինչ է իմ զօրութիւնս. թէ որ կու-
զես որ փորձութիւն ու նեղութիւն
վիշտ գայ վրաս, եղիցին կամք քո օրհ-
նեալ. որովհետև ոչ դու Յիսուս, և
ոչ մայր քո սիրելի, ազատ գտաւ դատ-
նակիցներէ և նեղու-
թիւններէ. այլ հաւատարիմ ես Աս-
տուած, որ զմեզ փորձութեան մէջ
չես ձգեր մեր կարողութենէն աւելի։

Կը խնդրեմ որ փորձութեան հետ
մէկ ճամբայ մըն ալ ցուցընես որ համ-
բերեմ. տաս շնորհք արիութեան որ
յաղթեմ ամէն փորձութեան. ես

ինձի չապաւինիմ, այլ 'ի քեզ, տէր Յի-
սուս մարգարէ, որուն Հայր Աս-
տուած ամէն գաղտնաստան տուաւ. չէ
թէ աշխարհ գաղտելու, այլ աշխարհ
փրկելու համար. պայծառ հաւատքով
քեզի ապաւինիմ, յուսով և սիրով
քեզ գիմեմ: Վասն զի ով մեզ խալըս-
ցընէ հոգւոյ և մարմնաւոր փորձանք-
ներէն՝ որ ամէն օր ծուլու մը պէս վը-
րանիս կը թափին. ով մեզ փրկէ սա-
տանայն ալէկոծութենէն, որ ամէն
օր մեզ կորսնցընել կուզէ, եթէ ոչ
գու Յիսուս, զոր Հայր Աստուած ա-
սոր համար խրկեց յաշխարհ: Գու մին-
նորդ և բարեխօս, և փրկութիւն մեր,
որ մեղքերէ և մահուանէ քուկին ա-
րիւնդ թափելով փրկեցիր, և այսօր
թաղուելով և յարութիւն առնելով
մեզ ալ յոյս յարութեան պարգևե-
ցիր, և հանգիստ յաւիտենական երա-
նութեան: Տէր փրկեա զմեզ, զի կորընչ-
ինք աւասիկ: Տէր, արժանի ըրէ որ
ինչպէս ամէն սուրբք քուկին օգնու-
թիւնդ գտնելով ամէն աշխարհիս
փորձութենէ խալըսեցան, այնպես-

թեան փառաց արժանի էղան, և հիմա կը հանդչին հանդիստ յաւիտենական, անանկ ալ այն սրբոց բարեխօսութեամբը՝ նահապետաց, մարգարէից, առաքելոց, մարտիրոսաց, Ճգնաւորաց և կուսանաց, մենք ալ անոնց՝ և մանաւանդ քաւիչին օրինակիդ հետևելով, ամէն փորձութեան վրայ էլլալով, վայելենք այն երանութիւնը, որ դուն մեզի համար վաստակեցար ու պատրաստեցիր։ Զի քո է արքայութիւն, և զօրութիւն, և փառք յաւիտեան։ ամէն։

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ

Խոստովանութիւնէ առաջ չորս բան պէտք է. մէյմը՝ գանիլ մեղքէ. երկրորդ՝ միտքը բերել իր մեղքերը. երրորդ՝ զղջալ ցաւիլ իր ըրած մեղքերուն վրայ. չորրորդ՝ հաստատ առաջադրութիւն դնել մէյմըն ալ չընելու։ Հոս ալ աս կարգով կը գտնաս ամէն մէկին համար յատուկ աղօթք։

Աղօթք վասն գարշելոյ 'ի մեղաց.

Վա՜յ ինծի տէր իմ, որ անչափ բարիդ անարգեցի, անհուն սիրելիդ չիսիրեցի, այլ մանաւանդ մեղքով վշտացուցի, պատուիրանքներդ կոտրեցի, քուկին տուրբ կամքդ չիսեպեցի, աշխարհիս ու իմ կամքս աւելի մեծ սեպեցի, աստուածային քու խօսքերդ բանի տեղ չիդրի, մարմնոյս հեւանի

ցայ։ Վայ ինձի պէս կոյր մեղաւորի. այնչափ կուրցայ որ՝ աղէկը դէշի տեղ առի, դէշը՝ աղէկի տեղ. պզտիկը՝ մեծ բռնեցի, մեծը՝ պզտիկ. աւետարանին սուրբ պատուիրանքները թողուցի՝ որ ինձի արքայութիւն կուտան. աշխարհը՝ մարմինս՝ ինչ որ ինձի զուրցեցին, անիկայ աղէկի տեղ բռնեցի, որ ինձի տանջանք ու դժոխք կուտան. աշխարհիս բարիքները վատաբկելու եւ ընկայ, որ մէկ երազի մը պէս կանցնին. սուրբ աւետարանին զուրցածները բնաւ չուզեցի վատաբկելու՝ որ ինձի անանց յաւիտենական կեանք կուտան։

Հիմա օրերս պարապ անցուցած, մեղքերով բեռնաւորած, ան մեղքերէն ուրիշ օգուտ մը չնիմաց՝ բայց ողբ ու լաց։ Կիրնամ ողորմութեան Հօրդ առջին կուլամ, թող ինձի այսօր աններելի մեղքերս, որոնցմէ ես ալ գաներ եմ. ես ինծմէ կը խոստովանիմ, զղջալով անոնցմէ՝ այսօր կուզեմ խոնարհութեամբ խնդրել զթողութիւն։ Դու ես Յիսուս քաւիչ քահանայա-

պետ, քու փոխանորդիդ քահանային առջին ջոքելով, իբր քու ոտքիդ պըլ-լուելով կաղաղակեմ. Հայր, մեղայ յերկինս և առաջի քո. իմ խոստովա-նութիւնս, իմ զղջումս մի արհամար-հեր այսօր:

Աղօթք վասն յիշեցոյ զմեղս, և խոս-տովանելոյ.

Դու տէր, սրտագէտ ամենայնի, որ ներսի դիս ամէն խորհուրդը գիտես կը տեսնաս. քեզնէ ծածուկ բան մը չըլլար. բաց իմ ներսի դիս զղջմամբ, պատռէ իմ քարացեալ սիրտս արցունք-քով, շարժէ իմ լեզուս 'ի խոստովա-նութիւն: Դու տէր, զանազան հիւանդ-ներ զանազան հարցմունքով առջեւդ կանչեցիր, առաջ իրենց ցաւը զուրցը-նել տուիր, եաքը Ճարտար բժշկի պէս իրենց ցաւը ըռընցուցիր. կոյր եղողին դիմալով հարցուցիր, ինչ կուզես որ քեզի ընեմ. երբոր անիկայ ըսաւ. Տէր, զի բացցին աչք իմ և տեսից, դուն

շուտ մը հրամեցէր, աչքը բացուեցաւ. քու եռեւէդ եկաւ։

Հիմա ես շատոնցուընէ կուրացեր եմ. մեղքերուս խաւարը աչքս գոցեր է, չեմ տեսնար, չեմ ճանչնար ոչ մեղքերս, և ոչ մեղքերուս համրանքը. դու գթալով իմ վրաս՝ բաց ազա՝ չեմ մոքիս աչքը, լուսաւորէ որ տեսնամ, ճանչնամ, համրանքները միտքս բերեմ։ Բաց բերանս ալ խոստովանելու քահանային, զուրցելու իմ հոգւոյս ցաւը, իմ պակսութիւններս, որ մեզաց խաւարը փարատի, քեզ լոյսդ Քրիստոս տեսնամ, առաջի Ճամբաս ձգելով քեզի հետևիմ ան լուսաւորեալ կուրին նման։ Զյանցուածս իւր ոմ կարէ առնուլ 'ի միտ. 'ի դաղանեաց իմոց սուրբ արա զիս տէր, և յօտարէն պահեա զծառայս քո։

Մ'յլ աղօթք առ նոյն.

Երբոր մեղքերուս ծանրութիւնը և շատութիւնը կը յիշեմ, տէր իմ, կը յուսահատիմ, որ մէկը զուրցեմ,

միտքս ալ կը շփոթի, ամէն մէկ մեղ-
քերս չեմ կրնար միտքս բերել, կը սա-
բակուսիմ ալ ինչպէս զուրցեմ. անկէց
ինծի ծանրութիւն ու ձանձրութիւն
կուգայ խոստովանելու. աս սարակու-
սանքները իս կը թուլցընեն, բերանս
կը կապեն: Գիտեմ սէր իմ, որ ասոնք
ամէնը սատանայի փորձութիւններ
են, որ իս հեռացընէ սուրբ խորհուր-
դէն, ուշացընէ իմ բժշկութիւնս. սա-
կայն դու բժիշկ հոգւոց և մարմնոց
սէր իմ Յիսուս, քանի որ իմ ծուլու-
թիւնս բռնի կապէ, դու տեսնելով աս
իմ հիւանդութիւնս՝ փարատէ. և քա-
նի որ սատանան ուշացընել ուզէ՝ զա-
նազան կերպ առիթներ բերելով, դու
սատանային կապանքը քակէ:

Սատանկ երբեմն սատանան չէր ուզեր
հիւանդներուն բժշկուիլը քու ձեռ-
քովդ. ուշացընել կուզէր՝ ըսելով
Հրէաներուն բերնովը. շաբթուան մէջ
վեց օր կայ, ուրիշ օր եկէք Յիսուսին
քով բժշկելու, այսօր մի գայք կը-
սէր: Բայց դու տէր, սատանան ամօթ
ընելով, ասիկայ դուսորը Աբրա-

համու է, հիմա սատանան կապէր է, պէտք է որ՝ շուտով այսօր էս բժշկեմ. ես ասելով բժշկեցիր։

Հիմա՝ ասոր նման ասէ իմ հոգւոյս համար, ես հոգին իմ եկեղեցւոյս որդին է, սատանան կապէր է մեղքերով, չուզէր խալըսցընել. այսօր պէտք է որ էս քեզ բժշկեմ, միտքդ լուսաւորեմ՝ որ մեղքերդ յիշես խմանաս. սիրտդ շարժեմ զղջալու, մեղայ ասելու. բերանդ բանամ, լեզուդ շարժեմ որ համարձակ խոստովանիս քահանային։ Երբոր ես ձայնը երկնային բժշկիդ կառնէ իմ անգամալոյծ կապուած հոգիս, շուտ մը կապանքներէն կարձըկուի, սատանան կը հեռանայ. և էս բժշկուած ըլլալով՝ նորէն շնորհաց մէջ կը գտնուիմ, եկեղեցւոյ հարազատ որդի կըլլամ։ Երանի, ում թողութիւն եղև մեղաց, և ծածկեցան ամենայն յանցանք նորա։ Երանի առն՝ որում ոչ համարի տէր զմեղս նորա։

Ա՛յլ աղօթք առ նոյն.

Խնդրեմ տէր իմ Յիսուս, որ մեղքերս միտք առնելէն ետև, բանաս իմ բերանս որ քահանային համարձակիմ խոստովանելու. վասն զի թէպէտ ես զզուած եմ մեղքերէս, ներսի դիս ցաւի մէջ է իմ ըրածներուս վրայ, բայց սատանան չլսեցողուր որ համարձակութեամբ մեղքերս խոստովանիմ քահանային, մանաւանդ թէ քեզ Քրիստոսի տեսանդ իմոյ, որ հոն նստած ես քահանային միջնորդութեամբը: Հիմա բաց բերանս աղաչեմ խոստովանելու քահանային՝ որ քու փոխանորդդ է, մէկիկ մէկիկ զուրցել իմ ցաւս, իմ հոգւոյս պակսութիւնները ինչպէս որ պէտք է՝ որպէս զի բժշկութիւն գըտնեմ: Ինչպէս որ ան հիւանդն որ կուզէր իր բժշկութիւնը ծածուկ պահել, դուն հարցընելով վերջապէս բերանը բացիր, զուրցընել տուիր, անանկ ալ նայէ իմ վրաս շնորհքով, կանչէ իս առջիդ քաջալերելով: Տուր ինծի զօ-

րութիւն, որ ամօթը փարատի՝ ուր որ պէտքը չէ ամբէնալ. ահիւ և դողութեամբ համարձակ բերանով խոստովանիմ իմ ըրածներս, որով յայտնի բժշկութիւն գտնալով փառաւորուի քու սուրբ անունդ։ Զմեղս իմ ցուցից քեզ, և զանօրէնութիւնս իմ ոչ ծածկեցից 'ի քէն։ Ասացի թէ պատմեցից ինձէն զմեղս իմ, և դու թողցես զամենայն ամբարշտութիւնս մեղաց իմոց։

Աղօթք զղջման և առաջադրութեան.

Մեղայ քեզ տէր, մեղայ քեզ տէր, մեղայ անհամար մեղքերովս. որ մէկը խոստովանիմ. աշխարհս իս խաբեց, մարմինս՝ իմ միտքս երեն քաշեց. սատանան իս մոլորցուց՝ իս վերաւորեց, աս երեք թշնամիները իս աս խեղճութեան մէջ ձգեցին, իս զրկեցին քու տուած շնորհքներէդ, թշնամի ըրին քեզի։ Բայց հիմա նորէն քեզի կուգամ, Հայր սուրբ, դու որպէս հայր անսխալ և անյիշաչար՝ մի յիշեր իմ ըրածներս, յիշէ քու ըրած բարերարութ-

թիւնդ։ Դարձո զերեսս քո՛ի մեզայց ի-
մոց, և զամենայն անօրէնութիւնս իմ
քաւեա յինէն։ Քու ըրած շնորհքներ-
պարապ չհիանալու համար՝ թող ինձ
այսօր իմ անօրէնութիւնս. ներէ՛ հաշ-
տուէ, նոր շնորհք զղջման տուր, որ
ճշմարիտ սրտիս զղջալով մեղքերէս
սրբուիմ, նորէն արքայութեան որդի
ըլլամ։ Ես ասացի՝ զարմանալ իմուս՝
թէ ընկեցայ ուրեմն յերեսաց աչաց
քոց։ Քաջալերեցարուք, և զօրացին
սիրտք ձեր, ամենեքեան որք յուսա-
ցեալ էք՝ ի տէր։ Բաղում տանջանք են
մեղաւորաց. բայց որք յուսան՝ ի տէր՝
ողորմութիւն տեսան շուրջ եղեցի ըզ-
նոքօք։

Այլ աղօթք առ նոյն.

Կը տեսնամ այսօր տէր՝ իմին թշուա-
ռութիւնս, և պատմելով արտաբջիդ իմ
հոգւոյս խեղճութիւնը, ներումն կը
խնդրեմ մեղքերուս։ Ես ալ աչխարհ-
հոս մէջ ճամբորդի մը նմանեցայ, որ
յանկարծ չիգիտնալով ճամբուն մէջը

աւաղակներուն ձեռքն ընկայ. իս թալ-
լեցին, ամմէն բանս առին. անկէց ետ-
քը իս ալ զարկին, վիրաւորեցին. ինչ
շնորհքներ ունէի մկրտութեան, ամ-
մէնը տարին, անմեղութիւնս կորսնցը-
նել տուին: Այն ճամբու աւաղակները՝
անգութ ատամանները՝ հոգիս ալ վի-
րաւորեցին, հաւատքս խաւարեցու-
ցին, իս մեղքէ մեղք ձգելով թու-
լութեան մը մէջ ձգեցին՝ որ աղօթք
չեմ ուզեր ընել, աղօթքի ալ նստիմ՝
համ չեմ առներ. բերանս ալ կը գո-
ցուի, ամմէն հոգևոր բանի սրտնեղու-
թիւն կուգայ. աշխարհային բաներու-
սէր կուգայ, բարեգործութեան բան-
ը ետ կը ձգեմ. անոնց վրայ է սիրտս
միտքս. ասանկ թշնամւոյ ձեռք եմ ըն-
կեր, կաղաղակեմ արարչիդ: Ա՛խ,
դու տէր բարեգութ, դու որ գթած
ամմարացոյն պէս օտար կերպարանք
մտար, մարմին առիր, հասարակ մարդ-
եղար, ու աշխարհէս անցնելով իմ
խեղճութիւնս տեսար, հասկըցար իմ
ամմէն ցաւս, մի զանց ըներ ուրիշնե-
րուն պէս, նայէ՛ վրաս ու գթա, բժըշ-

կէ իս աս հոգեւոր հիւանդութենէ, ու նորէն եկեղեցւոյ պանդոկին յանձնելով, սուրբ եկեղեցւոյ զանազան խորհուրդներով շնորհքներով իս ամրցընելով դարմանէ, հոգա, ինչուան մինչալ անգամ գալուստդ մեռնելուս ատենը. ինչպէս որ ատմարացւոյն օրինակովը մեզի հասկըցուցիր. որ մեռնելուս ատենը առողջ ըլլամ հոգեւորապէս. պարզերես ելլամ քու առջիդ, ու յաւիտեան քեզի հետ մնամ: Մերձ է ակր առ այնոսիկ՝ որ մաշեալ են սրտիւք, և զխոնարհս հոգւով կեցուցանէ: Այլ անձն իմ ցնծասցէ 'ի ակր, ուրախ եղիցի 'ի փրկութեան նորա. և ամենայն ոսկերք իմ ասասցեն. ակր, ո՞նըման է քեզ: Զի փրկեաց զաղքատն 'ի ձեռաց հզօրի, զաղքատն և զտնանկն յայնցանէ՝ որ յափշտակեն զնա:

Այլ աղօթք առ նոյն.

Ես որ բազմամեղ մեղաւոր եղեր եմ, մեղքերու մէջ թաթխուեր եմ, ապրելու ժառանգութենէ զրկուեր եմ,

հիմա թէ որ քու մարդասիրութիւնդ իմ զղջումս ընդունի, իմ մեղքերէս ազատէ, բոլորովին փրկիչ դուն կըլլաս ինձ ողորմութեանդ Աստուած. որ իս փրկելու համար խորհուրդ խոստովանութեան և սուրբ հաղորդութեան սահմանեցիր: Ամէն սուրբք և հրեշտակք պիտոր զարմանան անքաւ դըթութեանդ վրայ, որ մէկ մեղաւոր մը ատանկ անարժան՝ ինչպէս երբեմն չի-ձգեց, չիդատապարտեց, նորէն իր շնորհքներուն արժանի ըրաւ, մանաւանդ թէ արքայութեան որդի ըրաւ, սրբոց հետ մէկտեղ նստեցուց: Ես ալ զարմանալով կաղաղակեմ ան ատենը. ո՛ անքաւ մարդասիրութիւն Քրիստոսի. փառք գթութեան քո տէր, փառք մեծի բարերարութեան. ո՛րչափ հրեշտակք կան և սուրբք երանելիք՝ ամէն ալ օրհնեն զոլեն մեծացուցանեն պիտոր ատանկ անհուն գթութիւնը՝ որ իմ վրաս ըրած կըլլաս. ես ալ անոնց հետ մէկտեղ օրհնող, փառաբանող պիտոր ըլլամ յաւիտեան: Ո՛ ստեղծ աստանձին զսիրաս նոցա, 'ի միտ առնու

ղամենայն գործս նոցա։ Անձինք մեր համբերեսցեն տեառն, զի օգնական և պաշտպան մեր է։ Եղեցի ողորմութիւն քո տէր 'ի վերայ մեր, որպէս յուսացաք 'ի քեզ։

Այլ աղօթք առ նոյն.

Գթա՛, ողորմէ տէր իմ, ինչպէս որ ողորմեցար բորոտին. ծունկ չոքելով առջիդ՝ ես ալ անոր պէս կաղաղաղակեմ. Տէր, եթէ կամիս, կարող ես զիս սրբել։ Գարշելի է իմ հոգւոյս բորոտութիւնը, ընկոյ, կորսուեցայ, մեծ մեծ մեղքերու մէջ պլըշտըկեցայ, մէկ հրեշ մը դարձեր եմ որ չինճանչցուիր. ես ալ ինծմէն կը դանիմ. տեառնդ կը հարցնեմ, ինչ ընեմ որ բժշկուիմ, զի յոյս չիմնայ իմ գիտցէն։ Հրեշտակներ սուրբեր ինծմէն կը դանին, երես կը դարձընեն. դուն ես միայն ան երկնային գթած բժիշկը՝ որ չես դանիր. դու կարող բժիշկ ամէն ցաւերու՝ բժշկէ իս. դու հզօր փրկիչ ամենայն աշխարհի՝ ազատեա զիս. եկո՛, նայէ որ մէկ

գիս ողջ չէ մնացեր. քու ատեղծուածդ է, բայց այնչափ օտարացեր է մեղքերով որ չիճանչցուիր։ Տէր եթէ կամիս, կարող ես զիս սրբել։ Դու ալ աս իմ խղճալի ձայնս առնելով տէր իմ, գթա, խղճա, ձեռքդ երկնցու իմ վրաս, մոռիկցիր ինծի ինչպէս որ մոռիկցար բորոտին. լսեցո՛ւ ինծի ան ուրախալի ձայնդ ըսելով. Կամիմ, սրբեաց։ Ո՞ւր է, արդեօք աս ձայնս օր մը ալ ինծի պիտոր դայ. երբ պիտոր լսեմ ան ուրախութեան ձայնը, թէ եկայ տեսայ քու ողորմելութիւնդ, սրբեցի մեղքերդ քու հոգիդ։ Իմ բորոտեալ հոգիս ալ աս ձայնը առածին պէս՝ շուտ մը բորոտութենէ կը սրբուի. քու խրատովդ շնորհքովդ ուժ կառնէ, որ երթայ քահանային համարձակ ցուցնէ զինքը. իրեն բորոտութեան մեղքերուն վիճակը մէկիկ մէկիկ խոստովանելով պատմէ. ետքը պատարագ մատուցանէ վասն սրբութեան։ Այն առենը տէր իմ, ես ալ կաւաջադրեմ որ փոխուիմ, ուրչափ որ քեզնէ հեռու էի, այնչափ ալ աւելի քեզ մօտիկնամ, քեզ քարոզեմ, իմ

վարքուս բարի օրինակ տամ ուրիշնե-
րուն, որ անոնք ալ քեզի գան, քեզ-
մով փրկութիւն գտնան ամենքը։

Սաղմոս ԻԳ.

Յիշեա տէր զգթութիւնս քո, և զո-
ղորմութիւնս քո, որք են յաւիտենից։
Զմեղս մանկութեան իմոյ և զանդի-
տութեան իմոյ մի յիշեր, այլ յիշեա
զիս տէր ըստ ողորմութեան քում վասն
քաղցրութեան քո, զի քաղցր և ու-
ղիղ ես։
Վասն անուան քո տէր քաւեա զմեղս
իմ զի բազում եղեն. ո՞վ է մարդ որ
երկնչի 'ի տեառնէ, օրէնսդէտ առնէ
զնա 'ի ճանապարհի՝ յորմ և հաճեցաւ։
Անձք իմ յամենայն ժամ առ տէր, և
նա հանէ յորոգայթէ զոտս իմ։
Տես զխոնարհութիւն իմ և զվաս-
տակ իմ, և թող ինձ զամենայն զմեղս
իմ։

Մ.Յ. աղօթք առ նոյն.

Ես սուրբ եկեղեցւոյ որդի էի, սուրբ աւազանին միջոցաւ ընդունուած էի, իմ մեղքերուս կորսնցուցի հոգւոյս մաքրութիւնը. չարաչար մեղքերով աղտոտեցայ, կերպ կերպ երկան ցաւերով հիւանդութեան մէջ ընկայ. կուզեմ նորէն ըլլալ, նոր Պրոբատիկէ աւազանը ապաշխարութեան մնալ, բայց չեմ կրնար։ Անդամալոյծ մը դարձեր եմ մեղքերուս, դանդաղութիւնը վրաս տիրեր է, ծուլութեան և ձանձրութեան սատանան իս կապեր է, իս կը խղդէ, ոտքս ձեռքս առաջ չերթար՝ սուրբ ապաշխարութեան աւազանին մօտիկնալու, տարակուսեր կեցեր եմ, մէկը չունիմ որ իս հոգայ գարմանէ։

Հիմա դու բժիշկ հոգւոց, էկ տես սա երկան ժամանակուան իմ ցաւս. էկո ինծի տեսութեան, ինչպէս որ էկար երբունդութիւն տարուան անդամալուծին քովը. հարցու ինծի ասուա-

ծայնն քու բերնովդ, Կամին ողջ լինել։ Ան առեր իմ բերանս ալ կը բացուի, կը սկսիմ խոստովանիլ իմ ցաւերս, իմ տկարութիւնս պատմել. Տէր, ոչ զոք ունիմ թէ յորժամ ջուրքդ յուզիցին՝ արկցէ զիս յաւազանն. և մինչ էս գանդաղիմ՝ այլ ոք քան զիս յառաջագոյն ինչանէ։ Տէր իմ, ցաւս անբժշկելի է. վասն զի շատոնցուընէ պզտիկուցմէ բնութիւնս գէշի կը դիմէ. զղջում ալ չունիմ, առաջադրութիւն չեմ պահեր, խոստովանութիւնը ծանր բան կուգայ ինծի, և ամենէն աւելի ինծի գէշ աս է՝ որ մէկ մըն ալ չունիմ որ աս բանիս ճար ընէ, բայց եթէ զքեզ, որ հիմա քահանայի կերպարանքը եկեր էս, ես կը հրաւիրեմ որ պատմեմ զուրցեմ իմ ցաւս, անանկով բժշկութիւն գտնամ։

Ես կը պատմեմ քեզի իմ հոգւոյս ցաւը տէր իմ, դուն ալ լսեցու ինծի ան քու ձայնդ. Արի, ան զմահիճս քո, և գնա։ Քու ցաւերուդ պատճառը ան է որ կըսես, արի չես, դուն քեզնէ մեղքերուն մահիճէն չես ելլար. ան

քէզի անանկ է նէ արխուրթեան շնորհ-
քը Հոգւոյն սրբոյ. վերցու մեղաց մա-
հինը, գնա քահանային քովը ձգէ խոս-
տովանելով։ Ան ձայնս երբոր իմ հո-
գիս առնէ, շուտ մը կը յառնէ, կողջընոյ, կը քալէ։

Բայց շատ թշնամիներ իս կը պաշա-
րեն, չեն ուզեր որ մեղքերս վերցընեմ.
Ոչ է արժան քեզ առնուլ զմահինս քո,
կըսեն։ Առաջ իմ ձանձրութիւնս դէմ
կելլայ, քիչ մը առաջ ինչ որ կառա-
ջադրեմ՝ ետքը կը թուլնամ պահե-
լու. ես իս պէտք էր միշտ զղջման մէջ
պահէի որ չինթուլնամ, Դաւիթ մար-
գարէին պէս ըսելով. Եւ մեղք իմ առա-
ջի իմ են յամենայն ժամ։ Բայց խոս-
տովանելէս մեղքերս կը մոռնամ. ինչ
թէ յայտնի թողութիւն գտած եմ՝ ա-
նանկ հանդարտ կը նստիմ. սիրտս միտ-
քըս աշխարհային բաներու կուտամ։
Թէ որ քիչ մը ուրախութիւն գտնամ,
ան ուրախութիւնը բոլորովին մարմնա-
ւոր կը դարձընեմ, հոգևորէն կը պա-
զիմ, ատ է իմ կորստեանս պատճառը։

Ամէնք մէկիկ մէկիկ առջևդ կը դը-

նեմ, ոչ Ճարտար բժիշկ հոգւոց մերոց Քրիստոս, ինչպէս որ հիւանդ մը իր բժշկին կը զուրցէ, որ ինծի դեղը տաս, Ճարը գտնաս. վասն զի իրաւի ինծմէ յոյս չկայ, քեզի է մինակ բժշկելը։ Դուն իս նորէն գտիր խոստովանելէս եւեւ աս սուրբ տաճարիս մէջը, ու ըսէ ինչպէս որ ըսիր ան բժշկեալ անդամա-լուծին. Ահաւադիկ ողջացար, մի՛ եւս մեղանչեր, զի մի՛ չար եւս ինչ լինիցի քեզ։ Աս խրատիս զօրութիւնը էս ալ իմ սրտիս մէջը առնելով աս օրէս եւեւ փոխուիմ, մինակ մեղքերուս վրայ ցաւելով զղջումի հետ ըլլամ, որ ինչ առաջադրութիւն կընեմ, պահեմ։

Թէ որ կուզես մեղքերդ միտքդ բերել, ու առնլի զղջում ընել, կրնաս նաեւ մեծ պաքին երբոբդ և չորբոբդ շաբթուան աղօթքներն ալ ըսել, որ են աղօթք զղջման ու խոստովանութեան։

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ
ԱՌ ՍՈՒՐԲ ԽՈՐՀՈՒՐԴ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ
ԵՒ
ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

ԱՂՕԹՔ

Յառաջ քան զհաղորդուիլն.

Առ գեռս Բաբելացւոց անդ ելա-տէաք և լայաք, յուիշամ յիշէաք զքեզ Սիոն: Երբոր Իսրայէլացիք Երեանց մեղացը համար գերի ընկան, ինչուան Բաբելոն քշուեցան անգութ Քաղդէացւոց ձեռքովը, հառաչելով Երուսաղէմը կը յիշէին ու կուլային. ինչպէս կորանցուցինք քեզ Երուսաղէմ կըսէին, երբ պիտոյ տեսանենք քեզ ե-

ցուսալէմ մեր քաղաքը։ Հիմա իմ հոգիս ալ ասոնց պէս անգութ սատանաներուն ձեռքն ընկնելով, մէկ մեղքէ մէկալ մեղքը գլորելով՝ քեզմէ հեռացաւ, կորսընցուց վերին Երուսաղէմը, արքայութիւնը, կորսընցուց սրբոց ընկերութիւնը, մասնակից եղաւ սատանաներու։ Ամէնէն աւելի զքեզ կորսընցուցի տէր իմ, արարիչ իմ. գերի եղայ մարմնոյ, աշխարհի և սատանայի, որ նորէնոր կը ջանայ իս մեղքերու մէջ ձգելու. անհաւատի մը պէս զրկուեցայ հեռացայ սուրբ խորհուրդներէ, սուրբ շնորհքներէ. Թողուցի զանազական մարմին և արիւն Յիսուսի, եղայ մարմին և արիւն աշխարհի, որք ոչ կարեն ժառանգել զարքայութիւնն Աստուծոյ։

Հիմա զրկուած խեղճ մնացած հոգիս կը յիշէ ան սուրբ խորհուրդները, ան հոգևոր շնորհքները որ առեն մը կը վայելէր. կուլայ կը հառաչէ, ա՛խ կըսէ սուրբ Սիոն, սուրբ խորան անմահ պատարագիդ, ինչպէս քեզ կորսընցուցի, ինչպէս քեզ թողուցի։ Այլ

գու Աստուած ողորմութեան, Աստուած միխիթարութեան, որ կը գթաս քու ստեղծուածիդ վրայ, այսօր գթա իմ վրայ. Էկ, երեցու քու սուրբ երեսդ հրաշալի խորհրդով մարմնոյ և արեան քո. ինչպէս որ գթալով երեցար Թովմայի առաքելոյն. կանչէ քուկին քաղցր ձայնովդ իմ սրտիս՝ որ գործքով անհաւատ եղեր է, ըսելով. Բեր զմատուներս քո, և արկ այսր: Մի թողուր ըսելով սրբոց ընկերութիւնը՝ որ երբոր ես իս ցուցընեմ անոնց, դուն ալ իմ տեսութենէս չինզրկուիս. մի խաստացըներ քու սիրոդ առաքեալներուն քարոզիչներուն ըսածին դէմ, որ անհաւատի գործք չընես: Այն ատենն ալ այս ձայնս ըսելով իմ քարացեալ սիրտս կը կակղցնայ, քեզի կը դառնայ, կաղաղակէ Թովմայի հետ. Տէր իմ և Աստուած իմ: Ասկէց ետքը քեզի կը հաւատամ ամէր իմ, քու սուրբ առաքեալներուդ խրատը խօսքը կը բռնեմ. հերիք է որ քու սուրբ ձեռուներդ կը դպչին ինծի. քու սուրբ մարմնոյդ խորհուրդը կը հաղորդուի ինծի,

քու սուրբ արիւնդ կը կաթի իմ վրա։ մակէց էսքը չէմ բաժնուիր քեզնէ, քեզ միայն Աստուած կը դաւանիմ հաւատքով, և քեզ կուզեմ ծառայել մարմնով և հոգւով, որ յաւիտեան քեզ փառաւորելու արժանի ըլլամ։ ամէն։

Այլ աղօթք առ Լոյն.

Կը յաւիմ մեծապէս տէր իմ Յիսուս, որ մեղանչելուս քեզմէ հեռացայ. կը ճանչնամ այսօր որ քեզմէ հեռանալով ամմէն բարեաց զրկուեցայ. կուզէի հանդստութիւն երջանկութիւն, կարծէի որ՝ կամքս կատարելով՝ մեղքի հետևելով՝ ուզածս կը գտնամ. բայց մեղանչելուս ատենք չիվատաբկեցայ. քեզ ալ տէրդ իմ կորսընցուցի, սիրոս աւրեցի, խաղաղութիւնս կորսնցուցի, խղճմտանքս շփոթցուցի, չիմամաց որ քեզմէ դուրս երջանկութիւն չիկայ։

Հիմա սիրոս թշուառացեալ, հոգիս այրեցեալ, զրկեալ իր արարչէդ, իր

փրկչէդ, կուլայ, քեզ կը փնտռէ. կը գտնայ քեզ ամ սուրբ խորանին վրայ՝ շնորհաց աթոռը նստած տեսակաւ խորհրդոյ հաղորդութեան, կը կանչէ կաղաղակէ. Յիսուս վարդապետ, ողորմեայ ինձ: Իրաւի չեմ կրնար համարձակիլ առջևդ երևնալու, ոչ թէ միայն զքեզ սրբութիւնդ սրբոյ իմ մեղաւոր սրտիս մէջը առնելու խորհրդով հաղորդութեան. վասն զի կամօքս զքեզ թողուցի, քու թշնամիներուդ հետևեցայ, որ է աշխարհ, մարմին և սատանայ:

Բայց քու անբաւ մարդասիրութեանդ ապաւինելով, ուրդ կկենամ, մեղայ կըսեմ, նորէն թողութիւն կուզեմ, նորէն քեզի կը մօտիկնամ ամ սուրբ խորհրդով հաղորդութեան, փէշդ կը փակչիմ. ինչպէս որ հիւանդները միայակ փէշիդ փակչելով կըուընացընէիր, հիմա ալ իս ըուընացու մահացու հիւանդութենէս, որ հոգիս ալ կուզէ սպաննել: Ինչպէս որ Զաքէոսին տունը գալով, քարացեալ սիրտը փոխեցիր, մեղաւորը արդար ըրիր,

չար սովորութիւնները փոխել տուին, որանկ ալ եկած իմ սրտիս մէջը նստէ սուրբ խորհրդովս, իս ալ արդարացուս ատոր պէս։ Վասն զի քու գալ նստիլդ միայն, ան տունը արդարութիւն և արքութիւն կըլլայ, անանկ ալ իմ սիրտս քու գալովդ բնակարան և օթեւան կըլլայ ամենասուրբ Երրորդութեանդ։

Մ՛յլ աղօթք առ նոյն.

Ե՛կ տէր իմ, տես ի՞նչ եղեր է ան հոգին՝ որ դուն ստեղծեցիր։ Ե՛կ տէր իմ, տես ան միտքը՝ որ աշխարհիս ունայնութեան մէջ ընկղմեր է։ Ե՛կ տէր իմ, տես ան աչքը՝ որ դուն ստեղծեցիր աշխարհիս գեղեցկութիւնը վայելելու, քեզ փառաւորելու համար. ան աչքը աշխարհիս մեղքերովը կուրցեր է. ան բերանը որ պէտք էր քեզ օրհնելու՝ պիղծ խօսքերով անէծքով լեցուեր է. ան ականջը՝ որ երկնային աւետարանին ձայնը պէտք էր մտիկ դնել, սատանային ձայնը կը լը-

սէ, ամենը խրատը ըսածը կը պահէ. աշխարհիս հոգը իր հոգաւորութեան անուշ կուգայ, երկնային անուշահոտութիւնը աղօթքի՝ քարոզի՝ իրեն աղէկ չէգար։

Ամենք սեմնալով սէր իմ, եկո դուն սիրէ՛ քու ստեղծուածոյդ վրայ. մի թողուր որ օտար սատանան սիրէ։ Մի ընկենուր զիս սէր յերեսաց քոց, և զՀոգի քո սուրբ մի հաներ յինէն։ Այլ քու սուրբ խորհրդաւոր գալըստեամբդ որ հիմա պիտոր գաս, իմ սրտիս մէջը պիտոր նստիս, դուն սիրէ՛, դուն իշխէ՛, թագաւորէ՛ շնորհքովդ, վասն զի քու ստեղծածդ եմ։ Սիրա սուրբ հոգատաեա յիս Աստուած, և զՀոգի ուղիղ նորոգեա՛ ի վերի իմում։ Նոր միտք, նոր աչք, նոր ականջներ անկէ, որ բոլորովին քուկինդ ըլլամ, ասկէց ետքը մէկ կամք՝ մէկ վարք ունենամ քեզի նման։ Ապաշխարութենէ՝ խաչ քաշելէ չեմ խանչիմ, որ անդին ալ յաւիտեան քեզի հետ մէկտեղ ըլլամ դէմ յանդիման քու սուրբ երեսդ սեմնալով. ամէն։

Մ.Յ աղօթք առ Հոյն.

Տէր իմ Յիսուս Քրիստոս, ահա կը տեսնամ քեզ մարմնով նստած արքունութեան սեղանոյս վրայ՝ որ է տեղի ողորմութեան. հոս չես նստած հիմա գահաւոր արդարութեան, հապա հայր ողորմութեան. որ ամենուն կը բաժնես հաց կենդանութեան, կարօտները կը կերակրես։ Ամանկ ողորմութեան տեղը՝ ողորմութեան օրերը՝ մէկը չի պատժուիր, որչափ անարժան ու մեղաւոր ըլլայ. ես որ հիմա ատանկ ողորմութեան տեղդ եմ ապաւիներ, որ է պատարագիդ սուրբ սեղանը, մի՛ պատժեր տէր իմ, այլ ողորմէ. քու դթութեան շնորհքէդ ինծի ալ մէկ բաժին մը՝ մէկ փշրանք մը հանէ ընելով. Դթամ՛ի ժողովուրդդ, զի արդէրեք աւուրք են՝ զի կան առ իս, և ոչ ունին զինչ ուտիցեն. ինչպէս որ ըսիր չորս հազարին վրայ. վասն զի երաւցընէ հոգիս չունի բան մը ուտելու առ աշխարհիս Ճամբուն մէջ. մեռնելու մօ-

տիկ է անօթութենէ. վասն զի ինչ շնարհք ինչ բարիք որ տուեր էիր հոգւոյս կերակուր ընլալու համար՝ անոնք ամենքը կորսընցուցի, մէկ ոչինչ մեղքի մը համար դուրս նետեցի, մէկը չիկայ կերակուր տուող։ Առաքեալները՝ քահանաները՝ ամենն ալ տարակուսեր են իմ անապատացեալ հոգւոյս վրայ։

Դուն միայն ես որ կրնաս իս կերակրել, և չես ուզեր որ անօթի արձակես թողուս, չըլլայ որ՝ աշխարհիս Ճամբուն մէջ անօթի մնամ. թէ որ դուն ասանկ չիհոգաս տէր իմ, որ աշխարհ կերակրեցիր, իս մէկը չիկրնար հոգալ. թէ որ դուն իս չիկշատցընես, որ ջրոս հաղարը ոխտը հացով կշատցուցիր, մէկը իս չիկրնար կշատցընել. ոչ աշխարհ և ոչ մարմին։ Իրաւի ես ինչուան հիմա կը կարծէի որ անոնք իս կրնան կշատցընել, անոր համար աշխարհի ու մարմնոյ հետևեցայ, բայց խաբուեցայ. հիմա իմացայ որ դուն ես միայն հոգիս կշատցընող անմահական սեղանիդ։ Տուր ինծի աս սուրբ մարմինդ հաց անմահական, կերակուր յա-

ւիտենական, անանկով դանիմ հեռա-
նամ աշխարհային բաներէն, միայն քե-
զի մօտիկնալով քու կամքդ կատարե-
լով զմայլիմ յաւիտեան. ամէն:

Այլ աղօթք առ Հոյն.

Ահա կը համարձակիմ կուգամ կը
մօտիկնամ քեզ առնելու, ով երկնային
մանանայ, ով հաց հրեշտակաց, որուն
մէջը պայծառ հաւատքովս կը տես-
նամ բազմաց զտերդ իմ Յիսուս Քրի-
ստոս. կուգամ ոչ իմով արժանաւո-
րութեամբս, այլ քուկին անհուն գթ-
թութեամբդ և անհուն կարողու-
թեամբ՝ որ իմ սիրոյս համար առ խո-
նարհ կերպարանքը մտար: Ասիկայ
ըլլայ ինծի քաւութիւն և թողութիւն
աննեղելի մեղաց իմոց, հաշտութիւն
ամենասուրբ Երրորդութեան հետ,
նեղութիւն ամենայն պատժոց որ մեղ-
քերս վաստակեցան: Ըլլայ ինծի դեղ
կենաց, շնորհք յարատեւութեան որ
ամէն մեղքերէ՝ չար սովորութիւննե-
րէ կարուիմ: Ըլլայ կատարիչ խրատ-

եմ, չես ուզեր որ կորսուիմ։ Քանի որ
ես քեզմէ կը փախչիմ, մէկ մեղքէ մէ-
կալ մեղք ինալով կը հեռանամ, այն-
ջամի ալ դուն մարդասիրութեամբդ իմ
եաւէս կուգաս, քաղցր ձայնով ինծի
կը կանչես. Եկայք առ իս ամենայն
վաստակեալք և բեռնաւորք, և ես
հանգուցից զձեզ։

Ա՛ հերիք չիսեպելով հիմա ալ իմ
սիրաս կուգաս կը հանդչիս, մարմնով
և արեամբդ կը կերակրես իս շահելու
համար։ Քուկինդ եմ տէր իմ, քու-
կինդ է աս սիրաս, աս միտքս, որ ես
ինչուան հիմա մեղքի ծառայեցուցի.
բայց քու աս սէրդ՝ աս քու դալուստդ
տեսնալով՝ հիմա բոլորովին կը դառ-
նամ, մեղքերս կը ձգեմ, քեզի կու-
գամ, վասն զի դու թագաւոր թագա-
ւորաց՝ առաջ ինծի եկար։ Կաղաչեմ
տէր իմ, աս սէրդ իմ վրայէս մի պակ-
սեցըներ ինչուան հոգը. եկո՛, ելլէ
իմ վրաս. թող մի տար որ օտարանայ.
ինչուան որ երես երեսի արքայու-
թեան մէջ քեզ տեսնելու, քեզի հետ
մէկտեղ նստելու արժանի ընես տէր
իմ և Աստուած իմ։

եմ, չես ուզեր որ կորսուիմ։ Քանի որ
ես քեզմէ կը փախչիմ, մէկ մեղքէ մէ-
կալ մեղք ինալով կը հեռանամ, այն-
ջամի ալ դուն մարդասիրութեամբդ իմ
եաւէս կուգաս, քաղցր ձայնով ինծի
կը կանչես. Եկայք առ իս ամենայն
վաստակեալք և բեռնաւորք, և ես
հանգուցից զձեզ։

Ա՛ հերիք չիսեպելով հիմա ալ իմ
սիրաս կուգաս կը հանդչիս, մարմնով
և արեամբդ կը կերակրես իս շահելու
համար։ Քուկինդ եմ տէր իմ, քու-
կինդ է աս սիրաս, աս միտքս, որ ես
ինչուան հիմա մեղքի ծառայեցուցի.
բայց քու աս սէրդ՝ աս քու դալուստդ
տեսնալով՝ հիմա բոլորովին կը դառ-
նամ, մեղքերս կը ձգեմ, քեզի կու-
գամ, վասն զի դու թագաւոր թագա-
ւորաց՝ առաջ ինծի եկար։ Կաղաչեմ
տէր իմ, աս սէրդ իմ վրայէս մի պակ-
սեցըներ ինչուան հոգը. եկո՛, ելլէ
իմ վրաս. թող մի տար որ օտարանայ.
ինչուան որ երես երեսի արքայու-
թեան մէջ քեզ տեսնելու, քեզի հետ
մէկտեղ նստելու արժանի ընես տէր
իմ և Աստուած իմ։

Աղօթք առ Հոյն.

Ո՛վ պատուական մարմին Քրիստոսի, որ եկար իմ մարմնոյս հետ խառնուեցար, դու սրբութիւն սրբոցդ՝ մեղաւոր սրտիս մէջը բնակեցար. իս սրբէ, իս կենդանի, իս մաքրէ։

Ո՛վ մեղաքաւիչ արիւն Քրիստոսի, որ իմ մեղասէր արիւնիս մէջ խառնուեցար, վառէ իս քու սիրովդ. ա-նուշցու իմ լեղի բարկութիւնէս, լեղի հպարտութիւնէս, և մնացած ամէն մեղքերէս։

Ո՛վ պատուական ջուր կողին Քրիստոսի, անմահութեան ջրովդ կենդանացո իմ հոգիս, մարմինս և միտքս. բժշկէ չարաչար մեղքերու բորբոքութիւնէ։ Թէ որ Յորդանանու ջուրը Նէէման ասորւոյն բորբոքութիւնը լուաց՝ Եղիսէ մարգարէին խօսքովը, քանի աւելի դու ո՛վ անհուն ջուր արարչին, որ ստեղծողն է Յորդանանու և Ովկիանոս ծովու, որ խաչին վրայէն Քրիստոսի կողէն բացուած աղբիւրի

պէս մեղաւորիս վրայ կը վազէ, քանի աւելի պէտք է որ լուանաս, մաքրես որքան մեղքերուս գարշելի բորոտութիւնը։

Ո՛վ պատուական քրտինք Քրիստոսի, որ ինծի համար արիւն քրտնեցար, դու ինծի կեանք տուր, զօրութիւն տուր, որ քու սուրբ պատուիրանքներդ պահեմ, քու կամքդ կատարեմ։

Ո՛վ անգին չարչարանք Քրիստոսի, տուր ինծի արիւնթափման շնորհք, որ ես ալ սիրով քաշեմ իմ խաչերս. քու սուրբ վէրքերդ տպաւորէ իմ սրտիս մէջը, որ ուրիշ բան չխնդրեմ աս աշխարհս՝ բայց եթէ քեզի նման խաչակից ըլլալով, անգին ալ քեզի նման ըլլամ, վայելելով քու թագաւորութիւնդ, քեզ դէմ յանդիման տեսնալով յաւիտեան. ամէն։

Ա՛յլ աղօթք առ նոյն.

Ա՜ս սուրբ խորհրդով հաղորդութիւնս տէր իմ Յիսուս Քրիստոս, որ

զքեզ բոլորովին ինձի կուտաս, ես ալ բոլորովին քեզ կը նուիրեմ, քեզ պատարագ չմատուցանեմ իմ անձս, իմ ամէն կարողութիւնս, միտքս, կամքս, ամէն զգայարանքներս. ինչպէս որ դուն ալ ինձի համար քեզ պատարագ մատուցիր Հօր Աստուծոյ, և սուրբ մարմնով և արիւնով ալ հիմա ինձի հաղորդեցիր: Ա՛ս սուրբ խորհուրդին ուժովը ըրէ՛ տէր իմ, որ ասկէց ետքը մէյմըն ալ չիբաժնուիմ քեզմէ մեղանչելովս, հեռու ձգեմ աւելորդ հոգերը, միայն քու սիրովդ ապրինայ իմ քարացեալ սիրտս, միայն քու վրադ խօսիմ, քու չարչարանքներդ մտածեմ, և ինծի ըրած բարերարութիւններդ յիշեմ, զուարճանամ. վասն զի արժանի ես սիրելոյ, և պատուելոյ, և պաշտելոյ տէր իմ Յիսուս:

Ի՜նչ ազէկութիւն, ի՜նչ երախտիք է տէր իմ, որ արժանի համարեցար ինծի պէս մեղաւորին սիրտը գալ. դու որ արքութիւն արքացդ ես, դու որ թագաւոր թագաւորաց ես, արարիչ ամենայն արարածոց, ուսկից կը գոլան

երկինք և երկիր, հրեշտակք՝ սերոբէք և քերոբէք։ Ընթոր կը մոտծեմ, ես ալ կը դողամ կը սարսափիմ, ուրիշ խօսք չեմ կրնար ըսել, բայց եթէ տէր, դու ստեղծեցիր աս ստեղծուածը, դու այսչափ երախտիք, պարգևներ, շնորհքներ տուիր, դուն խնայէ, մի կորնչցներ, մի յիշեր իմ մեղքերս, այլ քուկին շնորհքովդ պահէ իս սատանայի, աշխարհի և մարմնոյ փորձութիւններէ, որ մեռնելէս ետև ալ քեզի հետ մէկ տեղ ըլլամ արքայութեան մէջ զմայլելով յաւիտեան։ ամէն։

Այլ աղօթք առ նոյն.

Ո՛վ արդարութիւն ստուածային, ասկէց ետքը ա՛լ չես բարկանար մեղքերուս համար, տեսնելով որ Միածնին արեանը մէջ թաթաւեր է իմ մեղաւոր մարմինս։ Թէ որ պատուհասող հրեշտակը՝ մարմնաւոր անբան գառին արիւնը տեսնելով Հրէաներուն դռներուն վրայ, անցաւ գնաց, չիմանալով չիմացուց Հրէաներուն ան-

դրանիկներդը, հիմա որ իս կը տեսնաս արեամբ անարատ դառնին Աստուծոյ լուացուած, ինչպէս պիտոր բարկանաս, ինչպէս պիտոր սուրն բարկութեան չիդարձընես։ Կընայ ըլլալ որ վրէժխնդիր ըլլայ արդարութիւնդ ան մեղաւորին՝ որ արիւնն Յիսուսի վրան թափեցուլ սրբեց, ու միջնորդ Աստուծոյ և մարդու ըլլալով Աբելին արիւնէն աւելի կը խօսի, յերկինս կաղաղակէ. Հայր, թող առ մեղաւորիս. վասն զի ես իմ արիւնս ասոր վրայ թափեցի, իմ արիւնս ասոր ճաշակեցուի, իմ արիւնս ասոր արեան հետ խառնեցի. մէկ մարմին եղանք սուրբ խորհրդով հաղորդութեան։

Ո՛վ ձայն սուրբ արեանն Յիսուսի, ձայն զօրաւոր քան զձայն իմ ասկալի մեղքերուս, հզօր բարեխօս խնդրող ողորմութեան, որ մէկ ձայնով աւազակը արդարացուցիր սրբեցիր՝ քու արեանդ մասիկ կենալովը, հիմա իս սրբէ, իմ մեղքերս ջնջէ, ասուածային արդար բարկութենէն իս ազատէ, որ քու արիւնդ ճաշակեցի։ Եւ դու, ո՛վ

արդարութիւն Աստուծոյ, դարձուք բարկութեանդ սուրը, մի պատժեր իս իմ չարաչար մեղքերուս համար. վասն զի արիւնն Աստուծոյ քըսուած է վրաս. անդին անհուն արիւնն Յիսուսի է՝ որ վրաս կաթեցընելով իմ մեղքերուս ներում կը խնդրէ. Աստուած է որ կաղաղակէ, կը բարեխօսէ ինծի համար։ Այլ պատժելուն տեղը Հոգւոյն սրբոյ շնորհքով լեցու, զարդարէ, որ ասկէց ետքը միայն աստուածային կամքը կատարելով, արդարութեամբ սրբութեամբ անցընեմ մնացած իմ կեանքս։

Աղօթք զկնի հաղորդութեան առ սուրբ կոյս Աստուածածինն։

Աստուածային անհուն գթութիւնն է՝ որ ինծի աս կոչունքը աս հարկինքը ըրաւ, արժանի ընելով հաղորդուելու Յիսուսին մարմնոյ և արեան. որ է հոգևոր հարանիք ուրախութեան սիրոյ, ուր մէկտեղ հաց ուտելով վայելենք. բայց իմ գինիս շնորհաց պակսեցաւ,

ամօթով մնացեր եմ ամէն սրբոց ու հրեշտակաց առաջին։ Դուռն անմէնօրհ նեալ սուրբ կոյս Աստուածածին, որպէս մայր դիւաց, ինչպէս որ Կանայ դալիլեացւոց հարսանիքին մէջ երբոր գինին պակսեցաւ, ծածուկ դացեր Քրիստոսի յայտնեցեր, խնդրեցեր հրաշքով մը գինի ընելու, որ տանուտէրը ամօթով չմնայ, ասանկ ալ այսօր իմ պակասութիւնս բաց, Քրիստոսի առջին գիր, ըսելով որ՝ թէպէտ կուտեմ կը վայելեմ առ հոգևոր հարսանիքին սեղանէն, բայց գինի շնորհաց Հոգւոյն սրբոց չունիմ. անմահական բաժակաւ հոգևոր ուրախութեան չեմ կրնար զմայլիլ։ Դուռ այն հղօր բարեխօսն ես, որ թէ և իմ անարժանութեանս համար Քրիստոս չուզէ հրաշք ընել, բայց քու միջնորդութեանդ համար կը կատարէ. քու ձեռքովդ դուռն շնորհաց Քրիստոսի կը բացուի իմ վրաս, ինծի կապալիրէ ջրով արտասուաց ապաշխարութեան լեցընել իմ երկու աչքիս ամանները, իմ քարացեալ սիրտս ալ երեն շնորհքով կը

բղխայ ջուր զղջման, աչուքներս ար-
ցունքով կը լեցուի՝ մեղքերս լալու հա-
մար, ինչպէս որ ան հարանիքին մէջը
թակոյկները ինչուան վերը լեցուե-
ցան. ան ջուրը ապաշխարութեան Քը-
րիստոս անեւեւոյթ զօրութեամբ կը փո-
խէ, գինի ուրախութեան կը դարձնէ։

Ան առենը կը զարմանան իմ վրայ
հարանիքին սաճարապետները, սուրբք
երկնայինք և հրեշտակք, թէ ինչպէս ան
հոգին՝ որ պարապ էր շնորհքներէն,
գէշ էր, հիմա լեցուեցաւ ու անուշ-
ցաւ Հոգւոյն սրբոյ շնորհօք. առաջ որ
լեղութիւն ունէր իր գէշ վարքովը,
լեղի կերևնային իրեն Աստուծոյ պա-
տուիրանքները, փոխուեցաւ, Աստու-
ծոյ պատուիրանքներուն համը քաղց-
րութիւնը հիմա առաւ։ Ես ալ կառ-
նեմ կը խմեմ Աստուծոյ պատուիրա-
նաց բաժակը փրկութեան, ու կը զմայ-
լիմ երկնային սիրով. անկէց ետքը աշ-
խարհքէս համ չեմ առնուր. միշտ աս-
տուածային բաներու վրայ սիրտս ձգե-
լով՝ ես ինծի կ'ըսեմ. Ինչ յուսի ու գէշ
է ինչը աշխարհիս գինին, աշխարհիս ու-

բախտութիւնը, որ առաջ կը պաշտէի։ Հիմա եռքի օրերս կիմանամ ինչ անուշ է եղեր գինին երկնային կենաց, և գիտեմ որ՝ աս հրաշական գինւոյն փոխուելը՝ քու աղաչանքովդ եղաւ, չէ՞ նէ ես ոչ երբէք արժանի էի աս շնորհքին։

Նախամայրն Եւայ՝ առջի պտուղը մեզի կերցուց՝ Աստուած ըլլալու համար, ամէնքս ալ անէծքի ու տրամութեան մէջ ընկանք, կորանք։ Հիմա գուն երկնային գրախտին առաջի խաղողը մեզի կերուցիր, անապական անուշ գինին՝ Քրիստոսին ձեռքովը բաժնել տուիր, որ խաչին ծառին վրայ ողկուզի նման քամուեցաւ անմահական բաժակին մէջ։ Ան բաժակը ամէնքս ալ խըմելով՝ ուրախութեան մէջ զմայլեցանք, Աստուած գարձանք, անմահացանք, սեղանակից ըլլալով Որդւոյն Աստուծոյ աս աշխարհիս մէջ։ Քուկին հզօր բարեխօսութիւնդ ընէ որ սեղանակից ըլլանք անդին ալ արքայութեան մէջ։ Անով օրհնենք զԱստուած, օրհնենք և զքեզ Հշմարիտդ Եւայ՝ մեր յաւիտենական կենաց նախամայրը։

ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ

ԸՆԴ ՀՈԳԻՈՅ

ՁԿՆԻ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

Յարմարեալ քանից Երգոց Երգոյն Սողոմոնի.

Աստուած երբոր մարդս ստեղծեց, աղուոր դրախտի մը մէջ դրաւ. հոն մարմնաւոր զուարճութիւններէն զատ՝ հոգևորն ալ մէկ տեղ կը վայելէր, անմեղ ըլլալով։ Աստուած մարմնաւոր կերպով մը մարդուս կերևար, երբեն հետ կը խօսակցէր, երբեն բաներ կը սորվեցնէր. մարդս ալ զԱստուած կը սիրէր, սիրալը զուարթ, խղճմտանքը հանգարտ, Աստուծոյ հետ կը խօսակցէր, կը զմայլէր։

Ադամայ մեղքը՝ մէկ արդէրուած պտուղ մը ուտելով, զինքն ալ՝ և երբեն որդիքներն ալ դուրս ձգել տուաւ, ու զրկեց այն մարմնաւոր ու հոգևոր զը-

ւարձուԹենէն։ Երբոր Քրիստոս սէրն մեր աշխարհ եկաւ, նորէն մեզ մէկ հոգևոր դրախտի մը մէջ խօԹեց, որ Ադամայ դրախտէն շատ վեր դեր-զանցէց։

Այս դրախտը՝ է հրաշալի խորհուրդ սուրբ հաղորդուԹեան. հոս Աստուած մարմնաւորապէս մարդուս կուգայ և ընդհօք կը խօսի, մարդս ալ Աստուծոյ հետ կը խօրհԹէ, կաղաչէ, հոգևոր բաներ կը սորվի, երկրաւոր բաները կը Թողու, երկնային բաներուն սէր կը ձգէ։ Ան աստուածային սէրը՝ որ մարդս երկինքը պիտոր վայելէ Աստուծոյ հետ, այս սուրբ խորհրդովը իրը Թէ անոր համոնքը կընէ աշխարհիս վրայ։

Սոլոմոն իմաստուն հոգւով սրբով իմանալով ասանկ սէրը Աստուծոյ ու մարդու մէջ, մէկ գիրք մը շարադրեց Երգ երգոց անուանով. հոն կը ձևացընէ իրը մէկ դրախտ մը, ուր Աստուած հոգւոյն հետ կը խօրհԹէ, սէր կը ցուցընէ, մարդուս հոգին ալ Աստուծոյ հետ կը խօրհԹէ։ Այս սէրը ու խօսակցուԹիւնը կըլլայ մէյմը երկինքը արքայուԹեան մէջ, մէյմըն ալ երկրիս վրայ Յիսուս առնելու տեղը սուրբ խորհրդով հաղորդուԹեան։ Ան Երգ երգոց

գրքին խօսքերը հոս կը կարդաս հիմա օխտը խօսակցութեան մէջ, որք են խորհուրդք գաղտնիք և զարմանալիք։

Ա. ԽՕՍՔ ՔՐԻՍՏՈՍԻ

ԱՌ ՀՈԳԻՆ ՀԱՂՈՐԴԵԱԼ

Ո՞վ է սա որ եկեալ գայ յանապատէ, իբրև զծուխ ծառացեալ բարձրացեալ. զմուռս և կնդրուկ յամենայն փոշւոյ իւզագործաց. (գ. 6)։ Ելեր գու զՀեռ դարշապարացն հօտից, և արածես զուլս քո 'ի վրանս հովուաց. (ա. 7)։

Ո՞վ է սա հոգին, որ մնատպատ էր դարձեր մեղքերով, շնորհքներէ զըրկուելով. իմ պատուիրանքներս իրեն ասելի և ծանր կերևային. երկնային բաները ձգեր էր, երկրաւոր բաներէրը մինակ կը սիրէր. անոր համար ինծմէն հեռու կը քալէր։ Հիմա սա սիրոյ աղօթքովը դէպ 'ի վեր ինծի կուգայ, ինչպէս մէկ մուխ մը մեղքերով սևցած՝ որ երկիրս կը ձգէ, մէկէն վեր կելլայ ծառի մը պէս կը բարձրանայ, հեռանալ անուշահոտութիւն կը բերէ, զը-

մուռս ապաշխարութեան, կնդրուկ աղօթից, խստնուած սուրբ իւղով ողորմութեան և բարեգործութեան, ինծի հաճոյ երևնալ կուզէ, իս կը վինաուէ, մեկուզ ըլլալ կուզէ:

Ա՛հ որդեակ, պէտք չէր ասանկ մեղանչելը, պէտք չէր ասանկ խեղճ ձըգելը հոգիդ որ՝ ես ինծի համար ստեղծեր էի: Բայց ողորմութեան Աստուած եմ, նորանց կընդունիմ քու ապաշխարանքդ, քու մեղադ, կը լսեմ քու աղօթքներդ՝ որ հիմա հաղորդուելէդ ետև աղաչեցիր: Բայց դուն մեկ պակասութիւն մը ունիս, որ ան քեզ շատ ատելի կընե ինծի: Դուն մեկ առաջադրել մը ունիս որ՝ հոս խօսք կուտաս, ասկէց դուրս ելածիդ պէս կը մոռնաս. երբոր մեկ մեղքի մը առիթ կուգայ՝ հոն պէտք էր յիշել քու առաջադրութիւնդ, ամենևին չես յիշեր:

Հիմա դուն ելար մեղաւորներուն մէջէն, ելար հեռևեցար ոչխարներուն հօտին ետևէն. բայց քիչ մը անցնի՝ մեղքի մը առիթ գայ, կերթաս ուրիշներուն ժողովքին հետ մեկ տեղ կար-

ծուխս, մէկաեղ կը խառնուխս։ Ահա աս կերպ առաջադրութիւնդ է՝ որ քեզ թող չիտար առաջ գալու, թող չիտար որ միշտ մէկաեղ մնանք. մէյմը ինծի կուգաս, մէյմը ինծմէն կը բաժնուխս։ Եթէ կաւզես որ միշտ մէկ տեղ մնանք, հոս ինչ որ կառաջադրես, ան առաջադրութիւնդ միշտ հետդ տանիս, միշտ յիշես թէ ինծի ինչ խօսք տուիր։

ԽՕՍՔ ՀՈԳԻՈՅՆ

ԱՌ ՔՐԻՍՏՈՍ ՊԱՏԱՐԱԳԵԱԼ.

Զայն եղբօրորդւոյ իմոյ բաղխէ զդուռն. մերկացայ զպատմուճան իմ, զիարդ զգենցայց զնա. լուացի զոտս իմ, զիարդ աղտեղեցից զնոսա։ (Է. 2. 3)։

Ահուասիկ կը լսեմ իմ արտաքին՝ իմ փրկչիս ձայնը, որ իրեն սիրալիր ձայնովը իմ խղճմտանքիս դուռը կը զարնէ, իս կարթընցընէ. ճամբայ կը ցուցընէ՝ որ այլ մեղքերու մէջ չիյնամ, իրմէ չիբաժնուիմ։ Տէր իմ Յիսուս, ես ան մեղաւորին հագուստը հիմա մեր-

կացայ թողուցի, մէյմ՚ալ ինչպէս հարգնիմ. իմ մեղքի Ճամբաս փոխեցի, ուուբինեբս սուրբ խորհրդով ապաշխարութեան լուացի, ինչպէս մէյմ՚ալ աղտոտեմ։ Ո՛վ տէր իմ Յիսուս, դուդ էս ղքեզ, որ մեղքերովս կորսընցուցեր էի. ասկէց ետքը անանկ կառաջադրեմ, որ մէյմ՚ալ ոչ երբէք մեղանչեմ, ոչ երբէք քեզմէ բաժնուիմ. միշտ մէկտեղ նստինք քեզ սիրելով, ինչպէս որ դուն ալ իս սիրեցիր։ Որչափ բան քաշեմ, քեզ ունենալով անհուն Աստուածդ, միշտ սիրտս՝ հոգիս՝ մարմինս ուրախ կը մնայ։ Մինչեւ աս կաղաչեմ ո՛վ սիրելի Յիսուս. թշնամիներս շատ են. երբոր իս մեղք խօթել պիտոր տան, դուն իս չեմթողուս, շնորհքովդ հանիս, մեղքերէս պահես, որ միշտ քեզի հետ մէկտեղ մնանք, մէկմէկէ բնաւ չիբաժնուինք։ Աս կաղաչեմ, չէ թէ իմ արժանաւորութեանս համար, հապա քու արարչական ու փրկչական սիրոյդ համար։

Բ. ԽՕՍԲ ՔՐԻՍՏՈՍԻ

ԱՌ ՀՈԳԻՆ ՀԱՂՈՐԴԵԱԼ

Առեալ ածից զքեզ 'ի տուն մօր իմոյ, և 'ի սենեակ յղացելոյն զիս. արբուցից քեզ 'ի գինւոյ խաղողոյ ածաց, յօշարակէ նռնենեաց։ (Ը. 2)։

Ո՛վ որդեակ, երբեմն ես աշխարհքէս պիտոյ բաժնուէի, յիշեցի որ քուկին առջի հայրդ Ադամ երբեմն դրախտը գրի, ամմէն ագնիւ պտուղներ իրեն կերակուր տուի. բայց ինչ կերակուր որ տուի իրեն, Ադամ միանակ ան պըտուղը աւելի ուզէց ուտել՝ որ ինծի նըմանիլ մը կը բերէ հասկըցաւ։ Ես ա յիշեցի, քեզ ալ միտքս բերի, ըսի որ՝ թէ որ Ադամ կերակուր մը չիկրցաւ ուտել որ ինծի նմանի, գոնէ իր զաւակներուն մէկ կերակուր մը հնարեմ որ, անիկայ կերածնին ալէս ինծի նմանին։ Հացն զոր ես տաց՝ մարմին իմ է, զոր ես տաց վասն կենաց աշխարհ-

հի։ Քեզ ալ միաքս բերի, ըսի որ՝ ա-
նանկ կերակուր մը ընեմ որ՝ մինակ
իմ առենի քրիստոնէները չիվայելեն,
հապա յաւիտեան քշէ, որ դուն ալ
անկէց վայելես ուտելով։

Այս ըսի, իմ ամէն իմաստութիւնս
բանեցուցի. հացն ու գինին՝ որ մար-
դուս ախորժակն կերակուր է ստեղ-
ծեր, անանկ մէկ հրաշալի խորհուրդ
մը դրի որ՝ ո՛վ որ ուտէ ան կերակուրը,
ով որ ըմպէ ան գինին, իբր թէ մեկ օ-
շարակ, մէկ երկնային ըմպելի մը կառ-
նէ, որ իրաւ կը զմայլեցընէ անմահա-
կան բաժակով։ Զի մարմին իմ ճշմա-
րիտ կերակուր է, և արիւն իմ ճշմա-
րիտ ըմպելի է։ Եւ իբր թէ իմ տունս
իմ սեղանակս տարուած կըլլայ, ուր որ
ես արարիչս կուսածին մարմնով յղա-
ցայ և ծնայ՝ի տուրբ Կուսէն. ինծի հետ
մէկտեղ բնակակից կըլլայ, ես կը փո-
խակերպի։ Որ ուտէ զմարմին իմ, և
ըմպէ զարիւն իմ, յիս բնակեսցէ, և ես
՝ի նմա։ Վասն զի ես իս կերակուր
տուի իրեն։ Այս ըրի քու սիրոյդ հա-
մար՝ որպէս զի չիմեռած՝ երկրիս վրայ

ալ իս գանաս, իս վայելես, ինձի հետ մէկ ըլլաս, անով հեշտ ըլլայ քեզի իմ առջի պատուիրանքս պահելու՝ որ ապրսպրեր եմ. Սիրեսցես զտէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ, յամենայն անձնէ քումմէ, և յամենայն զօրութենէ մտաց: Վասն զի հոգի մը Աստուծոյ հետ հաղորդուած՝ առանց ապսպրելու ալ ինքիրեն պէտք է որ միակ զԱստուած սիրէ:

ԽՕՍՔ ՀՈԳԻՈՅՆ

ԱՌ ՔՐԻՍՏՈՍ ՊԱՏԱՐԱԳԵԱԼ

Տարաւ զիս արքայ 'ի սենեակ իւր, ցնծասցուք և ուրախ լիցուք մեք 'ի քեզ։ Ծրար ստաշխին է եղբօրորդին իմ ինձ. (Յ. 3. 12)։

Տէր իմ Յիսուս Քրիստոս, ա՜ս ինչ մեծ շնորհք է որ ըրիր ինծի. դուն ա՜րարիչ գողով եկար իմ սրտիս մէջը հանդիսացար, ոչ միայն շնորհքով, այլ և սուրբ մարմնովդ. թէ որ մէկ իշխան կամ թագաւոր մը հողէղէն ըլլար իմ առնս եկողը՝ անանկ մեծ շնորհք չէր կրնար ըլլալ ա՜ս աշխարհիս մէջ. հապա դու թագաւորդ թագաւորաց Աստուած, արարիչ երկնի և երկրի։ Ա՜ս ինչ սէր է՝ որ արժանի սեպեցիր չէ թէ իմ առնս՝ հապա իմ սրտիս մէջը գալու. ես որ մարդ մըն եմ ոչինչս որ քեզի դէմ ձեռք վերցուցեր էի, քու սուրբ պատուիրանքներդ ոտքի տակ առեր

էն, քանի որ կը յիշեմ աս քու ըրած սէրդ իմ վրայ, անչափ ուրախութիւն՝ անչափ զարմանք կուգայ վրաս։

Հիմա աս կաղաչեմ տէր իմ, որովհետև արժանի ըրիր գալ, և իս քու սուրբ սինեակդ տանիլ, հոն զքեզ ինքդ հոգևոր կերակուր ինծի հանել, շնորհէ որ ասկէց ետքը սիրաս միտքս քեզմով ուրախանայ, քու անուշութիւնդ առնէ, աշխարհային բաներըը ձգէ։ Եւ ինչ ծրար որ ունիս անուշահոտ խունկերու, Հոգւոյն սրբոյ շնորհքներու, բաց քու գանձդ, զարդարէ իմ մերկացեալ հոգիս՝ առաքինութեամբք, ցուցու ինծի ինչ ընեմ որ փրկութեան ճամբան գտնամ. վառէ իս քու սիրովդ, վասն զի դու տէր իմ Յիսուս մէկ պահուած ծրար մըն ես ատաշխին, մէկ գաղտնի խորհուրդ մըն ես, երբոր սիրոյն կրակին մէջը կկայնաս՝ ան ատենը քեզ կը ցուցընես ծուխ երկնային հանելով, զմայլողական անուշահոտութիւն բուրելով։

Գ. ԽՕՍՔ ՔՐԻՍՏՈՍԻ

ԱՌ ՀՈԳԻՆ ՀԱՂՈՐԴԵԱԼ

Ի պարտէզս ընկուզաց իջի հայել 'ի յարմըտիս ուղխից, տեսանել թէ ծաղկեալ իցէ որթն, թէ ծաղկեալ իցեն նռնենիք։ (Գ. 10)։ Եկ 'ի Լիբանանէ. եկեսցես և անցցես 'ի սկզբան հաւատոյ։ (Դ. 8)։

Ո՛վ որդեակ, երբոր ես մեղաւորաց համար մեռնելու եղայ, մտածեցի ինչ ընեմ որ մեռնելէս ետև ալ չկրնամ իմ եկեղեցիս, ան առեր քեզ ալ միտքս բերի։ Հիմակուան հաւատացեալները իս մարմնացեալ կը տեսնան ըսի, բայց ան հոգին՝ որ շատ տարիէն ետև աշխարհ պիտոր գայ՝ որոնց մէկը դուն ես, իմ աշխարհ գալս պիտոր լըսէ, բայց իս մարմնացեալ պիտոր չեմ տեսնայ։ ինչ ընեմ որ՝ քու հոգիդ ալ իս տեսածի պէս ըլլայ, մեղքընալով մտմըտալով՝ իմ ամենակարող զօրութիւնս ձեռք առի, անանկով աս սուրբ

հաղորդութեան խորհուրդը տահմանե-
ցի, ամէն քահանայից իշխանութիւն
տուի՝ որ երբեր անոնք պատարագէն,
ամէն տեղ հեշտ տեսնաս զիս։

Հիմա՝ ամէն հեղ որ տուրբ պատա-
րագը կը տեսնաս, իս կը տեսնաս հոն
մարմնով նստած շնորհաց աթոռը քու
աղաչանքդ ընելու, քեզի օգնութիւն
հասնելու։ Եւ ամէն հեղ որ՝ կը հա-
ղորդուիս տուրբ խորհրդոյն, դուն ին-
ծի կուգաս, ես քեզի, մէկտեղ նստած
կըլլանք։ Միայն իմ փառքս մեծ ըլլա-
լով՝ չես կրնար մարմնաւոր աչքով
նայիլ. անոր համար հացին ու գինւոյն
տեսակաւը կերևնամ, որով կրնաս հա-
մարձակ իմ վրաս նայիլ. վասն զի հա-
ցին նեղքեր ես եմ նստած։ Ինչ կըսես՝
կը լսեմ, ինչ նեղութիւնդ՝ սիրտդ կը
բանաս, մոխիկ կը դնեմ. ասկէց աւելի
ինչ սէր կրնայի բանեցընել։

Դուն որ հիմա աս իմ սէրս տեսար,
պէտքը չէր որ քեզ ըսլրուլին ինծի
տայիր, պէտք չէր որ գիներ ցորեկ իս
մտածէիր, շնորհակալութիւնդ ընե-
լու, իմ կամքս կատարելու, որ երբոր

ես ալ հոգեւոր վայելեցի, կերպ կերպ առաքինութեան պտուղներով ու ծաղկներով ծաղկած զարդարուած տեսնայի քեզ պարտիզի մը պէս։ Բայց ես կը տեսնամ՝ որ՝ ասոր դէմ չէ թէ իմ կամքս չէս կատարեր, սէր չէս ցուցներ, հապա և ոչ տեսնալ կուզես երբոր պատարագ կըլլայ, և ոչ կուզես հաղորդուիլ, ինծի մօտիկնալ. այլ ամամայ կը տեսնաս պատարագ, և ամամայ կը հաղորդուիս։

Ա՛ս ինչ պաղութիւն, ինչ ապերախտութիւն է քու ըրածդ, և ինչ սէր է իմ ըրածս։ Ա՛ս կը ցուցնէ որ՝ հաւատք չունիս, անկէց առանկ պաղութեան ու ապերախտութեան մէջ կիյնաս. կուզեմ որ՝ ասկէց է՛տքը դուրս ելլաս առանկ օտար լեռնցիի բնութենէ, հաւատքդ բաց ու պայծառ պահես, որ է սկիզբն ամէն բանի. վերցնես սրտիդ մէջէն աս պաղութիւնը, ջերմեռանդ ելլաս։

ԽՕՍՔ ՀՈԳԻՈՅՆ

ԱՌ ՔՐԻՍՏՈՍ ՊԱՏԱՐԱԳԵԱԼ

Ահաւասիկ սա եկաց յետուստ որմոյն մերոյ. յառեալ ընդ պատուհանն, հայեցեալ ընդ վանդակապատսն։ Ցոյց ինձ զդէմս քո, և լսելի արա ինձ զբարբառ քո. վասն զի ձայն քո քաղցր է, և դէմք քո գեղեցիկ։ (Է. 9, 14)։

Ա՛խ, աէր իմ, ալ մի յիշեր, մի երբեմն ասր իմ ապերախտութիւնս. թէ որ յանթառն շնորհաց նստած՝ ասանկ ունուշութեամբ զուրցելով՝ ես դող կելլամ լսելս ատենը, ամօթէս գետինը անցնիլ կուզեմ. հապա ինչ ալեսոր ելլայ՝ երբոր դատաստանին օրը ասատկութեամբ դատաւորի պէս զուրցելու ելլաս։ Սակայն տուր համարձակութիւն որ՝ իբրև գթած հօր սիրուս բանամ։ Իրաւի՝ մեծ շնորհք է որ կընես ինծի, պատարագին խորհուրդին մէջ գալովդ՝ և տուրբ սեղանին վրայ նստելովդ մարմնով, հաղորդութեան առենն

ալ իմ սրտիս մէջ նստեալով, բայց քուկին դէմքդ չէս երևցըներ ինծի, այլ միայն թէ պատի մը եռևէ, վանդակի մը եռևէ՝ անանկ գոցուած կը ցուցընես։ Խաչին վրայ ասուածուելիւնդ գոցուած էր, այլակերպուելեան առենը մարդկուելիւնդ լուսով գոցուած էր. բայց աս սուրբ խորհուրդիս մէջ ասուածուելիւնդ ալ մարդկուելիւնդ ալ կը գոցես հացին ներքև։ Իմ տեսանելիքս՝ շօշափելիքս՝ ճաշակելիքս՝ ամէն ալ կը խաբուին. մեզնէ ծածկուած է, մեզի չերևնար, չկրնանք կրսեն. միայն լսելիքս կը լսէ քու սուրբ ձայնդ աւետարանէն, և հաւատքիս աչքը կը տեսնայ։ Բայց էս տկարամիտ ըլլալով՝ մութ բան մը կերևնայ ինծի. ինչպէս պէտք է քեզ ընդունիլ, ինչ պատիւ ընել, չեմ կրնար։

Երբոր Պետրոս առաքեալը այլակերպուելեան օրը մէկ քիչ մը տեսաւ քու գեղեցիկ դէմքդ, զմայլելէն չկրնար ինչ կը զուրցէր, չէր ուզեր լեռնէն բաժնուիլ։ Երբոր Մովսէս մարգարէին շատ բարեկամուելիւն ու սէր ցըցուցիր,

շատ մեծիկ խօրհրդեցիր, չիդիմացաւ՝ այնչափ աղաչեց որ վերջապէս դէմքդ ալ ցոյցուցիր։ Ես ինչպէս դիմանամ որ՝ իմ սիրտս կը հանդչիս սուրբ խորհրդով հաղորդութեան, բայց քեզ ամենևին չեմ ցուցներ։ Հիմա աս կաղաչեմ վասն արդեանց հինգ վիրացդ, ով տէր իմ Յիսուս, հաւատքս զօրացընես, լուսաւորես, քու գեղեցիկ դէմքդ պայծառ տեսնամ հաւատքովս աս սուրբ խորհուրդին մէջ, ինչպէս որ սուրբերը տեսածի պէս կըլլային, երբոր սուրբ հաղորդութիւնը կառնէին։ Քու խօսքերդ ալ մէյմէկ զօրութիւն ունին, ան զօրութիւնն ալ տպաւորէ իմ սրտիս մէջը, որ քու քաղցր ձայնդ սրտիս մէջէն առնելով, պահեմ ինչ որ ինծի կը պատուիրես։

Դ. ԽՕՍՔ ՔՐԻՍՏՈՍԻ

ԱՌ ՀՈԳԻՆ ՀԱՂՈՐԴԵԱԼ

Այդի եղև Սողոմոնի 'ի Բէեղամաւոն. եւ զայդի իւր ցպահապանսն, քերցէ այր իւրաքանչիւր 'ի պտղոյ իւրմէ հազարս արծաթոց։ Որ նստիսդ 'ի պարտէզս, այլք անսան քեզ։ (Ը. 11. 13)։

Ո՛վ որդեակ, ես մարդկային բնութիւնը մէկ այդի մը տնկեցի, քեզ անոր վրայ պահապան դրի՝ որ հազարապատիկ պտուղ բերես. բայց դուն սա պարտիզին մէջէն ինծի պտուղ տալուն տեղը՝ ուրիշներուն խօսքը կը լսես, ուրիշներուն կուզես հաճոյանալ, աշխարհիս ու սատանայի՝ որ իմ թշնամիներս են։ Ասանկ ըլլալով թէ որ ես հիմա դէմքս ցուցընէի, բարկացած դէմքս պիտոր ցուցընէի նման դատաւորի մը պէս ու քեզ պատժէի. ինչ բարեգործութիւններ ըրած ունիս՝ որ անուշ հայրական դէմքս քեզի ցուցը-

նեմ։ Պետրոս առաքեալը ինչ սէր ու-
նէր վրան՝ գիտես։ Մովսէս մարգարէն
ինչ սրբութիւն սրան, ինչ հաւատար-
մութիւն։ Քուկին ըրած գործքերդ ին-
չուան հիմա՝ ամէնն ալ զԱստուած
բարկացընող են, իմ պատուիրանքներս
կոտրող. իս մոռցած՝ բոլորովին աշ-
խարհային գրսի զբաղմունքներու տը-
ւեր ես դուն քեզ։ Անանկ է նէ՝ ազէկ
է որ հիմա չկրցուցընեմ քեզի գէմքս.
դուն իս հիմա հաւատքովդ տեսնալով,
բարեգործութեան հետ եղիր ու ա-
ղօթից։

Աբրահամ նահապետ ուզէց Իսա-
հակը իր զաւակը մորթելով պատա-
րագ մատուցանել. ուրիշ բան չիտե-
սաւ՝ բայց եթէ մէկ խոյ մը կախուած
ծառէն Իսահակին տեղը. բայց երբոր
իմացաւ՝ որ աս բանս խորհուրդ ունէր,
օրինակ էր իմ պատարագուելուս,
այնչափ ուրախացաւ որ իս տեսածի
պէս եղաւ։ Թէ որ դուն իմանաս որ
Վարագուրին կամ վանդակին ետև
մարմնաւոր թագաւորը նստած է,
յայտնի տեսածի պէս քու աղաչանք-

ներդ կընես, իս ալ անանկ է նէ՝ հա-
ցին ներքև իբր եթէ վարագուրի ե-
տև նստած իմաստալով քուկին ապա-
շանքներդ ըրէ։ Եւ ամէն բանէն ա-
ւելի հաւատքիդ հետ յոյսդ զօրացու,
շնորհակ սրտով անոր կրայ յուսա, թէ
որ իմ պատուիրանքներս պահես, խո-
նարհութեամբ ապաշխարով իմ վրաս
յոյսդ դնես, իրաւունքնէ մէկ օր մը ար-
ժանի կըլլաս իմ դէմքս յայտնի տես-
նելու իմ արքայութեանս մէջ։

ԽՕՍՔ ՀՈԳԻՈՅՆ

ԱՌ ՔՐԻՍՏՈՍ ՊԱՏԱՐԱԳԵԱԼ

Յարեայց և շրջեցայց ընդ քաղաքն 'ի փողոցս և 'ի հրապարակս, և խնդրեցից՝ զոր սիրեաց անձն իմ. (գ. 2. 4)։ Խնդրեցի զնա և ոչ գտի. կոչեցի զնա, և ոչ եւ ինձ զձայն։ Կալայ զնա և ոչ թողից զնա, մինչև տարայց զնա 'ի տուն մօր իմոյ։ Ահա ես զեղեցիկ մերձաւոր իմ, քաց 'ի լուսնթենէդ քումմէ. (դ. 1)։

Ահա, տէր իմ, ան ատենէն վեր՝ որ մեզ Ադամայ հետ դրախտէն դուրս հանեցիր, միշտ սիրտս քեզ կուզէ, քեզ կը փնտռէ. վասն զի դուն ես աչ-խարիչ իմ, յոյս իմ. ասդիս անդին քեզ կը փնտռէի գտնելու, բայց չի-գիտնելով որ ուր ես, արարածոց մէջ՝ աշխարհային զբաղմանց մէջ քեզ կը փնտռէի, կարծելով՝ որ իմ սիրելի Աստուածս հոն է. բայց խաբուեցայ, ամէն ստեղծուածոց մէջ փնտռեցի, չեղաւ. կանչեցի, քու ձայնդ որ դը-

բախտին մէջ կառնէի, ամենևին չիլան-
ցի։ Եաթը գոյ զքեզ աս ուրբ սեղա-
նին վրայ, ոչ ահարկու կերպարանքով
ինչպէս որ Սինա լեռը տեսան Իսրայէ-
լացիք. այլ քաղցր և գեղեցիկ կերպա-
րանքով, վասն իմ մարդացեալ, վասն
իմ խարհրդացեալ հացին և բաժակին
կերպարանքով. հոս կը բռնեմ կը շո-
շափեմ զքեզ իմ արարիչս. հոս ուզա-
ծիս պէս կառնեմ կը տանիմ իմ ուս-
նելս՝ որ է իմ մեղաւոր սիրտս։

Առնք ամենը ալէկ են և գեղեցիկ.
բայց քու լուռ կենալդ՝ ձայն չիհանելդ
և չիխօսելդ՝ ինծի շատ տրտմութիւն
կը բերեն ու վիշտ։ Գիտես, մեր բնու-
թեան կարեկից ես, գիտես որ քանի
թշնամի ունինք, նոյն իսկ մեր մարմի-
նը՝ որ մեզի հետ մէկ տեղ է՝ թշնամի է
մեզի։ Երբոր կը նեղիմ, երբոր փոր-
ձութիւնները չորս դիս կը պատեն,
քեզի կը գիմեմ. չես լսեր, չես խօսիր,
անանկ կը ցուցընես որ իբր թէ ամե-
նևին հոն չես, ամենևին չես տեսնար։

Հիմա աս է պաշտանքս, վասն որ-
դեանց հինգ վիրացդ՝ և եօթը խոցին

արքայ Աստուածածնին, թէ որ քու աստուածութեանդ և մարդկութեանդ դէմքը ծածուկ կը պահէս ինծմէ, զոնէ քուկին ձայնդ արժանի ըրէ լսեցընելու, ինչպէս որ արքայ հետ ներսէն շնորհքով կը խօսիս։ Ան առենը իմ յոյսս կը զօրանայ անոնց պէս, և առաքինութիւններ գործելու հետ կ'ըլլայ։ Սանկով Մատթէոս մաքսաւորը մէյմը կանչելով աւետարանիչ ըրիր. Զաքէոսին անունը տալով որդի փրկութեան ըրիր. Պօղոս առաքեալը մէյմը երկընքէն կանչելով Հոգւոյն արքայ անօթ ըրիր։

Ե. ԽՕՍՔ ՔՐԻՍՏՈՍԻ

ԱՌ ՀՈԳԻՆ ՀԱՂՈՐԴԵԱԼ

Դիր զիս իբրև զկնիք 'ի վերայ սրտի քո, իբրև զմատանի 'ի վերայ բազկի քո. վասն զի հզօր է իբրև զմահ սէր։ Ջուրք բազումք ոչ կարեն շիջուցանել զսէր, և գետք ոչ արգելցեն զնա. եթէ տայցէ այր զամենայն զկեանս իւր 'ի սէր։ (գ. 7)։

Այս խօսքերը անոր է՝ որ միշտ սիրելի եղեր է իր հօրը. միշտ իր պատուիրանքները պահեր է. գու ինչ մեղքերով վշտացուցեր ես իմ՝ գիտես. ինչ արդիւնք ունիս, ինչ արժանաւորութիւն ունիս, որ քու ձայնդ լսեմ, քեզի հետ խօսիմ։ Հապա քեզի հաւատաք, յոյս, և ամենէն աւելի սէրը պէտք է՝ որ արժանի ըլլաս։ Ես աւազակին միայն քովը կեցայ, ինչպէս հոս ուրիշ խորհրդովը հաղորդութեան՝ քովդ կեցեր եմ։ Ես անոր հետ բան մը չխօսեցայ, ինքը իր խօսելովը իր հա-

ւաղքը ինծի խրկէց. իր յոյսը փրկուե-
լու իմ վրաս դրաւ. իր սէրը ցըցուց.
ան առէնը արժանի եղաւ իմ ձայնս իր
փրկութեան համար լսելու. Այսօր
ընդ իս եցես 'ի դրախտին: Մեղաւորը
կնիկը ինքիրեն եկաւ ոտքս ընկաւ. ես
բան մը չըսած չխօրատեցայ՝ իր հա-
ւատքը, յոյսը, սէրը ցըցուց իր զըղջ-
մամբը ու արցունքովը. ան առէնը ար-
ժանի եղաւ իմ ձայնս լսելու. Թողեալ
լեցին սմա մեղք իւր բազում, զի յոյժ
սիրեաց. Հաւատք քո կեցուցին զքեզ:

Անանկ է նէ ամէնէն աւելի նայէ որ
սէր Աստուծոյ ունենաս. ինչպէս որ
մարտիրոսները՝ հաւատք և յոյս ունե-
նալէն զատ՝ անանկ սէր ունեցան վրաս,
որ մահը յանձն առին ինծի համար:
Ան առէնը թէ որ աշխարհային պաղե-
ցուցիչ խօսքերը ջուրի պէս վրադ վա-
զեն, չեն կրնար քու սէրդ մարել. ան
առէնը կերպ կերպ փորձութիւններու՝
նեղութիւններու ալէկոծութիւնը գե-
տի պէս վրադ կոխեն, քեզ չեն կրնար
արգիլել ինծի դալու, իմ պատուի-
րանքներս պահելու. թէ որ բոլոր

կեանքիդ մէջը դուն քեզ Աստուծոյ սիրոյն տաս, ինչպէս որ ես ալ քու սիրոյդ համար իս բոլոր քեզի տուի։

ԽՕՍՔ ՀՈԳԻՈՅՆ

ԱՌ ՔՐԻՍՏՈՍ ՊԱՏԱՐԱԳԵԱԼ

Սիրելին 'ի սենեակս մեր, երգեսցուք զսէր։ (Ը. 13)։ Արի հիւսիս, և եկ հարաւ. շնչեա 'ի պարտէզ իմ, և բուրեսցեն խունկք իմ. թող եղբօրորդին իմ 'ի պարտէզ իւր, և կերիցէ զպտուղս ծառոց իւրոց։ (Դ. 16։ Է. 1)։

Քուկին սէրդ տէր իմ Յիսուս, ան կրնայ պատմել, որ ինծի համար աշխարհ եկար մարդացար. մէկ կաթիլ մը քու արիւնդ հերիք էր իս փրկելու՝ ամէն արիւնդ թափեցիր ինծի համար, խաչուեցար և մեռար. ես հերիք չիսեպեցիր՝ հիմա ալ հրաշալի խորհրդով հաղորդութեան հացին և բաժակին տեսակաւը եկար իմ սրտիս սենեակը դուռը։ Կրնայ ըլլալ ասկէց էաքը որ քեզ չիսիրեմ, քեզի դէմ մեղքերուն

թշնամութիւն ընեմ, քաւ լեցի. այլ միշտ քեզ սիրել կառաջադրեմ, քուկին սիրոյդ վրայ զուրցել, պատմել, երդել, օրհնել կը խոստանամ: Ա՛ս է իմ առաջադրութիւնս, իմ բաղձանքս. բայց իմ հաւատքս՝ յոյսս՝ սէրս տկար են, միտքս պղտոր, կամքս անզօր. իսկ թշնամիներս շատուր, որք են մարմին, աշխարհ, սատանայ. ո՞վ պիտոր իս ազատէ ատոնցմէ, եթէ ոչ դու. ո՞վ պիտոր իս բռնէ պահէ իմ առաջադրութեանս մէջ, եթէ ոչ դու:

Անանկ է նէ կաղաչեմ, թէ որ իս արժանի չէս սեպէր իմ ծանր մեղքերուս համար դէմքդ ցուցընելու, ձայնդ լսեցընելու, գոնէ արժանի ըրէ քու Հոգւոյդ սրբոյ շնորհացը՝ որ մէկ անուշ հովի մը պէս շնչէ իմ հոգւոյս պարտէզը: Ինչպէս որ աշխարհիս մէջ աս գիս ան դին մէյմը հիւսիս, մէյմը հարաւ կը փչէ, անով ամէն կենդանիք շունչ կառնեն, անով ամէն ապրանք կերպ կերպ պտուղներ՝ ծովէն խալըսած նաւերով. քաղաքը կը բերեն. անով պարտէզներուն մէջ ծաղիկները

անուշ հոտեր կը բուրեն, ծառերը կը պտղաբերեն, անանկ ալ հրամէ՝ քու Հոգւոյդ հրաշալի հովերուն. Արի՛ հիւսիս, եկ հարաւ։

Ան ատենը իմ հոգւոյս պարտէզը անուշահոտութիւն կը բուրէ խունկերուն նման. ան ատենը իմ սիրոս դալուբլլաս խորհրդով հաղորդութեան, կը գտնաս կերպ կերպ պտուղ առաքինութեանց՝ իբրև քու պարտիզիդ մէջը։

Զ. ԽՕՍՔ ՔՐԻՍՏՈՍԻ

ԱՌ ՀՈԳԻՆ ՀԱՂՈՐԴԵԱԼ

Ես ծաղիկ դաշտաց, և շուշան հովտաց։ Կաղարիւք մեզ ազուեսունս փոքրունս զապականիչս այգեաց, և այգիք մեր ծաղկեացին։
(Բ. 2. 15)։

Որդեակ, ես այնչափ սիրեցի մարդս, որ Մարդասէր ըսուեցայ. ես անհուն սիրով սիրեցի զքեզ ասս սուրբ խորհրդով հաղորդութեան, որով կուգամ քեզի՝ չէ թէ միանակ շնորհքով,

հապա իմ մարմնովս ալ։ Դուն երբոր մէկը սիրես՝ սրտիդ մէջը կուզես դնել և չես կրնար. ես աս հրաշքս աս սուրբ խորհուրդիս մէջ կատարեցի, որով երկնի և երկրի ստեղծող Աստուածս կուգամ, մարմնովս ալ քու սրտիդ մէջը կը նստիմ։ Ես աւելի հրաշք ըրի որ չէ թէ մինակ մէկ անգամ կեանքիդ մէջ աս սէրս տեսնաս, հապա միշտ երբոր ուզես. ասանկ իշխանութիւն տալով քահանայից. որով նմանեցայ ես ան ծաղիկներու, ան շուշաններու, որ դաշտերու և հովիտներու մէջ կըլլան. ամէնն ալ ուզածնին պէս կը փրցնեն, կը վայելեն. դոցուած պարտէզի մէջ ծաղիկներուն չի նմանեցայ՝ ուր որ մինակ տէրը կը վայելէ։

Գիտցիր որքուչերմեռանդութեանդ ձեռքն է. ամէն անգամուն որ դուն արժանապէս կը հաղորդուիս, զանազան շնորհքներ կառնես. և մէկ առնելդ՝ մէկալ առնելուն արժանաւորութիւն կը բերէ, և շնորհքը կը կրկնապատկէ. անանկով ամէն մէկ հեղ առնելդ աս սուրբ խորհուրդը՝ կըլլայ մէկ

առուտուր մը խիստ շահաւոր, որուն շահը յանհունս կաւելնայ, յանհունս կարդիւնաւորի, կը բերէ քեզի դանձ շնորհաց։ Ամոր համար իմ ծառանե-րէս ոմն որ արժանապէս առաւ, թէ-պէտ երկրիս վրայ էր՝ բայց իբր թէ ե-կինքը նստած հրեշտակ մը կը դառնար. վասն զի մէկ էինք եղած աս սուրբ խոր-հրդովս։ Ան ծառաներուս մէջը ամ-մէն առաքինութիւն կը փայլէր, արքու-թիւն հոգւոյ և մարմնոյ, արիութիւն, արդարութիւն, խոհեմութիւն, հան-ճար, խոնարհութիւն, եղբայրսիրու-թիւն. իսկ Աստուծոյ սէրը այնչափ կը վառէր սրտերնուն մէջը, որ երբեմն կը հաղորդուէին՝ շուտ մը կերթային կա-պաշտներուն առջին, իս խոստովանե-լով ամենքներ կը քաշէին, իրենց արիւնը կը թափէին։

Հիմա դուն որ կուզես Հոգւոյն սըր-բոյ շնորհքները վաստակիլ, պէտք է որ արժանաւորապէս առնես աս սուրբ խորհուրդը, և շատ հեղ։ Իսկ թէ որ չես տեսնար շնորհք, քուկին պաղու-թիւնդ է պատճառ, դիտես թէ իմ

վրաս ամենևին սէր չունիս քու սրտիդ մէջը, ան վատաակնները՝ ան հոգևոր դանձերը ուրիշները կը շահին կը վայելեն, դուն անանկ աղքատ ու մերկ կը մնաս:

Ա. պաղութեան պատճառն ալ ան է՝ որ թէպէտ մեծ մեղքերէն կը զգուշանաս, բայց պզտիկ մեղքերէն հեռանալու ամենևին հոգդ չէ: Ան պզտիկ մեղքերը կը նմանին պզտիկ աղուէսներու, ով որ բանի տեղ չեղնեը պզտիկ սեպելով, բոլոր այգին կաւրուի կապականուի: Դուն կը հաղորդուիս՝ եռաքը կելլաս մէկէն դատարկաբանութեան հետ կելլաս, սիրտդ ունայնասիրութեան մէջ կը զբաղեցնես, եղբայրդ կը բամբասես, եղբայրդ կը դատես, տանը զբաղմանց մէջ բոլորովին կընկղմիս, առուտուրդ մինակ խելքդ կուտաս, քարոզ լսելը կը ձգես՝ պարապ խօսքերով առենդ կանցընես, մէկ գթութեան ողորմութեան գործքը մը ընելու հոգ չունիս, անոր տեղը կը ծուռ խօսքերով եղբօրդ սիրտը կաւրես: Առջի քու բանդ աս աշխարհիս քանե-

ը դրեր ես. բոլոր օրը խելքդ միտքդ անոնց կուտաս. իսկ իմ բաներս՝ իմ սէրս՝ երկրորդական չորրորդական գործք կը սեպես, եւ կը ձգես. վերջապէս սիրտդ շիտակ չէ իմ վրաս:

Սոնք ամէնը պզտիկ բաներ սեպելով կը զարմանաս որ հաղորդուելէն եւեւ ինչպէս Հոգւոյն սրբոյ շնորհքը չես առներ: Անանկ է նէ՝ հիմա մէկ նոր առաջադրութիւն մը դիր. ուրչափ պզտիկ մեղքեր պակսութիւններ կան, անոնք ալ բռնես զապես պզտիկ աղուէսներու պէս, վասն զի պզտիկ չըսուիր ան մեղքը՝ որ Հոգւոյն սրբոյ շնորհքը կարգելու. ան ատենը կը տեսնես Հոգւոյն սրբոյ զօրութիւնը. ան ատենը քու հոգիդ կերպ կերպ շնորհքներով կը ծաղկի կը զարդարուի, ինչպէս որ աղուէս չեղած այդին կը ծաղկի ու պտուղ կուտայ:

ԽՕՍՔ ՀՈԳԻՈՅՆ

ԱՌ ՔՐԻՍՏՈՍ ՊԱՏԱՐԱԳԵԱԼ

Բացի եղբօրորդւոյ իմոյ. եղբօրորդին իմ էանց, և հոգի իմ եկ ընդ բանի նորա. խնդրեցի զնա՝ և ոչ գտի, կոչեցի զնա՝ և ոչ լուաւ ինձ։ Գտին զիս պահապանքն որք շրջէին 'ի քաղաքին, և վիրաւորեցին զիս. առին զխլայն իմ յինէն պահապանք պարսպաց. (Է. 6. 7)։ Ահեակ նորա ընդ գլխով իմով, և աջ նորա պատեսցի զինև. (Ը. 3)։

Տէր իմ, անուշ են քու խօսքերդ, զօրաւոր ու շահաւոր. բայց մէյմը կը խօսիս, եռքը կանցնիս կերթաս, իս ա՜նանկ կը թողուս, ան առենը իմ հոգիս ալ խօսքիդ հետ մէկտեղ քեզնէ կը բաժնուի կը հեռանայ. նորէն կը նըստիմ աղօթք ընելու, քեզ կանչելու, չես լսեր, կը մնամ իմ առջի կիրքերուս ձեռքը՝ որ սրտիս մէջը միշտ կը քալեն, նորէն իմ հոգիս կը խոցեն կը վիրաւորեն մեղքերով, ինչ խիլայ՝ ինչ պարգև

Հոգւոյն սրբոյ առի նէ սուրբ հաղորդութեան խորհրդով՝ ձեռքէս կառնեն, իս մերկ կը թողուն։ Քուկին պատուիրանքներդ ուրչափ քաղցր ու պզտիկ ըլլան ինծի խիստ կերևնան. մանրաքննին դատաստանդ՝ ինչուան դատարկ խօսքերուն վրայ համար ուզելդ՝ իմ սիրոս խիստ կը վախցընեն։ Քու Ճամբադ ահռելի մը կերևնայ ինծի, անկէց կը ձգեմ կը հեռանամ, կարծելով որ կրնամ խաբսիլ. թէպէտև սև ամէլի արգարութեան դատաստանիդ տակը կը մնամ։ Ո՛ւր է՝ որ հաղորդութեան առնը ինչ սէր կունենամ Աստուծոյ, նոյն սէրը հեռս մնար։

Պարզևէ, սէր իմ, որ հաղորդուելէն ետև չիրաժնուիս ինծմէ միշտ հեռս մնաս, քուկին պատուիրանքներդ ասկէց ետքը անուշ ցուցընես, լուծ քաղցր, և բեռն փոքրոգի։ Շնորհէ ինծի, որ արդարութեանդ հետ անհաւն ողորմութիւնդ ալ յիշեմ, յոյսս առատ ըլլայ անդին արևանդ միջնորդութեան վրայ, և սուրբ մօրդ բարեխօսութեանը վրայ։ Ամէն երկուքն են ինծի

ոչ և ոչեակ ձեռք գթութեանդ Աստուծոյ, որ զիս կը բռնեն կը պահեն, և յոյս կուտան՝ որ դատաստանին օրը քաղցրութեամբ կտրես իմ դատաստանս։

Է. ԽՕՍՔ ՔՐԻՍՏՈՍԻ

ԱՌ ՀՈԳԻՆ ՀԱՂՈՐԴԵԱԼ

Ահա ձմեռն էանց, անձրևք անցին, և գնացեալ մեկնեցան. ծաղիկք երևեցան յերկրի. ժամանակ հատանելոյ եհաս. ձայն տատրակի լսելի եղև յերկրի մերում. թզենի ընձիւղեաց զբողբոջ իւր. այգիք մեր ծաղկեցան, և եղուն զհոտս իւրեանց։ Արի՛ եկ մերձաւոր իմ, գեղեցիկ իմ, աղաւնի իմ. եկ ընդ հովանեաւ վիմին, մերձ առ նախատապարիսպն. (Բ. 10—14)։

Որդեակ, դեղ իմ սէրս պահելու՝ է մոտածական ընելը ոս սուրբ խորհուրդին զօրութիւնը. պատճառ՝ որ դուն միայն հաղորդութիւն առնելու ատենդ սէր Աստուծոյ կունենաս, եռքը կը մոռնաս կը պաղիս, ոս է՝ որ ամենևին

չէս մոածէր ինչ էր առածդ, ինչ զօրութիւն ու խորհուրդ ունի. թէ որ դուն քիչ մը մոածէլու ըլլայիր, անհուն սէրն ասուածային կիմանայիր, քու սրտիդ մէջն ալ սէրն Աստուծոյ չէր մարէր։

Մոածէս պիտոր՝ որ քահանային հետ էս եմ հոն՝ որ կը պատարագեմ, հացն ու գինին մէկ խօսքով 'ի մարմին և յարիւն կը փոխարկեմ. էս եմ հոն որ ինչպէս Գողգոթա լեռը խաչուեցայ, անանկ բաղկատարած խաչուած սեղանին վրայ զոհ կըլլամ քեզի համար. կը մորթուիմ անարիւն պատարագով, ու կը մեռնիմ առանց մեռանելոյ, որպէս զի քու մեղքերուդ թողութիւն տայ Հայրն երկնաւոր։ Մոածէ որ անհուն է գերազանցութիւն քահանային՝ որ եմ էս. անհուն է գերազանցութիւն զոհին՝ որ եմ էս. վասն զի զոհ մըն է, որով Աստուծոյ կեանքը՝ քահանային ձեռքովը կը տրուի կընծայուի Աստուծոյ. պարգևողը պարգևը՝ ամէնն ալ անհուն, որ է աքանչելիք աքանչելեաց։

Աստվ գուն թէպէտև հունաւոր է, բայց անհուն թողութիւն կը գտնաս քու մեղքերուդ՝ որչափ շատ ըլլայ, անհուն պատիժներուն ալ լիով վճարումն կը գտնաս, որ քու մեղքերուդ համար ունէիր քաշելու. անհուն կը փառաբանես ասով գուն զԱստուած, վասն զի որչափ գաղք հրեշտակաց և սրբոց մէկտեղ ժողվին, նահապետք, մարգարէք, առաքեալք, մարտիրոսք, կուսանք, և փառաբանեն զԱստուած, մէկ պատարագին պատիւը աւելի է Աստուծոյ առջին: Վասն զի էս եմ որ ասուրբ սեղանոյն վրայ կուգամ, խոնարհ կերպարանքով աղաչող բարեխօս կըլլամ Աստուծոյ, քահանայ կըլլամ, երկրպագող և փառաբանող իմ երկնաւոր Հօրս. զոհ կըլլամ պարտաւորի մը պէս քու պարտուցդ համար, և կը նուիրուիմ կը պատարագուիմ պատարագուելս քեզ փրկելու համար:

Ա՛ս է մէկ գանձ մը որ քու ջերմեռանդութեանդ ձեռքն է. որչափ կուզես՝ այնչափ աւելի կը շահիս, կառնես կընդունիս ամէն բարիք՝ որ հար-

կաւոր են քու փրկութեանդ. կընդունիս շնորհք ճշմարիտ զղջման անցած մեղքերուդ վրայ. կազատիս նեղքին փորձութիւններէ՝ որ քու չար սովորութիւններդ կը բերեն. կառնես օգնութիւն ասուածային շնորհաց. նաև ժամանակաւոր բարիք, առողջութիւն, խաղաղութիւն, յաջողութիւն քու գործքիդ՝ ուրն որ հաճոյ է Աստուծոյ, կառնես ապաշխարութեան շնորհք. ազատութիւն մարմնաւոր պատիժներու՝ որ քաշել ունէիր. նաև թողութիւն պատժոց ենթեցեալ հոգիներուն։

Ա՛ս է կերպակուր՝ որով քու հոգիդ սնունդ կառնէ, կապրի։ Հաց յԱստուծոյ է՝ որ իջանէ յերկնից և կեանս տայ աշխարհի։ Ասով դուն մարմնաւորդ կըլլաս հոգեւոր. ասով մեռնելու առնդ՝ քու հոգիդ կրնայ արքայութեան արժանի ըլլալ. վասն զի արքայութեան ճամբուն թոշակը պաշարը քու հոգւոյդ՝ աս պիտոր ըլլայ։ Եթէ ոք ուտիցէ 'ի հացէ յայսմանէ՝ կեցցէ 'ի յաւիտեան։ Երբոր երկինքը էլլալու ճամբուն մէջն աւազակները՝ որ են ա-

տանանքը, աս թոշակով քեզ պա-
հուած տեսնան, քենէ պիտոր փախ-
չին, հրեշտակները քովդ գան։ Նաև
էտքի գատաստանին օրը քու մարմնոյդ
ալ յարութիւն առնել տուող՝ աս հայս
պիտոր ըլլայ, որ է իմ մարմին. վասն
զի իմ մարմին ճաշակելովդ՝ կըլլաս
իմին մարմինէս. որ գերեզմանի մէջ
չինուաց, յարութիւն առաւ. ան իմ
մարմնոյս զօրութիւնը էտքի օրը քեզ
մեռելներուն մէջէն յարութիւն տա-
նել պիտոր տայ, ըլլալով նման ինծի՝
որ եմ առաջին պտուղ ննջեցելոց։ Որ
ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ,
ունի զկեանս յաւիտենականս, և ես
յարուցից զնա յաւուրն յետնում։

Հիմա տես որ ասկէց աւելի կրնայի
իմ սէրս ցուցընել. անոր համար գիտ-
ցիր որ իմ սէրս սուրբ հաղորդութեան
խորհուրդն է. և որովհետև աս խոր-
հուրդը միշտ քուկին ձեռքդ է, քու
աչքիդ առջին է, ես ալ անանկ է նե
հոն եմ, քենէ չեմ հեռանար. մէկ հա-
սիկ պատճառ հեռանալուն՝ է քու չի-
մնացածդ ատանք։

Ասկէց էտքը կուզես որ քեզնէ ամենեին չիհեռանամ, միշտ քովդ մնամ։ Առաջ մոռնամ աս անհուն խորհուրդը, աս մոռնալկանը քեզի կըլլայ նախապարիսպ մը։ մոռնալկանով ընդ հովանեաւ վիմին կէցած կըլլաս, որ եմ էս։ ան առէնը անհնար է որ քու սէրդ պաղի ինծմէ։ Դամ ուզէց ուռել արդիլուած պտուղը՝ որ ամէն Աստուծոյ բանը իմանայ, Աստուծոյ պէս ըլլայ։ ահա ո՛վ որ աս հացը արժանաւորութեամբ ճաշակէ, և իր խորհուրդը մոռնայ, կիմանայ Աստուծոյ անհուն կարողութիւնը, և անհուն իմաստութիւնը, և Աստուծոյ նման եղած կըլլայ։ Երկրորդ՝ դուն ալ ինծմէն օրինակ առնելով, նեղութիւն և խաչ քաշելը սիրէ։ վասն զի ան խաչը պատճառ կըլլայ՝ որ իմ սէրս քու սրտիդ մէջը չի պաղիր։ դոնէ ինչ խաչ որ էս կը խըրկեմ քեզի՝ մի մերժեր, մի ճչգոհար։ վասն զի ո՛վ որ իս կը սիրէ, ու ինծի հետ մէկտեղ կը նստի աւուրբ խորհրդով հաղորդութեան, պէտք է որ խաչ քաշէ։ էս ալ ո՛վ որ կը սիրեմ՝ աս աշ-

խարհս խաչ կը խրկեմ. անոր համար իմ առաքեալներուս որ ինծի սիրելի էին, ամէնուն ալ մեծ մեծ տանջանքներ քաշել տուի։ Եւ երբոր դ՝ քու հոգւոր հօրդ հնազանդ եղիր ամէն կըրթութեանդ մէջ։

ԽՕՍՔ ՀՈԳԻՈՅՆ

ԱՌ ՔՐԻՍՏՈՍ ՊԱՏԱՐԱԳԵԱԼ

Ահաւադիկ ես գեղեցիկ եղբօրորդի իմ և վայելուչ առ գահոյս մեր հովանաւոր, զերանք տանց մերոց մայրք, զարաւանդք մեր նոճք։ (Ա. 15)։ Որպէս խնձոր 'ի փայտս անտառաց՝ այնպէս եղբօրորդին իմ 'ի մէջ ուստերաց։ ընդ հովանեաւ նորա ցանկացայ նստել և նստայ։ և պտուղ նորա քաղցր է 'ի կոկորդի իմում։ մուծէք զիս 'ի տուն գինւոյ։ կարգեցէք 'ի վերայ իմ զսէր։ հաստատեցէք զիս խնձով, կուտեցէք զիս խնձոր, զի խանդակաթ եմ ես սիրոյ։ (Բ. 3)։

Ահա տեսայ, տէր իմ Յիսուս, քու գեղեցկութիւնդ աս տուրը հաղորդութեան խորհուրդին մէջ, տեսայ անհուն զօրութիւնդ և իմաստութիւնդ։ լսեցի աս խրատները՝ որք են շահ և

փրկութիւն իմ հոգւոյս. ապէց եաքը ես որքն պիտոր երթամ, ինչպէս մուտնամ առաջադրութիւնս, ինչպէս ըստեղծուածները ստեղծողէդ վէր դնեմ, քեզնէ բաժնուիմ։ Մինայն աս կաղաչեմ. դու որ թագաւորն պէս նստեր ես հիմա իմ սրտիս մէջ իբր քու գահիդ մէջ, հոգնաւոր ըրէ աս թախտը, միշտ հոգանի ըլլաս՝ ինծի օգնես։ Այն ատենը իմ ատես գերանները ամուր փայտէ կըլլան, չեն փտիր. առաջադրութիւնս չեմ կորցներ. անուշ հոտալ կը հանեմ անուշահոտ նոճւոյ պէս շինուած. անանկով հատուածուն ատն մէջ նստած կըլլանք մէկտեղ շնորհօք։

Ես ինչուան հիմա ստեղծողդ թողուցեր էի, ստեղծուածոց մէջ իբր փայտէ անտառներու մէջ կը փնտռէի. հիմա խնծորի մը ծառ գտայ որ Ադամ կորսնցուցեր էր, ան ծառն է սուրբ խորհուրդը հաղորդութեան, որ է խնծոր գիտութեան, նաև անմահութեան. աս պտուղը ուտելով կատուածանամ, ամէն բան կը գիտնամ. աս ծառիս տակը կուզեմ կառաջա-

դրեմ նամիլ ու նամայ. ասկէց էաքը չեմ բաժնուիր. վասն զի ասոր պատուղը՝ որ է քու սուրբ մարմինդ և արիւնդ, ասիր իմ Յիսուս, խիստ անուշ է իմ բերանս մէջ։

Դու պահապան հրեշտակս, դուք իմ պաշտպան սուրբերս, աղաչեցէք զԱստուած՝ որ միշտ այս սուրբ գինւոյն տունը մնամ, Յիսուսին սիրովը երբ անուշ գինւով վառուած ըլլամ, մէյմըն ալ չիբաժնուիմ։ Եղբայրսիրութեան ողորմութեան եղով ալ իս հասատատեցէք, որ եղբարներս սիրելով՝ Յիսուս սիրած ըլլամ, մէյմէկ շնորհքով իս միխիթարեցէք, որ երբ մէյմէկ խնծորի պտուղներ ուտելով, միշտ հոգևորին մնալիկնամ, սէրս չիպաղեցընեմ. մէկ օր մըն ալ արժանի ըլլամ դէմ յանդիմանն զինքը տեսնելու արքայութեան մէջ, որում միշտ կը բաղձամ. ամէն։

ԱՂՕԹՔ

Ի ԺԱՄ ՊԱՏԱՐԱԳԻ

Պատարագին սուրբ խորհուրդը սեմնալու առենդ՝ երկու բան պէտք է որ մոռնան։ Մէյմը մոռնէ որ Քրիստոս սէրն մեր քեզ հարկինք կը կանչէ, սեղան կընէ, ինչպէս որ առաքեալներուն ըրաւ վերնատանը մէջ։ Այն սեղանին վրայ իրեն սուրբ մարմինը և արիւնը տուաւ իրենց Ճաշակելու, որ է մէկ կերպակուր մը անմահարար. և ուրիշ բաներէն զատ՝ իրեք բան պարգև ըրաւ առաքեալներուն. մէյմը ամենասուրբ Երրորդութեան խորհուրդը սորվեցուց, լուսաւոր խօսքերով հասկըցուց։ Երկրորդ՝ համարձակութիւն տուաւ՝ որ Յիսուսին անունովը խնդրեն ինչ որ ուզեն, խոստանալով որ իր անունովը ուզածնին պիտոր առնեն։ Եւ երրորդ՝ սիրոյ պարգև տուաւ, սէրը իր կատակովը իրեն նշան թողուց,

Սատանէ հիմա գուն ալ սուրբ սեղանին վրայ կանչուած ես Քրիստոսի առաքեալներուն պէս. հաւատքով Ջերմեռանդութեամբ տես պատարագը. մէյմը որ Աստուած միտքդ լուսաւորէ, պայծառ իմանաս առջևի տեսած խորհուրդդ, և աստուածային գաղանիքները. երկրորդ՝ Յիսուսին անուանովը ինչ որ ուզես քեզի պէտք եղած հոգևոր նաև մարմնաւոր բարիքները տայ քեզ Աստուած. երրորդ՝ սէրն Աստուծոյ եղբայրական սիրոյն հետ վառէ Աստուած քու սրտիդ մէջը, որ է մէկ հատիկ Համբոյր արքայութիւն հասնելու։

Երկրորդ՝ մտածէ, աչքիդ առջևն բեր Գողգոթա լեռը. ինչ թէ իրաւցընէ հոն էս, ու աչքովդ կը տեսնաս որ Յիսուս քեզի համար խաչին վրայ կը գամեն, ինքն Յիսուս ալ իրեն սուրբ արիւնը վազցընելով՝ կը մեռնի, խաչին վրայ կը պատարագուի, որ քեզ փրկէ յաւիտենական մահուանէ։ Սոնք մը տածելով իմացիր որ պատարագը ուրիշ բան չէ որ՝ քուկին փրկութեանդ բանն է. նայէ ինչ փափագով, ինչ սիրով պէտք է որ տեսնաս սա սուրբ հրաշալի խորհուրդը։ Եւ գիտցիր՝ որ որչափ քու կեանքիդ մէջը ապէկ ապօթքներ ըրեր ես ինչուան հիմա, ան ամ-

մէն ալ մէկ տեսած պատարագին արդիւնքին չէն կրնար հասնիլ։ Անանկ դիր որ՝ ամէն մէկ պատարագ տեսնելուդ առնիր հազար քսակ ոսկի վասարկիր, ինչպէս սիրով կը վաղէիր տեսնելու, անանկ սիրով տես. վասն զի իրաւցընէ անանկ հազար քսակ շնորհաց կը վասարկիս, որ չաւրուիր։ Ա՛ քսակներդ հիմա չէս վայելեր, հապա դանձարանի մը մէջ բալլիքի տակ կը պահես, որ երբոր առնիր դայ, ան առնիր բանաս վայելես ուզածիդ պէս, անանկ ալ առնք պիտոր վայելես մեռնելու առնդ անդին աշխարհքը, որ է հարատեւութիւն մը անանց յաւիտենական։

Ա՛առնք մոռածելէն եւս՝ դիտաւորութիւն դիր տեսնելու առջեւի պատարագը 'ի փառս ամենասուրբ Երրորդութեան, 'ի պատիւ ամենայն սրբոց և հրեշտակաց, յօգուտ ամէն քրիստոնէից, թէ անոնց՝ որ քեզի բարեկամ են, և քեզի աղօթք յանձնեցին, և թէ անոնց՝ որ քեզի թշնամի են. սուրբ եկեղեցւոյ խաղաղութեանը և փառաւորութեանը համար, ենջեցելոց հոգիներուն հանգստութեանը համար, մանաւանդ անչիշատակ ենջեցելոց։ Բայց ամէնէն աւելի քու անձինդ օգտին

համար, խնդրելով շնորհք՝ որ առջի մեղքերուդ թողութիւն առնես, վարքդ շտկես, ժամանակ ունենաս ճշմարտապէս ապաշխարելու, և Հոգւոյն սրբոյ մխիթարութիւնը ունենաս քու ամէն նեղութեանդ մէջ. մարմնաւոր գործքերուդ համար ալ յաջողութիւն ունենաս, որն որ բարի կերևան Աստուծոյ։ Ասոնցմէ զատ՝ ինչ ուրիշ դիտաւորութիւն կուզես թէ հոգևոր և թէ մարմնաւոր 'ի փառս Աստուծոյ՝ կըրնաս դնել. վասն զի անհուն է օգնութիւն և զօրութիւն պատարագին։

ՄՏԱԾՈՒԹԻՒՆՔ

Ի ԽՈՐՀՈՒՐԴ ՊԱՏԱՐԱԳԻՆ

Պատարագը՝ Քրիստոսին չարչարանքը կը նեբկայացընէ. անոր համար քրիստոնէին ան է աղէկը՝ որ ամէն պատարագ առանելուն առնը Քրիստոսին չարչարանքը մոածելով առնէ։

Ասանկով պատարագ սկսելու առնը մոածէ Քրիստոսին պարտիզին մէջ մնալը, աղօթելը, ու արիւն քրտնիլը։

Սկիհը բանալու ու բաժակը գնելու առենը՝ մոռածէ Յուդային համբուրելով մատնելը զՅիսուս, Յիսուսին բռնուելը, կապուելը, ու քահանայապետին առջին տարուելը։

Գիրք ու աւետարան կարդալու առենը մոռածէ, երբոր երդուընցընելով կուզէին որ Քրիստոս ըսէ, հասկըցընէ իրեն համար ո՞վ է, ինչ է։

Հաւատամքին առենը մոռածէ Քրիստոսին աներկիւղ յայտնի գաւառնելը իր աստուածութիւնը, և իրեն գալուստը։

Սկիհ բանալու և լուացուելու առենը մոռածէ Քրիստոսին իր լաթերը հանելը, կարմիր քղամիդ հագնելը, փշով պսակուելը, ծեծուելը, ու Պիղատոսին լուացուելը Քրիստոսի արեան պարտաւորութենէն ազատելու համար։

Սուրբ սուրբ ըսելու առենը՝ մոռածէ Քրիստոսին նախատական խօսքեր ըսելը, ծաղր ըլլալը այն որ հրեշտակներուն երգերով միշտ սուրբ սուրբ կը ըսէր, կը փառաբանուէր։

Առէք կերէք ըսելու առենը մոռածէ Քրիստոսին խաչին վրայ գամուելը, արիւնը վազցընելը։

Ի սրբութիւն սրբոց ըսելու առենը մոռածէ Քրիստոսի խաչին վրայ գամուած վէր վէրցուելը, գեանին վրայ

անկուելը ամէնուն առջին, ու երկնաւոր Հօրը առջին, որ մեր մեղքերուն քաւութիւն ու թողութիւն գտնայ։

Նշխարքը բեկանելու՝ և մէկ մասը բաժակին մէջ ձգելու առնը մոտծէ Քրիստոսին հոգին աւանդելը, և լիմպոսը ինջնալը, նախահայրց հոգիքը ազատելու համար։

Ճաշակելու առնը մոտծէ Քրիստոս խաչէն վար ինջեցընելը, ու իրեն թաղումը։

Եռքի աւետարանին առնը մոտծէ Քրիստոսի նորէն կեանք առնելը փառաւոր յարութեամբ։

Ի գալ քահանային առ խորանն.

Տէր իմ Յիսուս, զքեզ կը տեսնամ աչքովս որ քահանայի կերպարանք մըտած կելլաս Զիթենեաց լեռը, հոն կը հոգաս կը պատրաստուիս պատարագ մատուցանելու հօրն երկնաւորի, չէ թէ մէկ ոչխար մը, մէկ արջառ մը, մէկ խահակ մը, այլ զքեզ ինքդ կը պատրաստես սեղանին վրայ մորթուելու իմ փրկութեանս համար իբրև մէկ գառն մը անարատ։ Ո՛վ անհուն գթու-

թիւն, հերիւք չէր անչափ աղօթքներդ, անչափ քաշածներդ, որ ինծի համար քաշեցիր, այլ իմ վրայ անչափ գութ ունեցար՝ որ ձեռք առիր քուկին անհուն խմաստութիւնդ, և չեղած բանը ըրիր։ Մէկ անգամ պատարագեցար արեամբ Գողգոթա լեռը. հիմա նորէն անարիւն պատարագով կը պատարագիս, զոհ կըլլուիս իմ առջիս ինծի համար, բայց մի և նոյն պատարագդ ես, ինչ որ եղաւ Գողգոթա լեռան վրայ։

Յաւել քահանայիւ. Եւ վասն սրբոյ Աստուածածնիւ.

Ո՛վ սուրբ կոյս Աստուածածին, դուն որ Գողգոթա լեռան վրայ եղած պատարագին առջին կեցար, և որդւոյդ հետ մէկտեղ պատարագեցար կենդանեաց նոյն խորվեալով սրտիդ մէջը, որ ես խաչըսիմ 'ի բարկութենէ Հօրն երկնաւորի, մեղքերուս թողութիւն գրաւնամ, տո՛ւր կաղաչեմ՝ քու բարեխօսութեամբդ՝ որ աս պատարագիս առջին ես ալ ինչպէս պէտք է անանկ կենամ,

արտաքին մարդուս աս պատարագը Հօրն երկնաւորի մատուցանեմ։ Շատ աղաչանքներ ունիմ ընելու, որովհետև բարեխօսութիւնդ զօրաւոր է Աստուծոյ առջեւն մայր սուրբ, բարեխօս եղիր ինծի մեղաւորիս համար, որ ձայնս լսէ, խնդիրքներս կատարուի։

Յաւելուած. Խոստովանիմ առաջի Աստուծոյ.

Ո՛վ ամենասուրբ Երրորդութիւն, քահանային խոստովանութեանը հետ իմ խոստովանութիւնս ալ ընդունէ և ողորմէ, վասն զի իմ մեղաւորիս մեղքերը քահանան իր վրան առած անանկ կը խոստովանի. մանաւանդ թէ նոյն ինքն Յիսուս միածին, Աստուծոյ քահանայապետան, անմեղ գառն Աստուծոյ իր վրան առած իմ մեղքերս քահանայի կերպարանքով անանկ կը խոստովանի քու առջեւդ ո՛վ Հայր երկնաւոր, մեղայ կըսէ, թո՛ղ կըսէ աս մեղաւորիս մեղքերը, ես անոր տեղը ահա կը պատարագիմ զոհ կըլլամ։ Անանկ է նէ

Երբոր քահանայապետին Յիսուսի առ խոստովանութիւնս իմ գիացէս կը լսես ով ողորմութեան Աստուած, թողութիւն տուր իմ ամէն մահացու և ներելի մեղքերուս որ ինչուան հիմա գործեցի. և Յիսուսին պատարագուելը մորդուելը աս սեղանիս վրայ ընդունէ, այսօր ինծի հետ հաշտուէ. որպէս զի կատարեալ հաշտուելով աստուածութեանդ հետ տաս ինծի ան ամէն շնորհքները, ինչ որ պատարագիս մէջը պիտոր ուզեմ, լսէ, կատարէ ան խնդիրքները, ինչ մոքով որ առաջադրեցի աս սուրբ պատարագը տեսնելու։

Մոխց առաջի սեղանոյ Աստուծոյ առ Աստուած, որ ուրախ առնէ զմանկութիւն իմ.

Ես ալ մտնամ աս սեղանս, որ Յիսուս կը կանչէ, ես լցեալս մեղքերով մտնամ վայելեմ աս սեղանէս՝ զոր Յիսուս կը պատրաստէ. վասն զի ինքն Յիսուս հարկինք ըրաւ հրաւիրեց իր

սեղանը կաղէր, կոյրէր, խեղէր, ան մարդիկները՝ որ ոմանք լոյս հաւատոյ չունէին, հոգւով կոյր էին, ոմանք կաղալով կերթային, մէյմը Աստուծոյ ծառայելով՝ մէյմը սատանայի, ոմանք մէյմէկ դին ցաւ ունէին, մէյմէկ կիրք և մոլութիւն. սատանիներուն հիմա կըսէ. Դուք մեղաւորք, եկէք աս դառս կերէք, որ ձեզի դէղ ըլլայ, ձեր մեղքերուն թողութիւն գտնաք, Հօր Աստուծոյ հետ հաշտութիւն գտնաք։ Ա՛ս սեղանս է որ ձեզ կուրախացընէ. հոս ես կը խորհիմ ձեզի համար, իմ սուրբ արիւնովս ձեր մեղքերը կը լուանամ, նորէն անմեղութեան շնորհքով ուրախ կընեմ զձեզ, ինչ որ մանկութեան պզտիկութեան ատենը ունէիք մկրտութեան շնորհքովը։

Դատ արա ինձ Աստուած, և. իրաւ ապրա ինձ 'ի դատաստանի իմոյ.

Ո՛վ հայր երկնաւոր, հիմա իմ դատաստանս դու կարէ, ան ազգէն՝ որ ոչ է սուրբ, որ է իմ մարմինս, ան մե-

զաւոր ու նենգաւոր մարդէն՝ որ է իմ կիրքս՝ փրկէ զիս, սատանայէն որոգայթներէն խաբուսէ զիս աս սուրբ պատարագին վրայ նայելով։ Քու միածինդ է որ ինծի համար կաղաչէ, որ մեղքերուս թողութիւն գտնելու համար ինք զինքը կը պատարագէ աս սուրբ սեղանին վրայ։

Դու Աստուած հզօրիչ իմ ես, ընկերիս մոռացար զիս, ընկերիս տրտուրմ գնաս ես 'ի ճեղուլ թշնամոյ իմոյ.

Տէր իմ Յիսուս, աս բարեբարութիւններդ դուն ես որ ըրեր ես ինծի. աս պատարագովդ դուն ես որ կը պատարագիս կը մարթուիս, քուկին արիւնդ կը թափես իմ սիրոյս համար. հիմա ինչո՞ւ մուցեր ես զիս իմ մեղքերուս համար. իմ սիրոս ալ քեզնէ պաղած ըլլալով՝ չեմ կրնար պատարագը սիրով փափաքով տեսնել ինչպէս որ պէտք է, թշնամին՝ որ է սատանան, աշխարհ, և իմ կիրքերս, կը նեղեն զիս փորձութիւններով, անկէց ես ալ

արտմուլթեան մէջ կկենամ։ Բայց դու, ամենակարող Աստուած, հզօրիչ իմ է՛ս, զօրացո՛ զիս Աստուած, աս սուրբ պատարագին զօրութիւնը տուր ինծի, որ անով փորձութիւններուն յաղթեմ, սիրան՝ միտքս՝ բոլորովին քեզի ընծայեմ. ինչպէս որ դուն ալ զքեզ բոլորովին ինծի կուտաս, ես ալ զիս բոլորովին քեզ նուիրեմ, քեզնով միութարուիմ։

Խոստմանի եղեց քեզ օրհնութիւնքս, Աստուած Աստուած իմ.

Կը խոստովանիմ Աստուած իմ, և կօրհնեմ քուկին անչափ բարերարութիւնդ, որ աս պատարագովը ինծի կը ցուցընես. իմ մեղքերուս քաւութեանը համար յանձն առիր չէ թէ ոչխար մը կամ գառն մը մորթել տալ, հապա դուն ինքդ մարդացեալ Աստուած իմ Յիսուս, կուսածին մարմնիդ իմ սիրոյս համար խաչին վրայ բոլորովին խորվեցիր, Հօրն երկնաւորի պատարագ մատուցիր, կը խոստովա-

նիմ Աստուած իմ օրհնելով աս երախ-
տիքը որ ինծի ըրիր, կը խոստովանիմ
կը զղջամ նաև իմ ապերախտութիւն-
ներուս վրայ, որ մեղքերուս գործեցի.
կը ցաւիմ քանի անգամ որ զքեզ վշտա-
ցուցի հինգ զգայարանքներուս, օխ-
տը մահացու մեղքերով: Աս սեղանոյն
առջին ձգելով իմ մեղքերս, կը խըն-
դրեմ ներումն, քու սուրբ արիւնովդ
լուանաս, մեղքերուս յիշատակը ջնջես
արդեամբք և զօրութեամբք սուրբ պա-
տարագիս:

Արդ ընդէր տրտում ես անձն իմ.
կամ ընդէր. և այլն. Օրհնեսցուք
զհայր. և այլն.

Կը հարցընեմ ես իմ անձիս, ինչու
տրտում ես, ինչ է որ ոչ երբէք կը
հանդչիս: Ինծի ներսէն պատասխան
կուտայ. չեմ հանդչիր՝ վասն զի զԱս-
տուած կը փնտռեմ՝ չեմ գտնար, արա-
րածոց մէջ հանգստութիւն կուզեմ,
չեմ գտնար հանգիստ. մեղք կը գործ-
եմ որ կամքս կատարեմ, բայց անով՝

ամ աւելի խռովութեան ու թշուա-
ռութեան մէջ կեցնում՝ կուլամ կը պը-
տրտիմ, մէկ հանգիստ տուող մը մէկ
փրկիչ մը չեմ գտներ։ Մէյմին ալ մէկ
ձայն մը կառնէ իմ հոգիս խորանէն.
ինչո՞ւ տրտում ես, ինչո՞ւ կը խռովիս,
ահա՛ փրկիչ մը կերևնայ, ահա՛ Աս-
տուած կու գայ աս սուրբ խորանին վը-
րայ. դուն Աստուծոյ դիր յոյսդ, խոս-
տովանէ, հաւատա, հաւատքովդ ու
գործովդ պաշտէ զանիկայ. Աստուած
ալ հիմա կուգայ, փրկիչ երեսաց քոց
կըլլայ. ուրիշ տեղ մի փնտռեր բնաւ ոչ
զԱստուած և ոչ քու հանգստութիւնդ,
այլ միայն աս խորանիս վրայ փնտրուէ,
որ ամէն ցաւիդ մխիթարութիւն գըտ-
նես։ Աս ձայնս կը լսեմ սուրբ սեղանոյն
վրայէն, յոյս կառնեմ, հոգիս կուրա-
խանայ, կը փառաւորեմ ամենատուրբ
Երրորդութիւնը՝ ասելով. Փառք Հօր,
և Որդւոյ, և Հոգւոյն սրբոյ. կօրհնեմ
ամենակարող Աստուածը՝ որ զիս արժանի
ըրաւ ատանկ սուրբ տեղ կենալ,
ուր որ իմ Աստուածս՝ իմ արարիչս՝
մարմնացեալ խորհրդացեալ աս սուրբ
խորհուրդիս մէջ հիմա պիտոր տեսնեմ։

Ի յարկի սրբոցքեան... խունարհեալ երկիւղիւ երկիր պագանեմք.

Երկրպագեմ տէր իմ Յիսուս քու անչափ երկայնմտութեանդ, երկրպագեմ քու անչափ խոնարհութեանդ, երկրպագեմ քու անչափ մարդասիրութեանդ՝ որ աս պատարագովը ցըցուցիր իմ վրայ։ Առաջ խաչուեցար թաղուեցար ինծի համար, և յարեար փառօք, հիմա ալ նոյն խաչելութեանդ յիշատակը անարիւն պատարագովդ կը հրաշագործես՝ ինծի կը ներկայացընես, անով աս տեղս կըլլայ հրեշտակաց բնակարան, որոնց հետ ես ալ մէկ տեղ ձայնակից ըլլալով ահով դողով խոնարհեալ երկրպագութիւն կուտամ, և փառաբանութիւն կերգեմ։

Օրինակ բազառորութիւն Հօր և Որդւոյ.

Այս օրուան ոճնին յիշատակը որ սուրբ եկեղեցին կընէ, ես ալ բարեխօս միջնորդ բռնելով ոմ ամենասուրբ Երրորդութիւն, խնդրեմ որ տաս ինծի ան շնորհքները՝ ինչ որ պէտք է ինծի: Թէ որ երկրաւոր իշխանները իրենց ոճներուն մեծ մեծ շնորհքներ պարգևներ կը բաժնեն, քանի աւելի, դու տէր իշխան մեր ամենեցուն. այս օրուան ոճնին պատիւը մի պարապ հաներ. որչափ շատ է իմ մեղքերուս ծանրութիւնը՝ մի յիշեր. այլ 'ի պատիւ ոճնին թողութիւն տուր առաջիմ մեղքերուս՝ որով կատարեալ հաշտութիւն ըլլայ. անկէց ետքը տուր ինծի հաւատ, յոյս, սէր և բարեգործութիւն. որ մնացած կեանքս ապաշխարութեամբ և բարի գործքով անցընելով, բարի պատրաստութեամբ հոգիս քեզ աւանդելով, երկինքը ոճնել արժանի ըլլամ աս ոճնս ամէն սրբոց և հրեշտակաց հետ մէկտեղ:

Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ ողորմեա մեզ.

Հրեշտակային փառաբանութիւնը բերանս առնելով, քուկին մարդասիրութիւնդ օրհնելով կաղաչեմ, տէր ամենակալ, ողորմէ ինծի որ զիս ստեղծեցիր, ողորմէ ինծի իմ ամէն հարկաւորութեանս ատեն, ողորմէ ինծի խնայէ փրկէ զիս ամէն պատիժներէն, որ արդար բարկութիւնդ ասուածային իմ մեղքերուս համար կը խրկէ վրաս։ Մանաւորապէս աղաչեմ, ազատէ պահէ զիս մահատրաժամէ, կրակէ, յանկարծակի մահուանէ, երևելի և աներևոյթ փորձանքներէ, չար թշնամիներէ, նայելով սուրբ պատարագիս վրայ որ սուրբ եկեղեցւոյ դիտաւորութեամբ բոլոր սրտով քեզ կը մատուցանեմ, ընկալ ու ողորմէ։

Հաւատամք 'ի մի Աստուած.

Հաւատամ ան ամենեն խորհուրդնե-
ը, ինչ որ կը հաւատայ սուրբ եկեղե-
ցին. իրեն հետ մէկտեղ զուրցելով սա
հանգանակը, կը խնդրեմ Թողութիւն
Թէ որ հաւատքիս դէմ մէկ խօսք մը
մէկ գործք մը ըրեր եմ ու չեմ ճան-
չնար. և կաղաչեմ որ սա սուրբ պատա-
րագիս արդեանցը համար տաս ինծի
շնորհք՝ որ ուղղափառ հաւատքս սըր-
տով՝ մտքով՝ խոստովանիմ, և հա-
ւատքիս նման ալ գործք ունենամ. ինչ
որ սուրբ աւետարանը կապըսպրէ,
գործքով կատարեմ։

Խաղաղութեամբ քով Քրիստոս
փրկիչ մեր.

Քանկին խաղաղութիւնդ որ աշխարհ
բերիր տէր իմ Յիսուս, պարգևէ ինծի
սուրբ պատարագիս արդեանցը հա-
մար. խաղաղութիւն իմ սրտիս ու
մտքիս մէջը՝ խղճմտանքս մաքուր պա-

հելով, Աստուծոյ հետ միշտ հաշտ մնալով։ Խաղաղութիւն իմ տանս մէջ հեռացընելով ամէն խռովութիւնը որ սատանան կը ջանայ բերել մեղքերով։ Խաղաղութիւն քաղքիս մէջը, փորձանքներէ չար պատահմունքներէ պահելով։ Եւ ան ամէն խաղաղութիւնը կենցաղավարութեանս մէջ որ հարկաւոր է քրիստոնէական քեզ ծառայելու. որպէս զի հոս քեզի ծառայելով, ետքը անդին ալ դանամ երկնային խաղաղութիւնը արքայութեանդ մէջ։

Լուռացից արքունեամբ զձեռս իմ.

Լուա՛ տէր իմ Յիսուս՝ իմ հոգիս ալ ամէն աղտոտութենէ, որ մեղքերովս աղտոտեցի. մաքրէ՛ արեա՛ իս ինչ որ քեզի դէմ մեղքերովս գործեցի գիտութեամբ և անգիտութեամբ, կամայ և ակամայ. որպէս զի արժանի ըլլամ ան անմահ պատարագը արբութեամբ քեզի մատուցանել. և առնել ան ամէն շնորհքը՝ որ հարկաւոր են իմ հոգւոյս փրկութեանը համար։

Ողջոյն առաք միմեանց.

Այս երկնային ձայնը լսելով խորհեն վրայէն՝ ասկէց ետքը ողջոյն կուտանք, սէր կը ցուցնենք մէկմէկու վրայ։ Եւ ո՞վ է որ չսիրէ իր ընկերը, չներէ իր թշնամիներուն, տեսնելով որ՝ Յիսուս Քրիստոս բանն Աստուած մեզի համար երբեմն իրեն թշնամի էինք, ինքը առաջ մեր վրայ անչափ սէր ցը-ցուց՝ որ հիմա խորհեն վրայ եղեր է՝ յանձն առեր է մեզի համար իր սուրբ արիւնը թափելու, որ մեզ երկնաւոր Հօրը հետ հաշտեցնէ։ Ցուր, ասէր իմ, որ ես ալ քեզի հետևելով ան սէրը ուն-նենամ Աստուծոյ վրայ, ընկերներուս վրայ, թշնամիներուս վրայ, ամէնուն եղբայրական սէրս ցուցնեմ սրտով և գործքով՝ որ քեզնէ ալ սէր դրա-նեմ։ Իս սիրով ընդունիս ասէր իմ, այն սրբոց ընկերութեան մէջ, որ սիրով զմայլեալ սրբայութեան մէջ, անճա-ռելի տեսութեամբ քով և քաղցր ան-կերութեամբ միմեանց՝ կուրախանան յաւիտեան։

Անիւ կացցուք. և այլն: Պատարագ Քրիստոս մատչի անարատ զառն Աստուծոյ.

Կը տեսնեմ ահա քահանան խորանին վրայ ելած, Յիսուս Քրիստոս ձեռքովը կը պատարագէ. կը լսեմ ձայնը որ կըսէ, աս է դառն երկնաւոր, որ մորթուելի պիտոր աս խորանիս վրայինչ կուզես խնդրէ, զուրցէ, Հայրն երկնաւոր աս պատարագիս՝ սիրտը չի դիմանար, ուզածդ պիտոր կատարէ: Ես ալ աս ձայնս առնելով, սիրտս կը քաջալերի. կը խնդրեմ առաջ իմ վրայ ողորմութիւն, որպէս զի արդարութիւնը մէկդի թողու, իմ վրաս գթութեամբ ողորմի. երկրորդ՝ կը խնդրեմ խաղաղութիւն. մեղքերս թշնամի ըրին զիս Աստուծոյ հետ, Աստուած ինծմէն հեռացուցին, խռովութեան սատանան քովս նստեցուցին, հիմա պատարագիս զօրութեամբը մեղքերուս թողութիւն տալով՝ խաղաղութիւն հաշտութիւն ելլայ իմ մէջ և Աստուծոյ մէջ. խաղա-

գութիւն ըլլայ իմ սրտիս և խղճմտանքիս մէջ, իմ տանս մէջ, և ընկերներուս մէջ. երբորդ՝ կը խնդրեմ որ ատանկ ըլլալով՝ աս պատարագին ուժովը օրհնէ զիս Հայրն երկնաւոր, օրհնէ իմ ամէն տուն, ամէն գործքս մարմնաւոր և հոգևոր, հեռացընէ մեղքերս, սատանային ուժը և ամէն թշնամեաց տեսլութիւնը։

Շնորհք, սէր, և աստուածային արբարար զօրութիւն... եղիցի ընդ ձեզ ամենեսին.

Ահա կը լսեմ խորանէն ուրախութեան ձայն, պատարագիս ուժովը կը յուսամ առնել շնորհք Հոգւոյն սրբոյ, որ տակէց եռքը չիմեղանչեմ. աս խորանէս կառնեմ սէրն երկնային, որով սիրաս միաքս երկրաւոր բաներէն կըտրեմ. աս խորանէս կառնեմ աստուածային արբարար զօրութիւնը, որով մեղքերուս թողութիւն դտնեմ, սրբութիւմ, զօրանամ աշխարհիս՝ մարմնոյս՝

սատանայի դէմ, և ասկէց ետքը ըլլամ Հշմարիտ աշակերտ Քրիստոսի։

Ի վեր բնծայեցուցէք զմիտս ձեր.

Խնդրեմ, սէր իմ, աս պատարագիս զօրութեամբը՝ որ հաւատքս պայծառացընես, բաց աչօք տեսնեմ աս աշխարհիս ունայնութիւնը և ոչնչութիւնը. սիրաս անոնցմէ կտրեմ հեռացընեմ, բոլորովին Աստուծոյ դարձընեմ։ Յոյս զօրացընես բարեգործութիւն ընել տալով, սէրս շտկես որ միայն աստուածային երկնային բաներուն սէր ձգեմ. այսօր ալ մատնաւորապէս կաղաչեմ մեղքերու առիթներէ պահես, որ առանց մեղաց անցընեմ. սովորական մեղքերս ձգեմ, մանաւանդ բարկութիւնը, հպարտութիւնը և նախանձը։

Եւ գոհացարուք զտնաւոն քոյրով սրտիւ.

Ի՛նչպէս չկրնամ տաճկ բարեբար տեսանէ, որ իմ սիրոյս համար ինքը պիտոր զոհ ըլլայ. աս է ան ոչխարն խոյն անարատ կախեալ խաչին ծառին վրայ Խաղակոյ տեղ. աս է անմեղ գառն զատկական խորովեալ աս սուրբ սեղանիս վրայ, որուն արիւնը իմ վրաս քսուելով, խալըսիմ պիտոր երկնաւոր Հօրը բարկութենէն: Անոր համար բոլոր սրտովս կը գոհանամ, սրտանց շնորհակալ կըլլամ:

Սուրբ, սուրբ, սուրբ, տէր զօրութեանց.

Տէր զօրութեանց Թագաւոր Աստուած, դու ես արքունիս արքայ երկինք և երկիր լեցուն է քուկին փառքովդ, ամէն ինչնայ մեր քովը խօսք քեզ փառաւորելու, այլ խօսքերնիս հասնելով, հրեշտակներուն խօսքը մեր բե-

րանը կառնենք, քեզ կը գովենք։ Օրհ-
նեալ և փառաւորեալ ըլլայ, ոչ թ զօ-
րութեանց, քու անուանդ Յիսուս, որ
աշխարհ եկար, մարմնացար մեզի համար,
ու նորէն պիտոր գաս. մենք ալ
սերովբէներուն քերովբէներուն հետ
զքեզ կօրհնենք, զքեզ կը գովենք, և
զքեզ կը փառաւորենք, զի դու միայն
ես արժանի ամենայն պատուոյ ընդ Հօր
և սուրբ Հոգւոյն։

Առէք կերէք.

Ո՛վ հայր ամենակալ, մեծ է իմ մեղ-
քերուս ծանրութիւնը, մէկը չնկրնար
քաւել. հիմա քու սիրելի Որդիդ միա-
ծին ուս խորանին վրայ եկեր կաղաչէ.
Ահա ես, ահա ես ուս մեղաւորին ան-
զը կը զոհուիմ, արիւնս կը թափեմ.
միայն թէ ուս մեղաւորիս մեղքերը սբը-
բէ, ասոր հետ հաշտուէ. իր տեղը ես
կը պատժուիմ, խաչին վրայ գամուե-
լով կը պատարագիմ։ Ո՛վ Հայր գթու-
թեանց, երբեր ուս քու միածնիդ ձայ-
նը կը լսես, ասանկ խոնարհութիւն

կը տեսնես, ինչպէս սիրտդ պիտոր դիմանայ։ Ես ալ անոր ձայնին հետ մէկտեղ ուրիշ բան չեմ կրնար համարձակիլ ըսելու, բայց եթէ մեղայ տէր իմ մեղայ։ Քու միածնիդ ձայնն է, քու միածնիդ մարմին և արիւնն է, որ ինծի համար կը պատարագուի կը թափի. իմ վրայ կօծուի, իմ արեանս հետ կը խառնուի. նայէ ողորմէ, արդարութիւնդ մոռցիր, գթութիւնդ յիշէ, մեղքերս քաւէ։

Արքէ՛ի սանեն.

Նայէ, ո՛վ արդարութիւն աստուածային, Յիսուս միածինն է՝ որ քեզի զոհ, ողջակէզ կըլլայ իմ տեղս. ան Յիսուսն է՝ որուն Հայր Աստուած երկընքէն վկայեց թէ. Դա՛ է որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ։ Ահա՛ ան սիրելի որդին անմեղ գառն անարատն է, որ իր սուրբ արիւնը կը թափէ հիմա ինծի համար, կը խորվի, խաչին վրայ բոլորովին կը պատարագի, որ ես փըրկուիմ, որ իմ մեղքերուս ներես, ինծի հետ հաշտուիս։

Եւ զքոյս 'ի քոյոց: Յաւելեալի օրհնեալ եւ տէր.

Քուէին անհուն բարերարութիւնդ որ ցրցուցեր ես մեր վրայ, տէր իմ, կը վայլէր որ մեծ մեծ բաներ զոհ պատարագ մատուցանէինք, ընտիր պարգևներ քեզի ընծայէինք. բայց բան մը չունինք, վասն զի ամէն բանը քուէինդ է, դուն ես ստեղծեր, զմեզ ալ դուն ես ըրեր յոչնչէ: Ա՛ս խորանիս վրայ ահա ունինք մէկ հատիկ քու սիրելի Որդիդ, անիկայ քեզի կը պատարագենք անարիւն պատարագաւ, անիկայ քեզի կընծայենք: Բայց կը տեսնենք որ ան ալ քուէինդ է, ան ալ դուն ես ոչ անբաւ ատուածութիւն, անհուն մարդասիրութիւն: Ի՞նչ կրնանք ըսել աս հրաշալի գործքերուդ վրայ, բայց եթէ տէր քուէինդ քեզի կը մատուցանենք, անոր հետ մէկտեղ մեր միտքն ալ սիրտն ալ որ դուն ստեղծեր ես, քեզի կը նուիրենք. ա՛ռ ինչպէս որ ուզես անանկ ըրէ. ինչ խաչ, ինչ նեղու-

թիւն ուզես խրկէլ՝ սիրով կը քաշենք։ Մեայն նայելով առ Յիսուս պատարագին վրայ, յիշելով իրեն քաշած չարչարանքները, խաչելութիւնը, մեզի հետ հաշտուիս, զմեզ սիրես, մեր մեղքերը քաւելով հայրաբար մեզ նախանձամիս, որ մենք ալ քեզ օրհնենք, գովենք, գոհանանք, հոս և անդին ալ յաւիտեան։

Որպէս զի եղիցի առ ամենեցուն մեզ մերձեցելոցս յանդգնութիւն, 'ի քաջութիւն, և 'ի փութութիւն մերոց.

Ահա կելլեմ Գողգոթա լեռը, աչքիս առջին կը տեսնեմ տէրն իմ խաչին վրայ կախուած, ձեռուքները՝ ոտուքները դամուած, իր սուրբ արիւնը մէկ անհուն աղբերէ մը կը վազէ իմ մեղաւորիս վրայ. սուրբ Աստուածածինը մէկդին կեցած, իր միածին որդւոյն հետ արտին մէջը խորվելով լալով կը բարեխօսէ ինծի համար. մէկալ դին Մարիամ Մագդաղենացին ղջուամ ընկ-

լով, Յիսուսին սուրբ արեամբը լուա-
ցուելով թողութիւն կը գտնէ իր մեղ-
քերուն, օրինակ տալով զիս կը յորդո-
րէ. ինքն Յիսուս հալած մաշած՝ իրեն
նեղութիւնը մոռցած, քահանային հետ
մէկտեղ ինծի համար կաղաչէ. Հայր
երկնաւոր, թողութիւն տուր աս մե-
ղաւորիս մեղքերուն։ Հոգիդ սուրբ,
թող, մի յիշեր աս մեղաւորիս ըրած
հպարտութեան, բարկութեան, և եօ-
թը մահացու մեղքերուն ծանրութիւ-
նը. քաւէ՛ աս մեղաւորիս բերնով, ձեռ-
քով, աչքով, ականջով, մոքով ըրած
մեղքերը. ես ահա անոր համար կը
քաշեմ. ես սիրելի էակիցդ անոր հա-
մար ամէն զգայարանքներս գամեր
եմ խաչին վրայ, որ աս մեղաւորիս թո-
ղութիւն տաս։

Ա՛խ, ես ալ հիմա աս ճայնս խորա-
նին վրայէն լսելով, աս ահաւոր աղե-
տալի տեսիլքս տեսնելով, կը վազեմ
հաւատքովս սուրբ խաչին տակը, ո-
տուքներուդ կը գլորիմ Մարիամ
Մագդալենացւոյն պէս, կաղաղակեմ.
Իմ վրայ թափէ աս սուրբ արիւնդ տէր

իմ Յիսուս, իմ չարաչար մահացու մեղքերս լուա՛ քու սուրբ արիւնովդ։ Ես պղտիկուցմէ բորոտեր եմ դարշելի մեղքերով. ես սուրբ պատարագիդ արիւնովը որ կը թափես ինծի համար, զիս սրբէ, լուա՛, մաքրէ՛. վասն զի կը խոստովանիմ կը հաւատամ՝ որ դուն ես պատարագ. քաւութեան և թողութեան, որ կը զենուիս սուրբ սեղանին վրայ, և կըլլաս ողջակէզ հաշտութեան Հօր Աստուծոյ։

Ո՛վ Հայր երկնաւոր, թէ որ իմ ձայնիս չես լսեր բարկանալուդ համար, տես քու սիրելի Որդիդ է որ ինծի համար կը քաշէ, հիմա ալ քահանային հետ կաղօթէ, կը բարեխօսէ. ասոր ձայնին լսէ, ասոր արեան վրայ նայէ, որ սուրբ պատարագովս՝ քահանային ձեռքովը բռնած քեզի կը ցուցնեմ. Երկինք սուրբ հրեշտակներ, դուք ալ տեսէք ես նոր տեսիլքս, ցուցէք երկնաւոր Հօրը։ Ո՛վ ալքիւր ողորմութեան, նայեցիր ես պատարագիս վրայ, ողորմէ՛ սրբէ՛ իմ ալտոտութիւնս, տուր ինծի պատարագիս անհուն արժ-

գեանցը համար մէկ զօրաւոր շնորհք մը յարատեւութեան, որ ասկէց ետքը բնաւ չիմեղանչեմ, միշտ շնորհաց մէջ մնամ, քեզ ծառայեմ, զքեզ սիրեմ և փառաբանեմ հոս՝ և 'ի հանդերձեալն յաւիտեանս. ամէն:

Յիշեա՛ տէր, և ողորմեա՛.

Գողգոթա լեռը կեցած, սրտովս մոքովս խաչին վրայ եղած, քեզ Յիսուսի թագաւորիդ խաչակից ըլլալով, բարի աւազակին հետ մէկտեղ կաղաղակեմ. Յիշեա՛ զիս տէր, յորժամ գայցես արքայութեամբ քով: Դուն ալ ո՛վ տէր իմ Յիսուս, միջնորդ Աստուծոյ և մարդկան, յիշէ քու խոստմունքդ որ անոր ըրիր. ինծի ալ այսօր քու քաղցր ձայնդ լսել տուր ըսելով. Այսօր ընդ իս եցես 'ի դրախտին: Ինչ մեծ մեղքեր որ ըրիր՝ թողութիւն կուտամ, այսօր դրախտն շնորհաց կը մոցընեմ. մեռնելուդ առենն ալ դրախտն երկնային կը մոցընեմ:

Կաղաչեմ ալ՝ որ յիշես, ողորմիս աս

Եւ եղիցի ողորմութիւն մեծիս Աստուծոյ.

Ո՛վ տէր զօրութեանց, Աստուած ամենակարող, որ զարմանալի հրաշագործութեամբ երկնքէն վար իջած աս սուրբ պատարագիս մէջ, խորանին վրայ նստեր ես մարմնովդ, որ իմ աղաչանքն երուս մոխիկ դնես, իմ մեղքերուս քաւութիւն պարգևես. թէպէտ հացին ներքևն ես, բայց իմ աչքս հաւատով գիտէ, կը խոստովանի, կը հաւատայ որ դուն հացին ներքև նստած ես, անանկ՝ ինչպէս թագաւոր մը կը նստի վարագուրին ետևը. աչքս վարագոյրը կը տեսնէ, բայց գիտնալով որ հոն է թագաւորը, զինքը տեսածի պէս կըլլայ։ Հիմա ալ աս խորանիս վրայ դու ամենակարող տէրդ ես՝ թագաւոր թագաւորաց Աստուած՝ որ նստեր ես. իսկ հացը վարագոյր մըն է աչքիս առջևն քաշած. դու Ճշմարիտ քահանայապետ ես՝ որ մարթուելով երկնաւոր Հայրը կը հաշտեցնես ինծի

Եւ եղիցի ողորմութիւն մեծիս Աստուծոյ.

Ո՛վ տէր զօրութեանց, Աստուած ամենակարող, որ զարմանալի հրաշագործութեամբ երկնքէն վար իջած աս սուրբ պատարագիս մէջ, խորանին վրայ նստեր ես մարմնովդ, որ իմ աղաչանքն երուս մոխիկ դնես, իմ մեղքերուս քաւութիւն պարգևես. թէպէտ հացին ներքևն ես, բայց իմ աչքս հաւատով գիտէ, կը խոստովանի, կը հաւատայ որ դուն հացին ներքև նստած ես, անանկ՝ ինչպէս թագաւոր մը կը նստի վարագուրին ետևը. աչքս վարագոյրը կը տեսնէ, բայց գիտնալով որ հոն է թագաւորը, զինքը տեսածի պէս կըլլայ։ Հիմա ալ աս խորանիս վրայ դու ամենակարող տէրդ ես՝ թագաւոր թագաւորաց Աստուած՝ որ նստեր ես. իսկ հացը վարագոյր մըն է աչքիս առջևն քաշած. դու Ճշմարիտ քահանայապետ ես՝ որ մարթուելով երկնաւոր Հայրը կը հաշտեցնես ինծի

հետ. ինչ հրաշք, ինչ գթութիւն և սէր է արարիչ և փրկիչ իմ։

Հիմա այսչափ սէր, այսչափ աշխատանք ցուցընելէն ետև իմ վրայ, միթէ կը կորանցընեմ զիս տէր իմ, միթէ կը մերժեմ իմ աղաչանքս. այլ քաւիչ, բարերար, մարդասէր, նայէ քու պատարագուելուդ վրայ, ողորմէ ինծի քահանային աղօթքովը, դարձ տուր ինծի, որ քու արիւնդ պարապ չերթայ։ Ինչպէս որ մէկ դառնալով նայելով Պետրոս առաքելոյն վրայ, երեն հոգին մեղքէն խալըսցուցիր, մոքին փորձութիւնը շփոթութիւնը փարատեցիր, որտին զղջում ու դարձ տուիր, որ միշտ կուլար. հիմա ինծի ալ գթած աչքովդ նայելով ողորմութիւնդ անպակաս ըրէ, մեղքի փորձութենէ ազատէ, որտիս զղջում տուր, որ Պետրոս առաքելոյն պէս միշտ լամ մեղքերուս թողութիւն դտնեմ։

Եւ տուր մեզ հաւատարմակրաձայն քարոզութիւն։ Հայր մեր.

Հայր երկնաւոր, զոր սուրբ եկեղեցւոյ հետ ես ալ կ'աղաչեմ ինչ որ պէտք է հոգւոյս և մարմնոյս՝ ինծի շնորհես. քուկին սիրելի միածինն Յիսուս որ խաչանին վրայ է, ինծի տրվեցուց ասանկ համարձակութեամբ քեզի Հայր ըսել աղաչել. ինքն ալ ինծի համար մէկտեղ կաղաչէ. անոր բարեխօսութեանը համար տուր ան ամէն մարմնաւոր բարիքը՝ որ ինծի հարկաւոր կը ճանչնաս. տուր ինծի ան ամէն շնորհքը՝ որ պէտք է հոգւոյս փրկութիւնը գտնելու, որով աս աշխարհիս մէջ փրկուելով ամէն փորձութենէ, ալքայութեան երկնից արժանի ըլլամ։

Ի սրբութիւն սրբոց.

Իմ աչքս քեզի կը նայի ով սրբութիւն, ով մարմին և արիւն Յիսուսի.

դուն ալ ամենասուրբ Երրորդութեան առջին խօսէ միջնորդէ ինծի համար։ Թէ որ արիւնն Աբելի կը խօսի, քանի՛ աւելի պիտոր խօսի բարեխօսէ աս անդին արիւնս։ Թէ որ մէկ մեղաւոր մարմին մը իր արիւնը թափէ՝ ձայնը լսելի կըլլայ, հապա ո՛րչափ աւելի լսելի պիտոր ըլլայ Հօրն երկնաւորի՝ աս սուրբ արեան զօրութիւնը, որ է արիւն դառնին երկնաւորի, և արիւն Որդւոյն Աստուծոյ, որուն Հայրն երկնաւոր վկայութիւն տուաւ։ Ահա աս սուրբ մարմին և արիւնն որ կը բարձրացընէ քահանան՝ է դին իմոյ փրկութեան, որ տեսնաս երկնքէն Հայր երկնաւոր, և գաղրեցընես ինծմէն քուկին բարկութիւնդ։ Իրաւի ծանր են, մեծ են իմ մեղքերս, բայց աւելի մեծ և անհուն են արդիւնք արեանն Յիսուսի. որ իմ վրայ թափելով կը խնդրէ քաւութիւն և թողութիւն մեղաց. ասոր վրայ նայելով հաշտուէ, իմ մեղքերուս թողութիւն պարգևէ։

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ.

Ի՞նչ շնորհակալութիւն, ինչ գոհութիւն կրնամ տալ այսչափ անհուն բարերարութեան Աստուծոյ, եթէ ոչ միայն օրհնելով աղաղակեմ. Օրհնեալ ըլլայ Հայրն երկնաւոր. որ իր միածին Որդին իմ սիրոյս համար տուաւ: Օրհնեալ ըլլայ Որդին Աստուած, որ իր սուրբ արիւնը ինծի համար թափելով ինքը զինքը պատարագ մատոյց: Օրհնեալ ըլլայ Հոգին սուրբ, որ աս սուրբ մարմինը և արիւնը երկնային մանանայի պէս հրաշագործելով, ինծի անմահական կերակուր կը պատրաստէ: Աս օրհնենքը արժանի ըրէ ով ամենասուրբ Երրորդութիւն, երկնային Երուսաղէմի մէջ սրբոց հետ մէկտեղ երգելու յաւիտեան ալէլուիա ըսելով. ամէն:

Ի սուրբ Ի սուրբ.

Ահա արքայութիւնը աչքովս կը տեսնեմ։ Յիսուս գառն Աստուծոյ Որդին միածին ընդ աջմէ հօրն Աստուծոյ նստած կերևնայ ինծի . հրեշտակներ չորս դին բոլորած, սերովբէք քերովբէք փառաք գոչուած, ձայն կելլէ քաւութեան և թողութեան մեղաց։ Թողութիւն եղաւ կըսէ քու մեղքերուդ։ աս սուրբ պատարագովը քաւուեցան քուկին մեղքերդ, ջնջեցաւ քուկին անօրէնութիւնդ։ Ես ալ աս աւետեաց ձայնը առնելով խորանին վրայէն ասկէց եաքը յոյս կը տիրէ, հաստատ գիտնալով որ արքայութիւնը իմն է, մեռնելուս առնը չեմ ճնար ատնանկ, այլ Քրիստոսի նման յարութիւն կառնեմ, կեանք յաւիտենական կը գտնամ, կեանք յաւիտենական փառաց։ Վասն զի խորանին վրայէն հրեշտակները կը քարոզեն որ ինքն Քրիստոս ինծի համար արդիւնաւորեցաւ վատաբկեցաւ աս շնորհքները։ Անանկ

է նէ ես ալ սաղմոս ըսեմ օրհնելով զՅիսուս, որ զիս ասանկ խաղաղացուց յաւիտենական մահուանէն, սաղմոս ըսեմ օրհնելով զՀայրն Աստուած, որ ասանկ իմ հոգւոյս փրկութիւնը հոգաց. սաղմոս ըսեմ օրհնելով զՀոգին սուրբ Աստուած, որ աս շնորհքներս՝ աս հրաշքներս՝ ինծի պէս մեղաւորիս վրայ բրաւ։

Եւ սուրբ արիւն քո 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց.

Ո՛վ Հիմարիս քահանայապետս Յիսուս Քրիստոս. ո՛վ միջնորդ Աստուծոյ և մարդկան, որ սուրբ արիւնդ թափելով զքեզ պատարագեցիր սուրբ սեղանիս վրայ, իս երկնաւոր Հօրդ հետ հաշտեցընելու համար ինք զինքդ զոհ մատուցիր. ես պիտոր քաշէի, դու իմ տեղս քաշեցիր։ Կաղաչեմ քահանային հետ, աս անգին արեանդ համար ըլլայ որ իմ փրկութեանս գինն է, մի թողուր իս ակէց եաքը իմ մեղքերուս մէջը մնալ. այլ ինչպէս կը հաւատամ

որ անձառելի սիրոյդ համար աս պատարագս քաւութիւն թողութիւն տուիր ինծի, հիմա նոյն պատարագին զօրութեամբը տաս ինծի Հոգւոյն սրբոյ շնորհքը յարատեւելոյ 'ի բարին, որ սուրբ արիւնդ իմ վրաս կաթեցընելով զիս սրբեցիր։

Գոհաւորամբ զքեզ տէր.

Գոհութիւն և փառս մատուցանեմ, տէր իմ, որ այսօր արժանի ըրիր աս սուրբ պատարագս առնելու, պատարագին անհուն գանձը և շնորհքը առնելու. հիմա աս պատարագիս հետն ալ զիս պատարագ մատուցանեմ տէր իմ, բոլորովին զիս քու կամացդ յանձնելով։ Առաջ կը զղջամ կը ցաւիմ բոլոր արտուս իմ անձնասիրութեան ու կամապաշտութեան մեղքերուս վրայ, որ ինչուան հիմա իմ կամքս պաշտեր եմ. զքեզ բոլորովին թողուցեր եմ, ինչ խաչ որ ինծի տուեր ես, ինչ պըզտիկ վնաս՝ պզտիկ հիւանդութիւն ձախորդութիւն խրկեր ես, սիրով չեմ

քաշած, մանաւանդ թէ ճշդութեամբ եմ քու կամքիդ դէմ. չեմ յիշած քու պատարագուիլդ, որ անով ամէն օր իմ աչքիս առջեւն կը ցուցընես և կը յիշեցընես քու անսահմանելի չարչարանքներդ. մոռցեր եմ ամենևին քու սուրբ արիւնիդ թափուիլը որ անարիւն պատարագովդ իմ աչքիս առջեւն կը բերես. թէ և մեղք մը ըրած չըլլայի, մինակ աս պատարագուիլդ տեսնելով՝ կամակար սրտով պէտք էր որ խաչ քաշէլ վնտռէի: Հիմա աս քու սուրբ պատարագդ իմ սիրտս բոլորովին փոխեց: Քու մեռնիլդ աս անմահ պատարագիդ մէջ ինծի համար՝ իմ սիրտս կակղցուց. էս ալ ասկէց ետքը չեմ ուզեր հանգստութիւն, հեշտութիւն, զբօսանք. հապա մինակ խաչուիլ կուզեմ, չարչարանք քաշէլ կը բաղձամ իմ մեղքերուս համար, ինչպէս որ դու տէր իմ ինծի համար քաշեցիր. քու սիրոյդ սէր հատուցանել կը փափաքիմ, որ քեզի նման խաչակից ըլլալով, անդին ալ քու փառացդ մասնակից ըլլամ. բաց երեսով դէպի տես-

նելով, անանկով յաւիտեան զքեզ սիրելով և գոհանալու արժանի ըլլամ. ամէն։

Եղիցի անուն տեառն օրհնեալ։ Օրհնեալ եղերուք 'ի շնորհաց սուրբ Հոգւոյն.

Օրհնութիւն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ աս պատարագիս զօրութեամբը ըլլայ իմ վրաս, օրհնուի իմ տունս տեղս։ Աստուածային օրհնենքը ըլլայ իմ առուտուրիս վասարկիս մէջը՝ որ այսօր կերթամ ընելու. բարի յաջողութիւն պարգևէ որչափ որ պէտք է իմ ապրուստիս համար։ Շնորհք Հոգւոյն սրբոյ հետս ըլլայ, պահէ իս ան մեղքերէն՝ որ այսօրուան իմ գործքերուս մէջը կրնան հանդիպիլ. պահէ իս բարկութենէ, դէշ խօսքերէ, անիրաւութենէ, զրկողութենէ. չմեղանչեմ ոչ Աստուծոյ դէմ, և ոչ եղբօրս դէմ. այլ մանաւանդ 'ի փառս Աստուծոյ ընեմ իմ ամէն գործքս և աշխատանքս՝ որ մարմնոյս շահը միտս չիտայ

հոգւոյս շահուն : Արդարութեամբ վաստակիմ, և ան վաստակածիս վրայ աստուածային առատութիւնդ և օրհնութիւդ ըլլայ՝ որ ան քիչովը առանց մեզաց իմ տունս տեղս կարենամ պահել, իմ ամէն գործքովս ինչուան մեռնելուս օրը զԱստուած փառաւորող ըլլամ, որ եռքն ալ արքայութեանդ ժառանգ ըլլամ. ամէն :

ԱՂՕԹՔ

ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ՏՕՆԻՑ

ՆԱԵԻ

ՄԵԾԻ ՊԱՀՈՑ

Ի ՏՕՆԻ

ԾՆՆԴԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Ո՛վ անհուն խորք գթութեան տեառնդ Աստուծոյ. ինչ գթութիւն է որ այսօր կը ցուցընես իմ վրա. դու յաւիտենական բանդ Աստուած, արարիչդ երկնի և երկրի՝ թողուցիր երկինքը, ելար երկրիս վրայ իս փրկելու համար։ Ո՛վ խորք մարդասիրութեան. Բանդ Աստուած ամենակարող դողով մարդացար, տղայ եղար, իմ ետևէս եկար, իս մոլորեալ ոչխարդ գտնելու համար։ Ո՛վ անքաւ խնամ-

տութիւն, որ առջի օրէդ ծնանելու ա-
ատենն ալ ինծի քարոզել սկսար գործ-
քով, զիս յապաշխարութիւն կանչել
սկսար քու օրինակովդ, ցրտութիւն,
աղքատութիւն և օտարութիւն քաշե-
լով։ Ամէն հարստութիւն դու տեղ-
ծեր էիր, մէկ տուն մը չիգտնուեցաւ
քեզ արտաքին ծնանելու համար։ Ամ-
մէն հանգստութիւն դուն տուեր էիր
մարդիկներուն, քեզի մէկ տեղ մը չի-
տուին մարդիկ։

Ա՛ս ինչ սէր է, տէր իմ, որ այսօր
կը ցուցնես իմ վրաս. ես քեզ թո-
ղուցեր էի, չէի ճանչնար, չէի պաշ-
տեր. դուն ալ ինծմէն քաշուելով ա-
նասնոց մէջ գացիր, հովուաց հետնելս-
տար. և անանկ խեղճ տղայական կեր-
պարանքով իմ կամակորութիւնս, իմ
բարբարոսութիւնս ուզեցիր անուշցը-
նել, ճամբայ բերել։ Եւ երբեմն՝ իմ ա-
պառաժ սիրտս ալ տեսնելով քուկին
խեղճ կերպարանքդ, փոխուեցաւ, ին-
ջաւ, քովդ գալու համարձակեցաւ։
Զիշարժեցաւ իմ չարութիւնս ոչ ջըր-
հեղեղին պատժովը, ոչ երկնատեղաց

կրակովը, ոչ Սինա լեռան վրայ եղած սհեղ տեսիլքովդ. այլ երբոր այսօր Բեթղեհեմի մորին վրայ կը նայիմ, երբոր քաշած խեղճութիւնդ կը տեսնեմ, սիրտս չեղիմանար, ըրած չարութեանս ու ապերախտութեանս վըրայ ցաւ կուգայ, սիրտս կը փղձկի։ Մեղայ կըսեմ տէր իմ մեղայ, ես ալ հովուաց հետ Բեթղեհեմ կուգամ, քու աղքատութեանդ՝ քու ճգնութեանդ կը հետևիմ. ինծի ալ ցըցուր քուկին տեսիլքդ, ինծի ալ լսեցուր քուկին ձայնդ, որ հովուաց պէս հրեշտակաց հետ զքեզ օրհնեմ երգելով. Փառք 'ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, 'ի մարդիկ հաճութիւն։

Փառք խոնարհութեան քո, տէր, որ աս աղքատութիւնս, աս խոնարհութիւնս յանձն առիր վասն սիրոյ իմոյ։ Փառք մարգասիրութեան քո, տէր. անչափ զիս սիրեցիր՝ որ զիս փրկելու համար մուտցար քու երկնային փառքդ. թողուցիր հայրական ծոցը՝ եկար հողին վրայ զիս փնտռելու։ Փառք իմաս-

տուԹեան քո, տէր, որ իմ չարուԹեանս վրայ ոչ սատակուԹեամբ՝ այլ քաղցրուԹեամբ յաղԹել ուզեցիր։ Ա.յսօր ահա յաղԹուեցայ քու գԹուԹենէդ, տէր իմ Յիսուս վասն իմ մանկացեալ, սիրաս տրտրեցաւ. մեղայ գոչելով ողբ. կուգամ, ո՛վ վասն իմ մարդացեալ։ Տուր ինծի ալ այն շնորհքը աղքատուԹեան, որ աշխարհային բաները սըրտէս դուրս հանեմ։ Տուր ինծի բարեխօսուԹեամբ սուրբ Ա.ստուածածնի մօր քոյ՝ քու խոնարհուԹենէդ, քու խմաստուԹենէդ. որ քու այսօրուան տուած օրինակդ մտածելով ամէն բան ձգեմ, քեզի հետևիմ, հաւատքս՝ յոյսս սէրս՝ ամրացընելով, զղջմամբ անցընեմ օրերս, որ ինչպէս տեսայ քուկին մարդեղուԹիւնդ, անանկ ալ քուկին ասուածուԹիւնդ դէմ յանդիման տեսանելու արժանի ըլլամ. ամէն։

Ի ՏՕՆԻ

ԱՆՈՒԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՅԻՍՈՒՍԻ

Երկրպագեմ հրաշափառ անուանդ-
տեառն մերոյ Յիսուսի. անուն՝ որ զօ-
րութիւն կուտայ մեզ հաւատացելոց,
կը փրկէ 'ի թշնամեաց, հալածիչ է
դիւաց, կատարիչ ամենայն խնդրուա-
ծոց: Զի յանուն Յիսուսի Քրիստոսի
կրկնեացի ամենայն ծունր երկնաւորաց
և երկրաւորաց և ստորգետնեայք-
նաց, կըսէ Պօղոս առաքեալ: Եւ դուն
ալ ըսէր տէր իմ, թէ Զոր ինչ խնդրի-
ցէք յանուն Յիսուսի, եղիցի: Ա-
սուրբ և ահաւոր անունս միշտ բե-
րանս առնելով, նոյն անուան զօրու-
թեամբ կը խնդրեմ 'ի Հօրէն յաւիտե-
նական տալ ինծի ան ամէն շնորհքը՝
ինչ որ պէտք է հոգիս փրկելու: Եր-
բոր յիշեմ աս սուրբ անունս Յիսուս,
փախչին ինծմէն ամէն փորձութիւնք,
փախչի ամէն ծուլութիւն. հոգիս ա-
րիանայ, միտքս լուսաւորի. ապաշ-

խարեմ իմ մեղքերուս վրայ, թողութիւն քաւութիւն գտնեմ։

Ո՛վ Յիսուս, անուն ցանկալի, անուն հրաշալի, յոյսդ մեղաւորաց, բարեխօս վասն մեր, ցոյց զզօրութիւն անուանդ քո, տէր զօրութեանց. հաշտեցո՛ զիս այսօր երկնաւոր Հօրդ հետ. անցո՛ զբարկութիւն արդարութեան Աստուծոյ վասն անուան քոյ սրբոյ. քու անուանովդ պաշտպանէ զիս ահեղ դատաստանէդ Աստուծոյ։ Զեմ արժանի ընդունիլ, բայց անուն քո կոչեցեալ է 'ի վերայ իմ. վասն փառաց անուանդ Յիսուսի ազատէ զիս ամէն հոգևոր ու մարմնաւոր փորձանքներէ այժմ և 'ի ժամու մահուան իմոյ, որ ես ալ օրհնեմ զանունդ Յիսուս ընդ սուրբս քո յաւիտեան. ամէն։

Ի ՏՕՆԻ ՅԱՅՏՆՈՒԹԵՍՆ

Այսօր յայտնեցիր զքեզ տէր իմ, ան թագաւորաց, որ քեզ հեռու տեղերէ եկան փնտռելու՝ երկրպագելու համար. ծածկեցիր զքեզ մսոյկ

եղող Հերովդէսին՝ որ քեզ կը փնտռէր մեռցընելու համար։ Երանի՝ ան արդար հոգիներուն՝ որոնց դուն քեզ կը ցուցընես. վայ՝ ան մեղաւոր հոգիներուն որոնցմէ դուն զքեզ կը ծածկես, կը հեռացընես։ Տո՛ւր ինծի այսօր ան շնորհքը, ասէր իմ, որ ինչպէս ան թագաւորները՝ երկայնմտութեամբ ապաստելով ատողին՝ վերջապէս տեսան ատողը, անոր առաջնորդութեամբ ըլլին ան երկայն ճամբորդութիւնը, եկան գտան զԱստուածդ մարդացեալ. ան լոյս հաւատոյ՝ ան երկայնմտութիւն ազօթքի՝ ես ալ ունենամ. քեզ ապատեմ, արտով մտքով քեզի գամ, որ զքեզ աշխարհիս մէջ շնորհքով տեսնեմ, անդին ալ ատուածութիւնդ պայծառ տեսնելու արժանի ըլլամ։ Քու ատոդդ շնորհաց զիս լուսաւորէ, առաջնորդ ըլլայ իմ կենացս երկարատև ճամբորդութեանը մէջ. ամէն փորձութիւններէ պահէ, երկնային Երուսաղէմը հասցընէ։

Կը յիշեմ, ասէր իմ, երբոր ան երեք մոգերը մտուրը մտան, ինչպէս արքայ-

ութիւն դարձած գտան ան մնուրը, հոն տեսնելով զքեզ Յիսուս մանկա-
ցեալ, զսուրբ Աստուածածին, և ըզ-
սուրբ Յովսէփ, ամենն հրեշտակներով։
Եւ ինչպէս որ ան իրեք մոգքը զքեզ
տեսածնին պէս երկրպագութիւն տը-
ւին, իրենց գանձը բացին, քեզի ըն-
ծայեցին ոսկի, կնդրուկ, զմուռա, էս
ալ անոնց հետևելով՝ քեզ միայն երկրը-
պագեմ, քեզի ընծայեմ ոսկի՝ որ է իմ
հաւատքս՝ առաքինութեան գործքե-
րով զարդարեալ, քեզ ընծայեմ կընդ-
դրուկ՝ որ է անուշահոտութիւն աղօ-
թից, և զմուռա մեռելութեան ախտից։
Եւքն ալ պահապան հրեշտակիս ա-
ւաջնորդութեամբ անոնց պէս ազա-
տիմ սատանայի որոգայթներէն՝ որ՝նը-
ման Հերովդէսի կուզէ իմ ձեռքովս՝ իմ
մեղքերովս՝ սպաննել զՅիսուս, զիս շը-
նորհքէ զրկել։ Ո՛վ ամենօրհնեալ սուրբ
կոյս Աստուածածին, ինչպէս որ այ-
սօր քուկին ներկայութեամբդ արժա-
նացան ան իրեք մոգքը Յիսուսի տես-
լեանը, քու բարեխօսութեամբդ զիս
ալ արժանացու զՅիսուս տեսնելու ար-
քայութեան մէջ 'ի յաւիտեան. ամէն։

Ի ՏՕՆԻ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ

Ո՛վ անքաւ խոնարհութիւն աստուածային, որ ինծի համար յանձն առիր այսօր մեղաւորի կերպարանքով գալ. քու ծառայէդ մաքրութիւն ուզել ջրով. մարմին զոր առիր՝ ըլլալով մարմին ապամային՝ մեղաւորի պէս երևցար, և քու ծառայէդ սուրբ Յովհաննէս մկրտչէն լուացուիլ ու մկրտուիլ ուզեցիր. ան ծառան՝ որ դուն ստեղծեր էիր, անկէց մաքրուիլ ուզեցիր. ան ալ զարհուրեցաւ քու խոնարհութենէդ, հրեշտակներն ալ երկրպագեցին նայելով դողացին։ Բայց դու իմ սիրոյս համար յանձն առիր մեղաւոր երևնալ լուացուիլ, ինծի ալ մեծ պարգև մեծ խորհուրդ տուիր՝ որ ես ալ լուացուելուս սուրբ մկրտութեամբ սկզբնական մեղքէն Ադամայ լուացուիմ, սրբուիմ, Հոգւոյն սրբոյ շնորհաց ընդունակ ըլլամ, սատանայի ծառայ ըլլալով՝ հրեշտակաց մէջը գտնուիմ։

Սակայն ես ապերախտս փոխանակ

աղէկ պահելու աս մաքրութիւնը և փոխանակ շնորհակալ ըլլալու, մեղանչելով կորսընցուցի աւազանին շնորհքը, հոգիս աղտոտեցի, նորէն սատանայի ծառայ եղայ մեղքերովս: Այսօր միրտուութեան ոգով ըլլալով, ով մարդասէր տէր, ասանկ մեծ օրը գիտեմ որ նոր շնորհքներ կը բաժնես, ամենուն մեղքը կը լուանաս, եկեր ողջ կենդանի, թողութիւն կը խնդրեմ ամէն մեղքերուս համար: Կաղաչեմ նորէն լուանաս, և ան միրտուութեան շնորհքը որ կորսնցուցի, նորէն ինծի դարձնես:

Գիտեմ տէր, որ զիս լուանալու համար ինծմէն ջուր արտասուաց կուզես, ահա աս աղօթքս կը մատուցանեմ. չունիմ արցունք, չունիմ կատարեալ ցաւ սրտի, սիրտս քար է կըրեր. իմ մեղքերուս շատութիւնը ապառաժի պէս կարծրացեր է, բայց իմ ապաշխարութեան ձայնս արցունք թափողի պէս ընդունէ, ու քու միրտուութեան ջրոյդ հետ խառնելով նորէն զիս շնորհքով մկրտէ:

Ամ աղօթք.

Մի նայիր իմ սրտիս կարծրութեան, աչք իմ Յիսուս, այլ նայէ իմ կամքիս՝ իմ բաղձանացս, որ ասկէց ետքը ելրաւցընէ կուզեմ եւ կենալ մեղքերէս, և իմ չար սովորութիւններէս։ Նեղման ատուրոյն պէս բորոտեր եմ մեղքերովս, լուա կաղաչեմ իմ ամէն մեղքերս նոր Յորդանանու ջրով ապաշխարութեան. կը զղջամ կը ցաւիմ չէ թէ անոր պէս եօթն անգամ, հապա ամէն օր. դու Հիմարիս Եղիսէ՝ լուա բժշկէ, ով տէր ներողութեան, ով Ամենաւած գթութեան։ Սրբէ իմ ձեռքերս՝ որ զանազան մեղքերով աղտոտեցի. սրբէ իմ աչքերս՝ որ մեղքով պղծեցի. սրբէ իմ բերանս՝ որ դէշ խօսքերով, բարկութեամբ, բամբասանքով վիրաւորեցի. սրբէ իմ ականջներս՝ որ դէշ խօսքերու մտիկ դրի. լուա իմ ոտքերս որ չարի վազեցի, աղէկի չիգացի. սրբէ իմ սիրտս իմ միտքս՝ որ աղէկ բան չիմտածեցի,

չար բանեբու խելք տուի։ Ամանկ ալը-
բուելուն այսօր ես ալ աղէկի դառնամ,
մնացած կեանքս քեզի ծառայեմ, քու-
սուրբ պատուիրանքներդ պահեմ, և
մահուանս առեն Հօր Աստուծոյ սի-
րելի որդի ըլլալով, իրեն երանական
ձայնը լսելու արժանի ըլլամ. ամէն։

Ի ՏՕՆԻ

ՏԵԱՌՆ ԸՆԴ ԱՌԱՋԻՆ

Ո՛վ մաքրութեան սիրող Յիսուս,
դու որ անարատ մօրդ հետ եկար տա-
ճարը, և Հօր Աստուծոյ ընծայուելով
զմեզ մաքրեցիր և Աստուծոյ ընծայե-
ցիր, զիս որ մաքրութեան կարօտ եմ
արքէ, և ինչ մեղքեր որ ըրեր եմ ալը-
տիկուց ինչուան հիմա, և մեղքերով
հոգիս աղտոտեր եմ, տուր քաւութիւն
և թողութիւն։ Եւ ինչպէս որ Սիմէոն
ծերունին շատ աղօթքով սպասէին ե-
ան արժանի եղաւ քեզ տեսնելու, իր
գիրկը առնելու, անոր պէս զիս ալ ար-
ժանի ըրէ աղօթքով աղաչանքով սպա-
սել պատրաստուիլ քեզ հաւատքով

պայծառ տեսնել, և սուրբ և արժանաւոր հաղորդութեամբ իմ սրտիս մէջը առնել, շնորհքով զարդարուելու քեզ տեսնելուս սուրբ պատարագիս խորհուրդին մէջ զմայլիլ։

Երբոր սատանի արժանապէս առնեմ սուրբ հաղորդութեան խորհրդով ըզքեզ, հաւատքիս աչքը կը բացուի, զքեզ փրկիչդ պայծառ կը տեսնէ, սէրս կը վառի, յոյս կը հաստատուի։ Ան առնը իմ հոգիս ալ Սիմէոնի պէս քեզ կը փաթաթի՝ քեզի կաղաղակէ ըսելով. Արդ արձակէս զծառայս քո։ Տեսայ Իմ փրկիչս վասն իմ մանկացեալ, տեսայ իմ տէրս հայրն տեսանկաւ խորհրդացեալ, ասկէց ետքը դանեցայ աշխարհքէս, չեմ ուզեր աշխարհային բաները. ալ չեմ ուզեր աշխարհիս վրայ կենալու. ասկէց ետքը արձըկէ զիս մեղքերէս. արժանի ըրէ բարի մահուամբ քեզի դալու, քեզի հետ յաւիտեան մնալու, ալ տէր իմ, ալեւոր իմ, և փրկիչ իմ։

Դու սուրբ կոյս Աստուածածին, այսօր կատարեալ տուր իմ խնդիրքս, և

ինչպէս որ Սիմէոն ծերունւոյն գիրկը դու տուիր այսօր զմանկացեալն Յիսուս, քու բարեխօսութեամբդ ըրէ՝ որ ես ալ արժանապէս առնեմ զՅիսուս փրկիչն իմ սուրբ հաղորդութեան խորհրդով իմ սրտիս մէջ, ապով զմայլիմ, ուրիշ բանի չեցանկամ իմ կեանցս մէջ։ Դու որ անկարօտ էիր արքութեան՝ բոլորովին սուրբ ըլլալով, ուրիշ հատարակ մարդ պէս աղօթքներ ու օրհնութիւններ կարդալ տուիր. ես եմ մեղաւոր կարօտ մաքրութեան և արքութեան, իմ վրաս ապաւորել տուր աղօթքներուն զօրութիւնը՝ որ իմ առջի ըրած մեղքերս ջնջուին։ Սակէց ետքը արքութեամբ անցընեմ մնացած իմ կեանքս, ետքը արժանի ըլլամ արքայութեան մէջ պայծառ երեսօք տեսնելու զՅիսուս ընդ Հօր և սուրբ Հոգւոյն. ամէն։

ԿՐԹՈՒԹԻՒՆ ԱՂՕԹԻՑ

Ի ՄԵԾ ՊԱՀՍ

Մեղաւոր հոգին երբոր առ Աստուած կը դառնայ, առաջ ճանչնալ կը սկսի՝ կը մտածէ իր մեղքին դարշելութիւնը, ինչ փորձանք՝ ինչ չար բերելիքն սատանային փորձութիւնը. և իր հետևիլը սատանային կամքին. և ինչպէս զրկուեցաւ Աստուծոյ շնորհքէն իրեն մեղանչելովը։ Երկրորդ՝ կը ցաւի կը զղջայ արտանց իր ըրած մեղքերուն վրայ։ Երրորդ՝ կերթայ քահանային, կը խոստովանի իր մեղքերը։ Չորրորդ արտանց աղօթք կընէ Աստուծոյ շնորհքը խնդրելու, որ խոստովանած մեղքերուն թողութիւն տայ։ Հինգերորդ՝ կը պատրաստուի իր արտին մէջը առնելու զՅիսուս սուրբ հաղորդութեամբ։

Ա՛ս կարգիս վրայ առջի հայրապետներին ալ կարգաւորեցին բոլոր մեծ

պաքին կիրակիներուն աւետարանները և շաբաթները։ Առջի և երկրորդ կիրակին կամ շաբաթը՝ Ադամայ ու Եւայի փորձութիւնները յիշելով որ է պատճառ մեր ամէն մեղացը, յորդորուինք անոնց պէս՝ ըրած մեղքերնիս ապաշխարել։ Ադամայ մեղքը մէկ է, բայց ուրիշ մեղքեր ալ կը մնան, որ մենք ալ միշտ ան մեղքերուն մէջ կիյնանք, հպարտութիւն, որկրամոլութիւն, ծուլութիւն կամ անհոգութիւն Աստուծոյ պատուիրանքը պահելու, և անձնահաճութիւն՝ որ է իր կամքը և ուրիշին կամքը՝ Աստուծոյ կամքէն վեր դնել։ Յիշենք և Քրիստոսի փորձութիւնը, անով զօրանանք փորձութիւններու դէմ դնել, սատանան քամահրել, և մեղքերէ զգուշանալ։

Երրորդ շաբաթը՝ Անառակ որդւոյն օրինակը կարդալով՝ յորդորուինք առնոր պէս մեղայ դառնալ, զղջալ։

Չորրորդ շաբաթը՝ Տնտեսին օրինակովը համար տալ մեղքերնուս վրայ՝ խոստովանելով քահանային։

Հինգերորդ շաբաթը՝ Քրիստոսի օրինակովը արտանց աղօթքի հետ ելլալ, մեղքերնուս համար թողութիւն առնելու, և Աստուծոյ հետ հաշտուելու։

Վերջերորդ շաբաթը՝ Քրիստոսի գալուստը յիշելով, պատրաստուիլ նրեն գալստեան սուրբ խորհրդով հաղորդութեան. պատրաստուիլ և բարի մահուան:

Հոս ալ ահա առ կարգով գրուած են բոլոր մեծ պաքին աղօթքները ամէն օրուան համար, որ է հոգևոր կըրթութիւն զՅիսուս առնելու սուրբ հաղորդութեամբ:

ԱՌԱՋԻՆ ՇԱԲԱԹ

ՄԵԾ ՊԱՀՈՑ

Կրթութիւն գրաւորական ընդդէմ փորձական, յիշատակաւ փորձութեան Ադամայ և Քրիստոսի.

ՇԱՐԱԿԱՆ

Որ ըստ պահոց քառասնօրեայ փրկողին պահելով հարմնացեալ եկեղեցի, զի մոցէ 'ի յառաջաւոր ընդ փեսային յարուցելոյ։ Եկայք հաւատացեալք Քրիստոսի, ցնծութեամբ պահեսցուք, ընդ անմահին մահուամեռանելով մեղաց, զի յարութեամբ նորակենդանացուք արդարութեամբ։

ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

Առաջին օր մեծ պահոց.

Տէր իմ Յիսուս Քրիստոս, անչափ հարկաւոր սեպեցիր պաք բռնելը որ առջի մարդուն Ադամայ՝ նշան իր հնազանդութեան՝ պաքը տպրտպրեցիր,

չուտել Գիտութեան ծառէն։ Եռքը երբոր դուն ալ աշխարհ եկար, ինծի ապաշխարանք սրբագործելու համար՝ առջի բանդ եղաւ քառասուն օր պաք բռնել, չուտել, անանկով սատանայի փորձութեանը յաղթել։

Տուր ինծի ալ տէր իմ այսօր շնորհք, որ աս սուրբ օրինակիդ հետևելով, ես որ քառասուն օր պաք բռնել կը սկսիմ աս օրէս, բարի գիտաւորութեամբ բռնեմ. ու պաքին հետ լեզուս ալ բռնեմ. ես կենամ դէշ խօսքեր հանելէն, անէծք տալէն, բամբասանքներէն, և ամէն մոլութիւններէս ու մեղքերէս դադրիմ։ Տուր մեզ տէր մահու քո նըմանիլ մեռելութեամբ մեղաց, զի և կենաց քոց հաղորդիլ արժանացուք կենդանարար արքայութեանդ։ Ամէն։ Ամենէն աւելի կաղաչեմ, պահես զիս ան մեղքէն՝ որ ըրաւ Ադամ, լսելով ձայնի կնոջ՝ Աստուծոյ կամքը ոտքի տակ առաջըլլայ թէ ես ալ ուրիշին կամքին չի դպչելու համար՝ Աստուծոյ կամքին դէմ բան ընեմ, Աստուծոյ պատուիրանքը կոտրեմ, անով Ադամայ պէս

դրախտէն քշուիմ դուրս ելլիմ։ Այլ քեզի հետ հիմա 'ի պարտէզն աղօթից և ապաշխարութեան մտնելով զատկին սուրբ շնորհքներովդ զարդարուիմ, երկնային դրախտին արժանի ըլլամ։

ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

Երկրորդ օր մեծ պահոց.

Մարդասէր տէր իմ Յիսուս, ան առջի փորձութեանդ համար որ քաշեցիր, կատարէ այսօր իմ ապաշանքս որ քեզմէ կը խնդրեմ. յիշէ երբոր սատանան քեզ չնճանչնալով քովդ եկաւ յանդգնեցաւ քեզի փորձութիւն բերելու Ադամայ պէս, ու ամօթուութեանդ համար ըսաւ՝ որ քարերը հաց դարձընես։ Դուն զանիկայ սուրբ դրոց խօսքով մէկէն յանդիմանեցիր, հաց ուտելը հոգալու բան մը չէ ցուցիր, մինակ Աստուծոյ բանը հոգալու է ըսիր. անով Ադամայ որկրամոլութեան մեղքը ջնջեցիր։

Կաղաչեմ քաւես սրբես իմ որկրամոլութեան մեղքերս՝ որչափ որ ըրեր

եմ պղտիկուց ինչուան հիմա. և այսօր-
ը ընէ իմ սրտէս հանես ան աւելորդ
հոգերը իմ ապրուստիս վրայ։ Վասն
զի սրտով մտքով աւելի հոգ կը տա-
նիմ ապրելուս վրայ՝ քան թէ Աստու-
ծոյ բաներուն վրայ։ Դիտմամբ պէս
մէկդի ձգեր եմ ան բաները՝ որ Աս-
տուած տուեր է ինծի, եռեռէ ընկեր
եմ ան բաներուն՝ որ Աստուած արգի-
լեր է, որով դուրս ընկաւ կորսընցուց
ձեռքի եղած դրախտն ալ. ես ալ անոր
պէս խելքս տուեր եմ անոնց որ արգե-
լեր ես, որ է աս անցաւոր աշխարհիս
բաները, մոռցեր մէկդի ձգեր եմ ան-
դի աշխարհին բաները։ Անհոգ կեցեր
եմ Աստուծոյ պատուիրանքները պա-
հելու. աղօթքիս՝ պատարագ տեսնե-
լուս տեղն ալ ատանկ պարապ բաներ-
ու տուեր եմ միտքս, մտածելով ինչ
ընեմ որ ապրիմ, ինչ ընեմ որ տունս
պահեմ. չեմ մտածած ինչ ընեմ որ
քու կամքդ կատարեմ, քեզ փառա-
բանեմ։

Աս աւելորդ հոգերը իմ ապրուստիս
վրայ ինծմէն վերցընես, որկրամոլու-

թեան մեղքէ պահէս, ժուժկալութեան շնորհք պարգևէս, որ խելքս միտքս տամ բարեգործութիւն ընելու, և աստուածաշունչ գրոց խօսքերը մեծացնելու։

ՁՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Երրորդ օր մեծ պահոց.

Խոնարհութեան օրինակ տէր իմ Յիսուս Քրիստոս, որ թող տուիր սատանային զքեզ առնել բերել Երուսաղէմ, տաճարին աշտարակին վրայ հանել, հոն ինքն ալ տուրբ գրոց խօսքերով յանդգնեցաւ փորձութիւն բերելու. տեսնելով որ դուն տուրբ գրոց խօսքերով իրեն դէմ կը պատերազմիս, ուզեց հպարտութեան մեղքի մէջ ձգել Ադամայ պէս, Աստուած փորձել, պարապ տեղը հրաշք ընել ըսաւ փառաւորուելու համար։ Դու ինքն որ խոնարհութեան ճշմարիտ օրինակն էս՝ նոյնն տուրբ գրոց խօսքերով անոր խօսքերը ցրուեցիր, ամօթ ըրիր. փառասիրութեան մեղքը

Ապամոյ՝ որով դրախտէն դուրս ընկաւ՝ ասով քաւեցիր։ Տուր ինծի ալ կաղաչեմ մէկ շնորհք մը խոնարհութեան, որ հպարտութեան և փառասիրութեան մեղքերը իմ սրտէս հանեմ, քանի որ սատանան միտքս փորձութիւն ձգէ, ասատուածաշունչ գրքին խօսքերը միշտ միտքս բերեմ, բերանս առնում, անով մերժեմ ցրուեմ սատանային բերած պիղծ և հպարտ միտքերը։ Այս ալ կաղաչեմ, քու զօրութիւնդ տպաւորիս ան խօսքերուն վրայ, որ զուրցածիս պէս սուրբ գրոց խօսքերը, սրտէս ալ հալածուի ամէն փորձութեան շոշորդները, ամէն։

ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

Չորրորդ օր մեծ պահոց.

Աղքատութեան սիրող տէր իմ Յիսուս, երբորդ փորձութիւն ալ քաշեցիր սատանայի ձեռքէն ինծի համար, երբոր քեզ տարաւ բարձր լեռան վրայ, ցոյց աշխարհիս ամէն թագաւորութիւնը, ու իրենց փառաւորութիւնը,

ու քեզի պարգևելու խօսք առաս, թէ որ իրեն երկրպագութիւն ընէիր։ Ինչպէս որ Ադամայ միտքը աղտոտութեան ու ապառաջանալու՝ մեղքը ձգելով պղտորեց, անով դրախտէն դուրս հանեց, անանկ ալ կարծեց որ քուկին մարդկութիւնդ ալ Աստուծոյ դէմ մեղքի մէջ կրնայ ձգել։ Իսկ դուռէր, ան ատենը ասասելով հալածեցիր. Աստուծոյ պատուոյն դէմ ան չարին խօսիլն ալ չուզեցիր, ըսելով. Աստուծոյ միայն տալու է երկրպագութիւն. անով Ադամայ մեղքը՝ որ չարին ըսելով՝ Աստուծոյ փառքը իրեն ուզեց առնել և ապատ ըլլալ՝ ջնջեցիր, Աստուծոյ փառքը տեղը դրիր։ Ո՛վ տէր իմ, իմ սրտէս ալ շատ հեղ կանցընէ ասասանան աշխարհիս մեծութիւնը, հարստութիւնը, փառքը, պատիւը ու ներսէս ան բաներուն բաղձանք բերել կուտայ. ես չունիմ կարողութիւն ան չարին ասասելու, իմ մեղաւոր մարմնոյս համար կը թուլնամ։ Դու տէր իմ, ան զօրութիւնը ինծի ալ տուր, որ չար ասասնային միտքերը մէկէն վանեմ

դուրս ձգեմ. մինակ Աստուծոյ մեծութիւնը՝ Աստուծոյ փառքը ուզեմ իմ ամէն գործքիս մէջ. ամէն։

ՈՒՐԲԱԹ

Հինգշաբթի օր մեծ պահոց.

Ո՛վ երկայնամիտ տէր իմ Յիսուս Քրիստոս, որ Ադամայ որդիքները փրկելու համար՝ աշխարհ եկար, և ամէն մէկ Ադամայ փորձութեանը ու մեղացը համար՝ թող տուիր որ սատանան քեզ Ադամայ պէս մարդ կարծելով, սաչափ անգամ փորձէց, բայց դու ամէն մէկ փորձութիւններուս վրայ եղար, Ադամայ ընկած փորձութիւնները երեսպաշտութեան, որկրամոլութեան, հպարտութեան, աղտաութեան, անձնասիրութեան, սա ամէն մէկ մեղքերը քաւեցիր, անոր տուած չար օրինակներուն դէմ ալէկ օրինակներ տուիր. անանկ որ սատանան ամօթ ըլլալով փախաւ, հալածուեցաւ, հրեշտակները անոր տեղը քովդ եկան քեզ պաշտելու։ Յուր ինծի ալ ան

շնորհքը՝ որ քեզ նոր Ադամայ հեռանալով, ամէն փորձութիւններուն վրայ ելլեմ. խելքս՝ միտքս՝ սիրտս մինակ Աստուծոյ ծառայելու տամ, որ սատանան բոլորովին ինծմէն հեռանայ, հրեշտակները քովս գան, ու բարի միտքերով օրերս անցընեմ. ամէն։

ՇԱԲԱԹ

Վեցերորդ օր մեծ պահոց.

Գթած տէր Յիսուս Քրիստոս, ինչ որ սատանան փորձութիւն բերաւ Ադամայ, ինծի ալ միշտ կը բերէ, կուզէ զիս յաւիտենական մահուամբ կորընցընել, Աստուծոյ պատուիրանքները մոռնալ կուտայ, Աստուած վիր դնել կուտայ. քան զկիրս իմ և քան զհաճոյս իմ, քան զբարեկամս իմ։ Շատ հեղ իմ կամքս՝ և բարեկամաց կամքը կատարելու համար՝ Աստուծոյ կամքը ոտքի տակ առեր եմ, ես ինծի հաւնելով յանձնապատան եղեր եմ Ադամայ պէս, դրսի զուարճութիւններու, դրսի բաներու խելքս տուեր եմ, ու

ԻԲՐ ԹԷ ԵՍ ԻՆԾԻ ՏԷՐ ԱՂԱՄ ԸՆԼԱԼ ԱՌ-
ՂԷՐ ԵՄ ԱԴԱՄԱՅ ԱՂԷՍ։ ԱՍ ՄԵՂՔԵՐԱ
ԱՅՍՕՐ ԽՈՍՏՈՎԱՆԵԼՈՎ ՔՈՒ ԱՌՋԻԴ ԿԸ
ՃԳԵՄ. ԴՈՒ ՈՐ ԱԴԱՄԱՅ ՄԵՂՔԵՐԸ ՔԱ-
ՌԵՑԻՐ, ԻՄ ՄԵՂՔԵՐԱ ԱԼ ՔԱՌԷ. ՄՈՒՐ
ԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ՇՆՈՐՀՔՆԵՐԴ՝ ՈՐ
ՎԻՐՃՈՒԹԵԱՆԴ ՄԷՋ ՑՈՒՑԻՐ. ԵՎ ԻՆՉ ՈՐ
ԱՂՕԹՔ ԿԸՆԷԻՐ ՀՕՐ ԱՍՏՈՒԾՈՅ ՔԱՌ-
ՍՈՒՆ ՕՐՈՒԱՆ ՊԱՔԻԴ ՄԷՋ, ՄԱՆԱՒԱՆԴ
ԱՍ ԱՌՋԻ ՀԱԲԹՈՒՆ ՄԷՋ, ԻՄ ԱՆԱՐԺԱՆ
ԱՂՕԹՔՆԵՐԱ ԱԼ ԽԱՌՆԷ, ՄԻԱՅՈՒՐ, ԵՎ ԸՆ-
ԾԱՅԷ ԱՍՏՈՒԾՈՅ, ՈՐ ԱՐԺԱՆԻ ԸՆԼԱՄ
ԱՍ ՇՆՈՐՀՔՆԵՐԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ. ԱՄԷՆ։

ԵՐԿՐՈՐԴ ՇԱԲԱԹ

ՄԵԾ ՊԱՀՈՑ

Կրթութիւն մահացուցչական զգայարանաց, յիշատակաւ փորձութեան Եւային և Քրիստոսի.

ՇԱՐԱԿԱՆ

Ընդ նախահօրն որոմութեան՝ որ վասն Եվային 'ի դրախտէն կենաց, ընկալցուք և մեք զտըրտմութիւն ապաշխարութեան. զի յարութեամբն Քրիստոսի արժանացուք մտից դրախտին եկեղեցւոյ։ Որ յաղթեցեր մերով բնութեամբ 'ի փորձութեան կամակոր օձին, որով եռուր իշխանութիւն որդւոց Ադամայ կոխել զգլուխ չար վիշապին, և ընդ երկնայնոցն երգել զփառս 'ի բարձունս։

ԿԻՐԱԿԻ

Եօրևերորդ օր մեծ պահոց.

Բարերար տէր իմ Յիսուս Քրիստոս, մինակ սատանան չէ որ Ադամայ ալէս զիս կը փորձէ, այլ նաև աշխարհ

ու մարմին։ Աշխարհիս բաները ինձի աղէկ կերևայ քան աստուածային բաները, սիրաս իրեն քաշել կուտայ, Աստուծմէ կը հեռացընէ. մարմինս ալ ապստամբ եղած՝ մոքիս չհնազանդիր, շիտակին չիհեռևիր, ծուռ Ճամբաներուն մէջ կը մոլորի։ Վասն այն փորձութեանց՝ որ ինձի համար քաշեցիր, տուր ինձի շնորհք և կարողութիւն, որ սատանային ալ և աշխարհիս փորձութիւններուն ալ յաղթեմ, աշխարհիս ամէն մեծութիւնը, փարթամութիւնը ինձի չեզի երևնայ, միայն հանդերձեալ աշխարհին բաները անուշ գայ, անոնք վաստակելու եռեռ խնամ։ Եւ վասն քառասնօրեայ պահոցդ՝ որով սուրբ մարմնդ մեղաւոր մարմնոյ պէս ճնշել ուզեցիր ինձի համար, իմ մարմինս է մեղաւոր, իմ մարմինս է ապստամբ. տուր ինձի շնորհք. ինչ որ մարմինս ալ փորձութիւն բերէ, մոռիկ չիդնեմ. պաքով ճգնութեամբ զսպեմ, Աստուծոյ պատուիրանացը հնազանդեցընելով, մեղքերէ խալըսելով, շնորհքով զարգարուելով, երկ-

նային գրախաղը մոռնելու արժանի ըլ-
լամ. ամէն։

ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

Ոչխարորդ օր մեծ պահոց.

Աստուած ողորմութեան, լուր իմ աղաչանաց, և տուր այսօր շնորհք մահացուցանելոյ իմ զգայարանքներս, մանաւանդ իմ լսողութիւնս. չըլլայ որ ականջս եաքը գէշ խօսքեր լսելով մոլիկ դնեմ, ինչպէս նախամայրն Եւայ լսելով սատանայի խօսքերուն չիփախաւ, խօսակից եղաւ, պատասխանեց, անով մեղք մտաւ. մեղքէն մահը տիրեց աշխարհիս վրայ՝ պտուղ և պատիժ իր մեղացը, որ շուտ մը տեսաւ աչքովը իր սիրելի անմեղ զաւակին վրայ Աբելի, լալով ողբալով անոր մեռելին վրայ։ Ա՛ս որդայթներու մէջ չըլլայ որ ես ալ իմ հոգիս ձգեմ՝ սատանայի փորձութեանը ականջ դնելով։ Այլ ինչպէս որ դու սատանայի խօսքերուն մոլիկ չիդնելով, սուրբ գրոց խօսքերը բերանդ առնելով, հալածեցիր սատա-

նային փորձութիւնները՝ և իրեն հրապոյրները, ես ալ սուրբ գրոց ու հոգևոր խրատուց և քարոզներու ականջս բանամ։ Անուշ գայ ինձի հոգևոր խօսքերը, լեզի երևնայ աշխարհային խօսքերը, և ատուած այնի բաներուն մոխկ գնելով՝ իմ ականջս սուրբ պահեմ, սիրաս ատուածայնի բաներուն տաքցընեմ քու շնորհքովդ. ամէն։

ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

Յանիրոյդ օր մեծ պահոց.

Տէր Ատուած, որ զիս ստեղծեցիր մարդ'ի պատկեր ատուածութեանդ քո, և հինգ զգայարանօք զարդարեցիր. աչք տուիր որ անով ամէն բան տեսնեմ, և քեզ փառք տամ, ես ան աչքով մեղանչեցի, ինչպէս որ նախամայրն Եւայ աչքով նայելով արդելեալ պտղոյն վրայ, փորձութեան ու մեղքի մէջ ձգեց զինքը ու իրեն ընկերն ալ զԱդամ։ Դու տէր իմ, Եւայի մեղքը քաւելու համար՝ անոր ըրածին դէմ չինայեցար աշխարհիս մեծութեանց ու

թագաւորութեանց վրայ, երբոր սատանան փորձութիւն բերելու համար քեզի ցոյց տուց, զքեզ մեծցընել խոստացաւ, այլ ամէնն ալ տեսածիդ պէս քամահրեցիր։ Տուր ինծի շնորհք՝ որ քու սուրբ օրինակիդ հետևելով զբաղեմ իմ աչքս, չենայիմ արարածոց վրայ մեղանչելու համար, այլ քեզ փառաւորելու համար, Աստուած իմ և արարիչ իմ, հոս սուրբ պահելով աչքս, երկինքը քու սուրբ տեսոյդ արժանի ըլլամ. ամէն։

ՁՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Յաւելորդ օր մեծ պահոց.

Ամենակարող Աստուած, որ իմ անդեմանս համար Ճաշակելիք հաստատեցիր, կարողութիւն համառութեան տուիր, որ անով պատուղները վայելեմ, քեզ փառաւորեմ. իսկ ես փորձութեան նախամօրն Եւայի հետևելով որկրամոլութեամբ Ճաշակելեացս քեզի դէմ մեղանչեցի։ Դու իմաստուն բժիշկ, ան որկրամոլութեան մեղքը

քաւելու համար՝ քու սուրբ ճաշակելիքդ զրկեցիր ամէն կերակուրներէն որ դուն ստեղծեր էիր, չնկերաբ, ժուժկալութիւն սորվեցուցիր։ Վասն քո սուրբ արդեանց պահոցդ՝ տուր այսօր ինձի քաւութիւն թողութիւն իմ ամէն որկրամոլութեան մեղքերուս, ինչ որ պղտիկուց ինչուան հիմա ըրեր եմ, և տուր շնորհք ժուժկալութեան, որ ասկէց ետքը քու սուրբ օրինակիդ հետևելով, զսպեմ իմ ճաշակելիքս, պատուիրանքէդ դուրս չելլեմ։ Եւ առ մեծ պաքը ջերմեռանդութեամբ բռնելով՝ ճգնութեամբ կատարելով՝ քեզի նմանելով՝ ինչ մոքով որ դրեր է սուրբ եկեղեցին, ընդունիմ այն ամէն շնորհքները իբրև բարի քրիստոնեայ, հարազատ որդի եկեղեցւոյ։

ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

Մեռաւանելորդ օր մեծ պահոց.

Տէր իմ Յիսուս, վասն քո սուրբ առանձնանալոյդ անապատի մէջ ամէն աշխարհային բաներէ՝ տուր ինձի ալ

առանձնանալ աշխարհային զբաղմունքներէ՝ աշխարհային գործքերէ։ Ուրիշ զգայութեանց հետ սուրբ պահեմ և զզգայութիւն հոտառութեանս, չըլլայ որ նախամօրն Եւայի հետևիմ, որ պտղոյն տեսիլքէն, հոտէն, համառութենէն խաբուելով՝ Աստուծոյ գրած պատուիրանքը մոռցաւ, անմահութեան կեանքը կորսնցուց, մահկանացու կեանքը վաստակեցաւ. իրեն և իր զաւկընեբուն վրայ տեսնելով մահը, լաց ու ողբ բերաւ. չըլլայ՝ որ ես ալ ատանկ զգայարանքներովս խաբուիմ, հոգիս մեռցընեմ։ Այլ զատուելով ու հեռանալով աշխարհային գործքերէ՝ չըմեղանչեմ ոչ տեսութեամբ, ոչ հոտառութեամբ և ոչ համառութեամբ. միայն զԱստուած պաշտելով իմ ամէն գործքերուս մէջ որ կընեմ զգայարանքներովս, զԱստուած փառաւորեմ, եթէ ալ արժանի ըլլամ արքայութեան մէջ դէմ յանդիման հրեշտակաց հետ զԱստուած փառաբանելու 'ի յաւիտեան. ամէն։

ՈՒՐԲԱԹ

Երկուտասաներորդ օր մեծ պահոց.

Կաղաչեմ ամենէն աւելի, տէր իմ, լեզուս պահես մեղանչելէն, չըլլայ՝ որ ինչպէս նախամայրն Եւայ լեզուով յորդորելով զԱդամ, արգելեալ պտուղը կերցուց, մեղքի մէջ ձգեց, անով մահ տարածեց աշխարհիս վրայ, ես ալ ուրիշը մեղքի մէջ չենձգեմ, պատիժ չիքաշեմ, այլ բարեգործութիւն ընելու պատճառ ըլլամ։ Չըլլայ՝ որ պարապ խօսքերու լեզուս բանեցնեմ, բարկանալով գէշ խօսքեր կամ անէծք բերանէս հանեմ, դիմացինս մեղք խօթեմ, բամբասելով ուրիշին անունը կոտրեմ։ Այլ միշտ բարի խօսքերու բանեցընեմ լեզուս, քեզ օրհնելու, քեզ փառաւորելու։

ՇԱԲԱԹ

Երեքտասաներորդ օր մեծ պահոց.

Հոգիդ սուրբ, աղքիւր շնորհաց, վաստն արդեանց պահոց Յիսուսի տեառն իմոյ, տուր ինձի այսօր շնորհք մեռուցանելոյ զսպելոյ չէ թէ մինակ իմ հինգ գրսի զգայարանքներս, այլ նաև իմ ներսի կիրքերս, իմ հպարտութիւնս, անձնասիրութիւնս, փափկասիրութիւնս, բարկութիւնս, ծուլութիւնս, և ուրիշ ամէն իմ չար մոլութիւններս բռնեմ, շտկեմ։ Մեծութեան փարթամութեան չիցանկամ, ինչպէս որ Ադամ և Եւայ ցանկանալով ատուածանալ, գրախտէն ալ զրկուեցան, մահ բերին երկնից ալ ու երկնից զաւակներուն ալ։ Այլ Քրիստոսի տեառն իմոյ խոնարհութեան հետևելով, միայն Աստուծոյ կամքը կատարելու ցանկամ, միտքս ալ սուրբ պահեմ, մեղաց առիթներէն զգուշանամ։ Կաղաչեմ նաև քեզ ով մարդասէր Աստուած իմ Յի-

սուս, վասն անհուն սիրոյդ՝ որ իս վրկելու համար մարդ եղար, անչափ աշխատեցար, աս երկրորդ շաբթուս մէջ ինչ երկրպագութիւններ ըրիր աղօթելովդ, անոնք իմ աղօթքներուս հետ խառնես, որ իմ աղօթքս ալ զօրութիւն առնելով, աս շաբթուս մէջ ինչ շնորհքներ որ խնդրեցի, արժանի ըլլամ առնելու. և շնորհակ խղճմտանքի ճամբայ երթալով՝ հոգիս ալ մարմինս ալ Աստուծոյ նուիրեմ. ամէն:

ԵՐՐՈՐԴ ՇԱԲԱԹ

ՄԵԾ ՊԱՀՈՑ

Կրթութիւն զղջման և ապաշխարութեան 'ի դէմս Անառակ որդւոյն.

ՇԱՐԱԿԱՆ

Ընդ անառակին որդւոյ գոչեմք առ Հայրդ դթած. մեղաք յերկինս և առաջի քո քաւիչ յանցանաց. ել ընդ առաջ սիրով, գերկեա համբուրիւ, մաքրեա զմեզ 'ի մեղաց մերոց:

ԿԻՐԱԿԻ

Զորեքտասաներորդ օր մեծ պահոց.

Գթած Հայր երկնաւոր, այսօր մը-տածելով կիմանամ՝ որ պատճառ իմ մեղքէ չիդառնալուս առ է՝ որ ես իս զղջման մէջ չեմ պահեր, այլ մարմնաւոր ուրախութեան կը վազեմ, և երբ թէ առջի մեղքերուս թողութիւն ա-

ռած անանկ սիրտս հանգիստ նստիլ կուզեմ։ Ան կը ցուցընէ որ ոչ ասուա-ծային երկիւղ ունիմ, և ոչ ասուա-ծային սէր. անկից կուգայ ինծի ան-հոգութիւն առջի մեղքերս լալու, ան-հոգութենէ կուգայ՝ որ փորձութիւն-ներուն չեմ կրնար վրայ ելլել, նորէ-նոր մեղքի մէջ կիյնամ։

Բայց այսօրուան անառակ որդւոյն օրինակովը իմ սիրտս շարժեցաւ. յի-շեցի իմ առջի ըրած մեղքերս, թէ քանի՛ ապերախտութիւն ըրի երկնա-ւոր Հօրդ դէմ ան մեղքերովս. քանի՛ հարատութիւն շնորհաց ունէի, ինչ-պէս անունք ցրուեցի, մկրտութեան և ուրիշ խորհրդոց շնորհքները, որ դու Հայր երկնաւոր ինծի պարգևեր էիր՝ կորսընցուցի, ապականեցի։ Բայց ինչ-պէս որ անառակ որդւոյն միտքը բա-ցուեցաւ, ինք երեն եկաւ, զղջումն ը-նել, մեղայ ըսել առաջադրեց, ան լոյսը շնորհաց կաղաչեմ իմ մտքիս մէջը ծա-դէ այսօր, ես ալ անոր պէս տեսնեմ մեղաց գարշելութիւնը։ Խմանամ իմ խեղճութիւնս անառակ որդւոյն պէս՝

որ երկնաւոր Հօրս տունը ձգեցի, խոզերուն հետ նստիլ և ուտել ուզեցի. քուկին հոգևոր բարիքներդ ինծի ծանր եկան։ Հոգևոր ճամբան երթալ, հոգևոր խօսքեր լսել, քու սուրբ պատուիրանքներդ պահել՝ անհամ երևցաւ ինծի, անոր տեղը ընդունայն աշխարհիս զուարճութիւնը սիրեցի, որ պիտոր անցնին երթան, զիս չեն կրնար կշտացնել, մեղաւոր մարդկանց հետ խոզերու նման նստիլ ուզեցի։ Ա՛ս դարշութիւնը ապէկութեան տեղ գրեր եմ, անանկ կերթամ։ Մեռնելու օրս վրայ չհասած՝ այսօր լուսաւորէ՛ իս քու շնորհքովդ որ տրթընեամ, ասկից ետքը դանիմ, մեղքերէս ետ կենամ։

ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

Հնգեւտասանեւրորդ օր մեծ պահոց.

Թէպէտ շատ է իմ մեղքիս ծանրութիւնը, թէպէտ անարժան եմ քու շնորհացդ՝ տէր իմ, սակայն անհուն է, չհասանիր քու ողորմութիւնդ։ Խընդ-

ջեմ կաղաչեմ՝ պարգևէ ինձի այսօր
ան լոյսը շնորհաց՝ որ անառակ որդւոյն
պէս՝ չէ թէ միայն մեղքերուս գարշու-
թիւնը իմանամ, այլ նաև հոգևոր ճամ-
բուն աղէկութիւնը իմանալով միտքս
բացուի, ես ալ ըսեմ. Քանի վարձ-
կանք են՝ ի տան հօր իմոյ հացալիցք, և
ես սաստ սովամահ կորնչիմ։ Պայծառ
տեսնեմ որչափ աղէկ է անմեղութեան
ճամբան, որչափ աղէկ է քու սուրբ
պատուիրանքներդ պահելով քեզի
ծառայել՝ քան թէ սատանայի. որ-
չափ աղէկ է աշխարհային ցանկութիւն-
ներէ հեռու կենալ, խղճմտանքս մա-
քուր պահել, քու շնորհքովդ հարըս-
տանալ, ինչպէս որ սուրբ արդար մար-
դիկները կընեն։ Ա՛յ իմանալով այսօր,
ամէնց էաքը քուկին պատուիրանք-
ներդ ինձի թեթև երևնայ, մեղաց
ճամբան դէշ երևնայ, հոգևոր ճամբան
աղէկ անուշ երևնայ, հոգևոր խօսք լսե-
լը՝ կարդալը՝ ինձի զուարճալի երևնայ։
Կարենամ մտածական ընել, ինչպէս որ
ըրաւ անառակ որդին, և պայծառ մը-
տօք ճանչնամ իմ խեղճ մեղաւոր կա-

ցութիւնս. և քու ծառաներուդ հոգեւոր աղէկ կացութիւնը՝ հարստութիւնը՝ հոգեւոր բարիքները որ հիմա շնորհքով կը վայելեն ու եռքը արքայութեան մէջ պիտոր վայելեն։

ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

Վերջաբանի օր մեծ պահոց.

Որ անապատը էս ողորմութեամէն Հայը բարեգութ, տուր աղաչեմ այս օր ինծի ան շնորհքը, որ չէ թէ միանակ ճանչնամ մեղքերուս գարշութիւնը՝ և տուրբ պատուիրանքներուդ հոգեւոր աղէկութիւնը, հապա նաև գործքով ընելու առաջադրեմ. անառակ որդւոյն պէս էս ալ ըսեմ. Յարուցեալ գնացից առ Հայր իմ, և ասացից՝ Մեղայ։ Առաջադրեմ զղջում ընելու, մեղայ գոչելու. առաջադրեմ քահանային առքը երթալու՝ որ է քու փոխանորդդ. մեղքերս մէկիկ մէկիկ խոստովանիմ անոր առջին, և ցաւելով խոստովանիմ, առաջադրելով մեռնիլ քան թէ մեղանչել անհուն բարութեանդ դէմ։

ՁՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Յօրինեալ ասաւելորդ օր մեծ պահոց։

Յաւադնեալ սրտիւ՝ խոնարհեալ մտքով կուգամ այսօր, Հայր ամենողորմ, ոտքդ կը յնիմ, մեղայ կը գոչեմ առնառակ որդւոյն պէս։ Մեղայ յերկինս և առաջի քո Հայր սուրբ։ Վասն զի քու հայրութիւնդ ուրացայ, քու պատուիրանքներդ ոտքիս տակ առի։ Մեղայ յերկինս և առաջի քո Որդիդ միածին, վասն զի քու ըրած մարգասիրութիւնդ չիճանչցայ, նորէն քեզ խաչ հանել ուզեցի իմ մեղքերովս։ Մեղայ յերկինս և առաջի քո Հոգիդ սուրբ, վասն զի քու սուրբ խորհուրդներդ պղծեցի։ քու բարի շնչմունքներդ քամահրեցի, բանի տեղ չիսեպեցի։ Իմ մեղքերս շատ են քան ղաւազ, ծանր են քան ղքար։ Վասն զի քեզ միայնոյ մեղայ, և դիտութեամբ մեղայ, և չարաչար մեղայ։ Պատրանք աշխարհիս խաբեցին զիս, իմ մարմինս զիս մոլորցուց, սատանան զիս որոգայթներու

մէջ ձգեց. այսօր կը խոստովանիմ զյան-
ցանս իմ, թողութիւն կը խնդրեմ իմ
ըրած անօրէնութեանս վրայ, նորէն
կը դառնամ իմ հօրս արարչիդ քովը։

ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

Որ է առաւաւոտուդ օր մեծ պահոց.

Հայր գթութեանց և Աստուած ողորմութեան, երբոր կը լսես աս իմ մեղայ գոչելս, իմ զղջման ձայնս, դուռ ալ վերէն երկնքէն մի դարձըներ քու երեսդ, մի յիշեր իմ անօրէնութիւնս. այլ յիշելով որ քու զաւակդ եմ, սուրբ միրտութեամբ՝ խոնարհէ, լսէ իմ ձայնս, ելներ ընդ առաջ ինծի հետ հաշտուելու՝ ըսելով. Այս որդի իմ մեռեալ էր և եկեաց, կորուսեալ էր և գտաւ։ Ինչպէս որ ըսաւ անառակ որդւոյն հայրը։ Մի դարձեր իմ աղտեղի կերպարանքէս, որ մեղքերով հոգիս աղտոտեցի, խոշերու հաւասար եղայ. հապա վոխել տուր, նորէն հագցընել տուր ինծի առջի պատմուճանը սուրբ աւազանին միրտութեան զոր կորսընե-

ցուցի։ Այն կոչնիկը՝ որ է արիութեան շնորհքը՝ ինձի պարգևէ, որ ասկէց ետքը քու սուրբ պատուիրանքներուդ ճամբան երթամ, հին օձը սատանան իմ առաջս չելնոցէ, իս չիմոլորցընէ. այն մատանին՝ որ է յարատևութեան շնորհք Հոգւոյն սրբոյ, կապանք բարեգործութեան մէջ մնալու՝ ինձի պարգևէ, որ անմեղութեան և արդարութեան շնորհքով վայելիմ։ Իմ սիրարս ալ որ յուսահատութեան մէջ ընկած է, յոյս առնէ, քաջալերի, ասկից ետքը միայն քու կամքդ կատարէ։

ՈՒՐԲԱԹ

Յիսնեակերորդ օր մեծ պահոց.

Ո՛վ Հայր յաւիտենական, դու յաւիտենից պատրաստեցեր ինձի համար եղն պարարակ. որ է Յիսուս միածին զենեալ 'ի վերայ խաչին, և 'ի խորհուրդ պատարագին։ Երբոր աս իմ խնդրած շնորհքներով զիս կը զարդարես, շնորհէ ինձի արժանաւորապէս Հաշակելով վայելել ան եղն պա-

բարակ, որ ինծի համար կը մոլթուի սուրբ սեղանոյն վրայ։ Անանկ արժանաւորապէս առնելէս ետև՝ խնդրեմ ուրիշ մէկ շնորհք մըն ալ տաս ինծի, որ է շնորհք արտասուաց. յիշելով ինչ մեծ բարերարութիւն ըրիր ինծի պէս մեղաւորին, քարացեալ սիրտս կակղնայ, փղձկի, միշտ յիշելով ըրած մեղքերս՝ լամ։ Ինչպէս որ Դաւիթ մարգարէն ունէր աս շնորհքը որ կըսէր. Լուացի զամենայն գիշեր զմահիճս իմ, և զանկողինս իմ արտասուօք թացի։ Ինչպէս որ Պետրոս առաքելոյն վրայ մէյմը նայելով Յիսուս միածին՝ տուաւ աս շնորհքը, որ միշտ յիշելով իրեն մեղքը կուլար, կը պաղաղեցնէր իր խոցուած սիրտը Յիսուսի սիրոյն վրայ։ Իմ սիրտս ալ անանկ խոցէ տէր իմ, որ լամ, ինչու դթած Հօրդ սիրտը աւրեցի, շնորհաց փարթամութիւնը կորսընցուցի, սուրբ պատուիրանքներդ կոխեցի։ Անանկ լալով սիրտս պաղեցնեմ, աստուածային սէրը աւելցընեմ. ան լացով իմ ցաւիս արմատը ընդնանայ. մէյմին ալ չկրկնայ ինծի

մեղաց հիւանդութիւնը, նորէն չկայ-
նամ մեղքերուս մէջ, այլ միայն քեզի
ծառայեմ մնացեալ կեանցս մէջ։

ՇԱԲԱԹ

Քառասնորդ օր մեծ պահոց.

Աղաչեմ Հայր ամենակարող, երբոր
աս շնորհքները կընես, քուկին ար-
գարութիւնդ դէմ կելլէ՝ անառակ որ-
դւոյն մեծ եղբօրը պէս, մէկիկ մէկիկ
մեղքերս գատաստանին մէջ բերելով
իմ անարժանութիւնս կը ցուցնէ,
քու որդիութեանդ ժառանգութենէ
կուզէ զիս զրկել. ան առենը քուկին
բացարձակ կարողութեամբդ՝ հայրա-
կան սիրովդ մէկդի թող արդարու-
թիւնդ. անոր տեղը գթութիւնդ
ձեռքդ առ, ինչպէս ըրաւ անառակ որ-
դւոյն հայրը, մի յիշեր իմ մեղքերս։
Մի մոռնար՝ի գատաստան ընդ ծա-
ռայի քում, զի ոչ արդարանայ առաջի
քո ամենայն կենդանի։ Այլ յիշէ տէր
իմ և Աստուած, քու առջի ըրած ողոր-
մութիւններդ, ողորմելով շնորհէ ին-

ծի վերի խնդրած շնորհքներէս զատ՝ նաև շնորհք ճգնութեան, որ եռքը չէ թէ մինակ ըրած մեղքերուս վրայ լամ, հապա իմ մարմինս ճնշեմ, ըրած մեղքերուս ապաշխարանքը պաղիժը հոս քաշեմ, անդին չկրքաշեմ, ինչպէս որ ամէն քու սիրելի ծառաներուդ հոս քաշել տուիր՝ որ անդին արքայութիւնը վայելեն։ Տո՛ւր ինծի ալ աս շնորհքս՝ որ դժար չերևնայ ճգնութիւն քաշելը, ապաշխարելը. թէ որ դուն ալ խաչ խրկես իմ վրայ, համբերութեամբ սիրով քաշեմ, անանկով նոր էն որդիութեանդ ժառանգութեան արժանի ըլլամ։

Կաղաչեմ նաև Հայր սուրբ, աս շաբթուս մէջ ինչ ճգնութիւն, արթնութիւն, ծնրադրութիւն, ծոմապահութիւն, և աղօթքներ որ ըրաւ քու միածին սիրելի Որդիդ, ինծի համար ըրաւ, ընկալ անոնք ալ իմ դիւացէն նուէր և պատարագ ընդունելի, և իմ անարժան աղօթքներուս հետ մէկ տեղ խառնէ ինչ որ աս շաբթուանս մէջ եւ ալ ըրի, անանկով հաճոյ ըլլայ քեզի

իմ աղօթքներս ալ։ Մեղքերուս թողութիւն տաս, և մեղաց պատիժն ալ հոս քաշել տաս, որ անդին արքայութեան մէջ սուրբ տեսութեանդ արժանի ըլլամ. ամէն։

ԶՈՐՐՈՐԴ ՇԱԲԱԹ

ՄԵԾ ՊԱՀՈՑ

Կիրակի խոստովանութեան յիշատակաւ Յիսուսի

ՇԱՐԱԿԱՆ

Որ տիրակալս առ 'ի քէն կարգեալ տընտես ընութեան մերոյ. իմաստութեամբ ըզպարտիս եթող քոյոց պարտապանաց. թող և մեր զյանցանս ողորմութեամբդ քո Քրիստոս։

ԿԻՐԱԿԻ

Քառասնեայի օր մեծ պահոց.

Հովիւ քաջ և բարի տէր իմ Յիսուս, դու որ իբրև մէկ հոգ տանող վարպետ մը առակներով զիս ուզեցիր խրատել, անանկով այսօրուան աւետարանիդ խօսքովը ինծի յիշեցուցիր՝ որ համար պիտոր ուզես իմ ամէն ըրածդ

ներուս վրայ, ըսելով. Տուր զհամար անտեսութեան քո։ Ահա, քանի որ աս համար տալը կը յիշեմ, բոլոր մարմինս դող կելլէ. ես զիս քննելով կը գտնեմ՝ որ ծանր մեղքեր շատ գործեր եմ, իսկ պզտիկ մեղքեր անհատնումը՝ ներ եմ, բարեգործութեանս մէջն ալ չարութիւն խառներ եմ. հապա քու ամենատես աչքդ ինչեր պիտոր գտնէ։

Բայց ինչպէս որ ան տնտեսը իմաստուն փրթաւ ասով՝ որ իր մարդիկներուն քովէրնին երթալով հաշուէգիրքը բանալ տալով ջնջեց, ուզածը գրել տուաւ, առաջուցմէ իր բանը շտկեց, կաղաչեմ տուր ինծի այսօր ատանկ մէկ լոյս մը՝ որ իմ ամէն ըրած մեղքերս պզտիկուցմէ միտքս բերելով, քահանային քովը երթալով, խղճմտանքիս գիրքը բանամ. մէկիկ մէկիկ զղջմամբ խոստովանելով, տնտեսին պէս ջնջեմ մեղքերս, մանաւանդ հպարտութեան մեղքերս, թէ ծածուկ և թէ յայտնի, թէ մարմնաւոր բանի մէջ և թէ հոգևոր բանի մէջ։

Վասն զի ծածուկ սրտիս մէջը շատ

հեղ հպարտութիւն ունեցեր եմ՝ ես ինձի հաւնելով, կամ անանկ բան ընելով՝ որ ուրիշին գովուիմ. երբոր ընկերս գովուեր է՝ չեմ ուզած չեմ հաւնած, ներսէս վար զարկեր եմ. յայտնի հպարտութիւն ալ ըրեր եմ բերնովս պարծենալով, ուրիշները քամահրելով, ծաղր ընելով։ Վայ ինծի, ես որ ամէն քամահրանքի արժանի եմ, ես որ ինծմէն բան մը չունիմ, բայց եթէ մեղք ու պակասութիւն, անուն վասարկիլ՝ մեծ մարդ երևնալ ուզեր եմ, ցանկացեր եմ որ ամէն տեղ զուրցուիմ ճաչցուիմ. ասանկ հպարտութեամբս իբր թէ գոռ եմ եղեր ան փառքին՝ ան մեծութեան որ քեզ միայնոյ Աստուծոյ կը պատշաճի. վասն զի ամէն աղէկութիւն, ամէն տուրք բարիք քեզմէ են, ով Հայր լուսոյ։ Ա՛ստ՝ որ հպարտութիւնը սրտիս մէջը տընկած ունենալով՝ ուրիշ ամէն մեղքի մէջ ալ ընկեր եմ, ինչ որ ինքնահաւանութիւնը կը բերէ. կամքիս դէմ եղած բաներուն վրայ սրդողիլ, ինծմէ մեծերուս լիրբ պատասխան տալ, կամա-

պաշտուելթիւն, կամակորութիւն ընել, իմ կամքս վար չձգելով. անկէց շատ մեղաց պատճառ տուեր եմ ուրիշներու. ես զիս խրատելու և շտկելու տեղ՝ նայեր եմ որ զուրիշը խրատեմ։

Եւ ամենէն ցաւալին աս է՝ որ իմ չար հպարտութիւնս հոգևոր բաներու մէջ ալ խոթեր եմ, աղօթք պատարագ տեսնելս, խոստովանութիւնս, ողորմութիւն տալս, կեղծաւորութեամբ ըրեր եմ, որ ուրիշները ինծի հոգևոր է ըսեն. կամ թէ չընեմ՝ չըլլայ թէ զիս վար դարձնեն, ամենը ատանկ մըտքերով ընելով՝ հոգևոր գործքերս ալ աւրեր եմ. քու առջիդ մէր իմ, ես անարդ և ոչինչ որդս։

Երբոր ատանք մէկիկ մէկիկ դատատանին օրը յիշես ըսելով. Տուր զհամար տնտեսութեանքդ հպարտութեան գործքերուդ վրայ՝ որ ըրեր խոնարհութեան դէմ, ես ան ատենը ինչ պատասխան պիտոր տամ։ Բայց նեղող Աստուած գթութեան, տեսնելով այսօր՝ որ ես ինծմէն աս մեղքերս կը խոստովանիմ, քահանային ըսելով

քեզի կըսեմ, կը յիշեմ, կը զղջամ, դու մի՛ յիշեր ան սոսկալի օրը, մի տար երեսիս, այլ բոլորովին ջնջէ, թողուլթիւր տուր մեղքերուս։

ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

Քառասնակիրակի օր մեծ պահոց.

Այս ճշմարիտ տէր իմ Յիսուս, մէկ շիտակութեան խուսար մը մոքիս վրայ ձգեր է տատանան՝ որ կը պղտորուիմ, չեմ կրնար միտքս բերել իմ մեղքերս, և ոչ միտքս պահել. անով շատ մեղք կը մոռնամ, կամ թէ չեմ կրնար պարագաներով զուրցել, կամ կը տարակուսիմ որ աղէկ չեմ հասկըցըներ քահանային, անկէց խոստովանանքը ծանր բան կերևնայ ինծի, հոգևորէ պաղիլ կուգայ։ Բայց դու տէր, ինչ շնորհք տուիր Դաւիթ մարգարէին, որ քու առջիդ միշտ զղջմամբ կը յիշէր, կը խոստովանէր իր մեղքերը՝ չէր ձանձրանար, և ինչ շնորհօք որ կըսես ուրիշ մարգարէին բերնովը՝ թէ դու առաջ ըսէ՛ քուկին ըրած անօրէ-

նութիւնդ, որ ես ալ ջնջեմ, ան չը-
նորհքը խրկէ հիմա ինծի ալ՝ որ աս
մութը և չիրութութիւնը փարատի իմ
մոքէս։

Անով ուրչափ նախանձու մեղքեր ը-
րեր եմ պզտիկուց ինչուան հիմա,
այսօր խոնարհութեամբ ու զղջմամբ
խոստովանիմ քահանային՝ քու փո-
խանորդիդ։ Ո՛րչափ որ ընկերոջս բար-
ւոյն վրայ նախանձեր եմ, աչք տրն-
կեր եմ իրեն հարստութեանը՝ յաջո-
ղութեանը, անոր մեծնալը անուանի
ըլլալը չեմ կրցեր քաշել. թէ որ ա-
նոր յաջողութիւն մը եղեր է՝ ցաւեր
եմ, թէ որ ձախորդութիւն կամ փոր-
ձանք մը եկեր է՝ ախորժեր եմ, ո-
խասրտեր եմ։ Երբոր անիկայ մեծցու-
ցեր գովեր են՝ տրտմեր եմ. երբոր վար
զարկեր են, չեն հաւնած՝ սրտէս ու-
րախացեր եմ, մանաւանդ թէ ձեռքի
տակէն անանկ ըրեր եմ՝ որ վար զար-
նեն, կամ չիհաւնին ընկերոջս։

Անանկ վարուեր եմ պզտիկուց ին-
չուան հիմա. վասն զի աս ախտը նա-
խանձու՝ ինծի բնականի պէս եղեր է,

և նախանձէն ինչ մեղքեր ալ կ՚ելլեն, անոնց մէջը ալ ընկեր եմ չարաչար։ Քէն ընել, ոխակալութիւն պահել, սրտիս մէջէն վրէժխնդրութիւն ուզել, ցանկանալով ձեռքէս եկած ինչսը տամ ընկերոջս, սրտիս մէջէն անէծք տալ։ Սակայն եղեր է որ դատեր եմ, բամբասեր եմ, մեղադրեր եմ, կամ երբոր օտար մը անոր անունը կոտրեր է՝ ոխասրտեր եմ, բանսարկութիւն ըրեր եմ։

Աչքի ու ատոր նման հազար նախանձու մեղքերու մէջ մալակոներ եմ, եղբայրասիրութեան պատուիրանքին դէմ գացեր եմ։ Բայց հիմա որ կը ցաւիմ աս ըրածներուս վրայ, ու ձեռքս եկածին չափ զղջալով կը խոստովանիմ քեզի դատաւոր բարեգութ, ներէ՛, քաւէ՛, հիմակուցմէ ջնջէ՛ իմ հաշուեդրքէս որչափ որ նախանձու մեղք գրուած է մէջը։

ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

Քառասներորդ օր մեծ պահոց.

Առաջնորդ կուրացելոց Քրիստոս Աստուած, մէկ ուշացընել մը կը բերէ սատանան խոստովանութեանս վրայ։ Ի՞նչ շահ կելլէ աս խոստովանանքէն կրսէ միտքս, որովհետև նորէնոր պիտոր իյնամ ան մեղքերուն մէջ, նորէնոր մեղանչեմ, ամ աւելի գէշ պիտոր ընեմ՝ արբապղծութեան մէջ իյնալով։ Բաց աչքս կաղաչեմ, փարատէ սատանայի կուրութիւնը՝ որ միտքս տեսնէ. արդեօք գիտե՞մ, ողջ կրնա՞մ մնալ ինչուան վաղուան օրը. լուսաւորուի իմանայ միտքս՝ թէ որ հիմակուցմէ սկսիմ ապաշխարել, տարիներ չեն օրտեր կատարեալ ապաշխարելու, պատիժներս քաւելու, չար սովորութիւններս բարի սովորութիւն դարձընելու՝ զսպելով իմ կիրքերս։

Սանկ լուսաւորուելով սօթթուիմ, այսօրուընէ խոստովանիմ ինչ որ բարկութեան մեղքեր ըրեր եմ, վասն զի

պզտիկուց 'ի վեր կամքիս դէմ բան մը եղածին պէս՝ սրդողեր եմ, ուրիշնե-րուն հանդարտութիւնը աւրեր եմ, տունը տակնուվրայ եմ ըրեր. մեղք խօթեր եմ, կամ սրտանց զայրանալով սիրտս դնելով՝ երեսս ծռելով անով մեծի պզտիկի սիրտը կոտրեր եմ, բեր-նովս կանչուրտուելով զուրցելով մեղ-քի պատճառ եղեր եմ։

Վայ ինծի, աս իմ բարկութեանս ե-րես տալով՝ ուրիշ ալ աւելի մեծ մեղ-քերու մէջ ընկեր եմ, ինչ որ բարկու-թիւնը կը բերէ. իմ սրտիս հանդար-տութիւնը աւրելով՝ աղօթքէ պաղեր եմ, զԱստուած մոռցեր եմ, դիմա-ցինս նախատեր եմ, հայհոյեր եմ. սիրտս ծակելու ծանր խօսքեր զուրցե-լով, ինչուան պիղծ խօսքեր՝ մարդու չիվայլած, թող թէ քրիստոնէի վայ-լած, առատալ խօսքեր բերինէս հանե-լով անանկ յարձակեր եմ, անէծք ալ տուեր եմ, սրտէս ուզեր եմ որ անոր չարիք մը ըլլայ։ Վայ ինձ, նաև Աս-տուծոյ անունը աս պիղծ խօսքերու մէջ բերանս առեր եմ բարկութեամբ.

երդում ալ ըրեր եմ Աստուծոյ ա-
նուան վրայ. սպառնալով որ իրեն չա-
րիք պիտոր ընեմ, սրտիս մէջէն ցանկա-
ցեր եմ անոր փորձանք մը գալու,
բերնովս ալ յայտնի ուզեր եմ վրէժ-
խնդրութիւն ընելու, անով լսողնե-
րուն գայթակղութիւն տուեր եմ, բար-
կութեամբ տաքնալով ձեռք վերցու-
ցեր եմ, զարնել ուզեր եմ։

Ասանկ ընկերոջս սիրտը աւրելով
բաժնուեր եմ, չեմ նայած որ սիրտը
չինեմ, կամ թողութիւն առնեմ։ Հե-
ռը աւրուած կեցեր եմ, բարև չեմ
տուած, չեմ խօսած, ես զիս խաբելով
որ սրտէս բան չունիմ։ Դրսուանց ե-
րեսապաշտութիւն ըրեր եմ։ կեղծաւո-
րութեամբ բարեկամ ձեւանալով, ներ-
սէս տեղութիւն, թշնամութիւն, և
ոխ պահեր եմ։ բարկութենէս եղեր է
ալ՝ որ բամբասելով անունը կոտրեր
եմ։

Ասոնք, ու ատոր նման հազար կերպ
բարկութեան գործքեր ըրեր եմ, հի-
մա եկեր մեղայ կըսեմ, անօրինե-
ցոյ և յանցեալ։ Աստուած քաւեսա

զիս զմեղաւորս, թող իմ բարկութեան մեղքերս, մի յիշեր. այլ ասկէց ետքը ջնջէ, որովհետև ես կը յիշեմ, ես կը խոստովանիմ աստուածութեանդ առջին։

ՁՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Քառասնչորրորդ օր մեծ պահոց.

Դարձուցիչ մոլորեալոց տէր իմ Յիսուս, սիրոս քար կարել տուեր է սատանան. ամենևին զղջումի չիգար. քանի կը ջանամ որ ցաւիմ, անչափ ցաւս կը պակսի. կուզեմ որ լմնցընեմ եալեմ զղջումէ, պարապ տեղն անցընել մը կուգայ ինծի։ Կաղաչեմ տէր իմ, գոնա որ Զաքէոսին սիրտը մէկ խօսքով զղջումի բերիր. Պետրոս առաքեալին վրայ մէկ նայելով մը լացուցիր, ուրեմն ինծի այսօր ապառաժ սրտիս մէկ կակղութիւն մը՝ որ մեղքերուս աղաղակութիւնը տեսնելով, զղջամ, ցաւիմ իմ մեղքերուս վրայ, մանաւանդ իմ ծուլութեանս վրայ, որ բոլոր տեղս պարապ անցուցի. մեռնելս յանկարծ

վրայ որ հասնի՝ ինչ պիտոր ընեմ չի մտածեցի։

Եթէ դու ինծմէ համար ուզես, ասչափ տարի քեզի կեանք տուի ըսելով՝ ինչ ըրիր ամէն ամիս, ամէն օր, ես ինչ պատասխան պիտոր տամ. Էս՝ որ բոլորովին ծուլացեր եմ, ձգեր եմ հոգևորը, իբր թէ տէր մը, արարիչ մը չունիմ ծառայելու, ինքնագլուխ ինքիր կամքիս գացեր եմ. մէկ օր մը չէ եղած՝ որ քու ծառայութեանդ մէջ անցընեմ. թէ որ քու ծառայութիւնդ ալ ըրեր եմ, ուրիշ դիտաւորութիւններ խառներ եմ, ես ինծի ծառայեր եմ, ես զիս ուզեր եմ։

Ա՛ս ծուլութիւնը պատճառ եղեր է որ աղօթքներս ալ շատ հեղ ձգեր եմ, կամ թէ ակամայ ըրեր եմ, արտորալով, բերնէ թափուք, լիրբառալով, ասդիս անդին նայելով, խելքս ուրիշ տեղեր տարտղնելով. ատանկ եղեր է պատարագ տեսնելս ալ։ Կիրակի օրերը՝ որ ա՛լ աւելի պէտք էր քեզի ծառայելու, ես մանաւանդ ան օրը ա՛լ աւելի ծուլութիւն ըրեր եմ, պարապ

անցուցեր եմ, ակամայ պատարագ մը տեսեր եմ. քարոզ կամ հոգևոր խրատ լսելու, հոգևոր գիրք մը կարդալու՝ փափեր եմ, մանաւանդ թէ կիրակի օրերը ալ աւելի մեղք ըրեր եմ։ Գործք ողորմութեան կրնայի ընել, հիւանդներու՝ վշտացեալներու՝ բանտին մէջ եղողներու կրնայի տես երթալ, մխիթարել, չեմ ըրած, անհոգ եմ եղեր. կարօտ եղողներու ձեռքէս եկած ծառայութիւնը չեմ ըրած. մանաւանդ աղքատի ձեռքէս եկած ողորմութիւնը չեմ տուած, քշտելով քամահրելով մը էս դարձուցեր եմ։

Ինչ գործքի մէջ դրեր էս, ան գործքերս ալ չեմ ըրած, առեն պարապ անցուցեր եմ ծուլութեամբ. անիկէց խօսք եղեր է մեծերուս հետ, և ինչ որ կը հետևի պարապ կենալէն՝ ան մեղքերուն մէջն ալ ընկեր եմ, դատարկաբանութիւն ընել, ուրիշը ծաղր ընել, բամբասել, անցաւոր ունայն զբաղարձութեանց հետևէ խնալ։ Հապա որ համար ուզես իմ քանքարս բանեցընելու վայրք, էս ինչ պատասխան պիտոր

տամ. շատ աղէկութիւններ կրնայի ընել ընկերներուս և հասարակի՝ չըրի. մինակ ես զանցառութեան մեղքը իս կը վախցընէ. չըլլայ որ քանքարաթա-քոյց ծառայի պէս դատապարտուիմ։

Բայց այսօր տէր իմ, ես կը խոստովանիմ, ես ինծ մէն կը ճանչնամ կը յի-շեմ իմ անօրէնութիւնս. դուն մի յի-շեր, այլ ընջէ, ով աղբիւր ողորմու-թեան տէր իմ Յիսուս. տուր շնորհք որ մնացած կեանքս պարապ չանցը-նեմ, այլ արիութեամբ բարեգործու-թեան հետ ըլլամ։

ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

Քառասնամեայ օր մեծ պահոց.

Բժշկութիւն և զօրութիւն հոգւոց, տէր իմ Յիսուս, մեծ վախի մէջ եմ, արդեօք թողութիւն կըլլայ իմ ծանր մեղքերուս. ես վախէն մէկ շփոթու-թիւն և յուսահատութիւն մը կը բերէ սատանան. անկէց մէկ պաղիլ մը կու-գայ խոստովանանքէն, և մէկ անհան-դըստութիւն մը։ Դու տէր, կարող ա-

մենայնի, նայէ՛ երկնքէն վրաս ողորմելով. թող մի տար որ քու մոլորեալ ոչխարդ կորսուի. այլ քու սուրբ արեանդ համար տուր ինծի այսօր մէկ յոյս մը՝ որ ան յուսով խոստովանիմ մեղքերս, մանաւանդ ապահովութեան մեղքերս, որ չափէն աւելի ապրուստիս վրայ հոգ տարեր եմ, հոգևոր գործքս երկրորդական եմ ըրեր, մարմնաւոր շահը առջի գործքի տեղ դրեր եմ։ Ապահովութեամբ իմ սիրտս աշխարհիս փարթամութեան եմ տուեր, մեծութեան և զէզխութեան սէր ձգեր եմ, փառաւոր երևնալ ցանկացեր եմ. շահած տարկիս վրայ սիրտս փակուցեր եմ, չեմ կրցեր հարկաւոր բաներու խարձել, կամ բարի բաներու. տասկը պահելու սէր մը ձգեր եմ ապահովութեամբ, իբր թէ պաշտեր եմ։

Ամուսնոյ մէջ ալ անկրաւութիւն ըրեր եմ, կերպ կերպ ճամբաներով ինծի եմ քաշեր, խաբելով, գողութիւն և զրկում ընելով եղբօրս, շատ աւելի գնով ծախելով, խարդախութիւն ընելով, գէշը աղէկի տեղ՝ պակասը լմանի

տեղ՝ տալով։ Ամանկով իբր թէ կուապաշտ եղեր եմ Պօղոս առաքելոյն ըսածին պէս, արծաթը պաշտելով, հոգիս մատնելով։ Վայ ինծի, եղեր է որ՝ ամանկ խարդախ առուտուրի մէջ ալ սուտ երդուընցեր եմ քու սուրբ անուանդ վրայ. երբոր բան մը առեր եմ ծախեր եմ՝ աւելի գին զուրցեր եմ, էս ինծի անցուցեր եմ, ուրիշին պարտքը չեմ վճարած։

Ա՛խ, ո՞ր մէկը յիշեմ, ո՞ր մէկը զուրցեմ, սակայն ասչափ զուրցելովս ընդունէ, տէր, իմ խոստովանութիւնս, թողութիւն ու շնորհք տուր, որ Զաքէոսին պէս ըսեմ։ Թէ զոք զրկեցի, հատուցից չորեքկին։

ՈՒՐԲԱԹ

Քառասնեվեցերորդ օր մեծ պահոց.

Բարեգութ տէր իմ Յիսուս Քրիստոս, դու Յակոբոս առաքելոյն բերանովը պատուիրեցիր. Խոստովան լերուք միմեանց զմեղս ձեր՝ ըսելով։ Բաց այսօր տէր իմ՝ բերանս, որ խոստովա-

նիմ զղջալով, ես ինձմէ պատմեմ քու առջևդ լալով իմ անօրէնութիւնս, մանաւանդ ինչ որ որկրամոլութեան մեղքերը ըրեր եմ։ Դու տէր հազար բարիք ստեղծեր ես՝ որ չափով ուտելով, անոնց կերպ կերպ համը առնեմ, քեզ արարիչդ յիշեմ, ու շնորհակալ ըլլալով օրհնեմ. ասոնք պիտոր հարցընես գառասանին օրը ըսելով. Տուր զհամար անուտութեան քո։ Վայ ինձ մեղաւորիս, ես ինչ պատասխան պիտոր տամ, որ որչափ համով բան կերեր եմ, ամենևին արարիչդ չեմ յիշած, փառք չեմ տուած, անբանի պէս իմ ախորժակս նայեր եմ որկրամոլութեամբ, վերջին վախճան իմ համառութիւնս դնելով՝ անանկ կերեր եմ. ան ալ չափէն աւելի։ Եղեր է՝ որ ողջութեանս ալ դէմ բան գտեր եմ, մինակ իմ ախորժակս հեշտացընելու համար ուտելով, ողջութիւնս աւրեր եմ։ Անկշռութիւն ըրեր եմ, անցագ կերեր եմ, չափէն աւելի ալ խմեր եմ, անկից մեղք մտեր եմ, ես իս մեղքի առիթներու մէջ ձգեր եմ։ Ասոնք կը

մոմեամ, ու ինձի վայ կուտամ. ուրը լամ, ուրը խոստովանիմ, Բայց դու տէր ողորմութեան՝ ասչափ խոստովանելով՝ իմ ամէն օրկրամոլութեան ըրած մեղքերս ջնջէ այսօր, սրբէ, և զղջումն ընդունելով թողութիւն պարգևէ։

ՇԱԲԱԹ

Բաւական օր մեծ պահոց.

Սրբութեան սիրող Աստուած իմ Յիսուս, խոստովանելու բերանս չիբացուիր, ամբէնալ մը կը բերէ ինձի սատանան. դու տէր, ինձի մէկ արիութիւն մը տուր, որ մեղքը ընելէն ամբէնամ, չէ թէ խոստովանելէն. դու որ չի-խոստովանածներս ալ գիտես, իմ ամէն մեղքերս տեսեր ես, բաց այսօր բերանս՝ որ ինչ մեղք ըրեր եմ մարմնով քեզի դէմ՝, խոնարհութեամբ խոստովանիմ, տէր իմ Յիսուս։

Ինչ որ մոքովս գործեր եմ անկարգ բաներ մոածելով, ինչ որ աչուքներովս մեղանչեր եմ դէշ նայելով նաև հոգևոր և սուրբ տեղերու մէջ, ինչ որ

բերնով անկարդ առասպել խօսքերով, ցոփաբանութեամբ խօսեր եմ աշխարհասէրներու հետ, կամ ծիծաղելիս մանկ գրեր եմ անոնց ըսածներուն, մանաւանդ պղտիկներու առջև ալ խօսելով գէշ օրինակ ու գայթակղութիւն տուեր եմ։ Անանկներուն հետ համարձակ վարուեր եմ, շատ ծիծաղեր եմ, որոնց հետ վարուիլս մեղքի պատճառ կըլլար։ Չեմ փափաք անանկ մարդէն անանկ աղէն՝ ուսկից որ ինծի մեղաց առիթ կըլլար, այլ մանաւանդ կամքովս յայտնի մեղքի առիթներու մէջ ես զիս ձգեր եմ։ մարմին՝ որ Հոգւոյն սրբոյ տաճար պիտոր ըլլար, անկարգութեամբս պղծելով՝ բելիալայ տաճար եմ ըրեր։ Ինչ որ ալ ասոնց նման մեղքեր գործեր եմ պղտիկուց ինչուան հիմա, մտքով, աչքով, բերնով, ձեռքով, հինգ զգայութեամբ և բոլոր մարմնովս, հիմա եկեր եմ առջիդ ղջացեալ սրտովս կը խոստովանիմ։

Դու տէր Յիսուս, իմ ապաքինուած վէրքերս սրբէ, իմ հոտած բո-

լոռուԹիւնս բժշկէ, ինչպէս որ ան մեղաւոր կինը մինակ ոտքդ խնալով, արցունք Թափելով, գուն իմացար անոր սրտանց խորունկ խոստովանիլը, ու քերնով չիզուրցած, իր ամէն մեղքը Թողուցիր։ Այսօր ալ իմ ասչափ խոստովանելովս՝ ինչ մեղք որ ալ մուցեր եմ, կամ չեմ Ճանչցեր ամենուն մէկէն ԹողուԹիւն տուր, ըսելով սուրբ քերնովդ. Թողեալ լիցին քեզ մեղք քո բազում։ Ու փոխանակ աս եօԹն մահացու մեղքերուս՝ որ ես գործեցի, գուս տէր եօԹն առաքինուԹիւն պարգևէ ինծի այսօր, ԽոնարհուԹիւն, ԵղբայրսիրուԹիւն, ՀեզուԹիւն, ԱրիուԹիւն, ԱղքատասիրուԹիւն, ԺուժկալուԹիւն, և ՍրբուԹիւն հոգւոյ և մարմնոյ։

Աստուած իմ, որ կը բանաս ականջդ ղրկացեալ մեղաւորաց, կաղաչեմ, աս խոստովանանքս որ աս շաբԹուանս մէջ ըրի, անտեսին հեռուելով խըղճմտանքիս հաշուին դիրքը հիմակուց շուկել ուզեցի, անանկ ընդունէ աս խոստովանանքս իբր Թէ մահուան ա-

տեսնը բրած ըլլայն. թէ որ ան տեսնը հիւանդութեան համար չկրնամ ընել, հիմակուանը ընդունէ, ու պահէ զիս որ մէյմին ալ չիմեղանչեմ։ Եւ քու աս շաբթուան սուրբ ծոմապահութեանդ մէջ ինչ փառաբանութիւն, ինչ ճգնութիւն, ինչ աղօթք որ ըրիր առ Հայրն երկնաւոր տէր իմ Յիսուս յինչէ, և իմ խոստովանութեանս ու զղջմանս հետ խառնելով Հօրն երկնաւորի ընծայէ. վասն զի ինծի համար ըրիր զանոնք. ինծի մաքրութիւն, փրկութիւն հոգւոյս և մարմնոյս՝ անոնք պիտոր ըլլան յաւուր գատաստանի։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ

ՄԵԾ ՊԱՀՈՑ

Կրիրոբիւն Աղօթից յիշատակաւ Դատաւորին.

ՇԱՐԱԿԱՆ

Որ պատուիրան ճշմարտութեան աւանդեցեր եկեղեցւոյ քոյ Քրիստոս, անսահման ժամանակաւ աղօթել միշտ առ Աստուած հոգւով և մտօք: Դատաւոր արդար, որ հաստատեցեր 'ի մեզ դատող բնութեան զմիտս մեր, շնորհեա սմա դատել զանձինս իրաւամբք և արդարութեամբ, խնայեա 'ի մեզ տէր ողորմութեամբ։

ԿԻՐԱԿԻ

Քառասնորեքերորդ օր մեծ պահոց.

Դատաւոր արդարութեան Քրիստոս, որ արդարութեանդ հետ միանդամայն ողորմած ես և գթած. դու

որպէս գթած հայր՝ այսօրուան աւետարանին խօսքովը կը սորվեցընէս ինչ ընեմ որ արդար դատաստանէդ խալըսիմ, ողորմութիւնդ գտնեմ։ Այս ճամբան սորվեցուցիր՝ որ մինակ աղօթքն է. ինչ որ ես չեմ կրնար ընել, աղօթքով կրնամ առնել. քանի որ սատանան փորձութիւն բերէ, աշխարհ և մարմին հոգւոյս դէմ ելլեն, դու սորվեցուցիր՝ որ աղօթքն է մէկ հատիկ դեղ։ Աղօթքով քեզ աղաղակեմ, քեզ բողոքեմ, անչափ՝ որ իմ անարժանութեանս չինայիս, այլ իբր թէ ձանձրանալէն ինծի ողորմիս, ինչ շնորհք որ պէտք է ինծի տաս։

Հիմա ես աս ճամբան քեզմէ սորվելով, համարձակութիւն առնելով, կը խնդրեմ ամէն բաներէն առաջ՝ որ շնորհք աղօթելու տաս ինծի, և մանաւորապէս այսօր պարդևես ինծի Աւջի աստուծոյն աղօթից, որ է սէրը աղօթելու։ Սիրով յօժարութեամբ նստիմ աղօթքի, քանի որ պէտք ելլայ. վասն զի աղօթքը ինծի ծանր բան մը կերևցընէ սատանան. քանի հեղ որ նստիմ

աղօթելու, ձանձրութիւն քուն կը բերէ։ Խնդրեմ տէր իմ, մի զրկեր զիս աս շնորհքէն, վասն զի դու սորվեցուցիր՝ առանց ձանձրանալոյ խնդրել և առնուլ։

ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

Քառասնեակներորդ օր մեծ պահոց.

Օրհնեալ գովեալ ըլլայ անհուն ողորմութիւնդ տէր իմ Յիսուս, որ ինծի սիրտ տալու համար՝ աւետարանին խօսքերովը քեզ նմանցուցիր անիրաւ դատաւորի մը, որպէս զի ես չիդադրիմ աղօթելու։ Ես ալ հիմա չեմ դադրիր, կաղաղակեմ. Դատ արա ինձ տէր յոսոխէ՛ իմմէ, որ է սատանան։ Թէ որ դու դատաւորդ չեղլես չիհաղատ ես անոր փորձութիւնները, անոր ըրած անիրաւութիւնները, ես չեմ կրնար խաղալիկ, վասն զի միշտ կը պաղատի իմ հոգիս կորանցընելու։ Գիտեմ որ իմ աղաղակելս՝ իմ աղօթելս՝ անարժան է, վասն զի չեմ տեսեր աղօթելու կերպը. Ջերմեռանդութիւն չի կա

աղօթքիս մէջը սրտէս չիբխիր , այլ
էր ցամաք , բերնէ թափուկ , համ
չեմ առներ աղօթքէս : Անկէց ստուա-
նան յուսահատութիւն կը բերէ, միտքս
ձգելով որ ասանկ աղօթք Աստուծոյ
չանցնիր , պարապ է . ասչափ տարի
է՝ խնդիրքդ չիկատարուիր , ինչ շահ
ունի աղօթելը : Կաղաչեմ տէր իմ,
տուր ինծի այսօր Երկրորդ ասանձան
աղօթից , որչափ սիրտս խնտա ըլլայ ,
ան ատենն ալ քու շնորհքովդ եւ չի-
կենամ. իմ անարժանութիւնս առջին
ունենալով և ոչ քու դատաւորիդ չի-
լսելը , միշտ անդադար աղօթք ընեմ
սրտանց ու խոնարհութեամբ , ինչպէս
որ դուն սրվեցուցիր խօսքով , նաև օ-
րինակովդ , գիշերը ինչուան լոյս աղօթք
ընելով Հօրն Աստուծոյ :

ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

Երեւնելորդ օր մեծ պահոց .

Երկայնամիտ տէր իմ Յիսուս Քրիս-
տոս , որ կերպ կերպ առակներով ճամ-
բաներով ինծի փրկութիւն սրվեցու-

ցիր, շատ բան սորվեցընելէն եռա՛
էն եռքը իմ փրկուելս քու վրագ
ձգեցիր. հասկըցընելով՝ որ քանի աշ-
խատիմ, ես իս չեմ կրնար փրկել, ին-
չուան որ դու տէր ձեռքէս չիբռնես,
չօգնես։ Քուկին օգնութեանդ ալ ար-
ժանի ըլլալու համար՝ մի միայն աղօթք
ընելը հասկըցուցիր, անդադար աղօ-
թելով, անչափ՝ որ զԱստուած ձանձրա-
ցընեմ, միայն թէ ես չիձանձրանամ.
ան ատենը Աստուած իբր թէ կը բըռ-
նադատի փրկութեան շնորհք տալու։

Այսօր ահա ես տէր իմ, ցաւագին
սրտիս անդադար ձայնիս կաղաղակեմ.
Դատ արա ինձ, տէր, յոսոխէ իմմէ.
որ է իմ մարմինս։ Ասիկայ մէկ ոսոխ՝
մէկ թշնամի մըն է, որ իմ ներսի դիս
է, իմ հեռաս է. չեմ կրնար բաժնուիլ,
և միշտ զիս կը մոլորցընէ. քուկին օգ-
նութիւնդ միայն կրնայ զիս ապրեցը-
նել։ Ապրեցո՛ զիս տէր՝ ի չար մար-
մնոյս յայսմանէ։ Ես որ հիմա ատանկ
կաղաղակեմ կաղօթեմ, քիչ մը կանց-
նի՝ կը ձանձրանամ աղօթքէ, քիչ մը
կանցնի՝ միտքս հազար տեղ կը ցրուի,

աշխարհիս անցաւոր պարապ բաները իբր խնամ հարկաւոր բանի պէս աղօթքի առեն միտքս կու գան. ինչ ընելու է, ինչ խօսելու եմ, ինչպէս արուեստս բանեցընելու է, աղօթքի առեն պայծառ միտքս կը բերէ առատնան, անով անպատուղ պարապ հանել կուտայ աղօթքս։

Դու տէր, որ վերէն երկնքէն կը տեսնես իմ ատանկ կերպ աղօթելս, խնայէ, խղճալով ողորմէ, տուր ինծի այսօր Երրորդ ատիճան աղօթից, որ աղօթքիս առեն միշտ խելքս վրաս պահեմ, երկրաւոր մտմտուքները ձըգեմ, երկնաւոր ատուածային բաները մտածեմ, կամ գոնէ ջանք ունենամ խելքս վրաս ժողվելու, բարի բաներ մտմտալու, պարապ մտքերը դուրս հանելու. ինչպէս որ դու տէր իմ՝ օրինակով ասրվեցուցիր, որ քաղքէն և մարդիկներէն հեռանալով, լեռը երթալով, անանկ աղօթքի հետ կըլլայիր։

ՁՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Երևելիի օր մեծ պահոց.

Փառաւորեմ և մեծացուցանեմ զանբաւ գթութիւնդ տէր իմ Յիսուս, որ ինձի այսօր մեծ դանձ տուիր աղօթքը, և աղօթքով տրվեցուցիր ամմէն շնորհքը քեզմէ առնուլ: Հիմա իմ հոգւոյս խեղճութիւնը առջևդ կը դընեմ, որ շնորհքէ զրկուած ըլլալով քեզմէ հեռանալով, այրի մը գարձեր է խեղճ ողորմելի, նման ան այրւոյն զոր օրինակ բերիր աւետարանին մէջ. հրեշտակները ինծմէ երես են դարձուցեր, իմ ոտխներս սատանաները եկեր պատեր պաշարեր են, խաղ կընեն: Ինծի ճար չկայ ասկէց խալըսելու՝ բայց եթէ աղօթելով. այլ սատանան անչափ տիրեր է վրաս՝ որ աղօթքէ ալ պաղեցուցեր է, գրսի աշխարհիս երկրաւոր մեծութիւնը՝ հարստութիւնը՝ փառքը իմ աչքիս հարկաւոր կերևնայ, աղօթքը և երկնաւոր փառքը ոչինչ մը կերևնայ: Մէկ իշխա-

նի մը հետ տեսնուիլ, խօրհրդել, ուս-
կից շահ մը չկայ, ինծի մեծ փառք կը
սեպեմ, չեմ ձանձրանար. իսկ ա-
ղօթքով քեզի հետ խօրհրդել՝ որ ես
թագաւոր թագաւորաց, և ուսկից է
իմ ամէն կենդանութիւնս, ոչինչ կը
սեպեմ ու կը ձանձրանամ։

Հիմա ոտքդ կխնիմ, ան այրի կնոջ
պէս կաղաղակեմ. Դատ արա ինձ տէր
յոսոխէ իմմէ. որ է աշխարհ. ազատէ
զիս աս աշխարհիս խաբէութենէն։ Եւ
տուր ինձ տէր այսօր Զորրորդ ասան-
ձան աղօթից, որ աղօթքի առեն սիրաս
դրսի բաներէն կտրեմ. աշխարհային
մեծութիւնը, փարթամութիւնը բանի
տեղ չիսեպեմ, չիմոմոամ. այլ մանա-
ւանդ աշխարհիս ունայնութիւնը՝ ան-
ցաւորութիւնը պայծառ տեսնեմ, յի-
շելով քու խօսքդ. Ինչ օգուտ է մար-
դոյ եթէ զաշխարհ ամենայն շահեսցի, և զանձն իւր տուժեսցէ։ Ես որ
աս խօսքիդ ներհակ ճամբայ բռներ
եմ, այսօր փոխեմ ես զիս. աղօթքը ին-
ծի մեծ դանձ և վաստակ սեպելով, առ-
ջի գործքս աղօթքը և հոգևոր գործ-

քը ըլլայ. երկրորդ գործքը՝ աշխարհային գործողութիւնս և մարմնաւոր ապրուստս ըլլայ, անով յօժարութեամբ ու սիրով ընեմ աղօթքս. որով երկնային յաւիտենական մեծութիւնը հարատութիւնը վաստակիմ, որ է արքայութիւնը. ամէն։

ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

Երեւելի երրորդ օր մեծ պահոց.

Ա. քեզ գիմեմ ով աղբիւր ողորմութեան և արդարութեան, նայէ քու դատաւորական աթոռէդ և ողորմէ։ Դու իմ մարմինս և հոգիս մէկ առեղ ստեղծելով՝ երբ եթէ մէկ քաղաք մը չինեցիր, և անոր դատաւոր դրիր իմ խղճմտանքս՝ որ շիտակ դատաստան ընէ. բայց ես եռեւէ եռև մեղքերու մէջ կնալով, աս խղճմտանքս բոլորովին կուրցուցի՝ որով չիտեսնէր իր խեղճութիւնը. իմ միտքս խառացուցի, չուզեր ամենեին մեղքերէ եռ կենալ. սիրտս քար դարձուցի, չուզեր ամենեին զղջում ընել. քանի որ կը ջանամ

խղճմտանքս շակել՝ ամենևին չիլսեր, անիրաւ դատաւորի նմաներ է։ Հիմա ես ալ քու՝ երկնաւոր դատաւորիդ՝ ոտքը կկնիմ, կաղաչեմ. Դատ արա ինձ տէր յոսոխէ իմմէ, որ է իմ կուրացեալ խղճմտանքս, չար սիրոս. մինակ քեզի մնաց իմ փրկութիւնս։ Կուզեմ ասանկ քեզի գիմել աղօթքով, ասնոր ալ իմ ամէն օրուան գործքս թող չեն տար, սիրոս՝ միաքս քեզմէ կը հեռացընեն, աղօթքէ կը խափանեն։

Կաղաչեմ, տէր իմ, անգին արեանդ համար տուր ինծի այսօր Հինգերորդ ատիճան աղօթից. որ ամէն օրուան գրսի գործքերս ալ անանկ ընեմ՝ որ ասնոնք ալ աղօթք ըլլան։ Առտուանց ինչպէս որ կառաջադրեմ իմ ամէն գործքը 'ի փառս Աստուծոյ ընելու, ասնանկ ալ գործքերս ընելու առէնք՝ միշտ զԱստուած աչքիս առջին ունենալով՝ նոյն առաջադրութեանս հետևիմ, զԱստուած յիշելով 'ի փառս Աստուծոյ ընեմ, ինչպէս որ տուրբ առաքեալը կը սորվեցընէ. Թէ ուտիցէք, և թէ ըմպիցէք, զամենայն ինչ 'ի փառս Աստուծոյ արարէք։

Անանկով սիրաս՝ խելքս բոլորովին դրսի գործքերուն չիտամ, այլ ան գործքերու մէջ ալ հաւատոյ՝ յուսոյ՝ սիրոյ ներգործութիւններ ընելով Աստուծոյ յիշատակը միշտ սրտիս մէջը պահեմ, կատարող ըլլամ անով քու հրամանիդ, թէ Յամենայն ժամ աղօթս արարէք։ Որպէս զի երբեմն աղօթքի նստիմ, միաքս շուտով Աստուծոյ տանելու կարենամ, և ինծի պէտք եղած շնորհքները առնելով փրկութեան հասնիմ։ Եղիցին քեզ հաճոյ բանք բերանոյ իմոյ, և խորհուրդք սրտի իմոյ առաջի քո յամենայն ժամ, տէր օգնական իմ և փրկիչ իմ։

ՈՒՐԲԱԹ

Երևելի երրորդ օր մեծ պահոց.

Մարդասէր տէր իմ Յիսուս Քրիստոս, հիմա ողորմութեան աթոռն ես նստած. ցըցու քու ողորմութիւնդ իմ վրաս, իսկ արդարութիւնդ՝ իմ ոտխնեներուս վրայ ցըցու, որոնց դէմ կաղապղակեմ. Դատ արա և ողորմէ։ Ա՛ռ ո-

սոխնեբը՝ ան թշնամիներն են, որ ա-
ղօթքը ինծի ծանր բան մը կը ցուցը-
նեն, անանկով զիս կուզեն հեռացընել
աղօթքէ. բայց անանկ է նէ մոքիս աչ-
քը, որ արթընայ տեսնէ զքեզ յա-
թոռն շնորհաց նստած: Թէ որ մեծ
իշխանի մը առջին եղլեմ, գիտնամ՝ որ
ինչ որ ուզեմ պիտոր առնեմ, բոլոր օ-
րը սիրով կաղաչեմ, չեմ ուզեր անկէց
բաժնուիլ, ինծի ծանր բան մը չերևե-
նար առեղին երկայնութիւնը. հապա
քանի աւելի պէտք է որ զքեզ սիրով
աղաչեմ, որ թագաւոր ես թագաւո-
րաց, և պատրաստ ես ամէն բարիք
տալու՝ ինչ որ ուզեմ աղօթքով:

Անոր համար խնդրեմ տուր ինծի
այսօր Վէցերորդ ատենման աղօթից,
որ աղօթք ընելուս առենը քեզ պայ-
ծառ տեսնելով, այն անուշութիւնը
առնեմ, ինչ ախորժ որ կառնեն տուր-
բերը. անոր համար թէպէտ երկրիս
վրայ են, բայց իրր թէ երկինքն են՝ ա-
նանկ չեն կշտանար աղօթելէն. իմա-
նամ որ աղօթքով ամենակարող Աստու-
ծոյդ առջին կելլեմ, աղօթքով քեզ ա-

բարձիդ հետ համարձակ կը խօսիմ, դու ալ ինծի հետ կը խօսիս երբեմն շնորհք տալով, միտքս լուսաւորելով։

Այս բանիս սատանան նախանձելով թող չիտար. վասն զի ինքը թէպէտ հոգեղէն գերազանց ստեղծուած է, բայց չեկրնար Աստուծոյ առջիւ երևնալ ու խօրանալ, անարդեալ ըլլալով քեզմէ. իսկ ես հողեղէն ոկար ստեղծուած մը ըլլալով կրնամ աղօթքով երբ որդի ընտանեբար սիրաս բանալ քեզ Հօր երկնաւորի. անոր համար կը հակառակի, խափանել կը նայի։ Բայց ես քու ստեղծուածդ եմ, տէր իմ և արեամբքով փրկուած, մի թողուր զիս ան չարին ձեռքը կնալ. այլ որչափ որ անարժան եմ, արժանի ըրէ զիս այն քաղցրութեան աղօթքի։

ՇԱԲԱԹ

Երևելիորդ օր մեծ պահոց.

Յիշեմ տէր իմ ան շնորհքը վերադարձոյ մտաց առ Աստուած, որ քու սուրբերուդ պարգևեր էիր, ինչ զմայ-

ելեալ կիմանային հաւատքով և սիրով՝ որ կը յափշտակէր զանոնք աղօթքի առեն։ Որոնց մէջը մէկն ալ սուրբ Արսէնն էր, որ արևը մտնելու առեն դէպ 'ի արևելք աղօթքի կը նստէր կը վերանար, ինչուան գիշերուան անցնելը չէր իմանար, առաւանց արևին ճառագայթը աչքին զարնելովը կիմանար, աղօթքէ կելլէր։ Որոնց և գլուխ և օրինակ դուն էղար տէր իմ Յիսուս, երբոր քու անձառելի մարդկութեամբդ բոլորովին Աստուծոյ կը յափշտակուէիր. Հանելով զգիշերն 'ի գլուխ յաղօթան Աստուծոյ։

Հիմա ես անարժանս միջնորդ բռնելով զբարեխօսութիւն մօր քու և կուսի, և ամենայն սրբոց, կաղաչեմ տուր ինծի այսօր Եօթնեերորդ տասիճան աղօթից։ Թէ որ տս շնորհքը ինծի տաս, որ միտքս բոլորովին քեզի վերանայ, ան առեն միտքս սիրտս ինքիրեն կը կարուի երկրաւոր մտմտուքներէ, ինքիրեն աղօթքի կը վազէ քեզի դիմելով։ Ահա տէր իմ, կը յիշեմ ան սուրբերուն Սլէլուխան, որ երկինքը քեզի կեր-

գեն, մէկ ալէլուիա մը յաւիտենա-
կան, մէկ աղօթք մը անվախճան, զոր
սուրբ Յովհաննէս աւետարանիչը լսեց։
Զունին մէկ բան մը քեզմէ խնդրելու.
բայց իրենց մեծ փառք և ուրախու-
թիւն կը սեպեն զքեզ օրհնել, և զքեզ
փառաւորել. քանի՛ օրհնեն՝ այնչափ
օրհնելնին կուգայ, և այնչափ աւելի
կուզեն փառաւորել։

Այն դասք հրեշտակաց, սերոբէից
և քերոբէից, այն դասք առաքելոց և
ամենայն սրբոց, որոնց գլուխ և դա-
սապետ սուրբ Աստուածածինն է, մէկ
ձայն, մէկ բերան, միաբան սուրբ,
սուրբ, սուրբ երգելով չեն կշտանար,
յաւիտեան կը զմայլին, ես ողորմելիս
ինչպէս ձանձրանամ։ Թէ որ սուրբերը
միայն զքեզ փառաւորելու համար ա-
սանկ չեն դադրիր աղօթելու, ես որ
քու ողորմութեանդ՝ քու շնորհքնե-
րուդ այսչափ կարօտութիւն ունիմ,
ինչպէս աղօթքս կարճեցընել կուզեմ։
Բայց տէր իմ, աս ամէն բանը կը
շակուի, թէ որ քու աս շաբթուանս
մէջ ըրած աղօթքներդ, արդիւնքդ, հա-

ռաչանքդ խառնելով իմ անարժան աղօթքիս հետ, երկնաւոր Հօրդ և Հոգւոյն սրբոյ առջին հանելով, այսօր առնես ինձի համար աս շնորհքը։ Հոգին սուրբ ինձի սորվեցընէ, զիս զօրացընէ, անանկ նատիլ աղօթքի՝ որ բոլորովին վիրքս Աստուծոյ վերանայ յաւիտենական, որ է շնորհք շնորհաց։

ՎԵՑԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ

ՄԵԾ ՊԱՀՈՑ

Երրորդաբար պատրաստութեան մահուան, և սուրբ հաղորդութեան՝ յիշատակաւ Գաղատեաց Քրիստոսի.

ՇԱՐԱԿԱՆ

Յորժամ փառաք հայրենի Քրիստոս ծագիս 'ի յերկնից, և յարուցանես զմեռեալսն, յայնժամ դասեա՛ ընդ աջմէ քումմէ, և կոչեա զմեզ 'ի փառս քո։

ԿԻՐԱԿԻ

Երեւելեհիւզերորդ օր մեծ պահոց.

Թագաւոր ահաւոր, որ այսօրուան աւետարանով ինձի իմացուցեր քու գալուստդ Թագաւորի պէս, համար ուզելով ինծմէ իմ ամէն գործոցս վրայ։ Կաղաչեմ քու սուրբ վերացդ համար ըլլայ՝ հանէ փարատէ ինծմէ

մոքիս թմրութիւնը, որ մէկ անգգայ թմրածի մը պէս ամենեւին չկրնար քու գալուստդ։ Բայց լուսաւորէ միտքս՝ որ մեռնիլս միտքս բերեմ, խմանամ որ կեանքս լմընցայ պիտոր, և քու առջեւդ ունիմ երեւնալու որ համար տամ. վասն զի քանի որ օրերս կը կարճընան, այնչափ ալ մեռնիլս կը մօտիկնայ։

Ահա թմրութիւնը անչափ սաստիկ է վրան՝ որ թէպէտ աչքովս ալ կը տեսնեմ՝ որ ամէնը մէկիկ մէկիկ կը մեռնին կերթան, բայց ինծի անանկ կերևայ որ ես աւելի շատ պիտոր ապրիմ։ Վայ ինձ, չեմ արթընար, չեմ խմանար, որ վաղուան օրն ալ ձեռքս չէ. թէպէտ գոնա տէր իմ մէկիկ մէկիկ ինծի յիշեցուցիր ըսելով. Արթուն կացէք, զի ոչ գիտէք յորում ժամու տէրն ձեր գայ. Ոչ գիտէք զօրն և ոչ զժամն։ Կաղաչեմ տէր իմ, ահա թմրութիւնը որ սատանան ձգեր է վրաս, գոնա փարատէ այսօր և լուսաւորէ, որ միշտ մահս յիշելով պատրաստ կենամ քուկին գալստեանդ։

ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

Երեսնեւվեցերորդ օր մեծ պահոց.

Դու տէր իմ Յիսուս, առաջ Երուսաղէմ եղող մեղաւորներուն վայ կարդացիր, արթընցընելով որ ապաշխարեն, եւ քեզի Թագաւորի մը պէս եկար մտար Երուսաղէմ. քու քաղաքդ ովսանայ երգերով, ինծի հասկցընելով, որ ես ալ իմ հոգիս՝ որ քու քաղաքդ է՝ սրբեմ ապաշխարութեամբ. որպէս զի երբոր գաս Թագաւորի պէս՝ հոգիս ցնծալով ուրախանալով զքեզ ընդունի։ Ահա տէր իմ, այսօր աս խրատովդ հոգւոյս վրայ մէկ շնորհք մը ապաւորէ, որ մեռնելուս յիշատակը պայծառ յիշեմ, մանաւանդ երբոր կրնց մէջ կըլլամ։

Երբոր բարկութեան կիրքս կելլէ, ցանկութեան կիրքս կիշխէ, հպարտութեան միտքեր կը տիրեն, ան առէնը շուտ մը միտքս բերեմ իմ մեռնելս, անով ինչնան ան կրքերը, իմանայ հոգիս ուրչափ պարապ բան է արդոյնքս՝ նե-

զանալն՝ ինչու ուզածս չըլլար ըսելով։ Երբոր մտածէ՝ որ իրաւ վաղուան օրը կը մնայ արդեօք աշխարհիս վրայ թէ չէ, ան ատենը կը պաղի աշխարհասիրութեան միտքերը։ Երբոր պայծառ տեսնէ՝ որ վաղը իր մարմինը ճաղին մէջ մնալով՝ ամէնն ալ իրմէ փախչին պիտոր, հոգին տակը կերթայ, ուր ան ատենը հպարտութիւնը, փառասիրութիւնը, երբոր իրաւ իմանամ որ մեռնելէս ետև մէկն ալ պիտոր չմտնէ, մուցուիմ երթամ պիտոր։

Այս բաներուս գէղ է միշտ մահուան յիշատակը, ինչպէս որ դու ալ ապրս պրեցիր տէր իմ. Եղերուք պատրաստք, զի յորում ժամու ոչ կարծիցէք, գայ որդի մարդոյ։ Կաղաչեմ անանկ է նէ ուրուր ինծի աս շնորհքը՝ որ երբոր կըրքերս շարժին, սատանան զիս փորձութեան մէջ ձգէ, շուտ մը յիշեմ մահս, անով զգաստանամ. եւ զիս արթընցընելով մաքրեմ, սրբեմ իմ սիրտս, տեղի և օթեւան պատրաստեմ քու դալստեանդ, որ զատկական սուրբ խորհրդով հաղորդութեան դաս նախ

իմ սիրտս, շնորհքով թագաւորես յաւիտեան: Եւ քեզ ալ մահուանս առեալ աստուածային փառաւոր գալստեանդ արժանի ըլլամ. ամէն:

ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

Երևելի օրհնութիւն մեծ պահոց.

Խմաստութեան գանձ տէր իմ Յիսուս, որ իբրև խմաստուն հոլիս առաջուց զուրցեցիր քու գալուստդ, պատրաստութիւն տեսնել ապաշրեցիր ըսելով. Զգոյշ լերուք անձանց, դուցէ ծանրանայցեն սիրտք ձեր շուայտութեամբ և արբեցութեամբ, և հոգւովք աշխարհակալնօք, և յանկարծակի հասանիցէ 'ի վերայ ձեր օրն այն, զի իբրև զորոգայթ հասանիցէ 'ի վերայ ամենեցուն՝ որ բնակեալ են ընդ ամենայն երեսս երկրի: Ա՛խ, տէր իմ, պատճառ որ մեռնիլս չեմ յիշեր, արթուն չեմ կենար, ան է՝ որ քու ապաշրածիդ դէմ սիրտս ծանրացուցեր եմ՝ մանաւանդ աշխարհիս հոգերով ու մտմտուքներով, իբր թէ միշտ աշխարհիս վրայ

պիտոյ կենամ՝ անանկ ամէն օր միտքս դրսի բաներու կուտամ. մահը ինծի հեռու բան մը կերևնայ, չեմ յիշեր քու դալուստդ, անկէց աղօթքէ ալ կը պաղիմ. և թէպէտ դու ներհակը կապսպրես, ինծի ջուրի մը ձայն կու գայ խօսքերդ։

Ո՞ւր է ան արդար հոգին՝ որ սիրտը աշխարհիս վրայ չիտաքցընելով, իրեն հոգւոյն պատրաստութիւնը ամէն օր տեսնելով՝ առ կեանքէս զզուած՝ բարի մահուան կը ցանկար ըսելով. Վայ ինձ, զի ընդ երկար եղև պանդխտութիւն իմ. Ո՛ տայր ինձ թեւս, զի թռուչէի պանայի յերկինս։ Ի՞նչ պիտոյ ըլլայ ինծի տէր իմ. կը վախնամ՝ որ ինչպէս Երուսաղէմ քաղաքը եկար, բայց տեսնելով որ պատրաստութիւն չունէր, զքեզ Նասուծոյ տեղ չէր դրեր, ինչ որ պէտք է չէր ըրած, լացիր վրան ու անիծեցիր ըսելով. Եթէ գիտէիր դու գոնէ յաւուրս յայսմիկ զխաղաղութիւն քո. բայց այժմ ծածկեցաւ յերեսաց քոց. զի եկեսցեն աւուրք 'ի վերայ քո, և ոչ թողուցուն քեզ 'ի

քարի վերայ յամենայնի 'ի քեզ, փոխանակ զի ոչ ծանեար զժամանակ այցելութեան քո։

Ա՛խ, չըլլայ որ իմ վրաս ալ լաս, զիս ալ թշնամւոյն, իմ ախտից, ու մեղքերուս ձեռքը մատնես, որ զիս շնորհքէդ զրկեն. ինչ բարիք որ տուեր էիր ինծի՝ քակեն կորսնցընեն. անանկով երեսէդ կնամ անարդուածի պէս. շատ կը վախնամ կը դողամ աս բանէս։ Ա՛յլ դու ողորմութեան Աստուած, որ դեռ ինծի ժամանակ տալով՝ կերևայ որ իմ ապաշխարութեանս կը սպասես, տուր ինծի՝ որ միշտ աչքիս առջևն ունենամ աս խօսքերուդ յիշատակը, քու դալըստեանդ ահաւորութիւնը, մեռնելուս մօտիկութիւնը։ Անանկով ձգեմ ամէն աշխարհիս պարապ մտմտուքները. միայն հոգիս հոգալու հետ ըլլամ. մեռնելուս առեն ալ բարի պատրաստութիւն տեսնելով տուրբ խորհուրդները առնելու արժանի ըլլամ։

ՁՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Երևանեռաբերորդ օր մեծ պահոց.

Փառաւորեալ ես, որ վառաք Հօր երկնաւորի ունիս գալ աշխարհիս վրայ, ու ամէն մարդու ամենուն առջին ընդհանրական դատաստան ընել ա-նաչառ, ուր որ մէկի մը բարեխօսու-թիւն չանցնիր, մէկէ մը կաշառք չառ-նուիր, միայն ազէկ գործք ու դէշ գործք կը յիշուի. ինչ գործք Աստուծոյ համար ըրի, և ինչ գործք աշխարհիս համար, մէկին համար կը մնայ վարձք առնելու, մէկալին համար պատիժ:

Ես ինչ պիտոր ընեմ ան ատենը, որ իմ ազէկ կարծուած գործքս ալ զուտ Աստուծոյ սիրոյն համար չեմ ըրած, ամէնն ալ ինծի համար ըրեր եմ, ես կարօտներուն չեմ հասեր, հիւանդներուն տես չեմ գացեր, բանտարկեալոց մխիթարութիւն չեմ տուած, անօթիները չեմ կշտացուցած, վասն զի ինչ որ ըրեր եմ ատոնցմէ՝ զուտ էգոյասիրութեան համար չեմ ըրած.

մէկմէկ օտար միտք խօթեր եմ մէջը, որով զիս ուզեր եմ, զիս փնտռեր եմ, չէ թէ զԱստուած. ասոնք որ յայտնի ըլլան դատաստանին օրը՝ ես ինչ ու-նիմ պատասխան տալու։ Հապա իմ ան-օրէնութիւններս՝ իմ հոգւոյ և մար-մնոյ չարութիւններս երբոր բացուի ամմէնուն առջին, ես ինչ պիտոր ը-սեմ, բայց եթէ յաւիտեան դատա-պարտելոց մէջը պիտոր լինամ. և թէ որ հիմակուց յիշելով ապչափ կը դո-ղամ, ան օրը ինչ պիտոր ըլլամ։

Այլ դու ողորմութեան Աստուած, աս ահեղ դատաստանիդ յիշատակը միշտ իմ մտքիս մէջը տպաւորէ, որ ա-հիւ և դողութեամբ իմ փրկութիւնս հոգամ. քու առաքելոյդ ըսածին պէս. և միշտ աղօթքի հետ ըլլամ. քու տալը-պրածիդ պէս. Յամենայն ժամ աղօթս արարէք, զի արժանի լինիջիք զերծա-նել յայնմ ամենայնէ որ լիներելոց է. և կալ առաջի որդւոյ մարդոյ։ Ամենով հիմա պատրաստութիւն ունենամ զատկական սուրբ խորհրդով հաղոր-դութեան արժանապէս զքեզ ընդու-

նելու. եւ թէ ալ երբեմն հոգիս բաժ-
նուելու կըլլայ մարմինէս, արժանի ը-
ըէ որ միտքս զգաստ ըլլալով, սրտանց
զղջում ընելով, սատանայի փորձու-
թիւններու դէմ դնելով, անանկով էլ-
լեմ առջեւդ, բարի պատրաստութեամբ
ընդունիմ քու դալուստդ՝ թագաւոր
փառաց. և յաւիտեան ճնամ քու երկ-
նային թագաւորութեանդ մէջ։

ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

Երեսնեւինեերորդ օր մեծ պահոց.

Դատաւոր արդար, որ դատաստանդ
լմնցընելէն եւեւ՝ զմեղաւորները արդա-
րութեամբ տանջանքը պիտոր խրկես
դժոխքին մէջը, ըսելով. Երթայք յի-
նէն անիծեալք 'ի հուրն յաւիտենա-
կան։ Սատանաներն ալ անոնց դահիճ
պիտոր դնես տանջելու։ Ա՜խ, ինչ
տանջանք մինակ սատանաներուն քա-
վը նստիլը, և մինակ մեղաւորներուն
մէջ ընկերութիւն ընելը. թէ որ հոս
մինակ մէկ ժամու կռուարար հոգւոյ
մը հետ չեմ կրնար նստիլ, հապա ո՞ւր

մնաց դժոխքին մէջը, ուր բիւրք բիւ-
րուց հոգիներ՝ ամէնն ալ ժանտ ու
կռուարար, վասն զի ամէնքն ալ Աս-
տուծմէ հեռացած, Աստուծոյ թշնա-
մի են եղեր։ Հապա տանջանքները՝ որ
անգութ դահիճները պիտոր տան մեղ-
քերուն համեմատ, ան կրակին այրելը,
ան սրտին խղճմտանքին խայթելը. Ու-
ր որդն նոցա ոչ մեռանի, և հուրն ոչ շի-
ջանի։ Հապա Աստուծոյ տեսութենէն
զրկուիլը. որ ուրիշ տանջանք ալ չըլ-
լար՝ աս միայակ հերիք տանջանք էր.
ան յաւիտենականութիւնը՝ ուսկից
չըլլար յաւիտեան խալըսիլ։ Ասոնք էր-
բոր կը մտածեմ, բոլորովին դող կիս-
լեմ. վասն զի իմ գործքս զիս դժոխքի
արժանի կընէ։

Բայց դու բարեգութ Աստուած, աս
դժոխքին յիշատակը միշտ իմ սրտիս
մէջը տպաւորէ, որ յիշելով ան տան-
ջանքները եւ կենամ մեղքերէ, և տա-
ջի մեղքերս ապաշխարեմ։ Կաղաչեմ,
հիմակուց իմ միտքս վերնատան պէս
պատրաստէ, որ վարի բաները թո-
ղում, վեր ելլեմ մտքով վերի բաները

ինչպէս մոռացեմ։ Սիրտս ալ զարդարէ՝ ան ամէն շնորհքներով որ ունէր, ինչպէս ան զարդարուած վերնատունը արժանի եղաւ զատկական ընթրեացը ու սուրբ խորհրդոյն, անանկ ալ իմ սիրտս շնորհքներով զարդարուած արժանի ըլլայ զքեզ ընդունիլ զատկական սուրբ հաղորդութեան խորհրդով։ Նոքն ալ երբոր հոգիս մարմնէս բաժնուի՝ արժանի ընես պահապան հրեշտակը ինծի ուղեկից խրկել և առաջնորդ, որ սատանաներէն զիս խլացընէ։

ՈՒՐԲԱԹ

Քառասնակրոյդ օր մեծ պահոց.

Պարգևատու բարեաց տէր և Աստուած, արդարներուն դատաստանը տեսանելէն առաջ՝ իրենց բարի գործոցը համեմատ մէկ վարձք մը պիտոր տաս՝ որ լեզուով չկրնար պատմուիլ՝ ըսելով. Եկայք օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ զարքայութիւնն 'ի սկզբանէ աշխարհի։ Ան արքայութիւնը՝ ուր ընկերութիւն

է ամենայն արքոց, ուր ամէնը բարի, ուր ամէնը միմիւսու խնամ սիրելի, միմիւսիս գերագանց. հապա հրեշտակաց հետնատիլը՝ որ բոլորովին հոգեղէն գերագոյն ստեղծուած ըլլալով մեզի չեն նմանիր. դաս դաս սերոբէներու քերոբէներու։ Սուրբ Աստուածածնայ փառքը եօթնարփեան լուսով զարդարուած։ Քու մարդկութեանդ փառքը տէր իմ Յիսուս, որ ամէն մէկ վերքերէդ մէկմէկ լոյս պիտոր ճառագայթէ։ Բայց ամէնէն վեր մէկ լոյս փառաց մը ծագելով ամէն արքոց վրայ. անանկ քու աստուածութեանդ փառքը պիտոր ցուցընես, որ խելքէ մաքէ դուրս է. հոն տեսնելով զամենասուրբ Երրորդութիւնդ. Հայր, Որդի և Հոգին սուրբ Աստուած, ամէն բարութիւն պիտոր տեսնեն ու իմանան, ամէն գեղեցկութիւն, զուարճութիւն, իմաստութիւն, և զօրութիւն. և միշտ տեսնելով զմայլին պիտոր յաւիտեան։

Ա՛խ, երբոր աս սուրբերուն փառքը կը յիշեմ, սիրտս վեր կելլէ կը ցանկամ արքայութիւնը մտնելու,

քայց երբոր իմ մեղքերս կը յիշեմ, յայտնի կը տեսնեմ՝ որ դուրս պիտոր մնամ։ Ա՛ս մտածելով կայրիմ կը տոչորիմ իմ ըրած մեղքերուս վրայ. և թէ որ հիմա ասչափ կայրիմ, հապա ինչ պիտոր ըլլայ դատաստանին օրը, երբոր տեսնեմ՝ որ իրաւ կը բաժնեն իս սուրբերուն մէջէն, կը հեռացընեն Աստուծոյ տեսութենէն։

Ա՛յլ ո՛վ ողորմութեան Աստուած, դու որպէս գթած Հայր յիշէ՛ քու միածնիդ քառասուն օրուան պաքը, և այլ ամմէն չարչարանքները՝ որ իմ փրկութեանս համար քաշեց։ Յիշէ՛ սուրբ Աստուածածնին ցաւը, որ միածին որդւոյն հետ մէկտեղ քաշելով՝ այնչափ կսկիծով ու խոցերով չարչարուեցաւ իմ մեղքերուս համար։ Անոնց արդիւնքը յիշելով՝ նայէ՛ այսօր վերէն երկնքէն, և ա՛ս յիշատակը ոչքայութեան՝ միշտ սրտիս մէջը տպաւորէ, որ քանի որ ատեն ունիմ լամ առջի ըրած մեղքերս Դաւիթ մարգարէին պէս, բնաւ չիձանձրանամ ապաշխարելէն ու բարեգործութիւն ընելէ։

Սատանիկով քեզի հետ հաշտուելիս, զատ-
կական հաղորդութեան խորհրդով ան-
բաժան մնամ ասուածութեանդ հետ
աս աշխարհիս մէջ, որ մեռնելու օրս
դատաստանին մէջ բարեկամի պէս
լսեմ քեզմէ ան երանելի ձայնը.
Սուրբ յուրախութիւն տեսուն քո։

ՇԱԲԱԹ

Քառասնիորդ առաջնորդ օր մեծ
պահոց.

Քրիստոս Յիսուս, յոյս մեղաւո-
րաց, Ճշմարիտ բարեխօսդ վասն մեր-
քանի որ քու գալուստդ կը յիշեմ, ար-
դարութեանդ դատաստանը, մեղաւո-
րաց տանջանքը, արդարոց փառքը,
սիրտս գողալէն բան մը մնաց չեմ կըր-
նար ընել. վասն զի տեսնելով իմ չար
գործքերս, իմ ծոյլ կենալս, անհոգ
ըլլալս ապաշխարելու և աղօթելու,
գիտեմ որ չնկրնամ պիտոր ժառանգել
զարքայութիւնը, նրաւ պիտոր դատա-
պարտուիմ։ Ի՞նչ պիտոր ըլլայ իմ բա-
նը մոռանալով յուսահատած կեցեր

եմ, հոգիս ալ մեռեր է, սիրտս ալ մեռեր է, մէկ բարի բան մը չեմ կրնար ընել։

Դու ո՛վ բժիշկ հոգւոց, յարուցիչդ մեռելոց, աս իմ մեռած հոգւոյս խեղճութիւնը լսելով հասիր ինծի, ինչպէս որ հասար այսօր Ղազարու ըսելով. Ղազարոս բարեկամ մեր ննջեաց, այլ երթամ զի զարթուցից զնա։ Ո՛վ տէր, ես թէպէտ քու բարեկամդ չեմ իմ մեղքերուս համար, բայց քու ստեղծուածդ եմ, քու գնծու ծառադ եմ, ես ալ մեռուցի, մեղքերու մէջ թաղեցի, չէ թէ չորս օրուան՝ այլ շատ տարուան. հիմա իմ լալագին աղօթքս քեզ ընդառաջ կը խրկեմ Ղազարոսին քրոջը պէս գոչելով. Տէր, եկ և տես. եթէ տատ էիր գնալեալ, ոչ էր մեռեալ հոգի իմ։ Եւ յուսահատած ըլլալով իմ հոգւոյս ողջունելուն վրայ կաղաղակեմ. Տէր, արդ հոտեալ է։ Եկ տէր իմ, տես մէկիկ մէկիկ իմ խոցերս, իմ փտատած կիրքերս. լաց իմ հոգւոյս գերեզմանին վրայ, ինչպէս լացիր Ղազարոսին գերեզմանին վրայ։

Տուր առաջ հաւատք ըսելով. Եթէ հաւատացեր՝ տեսցես զփառսն Աստուծոյ։ Որ ես ալ ըսեմ սրտէս. Այո՛ տէր, ես հաւատացի, եթէ դու ես Քրիստոսն որդի Աստուծոյ։ Դուն ես մեղաւորաց յարութիւն և կեանք, կարող ես մեղքերս քաւել։

Դուն կարողդ ամենայնի, հրամէ իմ քարացեալ սրտիս ըսելով. Ի բոյց արարէք զվէմդ։ Վերցընել տուր սա ապառաժ քարը խստասրտութեան իմ վրայէս, որ լայսդ Քրիստոս ծագի խաւարած մտքիս մէջ, ինչպէս որ ծագեցաւ և լուսաւորուեցաւ Ղազարու գերեզմանը։ Սատանիկ ձայնով կանչէ իմ մեռած հոգւոյս. Ղազարէ, արի՛ եկ արտաքս։ Ելի՛ր ո՛վ հոգի, ինչ կեցեր ես մեռեալ մեղաւորներուն մէջ։ Ելի՛ր, դուրս եկո՛ ո՛վ մեռեալ հոգի. ինչո՞ւ լայսը, կեանքը թողուցի՛ր, որ եմ եւ գացի՛ր խաւարին ու մահուն քովը, որ է մեղքն ու սատանան։ Այս կենդանարար ձայնը արարչիդ առնելով իմ մեռած հոգիս՝ կելլէ կը կենդանանայ, բայց մեղքերուս չար սովորութիւնն ի-

ը կը մնան. վասն զի սատանան ա-
նոնցմով փաթթեր է զիս, չորս դիս
կարեր կապեր է, ուզեմ ալ ելլել՝
չեմ կրնար ելլել։ Դու տէր իմ հրա-
մէ հրեշտակներուն, որ քակեն փարա-
տեն ինծմէ չար սխտերը՝ աս ունա-
կութիւններեր՝ ըսելով. Լուծէք զդա
և թողէք երթալ։

Ա՛խ, տէր իմ, ասչափ աղաչանք և
կրթութիւններ որ ըրի աս մեծ պա-
քին մէջը, կրթութիւն զղջման, խոս-
տովանութեան, աղօթքի, ու բարի
մահուան պատրաստութեան, ատոնք
պարապ չանցնի։ Այլ կաղաչեմ որ քու-
ներաւ մարդասիրութեամբդ ընդու-
նելով, զիս արժանի ընես աս զատկիս
մաքրութեամբ ընդունել զքեզ ուրբ
հաղորդութեան խորհրդով. որպէս զի
մէկ նոր յաւուրկ շնորհք մը առնելով
յարատեւութեան, բոլոր տարին աս
կրթութեանս վրայ մնամ, վարքս շրջ-
կեմ բարեխոսութեամբ մօր քո և կու-
սի, բարի մահուան, և դալստեանդ
առեն ուրբ տեսութեանդ արժանի
ըլլամ. ամէն։

Rezzónico del. A. Toriani inc.

Sapphe mysteriosa b. magnum opus magna diuersitate.

ԱՒԱԳ ՇԱԲԱԹ

Երրորդ առաքելական յիշատակաւ Զաքարիայեանց Քրիստոսի.

ԿԻՐԱԿԻ

Ողկազարդ.

Թագաւոր Թագաւորաց Քրիստոս, զոր հոգևոր Թագաւորութեանդ օրինակ մը տալ ուզելով առաջ Երիքով քաղաքը մտար. հոն Զաքէոս մեղաւորը տեսար ժանտաթզենի ծառին վրայ ելած, մէկ ձայն մը տալով վար իջեցուցիր ան ժանտ ծառէն. զղջումով սիրտը լեցուցիր, ապաշխարեց դարձաւ ամմէն մեղքէն։ Այսօր, տէր իմ, ինծի ալ մէկ ձայն մը տուր, զիս ալ կանչէ ըսելով. Փութա էջ այսի։

բեն ըսելով. Տեսան խրատ պիտոյ է։ Վասն զի քուկդ եմ, դու ես իմ տէրս։

Երբոր քու գալուստդ լսեցին, ան պզտիկ տղոյ կապուած լեզուներն ալ արձակուեցան, քեզ օրհնել ու փառաւորել չէին կշտանար. իմ լեզուս ալ տէր իմ՝ սատանան կապեր է ծուլութեամբ, թող չիտար որ լեզուս արձակեմ, զքեզ օրհնեմ։ Թէ որ այսօր ինծի ալ դաս տէր իմ շնորհքով, իմ լեզուս ալ կը բացուի, աղօթելու սիրտս կը շարժի, միտքս վրաս կը լլայ, կամքս կը բաղձայ կը յօժարի, ջերմեռանդութեամբ սխրժմամբ աղօթքի հետ կը լսեմ աղաղակելով. Ովսաննայ բարձրելոյն, օրհնեալ որ գայդ յանուն տեառն, խաղաղութիւն յերկինս, և փառք 'ի բարձունս։ Եւ թէպէտ սատանան կը ջանայ զիս խափանել աղօթքէն, ինչպէս որ Հրէաներըը ուզեցին խափանել տղոց բերանը, բայց դու ասասէ քու իշխանութեամբդ, ինչպէս ասասեցիր Հրէից՝ որ քարացեալ սիրտս շարժի քեզ օրհնելու, և փառա-

ուրիշը. վասն զի քու գալստեամբդ քարերն ալ կը շարժին յօրհնութիւն։

Եաքը մոտը տաճարը, տեսար՝ որ Աստուծոյ տունը Հրէաներուն առուտուրի տուն ըրեր էին. աղօթքին տեղը՝ աւազակներու տեղ դարձուցեր էին։ Եկու իմ սիրտս ալ տես որ ան քու շինած հոգևոր տաճարը՝ որ քու տունդ պիտոր ըլլար, սատանաները մեղքերով, իմ չար սովորութիւններովս, երեսց տուն վաճառի ըրեր են, առուտուր կընեն, մէկը չկայ որ դուրս հանէ. այսօր երեցիր մէջտեղը, ապաշխարութեան շնորհքով ատոնց աթոռները սեղանները ցրուէ, դուրս հանէ իմ սրտէս ընելով. Տուն իմ տուն աղօթից կոչեսցի։ Ամ սիրտս էս տեղծեցի, որ էս բնակիմ շնորհքով. իմ Հօրս տուն և տաճար պիտոր ըլլայ. աս մեղքերը ինչ բան ունին հոս։

Ամանկ իմ սիրտս որքեղով տէր իմ, եկու այսօր տաճար ըրէ քեզի. նստէ, թագաւորէ իմ վրաս, քեզի ծառայ ըրէ, որ ուրիշը չիշխէ, էս ալ ճնացած իմ կենացս մէջ զքեզ միայն պաշտեմ,

որ էոքի չունչ տալուս առեղը քեզի հետ թագաւորելու արքայութեան մէջ արժանի ըլլամ. ամէն։

ԱՒԱԳ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

Ի յիշատակ աղօթից Քրիստոսի 'ի պարտիզին.

Տէր իմ Յիսուս Քրիստոս, այնչափ բարերարութիւններդ, այնչափ բարի խրատներդ և օրինակներդ տալէն ետև, այսօր ուզեցիր քու սուրբ չարչարանքներովդ զիս փրկել, առաջ պարտիզի մը մէջ մտար աղօթելու, որ պարտիզի մէջ ըրած մեղքը Ադամայ քաւես. ծընրադրութեամբ խոնարհութեամբ աղօթքի նստար, որ ոտքով ձեռքով Ադամայ ըրած մեղքը հպարտութեան ջնջես, որ ոտքով արդելեալ ծառին դընացդ, ձեռքով արդելեալ պտուղը կերար։ Մէկ կողմէն քաշելու չարչարանքներդ միտքդ բերելով, մէկալ կողմէն մարդկային մեղքերը յիշելով, ան սոսկալի տագնապը քաշեցիր, ինչուան արիւն քրտինք քրտնեցար։ Ան օրը 'ի

հարկէ իմ մեղքերս ալ յիշեցիր, ինչ որ մտքով՝ աչքով՝ բերնով և բոլոր մարմնով գործեցի. իմ մեղքերուս դարշութիւնը, մեծութիւնը, մտքիդ աչքին դալով՝ ան տագնապը բերբերս պատճառ եղան։

Յաւագին սրտով աղաղակեցիր. Հայր, անցո՛ յինէն զայս բաժակ։ Բայց Հայրն յաւիտենական ուզեց՝ որ դուն մարմնովդ չարչարանք քաշես, որ ես հոգւովս չնքաշեմ, չնգատապարտուիմ։ դու ալ երբև դուն Հնազանդեցար իմ սիրոյս համար Հօրն երկնաւորի, ըսելով. Ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս դու։ Յանձն առիր՝ որ դու չարչարուիս, միայն թէ ես փրկուիմ։ Ահա տէր իմ, աս քու սէրդ՝ և երկնաւոր Հօրդ սիրոյը տեսնելով այսօր իմ վրաս, կամընչնամ իմ ըրած մեղքերուս վրայ, կը դողամ ըրած ապերախտութեանս վրայ. և կաղաղակեմ առ Հայրն երկնաւոր. Հայր, անցո՛ յինէն զբաժակ բարկութեան քո։ Վասն զի քու Որդիդ միածին իմ տեղս կառնէ զայս բաժակ չարչարանաց. ինծի համար աս տոդ-

նապը կը քաշէ. իմ մեղքերուս համար
աս արեան քրտինքները կը թափէ. ուր-
ջամի որ մեղք ըրեր եմ ազատիկու�թե-
նէս վերը, ամէնն ալ աչքին առջևն է
գրեր. անանկ կաղաչէ քեզի ոնվ Հայր
երկնաւոր։

Ո՛ըչամի որ շատ էր տագնապդ՝ ան-
չամի ալ մոռդիւրուսթեամդ աղօթքի
հետ եղար, մէկէ մը մէկ մխիթարու-
թիւն մը չիգտար, առաքեալներուն
քովը եկար՝ բայց անոնք ալ քունի
մէջ գտար։ Կաղաչեմ տէր իմ Յիսուս,
այն աղօթքիդ արդեանցը համար տաս
ինծի այսօր շնորհք Զգաստութեան և
Արթնութեան։ Մէկ անհոգութիւն մը
կայ վրաս հոգիս հոգալու, Աստուծոյ
պատուիրանքները պահելու. աս ան-
հոգութիւնը ծուլութիւնը մէկդի ձը-
գեմ, արթննամ, իմ մեղքերուս վրայ
ապաշխարեմ։ Ամէնէն առէլի աղօթ-
քիս հոգացող ըլլամ. ամէն բանիս
մէջ առաջ աղօթքի վազեմ. ինչպէս որ
դուն չարչարուիլ սկսելու առենդ՝ ա-
ղօթքի հետ եղար։ Եւ միտքս վրաս
պահելով՝ անանկ մոռդիւրութեամբ

աղօթք ընեմ, ինչպէս որ դուն օրինակ տուիր։ Երբոր նեղութիւն, կամ հիւանդութիւն, և կամ մեմատուք մը ունենամ չիշխոթիմ, աղօթքներս չի ձգեմ։ Որչափ որ քուն բերէ սատանան աղօթքիս առեն՝ փախցընեմ։ Ո՛րչափ որ ծուլութեամբ, ձանձրութեան, մաղձոտութեան սատանան իմ հոգևոր գործքերս խափանել ուզէ, զիս ջերմեռանդութենէ պաղեցընէ, անոնք ամէնը փախչին, հաշտուին քու աղօթելովդ։ Տէր իմ Յիսուս, որ ինծի համար աղօթեցիր, ասչափ աչուան քրտինք թափեցիր, որ զիս Սադամայ հետ նորէն նորոգելով՝ երկնաւոր դրախտը մուցընես փառաւորել զամենասուրբ Երրորդութիւնդ յաւիտեան։ Ամէն։

ԱՒԱԳ ԵՐԵՒՇԱԲԱԹԻ

Ի յիշատակ չարչարանացն Քրիստոսի.

Ո՛վ ծայրագոյն մարդասիրութիւն աստուածային, որ իմ մեղքերս վրադառնելով՝ մեղաւորի պէս մատնուեցար անօրէն Յուդայի ձեռքովը՝ որ քու աշկերատդ էր, սիրատդ կսիծալէն՝ իր մեղքը իր երեսին զարնելով ըսելը. Յուդա, համբուրելով մատնես զորդի մարդոյ: Ե՛ս եմ ան Յուդան ոչ թէ իմ, ես եմ՝ որ մէկտեղ սուրբ հաղորդութեան սեղանը նստելով, ճաշակելով, սրբարարդծութեամբս զիս սատանայն և իմ մեղքերուս ձեռքը կամաւորապէս մատնեցի:

Ա.ապակի մը պէս բռնուելով, սուրբերով թուրերով քաշկռտուելով դու ճշմարիտ քահանայապետդ՝ սուտ քահանայապետին առջին կեցար, արդար դատաւորդ՝ սուտ դատաւորին դատապարտուեցար, իմ անիրաւութիւնս

ըրբուելիւնս քաւելու համար սուրբ երեսովդ ապաւակուեցար. սիրոդ չի-դիմանալով ապտակ զարնողին ողորմագին ձայնիւ ըսիր. Ընդէ՞ր հարկանես: Ա՛ս ողորմաւկ ձայնդ ինծի է. վասն զի ես եմ, որ սատանկ լիրբ ըլլալով՝ քու սուրբ պատուիրանքներդ ու սուրբ խորհուրդներդ արհամարհեցի. ոտքի տակ առնելով՝ իբր թէ քու երեսիդ զարկի:

Վա՜յ ինձ մեղաւորիս, իմ մարմնոյս չարաչար մեղքերը սրբելու համար՝ բոլոր մարմնովդ չարաչար ձաղկելով խոցուեցար, որով կուսածին մարմնիդ արիւնլուայ եղաւ: Գլխով մոքով՝ աչքով ըրած մեղքերուս համար՝ փշով պատկուեցար, արիւնները աչուընեռուդ վրայ կը վազէին, մէկ սրբող մը չիկար: Իմ զԱստուած անարգելուս համար՝ նախատական խօսքերով անարգուեցար: Ճշմարիտ Թագաւորդ Թագաւորաց՝ սուտ Թագաւորի պէս ծաղր եղար, եղէգով զարնուեցար:

Ո՛վ հովիւ քաջ, որ աս ամէն չարչարանքները յանձն առիր զիս մոլո-

Երբոր՝ իմ մեղաւոր հոգիս ալ քու ձայնդ առնէ, ձայն արարչիդ ըլլալով շուտ մը վար կիջնէ ան ժամու ու դարշելի ծառէն որ իր մեղքերով քարձրացած է, կը խոնարհի իր բարձրամիտ հպարտութենէն ու խստասրտութենէն, սիրտս կը փղձկի, շուտ մը զղջումի կուգայ ըսելով. Տէր, ինչ մեղք որ ըրի, հոգիս շնորհքներէն զրկեցի, չարեքկին զղջամ, չարեքպատիկ վնարեմ լալով, խաչ քաշելով։ Դուն ալ գառնաս ըսես ինծի թէ՝ Այսօր 'ի սան քուամ արժան է ինձ ազատիլ։ Այսօր քեզի կուգամ, քեզ մեղքերէ կը արբեմ, քու հոգիդ կը փրկեմ։ Ես ալ ան ատենը բոլորովին կը փոխուիմ, արտանց կը գառնամ, և արժանի կըլլամ ան խօսքը ըսելու. Այսօր եղև փրկութիւն տանս այսմիկ, զի և սա որդի Աբրահամու էր։

Ո՛վ տէր իմ Յիսուս, ինծի ալ արժանի ըրէ ըսելու, սա հոգիս ալ փրկութեան որդի է, սա ալ նախասահմանեալ է. մեղքերուն թողութիւն տուի, արքայութեան որդի ըրի, ան

ապրայութեան որ լեզուով չի պատ-
մուիր, ուր որ ամենասուրբ Երրոր-
դութիւնդ յաւիտեան փառաւորելու
արժանի ըլլամ. ամէն։

Այլ աղօթք.

Այսօրուան ըրած շնորհքներդ՝ տէր
իմ, ինծի ալ պարգևէ դու երբոր մե-
ռելոցար Զիմենեաց լեռը, Երուսա-
ղէմ մնալէն առաջ, կապուած էշը ար-
ձըկէ՝ քու քովդ բերել հրամայեցիր,
անով մտար Երուսաղէմ. իմ հոգիս ալ
սատանան կապէր է մեղքերով, թող
չիտար քովդ գալու, խոստովանու-
թեամբ զղջմամբ մեղքերս զուրցելու,
երեն ուզած բեռները՝ որ է մեղքը՝ վը-
րաս կը բեռցնէ։ Դու երբև արարիչ՝
երբև տէր թագաւոր՝ թող մի տար զիս
սատանի օտարներու ձեռք, այլ ինչպէս
որ խրկեցիր առաքեալները հրամայե-
լով. Լուծէք, ածէք ինձ. ինծի ալ
խրկէ տէր իմ այսօր քու երկնային շը-
նորհքդ և հրեշտակներդ, որ սատա-
նային կապէն զիս արձըկեն, քեզի բե-

ռեալ ոչնաչս փրկելու համար։ Ա՛ս սոսկալի քաշածներուդ արդիւնքը մի պարապ հաներ տէր իմ Յիսուս։ Իմ ըրած անօրէնութիւններս՝ ինչ որ պըզտիկուցմէ եան գործեցի մարմնով հոգւով, քու սուրբ չարչարանքներովդ սրբէ։ Ինչ որ անարժան մտածմունքով կամ հայեցուածովք Ա.ստուծոյ դէմ բան ըրի, զԱ.ստուած անարգեցի, դուն քաւէ։

Եւ քու քաշածներուդ արդիւնքը իմ վրաս ապաւորէ, առաջ տո՛ւր ինծի շնորհք մաքրութեան, որ ասկէց եաքը սուրբ մաքուր պահեմ իմ ըզգայարանքներս։ Ա.պտակողին հեղութեամբ պատասխանելուդ համար՝ տուր ինծի շնորհք հեզութեան. բոլոր մարմնով ձաղկուելուդ համար՝ տուր ինծի շնորհք ճգնութեան, սուրբ պահէ մարմնս 'ի մէջ փորձութեան։ Գլուխդ փշով պսակուելուն համար՝ տուր ինծի շնորհք բարի խորհրդեան, որ միշտ բարին մտածեմ։ Նախատանքներ ընելուդ համար՝ տուր շնորհք լեզուի մաքրութեան, որ սուրբ

պահեմ լեզուս, հոգիս և մարմինս։ Որպէս զի սրբութեամբ մեռնելով, արքայութեանդ մէջ զքեզ տեսնելով՝ հոգեքեզի շնորհակալութիւնս ընեմ ասչափ երկայնմտութեանդ ու մարդասիրութեանդ վրայ զքեզ օրհնելով յաւիտեան. ամէն։

ԱՒԱԳ ՁՈՐԵՓՇԱԲԱԹԻ

Ի յիշատակ բանին. Ահա այրդ ցանզ.

Հայր յաւիտենական, տէս ահա պատիկեր միածին Որդւոյդ. իմ տեղս ինքը կը քաշէ պատիժ անարգանաց՝ որչափ որ ըրեր եմ ոչխարաց ինչուան հիմա քու ասուածութեանդ դէմ իմ մեղքերովս։ Այս պատիկեր քու միածին Որդւոյդ քեզի կընծայեմ Հայր սուրբ, տէս, և քու բարկութիւնդ իմ վրայէս վերցու։ Ինծի համար փշով պսակուեր է ան Որդիդ՝ զոր դու անչափ կը սիրէիր։ Ինծի համար իր սուրբ արիւնը երեսնիվար կը վազէ. իմ անարգական մեղքերուս համար՝ ապտակ անարգա-

նաց սուրբ երեսին զարնուած կեցեր է։ Իմ արբապղծութիւններուս համար թքով լեցուած, սուտ թագաւորի տեղ ծաղր եղած, գաւազանի տեղ եղէգ ձեռքը առած, թագի տեղ սուրբ գլուխը փուշեր խօթուած, ծիրանւոյ տեղ՝ կուսածին մարմինը մերկացած, քղամիդ նախատանաց հագած։

Ա՛ս կերպարանքով առջեւդ կեցած կաղաղակէ. Հայր սուրբ, թող տուր, ներէ աս մեղաւորիս անները մեղքերը. ես ահա կը քաշեմ անոր տեղը, ես թող մեռնիմ. իսկ այս անօրէն բարբարայն՝ թող որ խաչըսի։ Հիմա ես ալ կաղաղակեմ, աս ողորմելի պատկերը՝ քու սիրական Որդւոյդ պատկերն է, աս ձայնը քու միածնիդ ձայնն է, օտարի մը չէ։ Ե՛ս մեղաւորս՝ ես բարբարայս՝ այսօր քեզի կը ցուցընեմ Հայր գթութեանց, բարկութիւնդ դադրեցո՛ւ իմ վրայէս, արդարութիւնդ մոռցիր, գթութիւնդ ցրցո՛ւ, զիս խաչըսէ մեղացս պատիժներէն։

Ողջ տեղ չէ մնացեր իր մարմնոյն վրայ, ուժ չէ մնացեր կեանքին վրայ.

տառը խեղճութեանը վրայ մարդու սիրտը չիդիմանար, ինչպէս դիմանայ քու հայրական սիրտդ։ Բոլորովին ջնջէ այսօր իմ մեղքերս, վասն զի բոլորովին զինքը պատարագեց չարչարանքներով քու անչափ սիրական Որդիդ ինծի համար. նայէ մէյմը բարձրէն երկնքէն Հայր տուրը առ պատկերիս վրայ որ այսօր քեզի կը ցուցնեմ, մի նայիր իմ անօրէնութեանս վրայ։

Ես առ պատկերին տակը կապաւինիմ կը պահուիմ որչափ անդամ որ քու բարկութիւնդ շարժի իմ վրաս, թէ հիմա՝ և թէ իմ մեռնելուս առենը։ Երբոր դատաստանին օրը ինծմէ համար ուզես իմ ըրած սրբապղծութեանս՝ յանդգնութեանս՝ անարգութեանս վրայ, ես առ պատկերին ապաւինած ան օրը կաղաղակեմ. տէր, յիշէ, նայէ առ միածնիդ պատկերը, ու իմ ամէն մեղքերուս թողութիւն տուր։

ԱՒԱԳ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

Ի յիշատակ Ոսնիոռայի, և ամենասուրբ խորհրդոյ Հաղորդութեան.

Ինչ խոնարհութեան օրինակ էր տէր իմ, որ այսօր մեզի ցըցուցիր. դու ինքդ մաքրութիւն ըլլալով յանձն առիր խոնարհիլ լուանալ մարդու ոտքը, որ դրսի ապաը լուանալով հոգւոյն ներսի ապան ալ լուանաս, որ մարդկային հպարտութիւնը վերցընես, խոնարհութիւն սովրեցընես։ Իմ հոգիս է ապտոտ կերպ կերպ ապտոտութեամբ, եօթն մահացու մեղքերով. այսօր տէր իմ, իմ հոգիս ալ լուա՛, որպէս։ Իմ սիրտս է լեցուած հպարտութեամբ, ամբարտաւանութեամբ, չեմ կրնար սիրտս ինձ լեցընել, ինծի անարգանք կը սեպեմ խոնարհիլ իմ եղբօրս։ Ե՛ս եմ մեղաւոր, իմ եղբարս յանցաւոր կը սեպեմ, կը հեռանամ իրմէ։ Ե՛ս եմ անարգանաց արժանի, իմ եղբարս կանարգեմ, կը նախա-

ուեմ, կը դատեմ, կը բամբասեմ։ Ո՛վ անհուն խոնարհութիւն Աստուածորդւոյդ. ինչ պատասխան պիտոր տամ գատաստանին օրը, երբոր քու այս օրուան ըրած խոնարհութիւնդ ցուցնես ինծի, և իմ հպարտութիւնս երեսիս զարնես, որ չէ թէ եղբօրս ոտքը չկրուացի, այլև ոչ մէկ գութ մը ցուցի. քեզմէ օրինակ չառի՝ սիրտս քար դարձուցի եղբօրս վրայ, զինքը քամահրեցի։ Դո՛ւ տէր, այսօրուան ըրած խոնարհութիւնդ իմ սրտիս մէջը տպաւորէ, որ փոխուիմ, քեզ նմանող ըլլամ։

Շատ են շնորհքդ որ ըրեր էիր մարդուս. բայց ինչ շնորհք՝ ինչ հրաշագործութիւն, ինչ պարգև էր, որ այսօր ըրիր տէր իմ և Աստուած իմ։ Աքանչելի օրինակ խոնարհութեան տալէն ետև ինծի, ուրիշ ա՛լ աւելի աքանչելիք մը աւելցուցիր, որ ամէն սուրբք և ամէն հրեշտակք կը զարմանան։ Դու որ սրբութիւնդ ես սրբոց, ուզեցիր իմ մեղքով լցուած սրտիս մէջը նստիլ։ Դու որ ահաւորդ

ես սերոբէից, ինծի հարկինք ուրա-
խութեան ըրիր, մէկաեղ սեղանակից
եղար, ան սեղանին վրայ զիս սատանի
սիրելին՝ դուն քեզ մոռցար. ինծմէ
շնչոժենուելու համար՝ իմ սրտիս կե-
րակուր եղար. ուզեցիր իմ մարմինս
քու մարմնոյդ հետ՝ իմ արիւնս քու
արեանդ հետ խառնել։

Ո՛վ խնամատուութիւն անհուն, ան ա-
ստուածանալու կարծած պատուին՝ զոր
Ադամայ առնը երկրաւոր դրախտին
մէջը կը փափաքէի Ճաշակել՝ բայց ար-
գիլած ըլլալով՝ ինծի մահ կը բերէր,
այսօր փոխելով զան, աս սեղանը երկ-
նայնն դրախտ մը ըրիր, և աքանչելի
պտուղ ինծի Ճաշակել տուիր որ ա-
ստուածութեանդ հետ միաւորիմ։ Փառք
անքաւ խնամատուութեան քո տէր. որուն
վրայ որ կը զարմանան հրեշտակք, ուս-
կից որ կը դողան զուարթունք, ես ա-
նիկայ բերնովս կառնեմ, կը Ճաշակեմ,
սիրտս կը գնեմ, մէկ կըլլամ։

Ո՛վ սրբութիւն սրբոց, դուն որ զիս
արժանի ըրիր ատանկ մեծ պարգևի՝
արքէ հոգիս, մարքրէ մարմինս, հեռա-

ցու յուդայեան ատամանները, վը-
ուրնուէ մեղքերը, եկու թագաւորէ
իմ սրտիս մէջը։ Ամէն եաքը մէկը
չնշխէ իմ վրան՝ բայց դու մինակ տէր
իմ և Աստուած իմ. մէկտեղ նստինք
շնորհօք, մէկտեղ սիրենք աստուա-
ծային սիրով։ Ամէն եաքը թող մի
տար՝ որ մեղք մը գայ սրտիս մէջը.
ըուտաւորէ հաւատքս, զօրացո յոյս,
վառէ սէրս, որ միայն զքեզ սիրեմ,
զքեզ փառաւորեմ, քեզի նմանիմ հոս,
որ անդին ալ դէմ յանդիման տեսնե-
լով՝ մէկտեղ քեզի հետ ինամ յաւի-
տեան. ամէն։

ԱՒԱԳ ՈՒՐԲԱԹ

*Ի յիշատակ բարձրանալոյն Քրիս-
տոսի 'ի վերայ խաչին.*

Ո՛վ ահեղ արդարութիւն աստուա-
ծային, որ իմ մեղքերուս կոչգես վը-
ուժխնդրութիւն ընել, երաւամբք քեզ
կը ցուցնեմ ասպատակերը միածնի Որ-
դւոյդ Աստուծոյ. տե՛ս թէ ո՞վ է որ
կը բարձրանայ խաչին վրայ։ Թէ որ ես

չեմ Ճանչնար անոր մեծութիւնը, ա-
նոր անմեղութիւնը, անոր անձը՝ թէ
ով է, սակայն դու տէր կը Ճանչնաս
ու կը գթաս։ Ահա ինծի համար է՝ որ
գամերը Հեռուբնեբուն մէջ խօթել
տուաս, ինծի համար աւազակներու
մէջ՝ աւազակի մը տեղ սեպուելով
խեղճ կերպարանքով փայտին վրայ
մնկուեցաս։

Ամ բանիս քարերը չեն դիմանար՝
կը պատրուին, արևը երեսը կը գո-
ցէ, լուսինը կը խաւարի, քու Հայրա-
կան սիրտդ ինչպէս պիտոր դիմանայ
ով Հայր երկնաւոր։ Ինքն Յիսուս բաղ-
կատարած ինծի համար խաչին վրայ
կեցած խղճալի ձայնիւ կաղաչէ. Հայր,
թող սմա, զի ոչ գիտէ զինչ գործէ։
Հայր, ես կը քաշեմ, կը զոհուիմ, միայն
թէ աս մեղաւոր հոգին չենքաշէ, ազա-
ատ։ Երբոր Դաւիթ մարգարէին ձայնը
լսեցիր թէ՝ զիս զարկ, ժողովուրդը մի
զարներ, երբոր Դաւթին զոհը անբան
անասնոց տեսար, սիրտդ ինչաւ, ժողո-
վրդեան հարուածը դադրեցուցիր.
հիմա դու, Հայր գթութեանց, աս ո-

ղորմուկ աղէկաուր ձայնը քու սիրելի միածին Որդւոյդ լսելով ինչպէս պիտար չիշարժիս աս կենդանի զոհը տեսնելով, ինչպէս պիտար չիթողուս իմ մեղքերս, ինչպէս չինչնայ քու բարկութիւնդ իմ վրայ՝ որ իմ անները մեղքերովս շարժեցի։

Բայց ես աս խաչին տակը պլլուած կը կենամ կը փաթթուիմ՝ ինչպէս ըրաւ Մարիամ Մագդալենացին, ուր որ միածնիդ արիւնը իր խոցերէն ծուլի պէս վրաս կը վազէ. աս անհուն ովկիանոսին արեան մէջ ես զիս կը ձգեմ կը լուացուիմ։ Քու սասսիկ արդարութիւնդ ալ տեսնելով զիս աս սուրբ արեանս մէջ թաթխուած, կատարեալ թողութիւն պիտար տայ իմ սոսկալի մեղքերուս. վասն զի արիւնն Յիսուսի է՝ որ լուացի իմ աղտոտութիւնս, նեղկեց իմ հոգիս ու մարմինս. վրաս չերևնար ըրած մեղքերուս պղծութիւնը, այլ դոյն արեան քու Որդւոյդ կերևնայ, որ զամիէնն ալ 'ի գութ կը շարժէ։

Այսօր է օր թողութեան ով Աս-

տուած իմ, ինչ որ ինչուան հիմա հինգ զգայարանօքս գործեցի, ինչ որ տուն պատուիրանացդ դէմ եղծն մոհացու մեղքերով ըրի, և քու բարկութիւնդ վրաս շարժեցի։ Այսօր է օր հաշտութեան ու անհուն գթութիւն. ներեա՛, քաւեա՛ և հաշտեա՛ ու մէր աղաչիչ և փրկիչ, որ եկար զիս փրկելու. դու անսուտ բերնովդ ըսիր. Եւ ես յորժամ բարձրացայց յերկրէ, զամենեսին ձգեցից առ իս։ Այսօր ահա կը բարձրանաս խաչին վրայ, և բարձրանալովդ՝ բիւրաւոր կորսուած մեղաւորները քեզի կը ձգես, կը փրկես. ես ալ մէկն եմ անոնցմէ, զիս ալ քեզի ձգէ, քեզի քաշէ փրկելովդ, վասն զի ես ալ քու արեամբդ գնուած ծառադ եմ։ Տուր այսօր շնորհք՝ որ ասկէց ետքը միշտ քեզի ծառայեմ, և արքայութեան մէջ զքեզ փառաւորեմ 'ի յաւիտեան. ամէն։

Թէ որ ուզես՝ կրնաս զուրցել այսօր նաև ան աղօթքները Քրիստոսի խօսքերուն, որ խաչին վրայէն ըսաւ։ Տես եաքերը։

ԱՒԱԳ ՇԱԲԱԹ

Ի յիշատակ իջման Ի խաչեն, և թաղման.

Ինչ օր եղաւ ան օրն՝ յորում Փրկիչս բանն Աստուած մեռաւ, աշխարհիս ստեղծողը՝ աշխարհս աւրողն պէս սպանուեցաւ. մէկ հատիկ անմեղ միածին որդին Մարիամու՝ թաղելու կը տանին իր ծաղիկ հասակին մէջ մեռած։ Ահա, տուրբ Աստուածածին, աչքիդ առջին մեռած զաւակիդ ձեռուընները գամերէն հանելով՝ խաչէն ինկեցուցին, գիրկդ տուին։ Դու ալ ողջագուրելով կողբայիր կըսէիր. վա՜խ ո՛վ որդեակ, արդար, անարատ, ո՞վ զքեզ ատանկ ըրաւ. վա՜խ իմ միածին որդի, ինչ մեղքիդ համար էր՝ որ զքեզ ատանկ անարգական մահուամբ մեռուցին. աւաղակ մը չէիր տեսած՝ աւազակներու պէս քեզ ողջ ողջ սպաննեցին, հիմա ալ զքեզ թաղելու կը տանին։

Ես ողբալու ձայնդ լսելով ոչ մայր ցաւագին, իմ քարացեալ սիրտս ալէ-գիմանար, կը յիշէ իր ըրած անօրէ-նութիւնը. ես ինծմէն կուգամ կը խոս-տովանիմ մեղքերս։ Թէ որ կը փընտ-ռեմ՝ ոչ առանկ ըրաւ, ես զիս ահա կը ցուցընեմ. ես կը զուրցեմ իմ ըրած անգթութիւնս։ Իմ դատողութիւն-ներս՝ իմ գէշ մտածմունքներս էին՝ որ զՅիսուս փշով պատկեցին. իմ մտրմնա-մոլութիւններս էին՝ որ զՅիսուս ծեծել տուին, իմ գէշ խօսքերս՝ բամբասանք-ներս էին՝ որ ծարուած Յիսուսին լեղի խմցուցին. իմ յանդգնութիւնս՝ կա-մաւորապէս մեղանչելներս էին՝ որ մէկ եղան, Յիսուսին ձեռքերն ալ ո-տքերն ալ խաչին վրայ գամել տը-ւին, հիմա ալ մեռուցին, թաղելու կը տանին։

Բայց ես ըրած անօրէնութիւնն-երուս վրայ ես հիմա ցաւելով կը զղջամ. գիտեմ կը ճանչնամ որ մեծ մեղքեր ը-րի զՅիսուս տանջելովս, և իրեն տխրութիւն թափելովս. բայց նոյն տրիւնն է՝ որ իմ սարսափելի մեղքերուս համար թո-

զութիւն կը խնդրէ. նոյն Յիսուսին մեռնիլը ինծի կեանք կուտայ, կապազակէ. Ես աս մեղաւորիս տեղը կը մեռնիմ կըսէ. որ աս մեղաւորը յաւիտենական մահուանէ փրկուի, ինչպէս փրկեցի աւազակը։

Օրհնեա՛լ ըլլայ անհուն գթութիւնն Յիսուսի՝ որ իմ չիչարչարուելուս համար՝ ինքը չարչարուեցաւ։ Գովեա՛լ ըլլայ անքաւ մարդասիրութիւնն Յիսուսի, որ իմ չիմեռնելուս համար՝ ինքը մեռաւ։ Փառաւորեա՛լ ըլլայ դըթած սիրան Յիսուսի, որ իմ թշնամութիւնս չիյիշելով՝ իմ քովս կուգայ, իմ սրտիս մէջը շնորհքով կը բնակի, որ արքայութեան արժանի ըլլամ. ամէն։

Ի ՏՕՆԻ ԶԱՏԿԻՆ

Յառաջին առոր.

Տէր իմ Յիսուս, լուսով սուրբ յարութեանդ լուսաւորէ զիս այսօր. որ ինչ խորհուրդներ որ ունի քու սուրբ յարութիւնդ, և ինչ գործքերով ինչ քարոզ ու օրինակ կուտաս, ան խորհուրդները մտածելով, ես ալ քեզի հեռևիմ, սուրբ յարութեանդ պտուղը շահիմ։

Դու տէր իմ, սուրբ գերեզմանին մէջէն Արիութեան քարոզ կուտաս օրինակովդ, որ ինչ ծանր քար դրած էր գերեզմանը գոցելու համար, արդեօք քու յարութեանդ, մեկդի նետուցեր, բացեր։ Ան արիութեան շնորհքը տուր ինծի այսօր սուրբ յարութեամդդ, որ ես ալ իմ ծուլութեանս ծանր քարերը՝ որ սատանան վրաս բեռցուցեր է,

գոցեր է զիս հոտած գերեզմանի մէջ մեղքերուս թաղեր է, ես ալ արիա-նամ, մէկդի ձգեմ ան ծուլութիւնը։

Եւ ինչպէս որ թշնամիները զքեզ մեռուցին, բայց դու անանկ չեկեցար, այլ եղար յարեար, կենդանացար, իմ հոգիս ալ սատանան մեղքերուս ապան-նեց, թաղեց, եկեր կեցեր է թող չի-տար որ ելլեմ։ Տուր ինծի սուրբ յա-րութեան ան շնորհքը որ զղջմամբ և ապաշխարութեամբ մեղքերէս ելլեմ, հոգիս կենդանացընեմ։

Գերեզմանին բերանը կնքով գոց-ցին թշնամիները, որ չկրնան առաքեալ-ները չեբանան, գերեզմանէն մարմինդ չեհանեն. իմ թշնամիս ալ սատանան՝ ամուր կնքով կնքեր կապեր է բերա-նը, թող չիտար՝ որ առաքելներուն քահանաներուն մօտիկնամ, բերանս բանամ, մեղքերս խոստովանիմ, մե-ռեալ հոգիս մեղքերուս գերեզմանէն դուրս հանեմ։ Գուն տէր իմ, տուր քու զօրութիւնդ որ ես ալ ինծմէն ան սա-տանայեն կնիքը՝ ամօթը մէկդի ձգեմ, ահեղ յարութեան ձայնիւ՝ հրեշտա-

կային յարուցիչ բերանովը մեղքերս խոստովանիմ, թողութիւն գտնեմ։

Թշնամիները գերեզմանին չորս դին զինուորներ կեցուցին որ պահեն, գրեն մէկը չմօտենայ, գերեզմանէն դուրս չհանէ. դու անկարօտ գրչի օգնութեան՝ մէկէն հալածեցիր զանոնք։ Տուր ինծի ալ շնորհք՝ որ իմ թշնամիներս հալածեմ, իմ փորձութիւններս՝ որ չար զինուորներուն պէս չորս դիս փաթթեր են, որ են սատանայ, աշխարհ և մարմին, զանոնք հալածելով՝ մեղքերուս գերեզմանէն դուրս ելլեմ։

Նոր մարմին մը առիր երանելի, անչարչարելի, հոգևոր ձրիւք զարդարեալ. քառասուն օր աշխարհիս վրայ էիր, բայց իբր թէ չէիր, անեւոյթ կերպով կը կենայիր, կը քալէիր։ Տուր ինծի՝ որ ազէկ խոստովանութիւն ընելէն ետև, փորձութիւններու յաղթելէն ետև՝ ասօրուընէ իմ կիրքերս մեռցընելով՝ նոր կեանք մը սկսիմ, բոլորովին հոգևոր ըլլամ, սիրաս միտքս աստուածային բաներուն տամ. աս-

տուածային բաներըը ինձի անուշնան, աշխարհս դառնանայ. երբոր խաչ քաշեմ, չարչարուիմ, իբր թէ չիմանամ։ Աշխարհիս մէջը կը քալեմ. բայց քեզի նման իբր թէ աշխարհիս մէջը չըլլամ. մեռած ըլլան իմ չար կիրքերս, իմ ըզգայարանքներս. իբր թէ աչք, ականջ, բերան չունենամ. մեռած ըլլայ ինձի հին մարդը մարմնաւոր, որ դու նոր մարդդ հոգևոր, տէր Յիսուս, կենդանի ըլլաս իմ սրտիս մէջը։

Ասոնք են, տէր իմ, որ այսօր սուրբ գերեզմանէդ օրինակ կուտաս. տուր ինձի յարութեանդ շնորհքը՝ որ ես ալ ասոնք մոռնալով առջի յարութիւնը առնեմ, որ է մեռած հոգիս մեղքերէ վեր հանել, եռքը երկրորդ յարութեանդ արժանանամ. ապաշխարող մարմին՝ ապաշխարող հոգւոյս հետ միանալով՝ անանկով գերեզմանէն ելլեմ, որ առաքելոց և իւղաբեր կանանց պէս քու անձառ տեսոյդ արժանի ըլլամ յաւիտեան. ամէն։

Յերկրորդ առուր.

Ամենակալ և հզօր ես , այսօր ցուցիր քու զօրութիւնդ. Հրէաներուն բրածը ամօթ ըրիր , զինուորները վռնտեցիր , սատանային խշխանութիւնը կապեցիր. քեզի հետ գերեզմանէն մեռեալները յարուցիր , դժոխքը աւրեցիր. բիւրաւոր հոգիք նահապետաց՝ որ քեզ փրկողիդ կը սպասէին կը ցանկային՝ խաղաղացուցիր , արքայութեան արժանի ըրիր . խաչին նշանաւ սատանային թշնամւոյն վրայ փառաւորապէս յաղթանակեցիր , ինծի ալ յոյս տուիր երջանիկ յարութեան։

Աղաչեմ, ով ես զօրութեանց , այսօր մեծ ուրախութեան օրդ է , պարգև բաշխելու օր է , պարգևէ ես իմ ամ շնորհքս , որ ես ալ քեզի նման խաչակից ըլլամ։ իմ մեղաւոր մարմինս , իմ չար կրքերս՝ մոլութիւններս խաչին վրայ գամելով մեռցնեմ՝ որ քեզ նմանելով արժանի ըլլամ սուրբ յարութեանդ։ Երբոր վիրն դաբրիէլեան գո-

չէ՝ Արիք մեռեալք, երբոր ամէն մեռեալք ոչչափ մարդ որ եկեր է առաջխարհս՝ պիտոր կենդանանան, առջիդ դան, ոմանք 'ի յարութիւն կենաց մոնելով, և ոմանք 'ի յարութիւն դատապարտանաց, ան ահեղ օրը իմ հոգիս ապաշխարութեամբ սրբուած ըլլալով, արժանի ըլլամ ոչ թէ իմ յարութեան կենաց. քու օրհնութեան ձայնդ լսելով, որով պիտոր հրաւիրես սրբոց արդարոց դասքը. ան սուրբերուն հետ մէկտեղ դասակից ըլլամ արքայութեանդ մէջ, քեզի հետ մէկտեղ թագաւորելով, հոգւով և մարմնով քեզ փառաւորելով յաւիտեան. ամէն։

Ցերեկոյի աղոթք.

Հոգիս մեղքերով մեռած՝ քու սուրբ Թենէդ զրկուած՝ կարօտի կը փափագի ոչ թէ Յիսուս, սուրբ առաքելոց և իւզաբեր կանանց պէս քու քովդ դալ, քու ոտոյդ արժանանալ, զքեզ դանալ, քեզի հետ խօսակից ըլլալ, բոյց սատանան իմ սիրտս կը կապէ ը-

տեղով. Ո՛վ թաւալեցուցէ մեզ գլէ՛ն՝ի գրանց գերեզմանին։ Ահա աս տարակոյսները՝ աս ծուլութիւններն են՝ որ թող չեն տար ինձի քեզի գալու. տո՛ւր ինձի անոնց շնորհքը՝ որ յԱստուած տպաւիրելով՝ քեզի գալու ճամբան առաջ երթամ, ետ չդառնամ։ Հրեշտակաց օգնականութեան արժանի ըլլէ, տէր իմ, որ անոնք ան ծուլութեան ծանր քարերը մէկդի նետեն։

Աստուանց կանուխ խուսնկ աղօթից կուզեմ պատրաստել անոնց դէս, սատանան աղօթքը ինձի ծանր քար մը կերևցընէ. բերանս շարժել աղօթելու համար՝ դիտեմ թէ հիւանդութիւն կը բերէ. աղօթք ալ ընեմ՝ նէ՝ քեզ չեմ գտներ, այլ պարապ դերեզման կը գտնեմ, համ չեմ առներ, ջերմեռանդութիւն չեմ ունենար։ Տո՛ւր ինձի անոնց շնորհքը. ինչպէս որ քեզ չդտան՝ նէ՝ լալ ողբալ սկսան, ան լացով գտան զքեզ, ես ալ զղջալով լամ իմ մեղքերս՝ որ ինձի կորսնցընել տուին զՅիսուս. և ան ողբալուս գտնեմ անոնց շնորհքը ջերմեռանդութեան։

Երբոր լալով ալ չկրցան զքեզ տէրդ, գերեզմանէն չկրցան, կը մտնէին կելլէին, անով հրեշտակաց հետ խօսակից ըլլալու արժանի էզան, հրեշտակներէն աւելիս միխիթարութեան առին։ Ես ալ որ լալով փընտռելով զքեզ չեմ կրնար իմ սրտիս մէջը գտնել. վասն զի մեղքերովս զՅիսուս մեռուցի, սիրոս հոտած գերեզմանն դարձուցի՝ ուր չիկենար Յիսուս, անանկ ատենն ալ յոյս չիկտրեմ, արցունք ապաշխարութեան թափեմ, հրեշտակաց հետ խօսակից ըլլալով գոչեմ. Արի տէր, օգնեա մեզ վասն անուան քո, մի մերժեր զմեզ խապառ վասն անուան քո, ցոյց ինձ զդէմս քո։

Զկրկնացաւ սիրոդ Մարիամու արցունքին, եկար երևցար՝ բայց փոխուած լաթերով ըլլալով չիճանչցաւ, ինչուան որ դուն իրեն անունը տալով զինքդ ճանչցուցիր։ Անանկ ալ տէր իմ, թէպէտ կերևնաս ինծի 'ի խորհուրդ հաղորդութեան. բայց փոխուած կերպարանքով ըլլալով՝ հացին տեսակաւ երևնալով իմ տկար հա-

ւառքս զքեզ չիկրնար ճանչնալ. ան առնելը դու լսել տուր ինծի քու ձայնդ, կանչէ զիս շնորհքով, քաց հաւառքիս աչքը որ զքեզ տեսնէ։

Զինծողուցիր Մարիամու մօտիկնալ, բայց խօսք տուիր, ու աւետիս միխիթարութեան խրկեցիր առաքեալներուն։ Սատանկ ալ տուր ինծի աւետիս միխիթարութեան, որ հոգւոյս պատմէմ. տառապեալ հոգիս լսելով շնորհքովդ ուրախանայ, և ուրախութեամբ ապասէ օր մը զքեզ տեսնելու յարութեան առնելը զքեզ իր տէրը անձառ ուրախութեամբ միշտ և յաւիտեան։

Ի ՏՕՆԻ ԱԻԵՏՄԱՆ

Բանդ Աստուած Յիսուս Քրիստոս, միածին որդի Աստուծոյ. որ այսօր երկինքը կը թողուս, երկիրս կիջնես, յերկնային փառաց յերկրաւոր անարգութիւն կը խոնարհիս, աստուածութեանդ կերպարանքին վրայ հողեղէն կերպարանք կառնես։ Փառք, տէր իմ, փառք անքաւ խոնարհութեան քո. հրեշտակք ասասին, սերովբէք զարմանան։ Ասեն մը աստուածութեանդ տեղ կերպարանօք զիս կանչեցիր, ես չլսեցի, մանաւանդ թէ պատուիրանքներդ կոտրեցի անարգեցի, այսօր իմ սիրոյս համար քու փառքդ քու աստուածութիւնդ կը մոռնաս, մարդ կըլլաս որ զիս կանչես շահիս. զիս աշակերտես, ու քու անդին արիւնդ թափելով զիս ազատես։ Ինչ շնորհակալութիւն ընեմ, տէր իմ, օրհնեալ են տէր փառք քո, մեծ են ողորմութիւնք քո, անհուն է խմաստութիւն քո։ Յիշէ՛ տէր իմ այսօրուան ըրած քու մար-

դասիրութիւնդ. թող մի տար որ իմ չարութիւնս պարապ հանել տայ աս քու սէրդ. մի թողուր զիս ինձի. դու զիս կանչէ՛ շնորհքովդ, դարձո՛ւ իմ մեղքերէս. հանէ՛ իմ սրտէս հպարտութիւնը՝ որ շատ մեղքերու պատճառ կըլլայ. սիրաս կակըղցո՛ւ քու ձայնդ լսելու, քու խոնարհութեանդ հետևելու։

Ա՛յլ աղօթք.

Ո՛վ տիրամայրը կոյս Աստուածածին, այսօր է օր քու աստուածամայրութեան շնորհաց, որուն մէկը՝ ի մարդկանէ չիհասաւ։ Հայրն Աստուած ասչափ մարդկանց մէջ միայն քեզի հաւնեցաւ. Որդին Աստուած քու արիւնէդ իրեն մարմին առաւ. Հոգին սուրբ Աստուած բոլորովին ինքնակամ քու վրադ հովանի եղաւ. և բովանդակ ամենասուրբ Երրորդութիւնը քեզի միայն հաճեցաւ։ Դու հոգեղէն դրախտ ընտրեալ եղար, մարդէ վեր, հրեշտակներէ վեր գերազանցեցար։

Բանն Աստուած ըլլալով այսօր խոնարհեցաւ ինձի համար մարդ եղաւ. դու մարդ ըլլալով բարձրացար, Աստուծոյ ծնող եղար։ Զարմացան հրեշտակները՝ տեսնելով որ մէկ հողեղէն մը Աստուծոյ մարմին կուտայ, զԱստուած կը ծնանի զԱստուած կը գըրկէ, ժուռ կածցընէ. խոնարհեցան քեզի սերոբէք ու քերոբէք, տեսնելով որ աթոռ եղար Բանին Աստուծոյ, օթարան Հոգւոյն սրբոյ, թագուհի երկնի և երկրի։ Ուրախացաւ մարդկային ազգը՝ տեսնելով որ իր մէջէն մէկ մը անանկ փառաւորուեցաւ՝ որ հարսն եղաւ Հոգւոյն սրբոյ. խակատէս մայր եղաւ Աստուծոյ, և Աստուածածին։

Հիմա ես ալ հրեշտակաց հետ մէկտեղ ուրախանալով, հրեշտակային ողջոյնը կուտամ քեզի. Ուրախ լեր բերկրեալդ, տէր ընդ քեզ։ Դու որ ասչափ մեծութեան հասար սուրբ Աստուածածին, որ ամէն խելքէ մեծ դուրս է, այսօր ինձի ալ մէկ շնորհք մը բրէ, մէկ կատարեալ դարձ մը տուր, զբղջման ու յարատեւութեան շնորհք։ Ու-

չափ որ անարժան ըլլամ քու շնորհացդ, բայց յիշելով ան մեծութեան հանելու օրդ, ան Աստուածամայրը ըլլալու ժամդ, կաղաչեմ մի մերժեր զիս այսօր. թէ որ կենդանի աշխարհիս վրայ տեսնէի զքեզ, ու աս օրուան փառքդ յիշեցընելով աղաչէի, չէիր զիս մերժեր. հիմա կենդանի հաւատքովս երկինքը աստուածամայրութեան ամբուը նստած զքեզ կը տեսնեմ, կաղաչեմ մի թողուր զիս այսօր զուրկ 'ի շնորհաց: Ինչպէս որ զարմացան հրեշտակք այսօրուան հրաշքին համար, Աստուծոյ մարդասիրութեանը համար որ մեղաւորաց վրայ ցրցուց, ասնանկ ալ իմ վրաս տեսնելով քու մեծ շնորհքդ իմ կատարեալ դարձիս համար, զարմանան պիտոր հրեշտակները, ու քու անուանդ փառաւորեն:

Ո՛վ ստոյգ առաւօտեան, լուսաւորէ զիս այսօր: Ո՛վ արուսեակ զուարթարար՝ ուրախացո զիս այսօր: Մխիթարդ վշտացեալոց՝ մխիթարէ զիս: Օգնականդ քրիստոնէից՝ հասիր ու օգնէ ինծի: Ապաւէնդ մեղաւորաց ապաստէ զիս բե-

լիարին ձեռքէն և իմ մոլութիւնե-
րէս. որդի Աստուծոյ ըրէ զիս, որ ես
ալ զքեզ ու քու Որդիդ միածին փա-
ռաւորեմ յաւիտեան. ամէն:

Ի ՏՕՆԻ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ

Տէր իմ Յիսուս Քրիստոս, քու
վարքդ հայելի օրինակ տուիր ինծի.
խորհրդով կատարեցիր ամէն ըրած-
ներդ. առաջ չարչարուեցար, խաչե-
ցար, եռքը յարութիւն առիր, այսօր
փառօք համբարձար երկինքը. ցու-
ցիր ասով ինծի՝ որ առաջ պէտք է նե-
ղութիւն և խաչ քաշել, եռքը ան քա-
շածներուն համար փառք վայելել:

Առաքեալները կանչեցիր՝ որ Զեբեդ-
նեայց լեռը ելլեն. ուր որ սկսեր էիր
քաշել քու սուրբ չարչարանքներդ՝
հոն եռքի խրատներդ ու եռքի ողջոյնդ
տուիր: Իմ հոգիս ալ ահա կեցած է
այսօր անանկ տրտմած, կը տպասէ՝ որ
դու կանչես քովդ նեղութեան լեռը
Զեբեդնեայց. որ սրտավս մաքուս հե-
ռանամ վերը ելլեմ աս աշխարհէս երբ

բարձր լեռան վրայ. ձգեմ զզուիմ աշխարհային բաներէ, և բարձր երկնային բաներու փափագիմ, ինչ նեղութիւն, ինչ խաչ խրկես՝ սիրով քաշեմ, Հոգւոյն սրբոյ շնորհքովը մխիթարուիմ։

Երբոր բաժնուելու եղար, հեռերնին խօսելով՝ երբ թէ մեղքընալով բաժնուեցար. զՀոգին սուրբ խրկել խոստացար, որ սիրա առնեն։ Իմ հոգիս ալ որ բաժնուած է քեզմէ, կը խնդրէ քու սիրա տալդ. կարօտ է Հոգւոյն սրբոյ շնորհքին մխիթարութեանը։

Ամէն խօսքէն առաջ՝ ձեռքդ առ բառնալով վերցընելով՝ օրհնեցէր առաքեալները, անանկ համբառնալ սկսար։ Ա՛խ, յիշէ տէր իմ այսօրուան ըրած քու մարգասիրութիւններդ։ Ո՞ւր են, տէր, ողորմութիւնք քո առաջինք։ Ես ալ այսօր սուրբ լեռը ե�եած պատարագիդ առջին, քու քսակդ ընկած կեցած եմ զղջմամբ ու խոստովանութեամբ, զքեզ կը տեսնեմ սուրբ խորանին վրայ։ Իմ վրաս ալ ձեռքդ դիր, զիս ալ օրհնէ, որ մեղքերս սրբ-

քուն, հոգիս լուսաւորուն։ Հոգւոյն սրբոյ շնորհքը խրկէ՛ որ ասկէց ետքը միշտ քու խրատներդ բռնեմ, պատուիրանքներդ սիրով պահեմ. շնորհքով հոս քեզմէ չիբաժնուիմ՝ որ արքայութեան մէջն ալ միշտ քեզի հետ մնամ յաւիտեան. ամէն։

Ա՛յլ աղօթք.

Թագաւոր Թագաւորաց տէր իմ Յիսուս, այսօր է քու Թագաւորութեանդ օրը. ասանկ փառաւոր հանդիսաւոր օրը՝ երկրաւոր Թագաւորները պարտապաններուն կը նեղեն, բանտարկեալները կազատեն, աղքատներուն պարգև կը բաշխեն։ Քանի աւելի պիտոր ըլլայ քու շնորհացդ չափը ո՛վ Թագաւոր երկնաւոր. նայէ՛ իմ խեղճութեանս վրայ. մի Թողուր զիս այսօր առանց շնորհացդ. ո՛րչափ անարժան ըլլամ՝ Թողութիւն տո՛ւր, պատռէ՛ այսօր իմ անօրէնութեան մեղքերուս պարտեաց Թուղթը. ազատէ՛ զիս սատանային կապանքներէն մեղաց բան-

ան, և մեկ ողորմութիւն մը՝ մեկ շնորհք մը տուր ինծի, որ ասկէց ետքը սիրտս միտքս բոլորովին աշխարհէ կտրեմ, երկինքը առ Աստուած համբառնամ։

Եւ երբոր սատանան զիս յուսահատցընէ, հաւատքս խաւարեցընէ, որ քեզ չեմ տեսնար, աղօթքէ համ չեմ առներ, աղօթքիս մէջը ամենեւին ջերմեռանդութիւն չեմ խմառար, քու սուրբ պատկերդ մոացս ասկէն անկրեցեր կըլլայ, սուրբ ձայնդ կը հեռանայ, անոր տեղը աս աշխարհիս պղտոր ու ամպոտ փորձութիւնները կերեւան աչքիս՝ ան ատենը խրկէ տէր իմ քու երկու հրեշտակներդ, ինչպէս որ խրկեցիր առաքեալներուն, որ անոնք խօսելով զիս մխիթարեն, հաւատքս զօրացընեն, թմրութիւնս ոչնչութիւնս փարատեն։ Յիսուս Նազարէն քեզի պիտոր դայ ըսելով, աւետիս ուրախութեան տան։ Եւ ալ առաքելոց պէս պայծառ հաւատքով ջերմեռանդ աղօթքի հետ ըլլամ, միշտ քեզի ծառայելով Հոգւոյն սրբոյ շնորհաց արժանի ըլլամ։ ամէն։

Ի ՏՕՆԻ ՀՈԳԵԳԱԼՍՏԵԱՆ

Յառաջին առաջ.

Ո՛վ հոգ երկնային՝ որ ամենուն սիրտը հոգևոր եռանդ կը ձգես. շունչ անմահարար՝ որ հիւանդացեալ հոգիները կը բուրնացընես. ցօղ լմանալի՝ որ երկնքէն ինչնելով եկեղեցւոյ պարտէզին մէջ զարմանալի ծաղիկներ կը բուսացընես, մեղաւորները կը սրբես, արդարները մարտիրոսութեան պսակին կը հասցընես, միտքը կը բանաս, կամքը կը զօրացընես:

Ո՞ր մէկն ըսեմ քու անբաւ զարմանալի արուեստներդ Հոգի՛ սուրբ. ո՞ւր է՝ որ ինծի ալ այսօր մէկ նոր շնորհք մը շնչես, որ ես ալ փոխուիմ: Հաւատքիս աչքը բացուի, միտքս արթընցնայ, անգիտի բաները յայտնի պայծառ տեսնեմ, առ աշխարհիս ունայնութիւնը լմանամ, զզուիմ անոնցմէ: Յոյսս զօրանայ, զօրանալովը՝ սիրով փափա-

գով պահեմ քու պատուիրանքներդ։ Սէրս վառուի, վառուելովը՝ մեղքէ հեռանամ, Աստուծոյ Ճամբան բռնեմ, աչքս սուրբ մաքուր պահեմ, ականջս ընդունայն դատարկ խօսքերէն հեռացընեմ, լեզուս աստուածային օրհնութեան պարապեցընեմ, և ամէն զգայարանքներս սուրբ պահեմ։

Ինչ մեղքեր որ ըրի ընդդէմ Հոգւոյդ սրբոյ՝ ի մանկութենէ, կամ յուսահատութեամբ, կամ յանդգնութեամբ և կամ արհամարհութեամբ քու ներքին շնչմանց դէմ, ամէնն ալ զղջմամբ խոստովանիմ։ խոստովանութեանս առենը՝ մաքիս ալէկոծութիւնը որ սատանան կը խառնէ, դուռ փարատես, սուրբ հաղորդութիւնը ջերմեռանդութեամբ առնելու արժանի ընես։

Ասնք և ուրիշ զանազան շնորհքներ խնդրեմ տուր ինծի այսօր։ բայց գանձդ բաշխելու, վասն զի առանց քու շնորհացդ իմ ամէն ըրածս պարապ է, մեռեալ է։ դուռ Հոգիդ սուրբ կենդանարար, էկ և կենդանացո՛ վասն արդեանց Յիսուսի միածնի, որ զքեզ նորին մեզի պարգևել տուաւ։

Չերկրորդ առուր.

Ո՛վ հոգիդ սուրբ տէր և կենդանաբար, կը շնչես ուր որ ուզես, կը պարգևես որու որ ուզես, կուտաս ինչ պարգև որ ուզես. այսօր սատանիկ հովուհման ինչնելով վերնատան մէջ՝ ձրկնորանները առաքեալ ըրիր, բան չգիտցողները վարպետ քարոզիչ ըրիր, խօսիլ չկրցողներուն՝ զանազան լեզուներ տուիր ասելիցուցիր: Ո՛վ անմահական բաժակ, այսօր ատուածային բաժակէդ մէկ գինի մը խմցուցիր՝ որ զմայլեցան, երկրաւոր մարդիկ երկնային եղան, խաչէն փախչող առաքեալները՝ սիրով փափագով տանջանք քաշել սրբեցան:

Ես ամէնէն կարօտ եմ, տէր իմ. հոգիս անապատ դարձեր է, զուրկ մնացեր է շնորհքէդ. վասն զի ինչ շնորհք որ տուիր մկրտութեամբ և ուրիշ խորհուրդներով ամէնն ալ կորսնցուցի մեղքերովս: Այսօր ինծի ալ շնչէ մէկ շնորհք մը՝ որ ան երկնային բաժակին

համը ես ալ առնեմ, հոգւոյս ծարաւը բժշկուի, ես ալ բոլորովին փոխուիմ, երկնային բաները անուշ երևնայ, երկրաւոր բաները տեղի ըլլայ։ Ամէնէն աւելի՝ ինչպէս առաքեալները միշտ աղօթից հետ պարապելով՝ արժանի եղան քու շնորհքիդ, ուր ինծի այսօր շնորհ Աղօթից, որ ուզելով փափագելով աղօթք ընեմ։ ան չորութիւնը՝ որ աղօթքիս առեր սատանան կը բերէ՝ ինծմէ հեռանայ, միտքս չցնդի, ճանձրութիւնը վրայէս երթայ. երբոր սատանան աշխարհային հոգը մտածմունքը աղօթքիս մէջը միտքս կը բերէ երբ հարկաւոր մտածմունք, անանկով աղօթքս բոլոր պարապ հանել կուտայ, անպտուղ կընէ, ան տեղը տուր ինծի քու անմահական բաժակիդ հոգևոր զմայլումը՝ որ սա մտածմունքները փարատէ, երկնային մտածմունքները զիս զմայլեցնեն, ինչպէս որ տուիր քու սուրբերուդ։ Անանկով ես ալ անոնց հետ մէկտեղ յաւիտեան փառաւորեմ զամենասուրբ Երրորդութիւնն զՀայր և զՈրդի և զՀոգի սուրբ. ամէն։

Ցերդերդ առուր.

Ինչ շնորհ լեզուաց էր՝ Հոգիդ սուրբ, զոր այսօր պարգևեցեր առաքելոց, և ինչ շնորհ լսողութեան էր, զոր այսօր պարգևեցեր լսողաց. Յիսուս միածին երկնային խրատներ կը խօսէր, մէկ քանի հոգւոյ սիրտը հաշիւ կը շարժէր. Զի չէ էր Հոգի: Իսկ այսօր քու լեզուաց պարգևովդ՝ մէկ անգամ խօսեցաւ սուրբն Պետրոս, անոմ իրեք հազար հոգւոյ սրտերը կակըզցուցեր, հալած մոմի պէս ըրեր, հաւատքի բերեր. որ զգլուխով ապաշխարեցին, մեղայ գոչեցին: Ա՛խ, տէր իմ, իմ սիրտս ալ քարի պէս պնդացեր է, մեղքի մէջ կորեր է, ասչափ հոգևոր խրատներ կը լսէ՝ չիկակըշնար. ասչափ հոգևոր խորհուրդներ կառնէ՝ մանաւանդ խորհուրդ սուրբ հաղորդութեան, մէկ շահ մը չիգտներ:

Դու տէր, այսօր զդանձդ շնորհաց բացեր ես, կը բաշխես քու սիրելիներ-

ղուդ. մինայիր իմ անարժանութեանս վրայ. առ՛ար ինձի աղ դառնալու շնորհք այսօրուան գարձողներուն պէս, որ տեսնեմ իմ անօրէնութիւնս, զղջիմ անոնցմէ, զղջամ ապաշխարեմ քու շնորհքովդ. և քու ծառադ ըլլամ, ըզքեզ փառաւորեմ հոս և արքայութեան մէջ յաւիտեան. ամէն։

Ի ՏՕՆԻ ՎԱՐԴԱՎԱՌԻՆ

Յառաջին առոյր.

Անբաւ խմաստութիւն Յիսուսի տեսանդ իմոյ, առաջ խաչ քաշել քարոզեցիր, տեսար՝ որ ծանր երևցաւ խաչին նեղութիւնը. և որպէս զի իմանան՝ որ հաքը ինչ փառաց պիտոր հասնին խաչ քաշողները, ցուցիր այսօր քու փառքդ։ Ինչ երջանիկ ժամ, յորում սուրբ առաքեալքն աս մարմնոյս մէջ ըլլալով արժանի եղան ասուածութեան փառքդ տեսնելու, ինչ ըզմայլումն, ինչ ուրախութիւն, որ իրենք զիրենք կորսընցուցին, մուցան

մարմինը, մուցան ամէն աշխարհի ծանրութիւնը՝ մէկ քիչ մը աստուածութեան փառքդ տեսնելնուն համար։ Հապա ինչ զմայլիլ պիտոր ըլլայ ինծի, երբ բոլոր աստուածութեան փառքդ պիտոր տեսնեմ արքայութեան մէջ։

Գիտեմ որ մինակ ան առաքեալներուն ցուցիր քու փառքդ, զորոնք մարդիկներէն՝ քաղքին մէջէն դուրս հեռացուցիր, բարձր լեռը հանեցիր։ Ես ալ կառաջադրեմ տէր իմ, որ ասկէց ետքը սրտովս մտքովս դուրս ելլեմ մարդկային գէշ վարմունքներէ. մարմնաւոր աւելորդ մտմտուքները երկրաւոր պարապ զբաղմունքները՝ մէկդի ձգեմ, վերին լեռը ելլեմ, վերին երկնային բաները մտմտամ, աստուածային պատուիրանքներդ բռնելով սիրտս սուրբ պահեմ, որ քու խօսքդ տուած երանիին հասնիմ. Երանի այնոցիկ՝ որք սուրբ են սրտիւք. զի նոքա զԱստուած տեսցեն։ Դու ալ տէր իմ, մի արհամարհեր զիս, մի յիշեր իմ չարութիւններս այսօրուան փառացդ

համար. ինձի ալ ցըցու այսօր քու սուրբ երեսդ աս աշխարհիս մէջ շնորհքով զիս լուսաւորելով, անդին ալ դէմ յանդիման զքեզ ինձի երևցընելով:

Յերկրորդ առար.

Արդէօք պիտոր հասնիմ, տէր Յիսուս, ան ատենին՝ որ հոգիս բոլորովին հեռանալով հրաժարելով աշխարհային ունայն բաներէն, հոգևոր աչքով զքեզ տեսնէ այլակերպեալ, մուածական աղօթքներով զքեզ տեսնէ առաջ մարդկութեամբդ խաչով փշով պսակեալ, եռքը ասուածութեամբդ փառաւորեալ: Պատարագին մէջ դէմ յանդիման զքեզ տեսնէ այլակերպեալ 'ի խորհուրդ հաղորդութեան իմ սիրոյս համար, միտքս բոլորովին քեզի գայ, կամքս բոլորովին զքեզ սիրէ, քու վրադ խօսի, ինչպէս որ Մովսէս և Եղիա քովդ եկան, քու չարչարուելդ կը յիշէին, կը խօսէին:

Այն ատենը իմ բանականութիւնս ալ

սրբոյն Պետրոսի պէս զմայլելով աղա-
ղակէ. Տէր, բարեւոք է մեզ սստ լինել.
և արասցուք երիս տաղաւարս։ Տէր,
աղէկ է մեզի սստանկ մինակութեան մէջ
կենալնիս. չյիշենք թադաւորական տը-
նելը, չյիշենք աշխարհիս զուարճու-
թիւնը, հապա մինակ սս սուրբ մտածմանց
լեռը նստինք, թէ և տաղաւարի
տակ ըլլանք. վասն զի ուր դու ես, հոն
տաղաւարն ալ դրախտ կ'ըլլայ, արքայութիւն
կը դառնայ։ Հոս կենանք
ամէն իմ, մէկտեղ կենանք քեզի հետ՝ որ
ես Ճշմարտութիւն և կեանք. մէկմէկէ
չբաժնուինք յաւիտեան։ Թող մի տար
ոչ Որդի Աստուծոյ, որ իմ առջի չար
սովորութիւններս մեղքերս զիս քեզմէ
բաժնեն. հապա հոս միշտ հոգևոր կե-
նօք քեզի հետ կենամ, որ անդին ալ ե-
րանական ձայնը լսելու արժանի ըլ-
լամ. Դա է որդի իմ սիրելի. և բոլոր
աստուածութեան փառքդ դէմ յան-
դիման տեսնեմ, որ է երանութիւն յա-
ւիտենական։

Ի ՏՕՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ

Յառաջին առոր.

Այսօր է օր գերազանց մեծութեան քեզի համար ով փառաւորեալ տիրուհի, և բոլոր աշխարհիս օր ուրախութեան: Այսօր հրեշտակաց բազմութեամբ վերափոխեցար, բարձրացար, կուսանաց՝ մարտիրոսաց՝ առաքելոց դասերէն վեր եղեալով ընդ աջմէ Քրիստոսի նստար: Ամենասուրբ Երրորդութիւնը եօթնապիսեան շնորհօք զքեզ զարդարեց, թագուհի երկնի և երկրի զքեզ պսակեց, դանձապետ ամենայն շնորհաց Հոգւոյն սրբոյ զքեզ դրաւ: Ամենեքեան ալ քեզ երանի տուին երկինքը, մենք ալ քեզ երանի կուսանք երկրիս վրայ:

Ասանկ ուրախալի օրդ ով հրաշափառ թագուհի, զիս ալ յիշէ, զիս ալ մի զլսկեր քու շնորհքէդ. յիրաւի չեմ արժանի առջիդ երևնալու՝ իմ ծանր

ու սոսկալի մեղքերուս՝ համար, բայց ահա այսօր է օր թողութեան, այսօր է օր իմ վրաս նայելու, ինծի ալ մէկ շնորհք մը բաժնելու։ Թէ որ երկրաւոր թագաւորք ու թագուհիք իրենց պսակուած օրը մեծ մեծ պարգևներ կը բաշխեն, առատաձեռնութիւն կընեն, յանցաւորաց մեղքերը կը ներեն, բանտէն կը խալացընեն, ողորմութիւն կը բաժնեն, դուն երկնաւոր թագուհիդ քանի՞ աւելի քու թագաւորութեանդ օրը իմ մեղքերս պիտոր չեյնչես, զիս մեղաց դերութենէ ազատես։ Թէ որ Յիսուս իր ծոներուն շնորհքներ կը բաժնէ, որ թագաւոր ողորմութեան է, նաև արդարութեան, ո՞րչափ աւելի դու ամբարայը, որ միայն ես թագուհի ողորմութեան, և մայր դթութեան. քու դուռդ՝ մէկը չի պատժուիր չի դատապարտուիր։

Աղաչեմ ո՛վ թագուհի երկնի և երկրի, ո՞րչափ աւելի բարձրացար՝ անչափ աւելի շատցաւ քու զօրութիւնդ օգնելու հասնելու ամէն հաւատացեալաց վրայ. ինչպէս որ արևը ո՞րչափ ա-

ուելի բարձրանայ, այնչափ աւելի կը տաքցընէ աշխարհս։ Ես ալ մէկն եմ ան հաւատացեալներէն. իրաւ իմ անձնեռելի մեղքերս մոռնալով կը յուսահատիմ, բայց քու այսօրուան փառքդ՝ Թագաւորութիւնդ մոռնալով սիրտս կառնեմ կը քաջալերիմ. ես ինծմէ խոստովանելով քահանայն առջին մեղայ կըսեմ, սրտանց կը ցաւիմ։

Ա՛ զղջման վրայ նայելով քու հըզօր բարեխօսութեամբ և մայրական գթութեամբդ՝ կատարեալ թողութիւն առնես այսօր իմ մեղաց. հաշտեցընես զիս Աստուծոյ հետ, շնորհք տաս ապէց եռև Աստուծոյ ծառայելու, որ արժանի ըլլամ քու փառքդ տեսնելու Քրիստոսի Թագաւորին հետ, և միշտ օրհնելու յաւիտեան. ամէն։

Յերկրորդ աղոթք.

Օրհնեալ փառաւորեա՛լ ըլլայ ամենատուրբ Երրորդութիւնը՝ որ զքեզ միայն ընտրեց իր ստեղծուածոց մէջ,

մարդ հողեղէն՝ մայր Աստուծոյ ըրաւ. մեր երկրէն դքեզ առաւ երկինքը հանեց, հարան Հոգւոյն սրբոյ և Թագուհի ամենայն սրբոց, տիրուհի երկնի և երկրի պատկեց: Քու Թագաւորութեամբդ սուրբք կուրախանան, հրեշտակները կը զմայլին, երկրաւոր մարդիկ կը ցնծան կը ուռնեն, մեղաւորները կը մխիթարուին: Քանի քանի մեղաւորներ փրկուեր են քու ձեռքովդ սուրբ Աստուածածին, որ առանց քեզ՝ հաւանելու չէին փրկուեան, անով քու փառքդ մեծցաւ, արդարոյդ Թագաւորութիւնը ընդարձակեցաւ, ամենասուրբ Երրորդութեան պատիւը բարձրացաւ:

Հիմա ինծի պէս մեղաւորը՝ որ ամէնէն յուսահատած ոգիդ ինկեր կուլայ կաղաչէ, Թէ որ փրկես՝ ուրչափ աւելի քու փառքդ կը մեծնայ, ամենասուրբ Երրորդութիւնը կը փառաւորուի, Թշնամին սատանայ ամօթով կը մնայ: Անանկ է նէ, ով մայր ողորմութեան, ով Թագուհի գանձապետ շնորհաց, զիս ալ փրկէ այսօր, ազատէ

մեղքերէ, մի ձգեր երեսէ։ Որդին Աստուծոյ ասոր համար զքեզ աս փառքիս հասուց. ինչպէս որ սատանան Եւայի ձեռքով զմարդիկ կորսընցուց, Յիսուս ալ ուզեց քու ձեռքովդ զմարդիկ խալըսցընել, մեղաւորները փրկել, որոնց գլուխը ես եմ՝ իմ մեղքերուս ծանրութեանը համար։

Այլ մեծ է քու փառքդ, քու բարեխօսութիւնդ, քան թէ իմ մեղքերս. զիս փրկելու համար Աստուած զքեզ ասչափ փառք փառաւորեց, աս բանիս համար թագուհի պսակեց այսօր։ Քու ձեռքդէ Աստուծոյ անհուն շնորհքները, անհուն ողորմութիւնը, որ մեծ է՝ քան թէ իմ մեղքերուս մեծութիւնը ոչ սիրամայր. այսօր մէկ խօսքով թողութիւն կրնաս առնել, և զՔրիստոս շնորհք, որ ես ալ բոլորովին փոխուիմ, առ Աստուած դառնամ, մնացած ատենս բարեգործութեամբ անցընեմ. քու քովդ դալու, զքեզ և զՅիսուս փառաւորելու արժանի ըլլամ. ամէն։

Ի ՏՕՆԻ ԾՆՆԴԵԱՆ

ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Աստղ առաւօտեան սուրբ Աստուածածին, որ մութ գիշերուան մէջ մխիթարութիւն կուտայ, ու առտուան մօտիկ ըլլալը կիմացընէ։ Արշալոյս աւետաւոր՝ որ արեւուն գալը կիմացընէ. ամէն աշխարհ կուրախացընէ։ Այսօր մեզի եղար սուրբ Աստուածածին արշալոյս և առաւօտ ուրախարար. քու ծննդեամդ անմխիթար որդիք Ադամայ տեսան մէկ լոյս մը խաւարած գիշերուան մէջ, լմնցան գալուստը աբրեգական արդարութեան Քրիստոսի, և ուրախացան։

Հիմա ես ալ մէկն եմ անմխիթար մնացողներէն. մեղքերու մէջ կորսուած ըլլալով, ուրիշ բան չունիմ, բայց եթէ մեղքերս զղջալով. քու առջեւդ կկենամ խեղճ ողորմելի, զրկուած ամէն շնորհքէ։ Դու որ սանկ ուրախութիւն եղար աշխարհի այսօր մայր

սուրբ, սանկ փարատեցիր մեղաւորաց ու արդարոց տրամութիւնը, սանկ ուրախութեան օրդ՝ մի թողուր զիս իմ խեղճութեանս մէջ, մի յիշեր իմ անօրէնութիւնս, տուր ինձի պէտք եղած շնորհքները։ Ան հոգևոր ուրախութիւնը զոր յաշխարհ բերիր, ինձի ալ պարգևէ այսօր, որ է ազատութիւն 'ի մեղաց, անմեղութիւն, և խղճմտանքը մաքուր պահել։ Տուր ինձի նորէն սուրբ աւազանին անմեղութիւնը՝ զոր էս կորսնցուցի. տուր ինձի անկէց եաքը առանց մեղաց կենալ, խղճմտանքս անարատ մաքուր պահել. անանկ անմեղ ապրելով միշտ Աստուծոյ հետ հաշտ ըլլամ, հոգևորապէս ուրախ ըլլամ, որ մեռնելէս ալ չվախնամ՝ յոյսս մաքուր ըլլալով։

Ո՛վ տիրամայր սուրբ Աստուածածին, ամէն խշխանները իրենց ծնընդեան օրը՝ պարգևներ կը բաժնեն, յանցաւորներուն թողութիւն կուտան, իրենց իյնողներուն խնդիրքին կը կատարեն։ Դու ալ շատ հրաշքներ ըրած էս քու տիրելիներուդ այսօր,

որ է օր քու սուրբ ծննդեանդ. շատ վշտացեալներ այսօր գտեր են քեզմէ ողորմութիւն և մխիթարութիւն։ Հիմայ ես ալ որ դուռդ եկեր, քու սուրբ ծնունդդ բարեխօս բռնելով կաղաչեմ, զիս պարապ մի հաներ, ետ մի դարձներ, իմ ըրած անօրէնութիւններս մի յիշեր ասանկ ուրախութեան օրդ։ Խստացեալ մեղաւոր մի եմ, տուր ինծի շնորհք կատարեալ զղջման. չունիմ յարատեւութիւն գիտեմ, նորէնոր կը մեղանչեմ. տուր ինծի շնորհք յարատեւութեան՝ որ միշտ հեռու կենամ մեղքերէ, աղէկ մը խոստովանելով զղջման մէջ պահեմ իմ սիրտս։

Թէ որ միածին օրդիդ պարապ ետ չդարձուց քանանացի կուսաշտ կինը իր շատ աղաչանքին համար, գուն մայր գթութեան, գանձապետ աստուածային շնորհաց, ինչպէս պարապ դարձընես զիս ասանկ ուրախութեան օրդ։ Այլ նայէ երկնքէն իմ վրաս, որ բոլորովին ողորմելի եմ մնացեր, այսօր իմ խնդիրքս ալ կատարէ, որ մնացած կենացս մէջ բարի

գործքեր ընելով զԲրիստոս փառաւորեմ. յաւուր արդար դատաստանին քոյ բարեխօսութեամբդ փրկուած ըլլալով, փառք պարծանք ըլլամ քոյ մեծութեանդ առաջի ամենայն սրբոց. ամէն։

Ի ՏՕՆԻ ԽԱՉԻՆ

Յառաջին առոր.

Փառք անհուն մարդասիրութեանդ ամէր իմ Յիսուս Քրիստոս. հերիք չէ՞ զաւ որ ինծի համար մարդացար, աշխարհ եկար, այլ նաև չարչարուեցար և խաչուեցար իմ սիրոյս համար. էս պիտոր քաշէի սատանայի ձեռքէն տանջանք յաւիտենական, դու Որդիդ միածին անչափ սիրեցիր զիս՝ որ յանձն առիր քոյ խաչուելովդ զարդարութիւն Հօրն երկնաւորի լեցընել, զիս դժոխոց տանջանքէն խալացընել, արքայութեան որդի ընել։ Ի՞նչ փոխարէն կրնամ էս հատուցանել, բայց եթէ միշտ յիշելով դոհանալ և շնորհակալ ըլլալ. վասն զի

թէ որ մէկ հասարակ մարդ մը ընէր սա բարեբարութիւնս, ընծաներ տանելով շնորհակալութիւն ընելու պարտական կըլլայի. ուրչափ առաւել քեզ սեռանդ իմոյ, որ ես արարիչ իմ, Աստուած իմ, այսօր խաչիւդ եղար նաև փրկիչ իմ։ Եւ նոյն սուրբ խաչը ինծի դեղ՝ զօրութիւն՝ և ապաւէն տուիր, որ ինչպէս Իսրայէլացիները երբոր պըղնձէ անկած օձին վրայ կը նայէին, օձին խայթոցէն կը բժշկէին, ես ալ սուրբ խաչին վրայ նայածիս պէս՝ ամեն սատանային՝ հին օձին փորձութիւնները կը փարատին, հոգւոյս հիւանդութիւնը կը բժշկուի, տկարութիւնս կը զօրանայ, համբերութիւն կը տրվի։ Անոր համար ցնծութեամբ կերգեմ ըսելով. Փառք սուրբ խաչիդ քո տէր, որ անանկ զօրաւոր դեղ հատատեցիր ինծի համար։

Երկրորդ առուր.

Երկրպագելով այսօր սուրբ խաչիդ առջեւ իմ Յիսուս, երկու շնորհ խնդրեմ պարգեւել, մէյմը՝ որ քու սուրբ վարուց օրինակը տպաւորուի իմ վրաս. ինչպէս որ առած մարմինդ՝ Ադամայ մեղաւոր մարմնոյ նման ըլլալուն համար՝ բոլորովին խաչին վրայ գամեցիր մեռուցիր, ես ալ իմ մարմինս կրթութեամբ և ճգնութեամբ խաչին վրայ գամեմ, ճնշեմ, ապտամոյին չար կրքերս խաչին վրայ մեռցնեմ։ Եւ ինչպէս որ ադամային մարմնովդ մեռնելով, նոր մարմին մը առիր դերեզմանէն յարութիւն առնելով, որ բոլորովին անկիր էր, ես ալ աս մեղաւոր մարմինս մահացընելէն ետեւ, յարութիւն առնեմ իմ մեղքերէս, և նոր մարմին հոգեւոր առանց կրկց, հնազանդ ասուածային պատուիրանաց։

Երկրորդ շնորհք աս լինի, որ ամբողջովին խաչ խրկէ իմ վրաս ասուածային կարգաւորութիւնը, զամէնն

ալ սիրով համբերելով քաշեմ. քու սուրբ խաչէդ մէկ նեղքին զօրութիւն և ուժ մը առնեմ. վասն զի թէ որ դու արդար անմեղ էիր, և իմ սիրոյս համար ասչափ խաչ քաշեցիր, քանի աւելի պէտք է որ ես մեղաւորս քաշեմ։ Բայց քու սուրբ խաչիդ զօրութեանը կարօտ եմ, քու բաժակդ ըմպելու՝ քու շնորհքդ պէտք է. ինչպէս որ երկու սիրելի առաքելոցդ շնորհեցիր ըսելով. Զբաժակն իմ ըմպեցէք. անով զօրացան, անչափ չարչարանք քաշեցին. անանկ ալ շնորհէ ինծի այսօր ան սուրբ խաչէդ մէկ նոր զօրութիւն մը, որ հոս քաշեմ, անդին չենքաշեմ. սիրով քաշեմ մեղքերուս համար. աստուածային կամքը կատարելու համար և քու սիրոյդ համար, որ եռքն ալ երկնաւոր Հօրէդ արժանի ըլլամ մէկտեղ քեզի հետ նստելու 'ի յաղթայուԹեան. ամէն։

Ի ՏՕՆԻ ԸՆԾԱՅՄԱՆ

Ո՛վ ամէնօրհնեալ կոյս Մարիամ, սիրելի հարսն Հոգւոյն սրբոյ, լի շնորհօք. երբոր կը մտածեմ ասօրուան ըրածդ՝ կը զարհուրիմ կը դողամ իմ վրաս նայելով։ Դու բոլորովին սուրբ ըլլալով աւելի սրբութեամբ Աստուծոյ ծառայել ուզեցիր, անոր համար պզտիկուց դու զքեզ բոլորովին Աստուծոյ ընծայեցիր. էաքն ալ ամէն օր՝ ամէն ժամ զԱստուած օրհնելու հետ եղար, ու իրեն ծառայելու։

Ես պզտիկուց մեղաւոր ըլլալով ծանր անօրէնութեամբ լեցուած ըլլալով, ես զիս ոչ Աստուծոյ կընծայեմ, և ոչ իր սուրբ պատուիրանքները պահելու հոգ կունենամ. Աստուծոյ ծառայելու չեմ նայիր, հապա իմ կամքս կատարելու. առջի ըրած մեղքերս ալ չեմ ապաշխարեր, մանաւանդ թէ նոր մեղքեր կը գործեմ. ասանկով բոլորովին նեղհակ վարք կը վարեմ. քու սուրբ վարուցդ դէմ։ Դուն պզտիկուց Աստու-

ծոյ ծառայող, եւ պզտիկուց զԱ-
ստուած արհամարհող. դուռ պզտիկուց
զԱստուած վատաբանող, հրեշտակաց
դասակից. եւ պզտիկուց զԱստուած
անարգող իմ չար գործքերովս, և գոր-
ծակից բելիարայ. հիմա ալ չունիմ ա-
րիւթիւն զՔեզ ընելու, ծուլու-
թեան սատանան զիս դերի է ըրեր։

Այլ այսօրուան ոգին շնորհացը
համար ըլլայ, մէյմը վերէն երկնքէն
նայէ մայր սուրբ իմ խեղճութեանս
վրայ, ինծի օգնութեան հասիր. տուր
մէկ շնորհք մը՝ որ առ օրէս եւեւ եւ
զիս Աստուծոյ ընծայեմ, սիրաս միաքս
բոլորովին Աստուծոյ նուիրեմ. այս
օրուան քու ընծայումդ ինծի օրինակ
առնելով, փոխանակ որ ինչուան հիմա
աշխարհի՝ մարմնոյս՝ ու սատանայի
ծառայեցի, առ օրէս եւեւ իմ մնացած
օրերս Աստուծոյ ծառայութեան մէջը
անցունեմ։ Ան ապօթքները՝ որ զքեզ
ընծայելու առնը Աստուծոյ ըրիր,
ան վառուած սէրն ատուածային՝ զոր
այսօր ցուցիր, ան խօսքերը որ Աս-
տուծոյ հետ խօսաթեցիր զքեզ նուի-

բերբուդ ատենը, ես ալ զանանք կը նը-
ւիրեմ Աստուծոյ, իմ աղօթքիս հետ
խառնելով Աստուծոյ կը մատուցա-
նեմ, որ քու բարեխօսութեամբդ զիս
ալ նորէն ընդունի, նորէն սրբէ, ար-
քայութեան երկնից արժանի ընէ. ա-
մէն։

Ի ՏՕՆԻ ԱՆԱՐԱՏ ՅՂՈՒԹԵԱՆ

Ո՛վ երկնաւոր թագուհի, ով հարան
անարատ Հոգւոյն սրբոյ, ո՞րչափ սիրե-
լի եղար Աստուծոյ որ չծնած՝ սկսար
սիրուիլ։ Ո՞րչափ հաճոյ էիր Աստու-
ծոյ աչքին՝ որ Ադամոյ զաւակ էիր,
բայց Ադամոյ մեղքը չունեցար, ապատ
եղար սկզբնական մեղքէն։ Մարդ էիր,
բայց յղացած ատենդ մարդու մեղ-
քէն խալըսեցար մէկ արատ մը վրադ
չդտնուեցաւ, մէկ անուն մը մեղքի
վրադ չինիակաւ. անոր տեղը բոլորո-
վին Հոգւոյն սրբոյ շնորհքնեբու�ը զարդ-
դարուեցար։

Այսօրուան շնորհքին համար՝ որ ա-
մենասուրբ Երրորդութիւնը զքեզ ա-

սանկ անարատ պահեց ամէն մեղքէ, ոչ ամենասրբուհի, կաղաչեմ՝ զիս որ բոլորովին մեղք եմ կտրեր պղտիկուց, սրբես արդարացընես առջի մեղքերէս։ Կը խնդրեմ՝ որ մէյմը երկինքէն նայիս իմ վրաս, զիս յիշես՝ որ ամենևին մեղքերու մէջ կորսուեր եմ՝ի մանկութենէ. երկու յատուկ շնորհք պարգևեալ ինծի այսօր, մէյմը՝ ապաշխարութեան ղջման շնորհք, մէյմն ալ՝ անմեղութեան, որով առջի ըրած մեղքերս ապաշխարութեամբ լալով ջընջեմ, ասկից ետքն ալ մէկ մեղք մը չի գործեմ. անանկով Աստուծոյ և քու ամենապայծառ տեսութեանդ արժանի ըլլամ. ամէն։

Ա՛յլ աղօթք.

Մայր սուրբ, սանկ ուրախալի օրդ՝ Անարատ յղութեան՝ զիս պարապ մի հաներ, իմ աղաչանքս մի՞ մերժեր, այլ սրբութեան աթոռէդ մէյմը իմ վրաս ալ նայելով ողորմի՛, որ անօրէնութեամբ ծանրացած՝ չարաչար մեղքե-

ով լեցուած՝ կը գոռամ, կը յուսա-
հատիմ, չկրնամ ուր պիտոր երթամ,
ինչպէս պիտոր երևնամ արդար դա-
տաստանին առջևն։ Միայն քու մայ-
րական սիրոտիդ առջևն զիս կը ձգեմ,
գեսինը խնայով կաղաղակեմ. այս
օրուան շնորհքէն ինծի ալ մէկ փշրանք
մը շնորհաց պարգևէ։ Դու որ յար-
գանդի մօր անարատ յղացար, զիս ան-
օրէնութեամբ մեծցուցիս այսօր սրբէ.
ինչպէս որ ամենասուրբ Երրորդու-
թեան անունը փառաւորուեցաւ ըղ-
քեզ սկզբնական մեղքէ պահելով սրբ-
բելով, անանկ ալ քու և Յիսուսի
միածնի անունը կը փառաւորուի, թէ
որ այսօր իմ աննեղուելի մեղքերուս կա-
տարեալ թողութիւն առնես, սրբես,
որ Աստուծոյ հետ հաշտուելով, բա-
ղեգործութեամբք զարքայութիւնը
ժառանգելով, զԱստուած և զքեզ
յաւիտեան փառաբանելու արժանի
ըլլամ, ամէն։

Sacramentum. A. Mirandano.

Unus tibi qui ex Gloria quem
habuisti ex Deo Dilectus Spiritus

ԱՂՕԹՔ

ԱՌ ՍՈՒՐԲՍ

Ի ՏՕՆԻ ԾՆՆԴԵԱՆ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏԻ

Հրաշալի էզաւ, ով սուրբդ Աստուծոյ, քու ամէն գործողութիւնդ յղութիւնէդ սկսեալ, աւետեաց Գաբրիէլ հրեշտակին աւետարանեալ։ Մեծ էզաւ քու արքութիւնդ. յարդանդի մօրդ արքուելով ամէն մեզք ան-արատ գտար առաջի Աստուծոյ։ Փառաւոր էզաւ քու ծնունդդ՝ սուրբ Աստուածածնայ և Յիսուսի այց ելանելովը, ան օրը Յիսուսին մատնելովը շնորհքով լեցուեցար, չիտեսած ըլլալով՝ յարդանդի Ճանչցար հաւատով, և ուրախութեամբ երկրպագու-

թիւն տուիր։ Տ�՝ուր լինի ալ ոչ տուր-
բըդ Աստուծոյ, որ երբոր աղօթք կը-
նեմ, ժամը Աստուծոյ առջին կելլեմ,
մանաւանդ երբոր պատարագ կը տես-
նեմ, զՅիսուս տեսածի պէս ըլլալով
հաւատքիս աչքովը՝ ուրախութեամբ
աղօթքս ընեմ։ պատարագին մէջն ալ
զՅիսուս դէմ յանդիման տեսածի պէս
ըլլալով՝ պատարագը զմայլելով տես-
նեմ, երկրպագութիւնս ընեմ։

Զարմանալի էրաւ քու մանկու-
թիւնդ ալ՝ որ միշտ Յիսուսին հետ
տեսնուեցար, Յիսուսի հետ ընկերա-
կից ու խօսակից ըլլալով անցուցիր ժա-
մանակդ. տուր լինի ալ ան շնորհքը՝
որ իմ սիրտս միտքս միշտ Յիսուսին
տալով՝ Յիսուսի հետ խօսակից ըլլամ
աղօթքով։ Երբոր չափահաս էղար
մեծցար՝ տունդ ազգականներդ թո-
ղուցիր, լեռը փախար, որ մեղքերէ
հեռանաս. տուր լինի ալ՝ որ սրտովս
աշխարհային բաներէն հեռանամ, մեղ-
քերէ փախչիմ։ Երբոր Յիսուս Յոր-
դանան եկաւ, դու էղար վկայ և քա-
րոզիչ, ամէնուն ալ քարոզելով որ սա

է գառն Աստուծոյ որ բառնայ զմեղս աշխարհի, տուր ինձի զ՝ որ խոսքովս և վարքովս զՅիսուս քարոզեմ. ինչ որ Աստուծոյ կամացը դէմ բան մը ըլլայ՝ չամրչնամ, վկայեմ։

Մեղք չունէիր՝ մեղաւորի պէս ապաշխարեցիր, աղքատութիւն քաշեցիր, չոր ուտելով, կաշի հագնելով՝ ճգնեցար. տուր ինձի զ՝ որ ես գըլուխս մեղաւորաց՝ իմ ծուլութիւնս, և իմ ձանձրութիւնս մէկդի ձգեմ, ճգնութիւն ապաշխարութիւն յանձն առնեմ, կամքս և չար ցանկութիւնս մահացընեմ։ Երբոր Հերովդէս պիտոր մեղանչէր, մարդու ահը մէկդի ձգեցիր, թագաւորէն չվախցար, մեռնիլը յանձն առիր՝ քան թէ մեղանչելը. անանկով յայտնի դէմ եղար, յանդիմանեցիր. տուր ինձի զ՝ որ երբոր իմ չար կամքս, և կամ չար ընկերը մը Հերովդեսի պէս կուզէ զիս մեղք խօթել, յայտնի դէմ եղնեմ, Աստուծոյ պատուիրանքները պահեմ. քու վարուցդ նմանելով՝ քեզի հետ մէկտեղ Յիսուս փառաւորելու արժանի ըլլամ. ամէն։

Բայրամ տօնի նորին.

Ո՛վ Երանելիդ 'ի մէջ սրբոց, որ Յիսուսին բերնովը գովուեցար, թէ քեզի նման մէկ սուրբ մը չէ գտնուած աշխարհիս վրայ, որ եղար Յիսուսի կարապետ ու մկրտիչ, մարգարէ, Ճըգնաւոր, քարոզիչ, Եւ՝ քն ալ մարտիրոս եղար՝ արիւնդ թափելով Աստուծոյ պատուիրանացը համար, անանկով սուրբերուն ամէն դասին մէջ ընտրեալից եղար, ամէն դասերուն առնուանի ըլլալով։ Հիմա ան երկնային փառքիդ մէջէն նայէ այսօր իմ վրաս, ո՛վ սուրբդ Աստուծոյ, ու մէկ զօրաւոր շնորհք մը ընդունէ քու վարքիդ հետևելու, մանաւանդ շնորհք երկիւղին Աստուծոյ, շնորհք Ճգնութեան և ապաշխարութեան։

Դուն էիր որ խօսքով ալ, վարքովդ ալ ապաշխարութիւն քարոզեցիր, մեղքերնին խոստովանիլ ստիպեցուցիր, փրկութեան Ճամբան ամէն արհեստաւորներու՝ ինչուան զինուորներուն

ալ ցուցիր։ Ես այսօր քու սուրբ ծնդ կը ծնեմ, եկեր առջեդ ընկեր եմ յուսահատած, ինչ պատասխան ալիսոր տամ Աստուծոյ։ Ես որ մեղքի պատճառներէ չեմ փախչիր, աչքըս՝ ականջս՝ բերանս չեմ զգուշացըներ, առջի ըրած մեղքերուս համար ալ մեծ մեղաւոր ըլլալով՝ անհոգ եմ կեցեր ապաշխարելու, խոստովանելու, ճգնութիւն քաշելու, հիմա յոյսս միայն քեզի դնելով՝ կաղաչեմ որ շընորհք առնելով փրկութեան ճամբան բերես զիս։

Ինչ շփոթութիւն կը բերէ ինծի սատանան, ինչ որ աղօթքիս ճանճրութիւն բերել կուտայ, խոստովանութիւնը ծանր բան մը կը ցուցընէ, ասոնք ամէնը գոհ փարատէ լուսաւորէ, փորձութիւններէ զիս պահէ քու արդեանցդ և փառացդ միջնորդութեամբ։ Վասն զի գիտեմ՝ որ որչափ մեծ է փառքդ, այնչափ ալ մեծ է քու բարեխօսութիւնդ։ Նաև սրբոյն Գրիգորի Լուսաւորչին աղաչանացը համար՝ որ զքեզ մեր ազգին պաշտպան ելա-

նել տալով աղաչեց որ բարեխօս ըլլաս ամէնուս։ Եւ ալ ան արբոյն աշակերտն եմ, անպտուղ չըլլայ կաղաչեմ անոր արդիւնքը, այլ իմ փրկութեամբս՝ անոր և քու պաշտպանութիւնդ՝ 'ի փառս ամենատուրբ Երրորդութեան փառաւորուի միշտ և յաւիտեան. ամէն։

Ի ՏՕՆԻ ՍՐԲՈՑՆ

ՑՈՎՍԵՓԱՅ ԱՍՏՈՒԱԾԱՀՕՐ

Ո՛վ երկնային պաշտպան, հզօր պահապան, ինչ երջանիկ մահ էր քու սուրբ մահդ, երբոր մէկ դին Յիսուս, մէկալ դին Աստուածածին քովդ կենալով, անոնց հոգևորական մխիթարութիւնները կը լսէիր, և դեռ արքայութիւն չգացած՝ իբր թէ արքայութեան մէջ կը վայելէիր, տեսնելով զՅիսուս, և զԱստուածածին, և անոնցմէ քաջալերութիւն առնելով։ Ասանկ երջանիկ մահուամբ մեռնելովդ՝ ով սուրբդ Աստուծոյ, գիտեմ որ դու

ալ կուզես ամմէնուն հանիլ իրենց մահուան առենը, որոնք զքեզ պաշտպան բռներ են՝ որ բարի մահուամբ աս աշխարհքէս ելլեն։

Հիմա ես 'ի խորոց սրտէ կաղաչեմ, ան իմ ներողութեան գէշ օրս՝ որ է մեռնելուս առենը՝ դու իրրև հայր և պաշտպան մեծազօր ինծի հասիր. երբոր մարմնոյս կողմէն տեսնեմ պիտոր շունչս դժուարցած, աչուըներս մթըն-ցած, ձեռուըներս անշարժ, մերձաւորներս դուրս փախած։ Հոգւոյն կողմէն ալ տեսնեմ պիտոր՝ որ մէկ չի-տեսնուած օտար աշխարհ մը պիտոր երթամ, ահեղ դատաստանին առջին պիտոր ելլեմ, իմ ամմէն գործքերուս վրայ անաչառ դատաւորին համար պի-տոր տամ։ Ա՛խ, տուրբդ Աստուծոյ, երբոր կը տեսնես զիս աս ներողութեան ատեն, հասիր ինծի վերէն երկնքէն իրրև գթած հայր մը, քովս գտնուէ ինչուան որ հոգիս աւանդեմ, որով փարատի յուսահատութիւնս, լու-սաւորուի հաւատքս, հաստատուի յոյսս, զօրանայ սէրս. որ քու հզօր

բարեխօսութեամբդ մեղքերուս թո-
ղութիւն առնելով՝ արքայութեան
երկնից արժանի ըլլամ։

Ա.ս աղօթքս որ հիմա կընեմ, ո՛վ
սուրբդ Աստուծոյ, կաղաչեմ որ եռքի
մահուանս օրը ըրածի պէս ընդունիս,
որովհետև չեմ կրնար ան առեղը ը-
նել։ Եւ այսօր ալ որ քու սուրբ օրդ
է՝ կը խնդրեմ մէկ զօրաւոր շնորհք
մը ինծի առնուս զղջման, որ առջի ը-
րած մեղքերս լամ, և ապէկ մը առա-
ջադրելով եռ կենամ մանաւանդ սոր-
բական մեղքերէս, բարի քրիստոնէի
կեանք ունենամ ինչուան մահս։

Ա.՛ղ աղօթք.

Ո՛վ երանեալ սուրբդ Աստուծոյ,
գո՛ւ միայն այնչափ փառք պատուե-
ցար, որ Աստուածահայր ըսուիլ ար-
ժանացար. վասն անչափ փառացդ
կաղաչեմ ընդունէ՛ ինծի շնորհք արթ-
նութեան. որ իմ մահս վրայ չեկած, ար-
թուն կենալով արժանապէս պատ-
րաստուիմ՝ ինչպէս որ կը պատուիրէ

տէրն իմ։ չըլլայ թէ մահը զիս մեղքի մէջ գտնէ։

Եւ ամէն բանէն վեր աս երեք բանը կը խնդրեմ որ ընես։ Մէյմը՝ յանկարծական մահուանէ զիս ազատես. չըլլայ թէ անպատրաստ ելլեմ աշխարհքէս, այլ ժամանակ ունենամ զղջում ընելու, սուրբ Աստուածածնայ և քու հզօր պաշտպանութիւնդ խնդրելու։ Երկրորդ՝ կը խնդրեմ որ ան հոգի հիւանդութեանս մէջ՝ խելքս մէկէն չիկորսնցընեմ, հապա գոնէ քանի մը օր մեռնելէս առաջ խելքս գլուխս եղած ըլլայ, որ հոգևոր պատրաստութիւնս կարենամ առնել՝ զղջալով, զիս բոլորովին Աստուծոյ նուիրելով։ Երրորդ՝ առէն ունենամ քահանայ գտնելու, ներանս բաց ըլլայ խոստովանելու. որ հոգի խոստովանանքս զղջացեալ սրտով ընելով՝ ամէն քրիստոնէական պատրաստութեամբ և սուրբ հաղորդութեամբ քու պաշտպանութիւնդ և հզօր բարեխօսութիւնդ գտնեմ։ Անանկով Աստուծոյ առջին ելլելով, արժանի ըլլամ Յիսուսի բերանէն լսե-

լու, Աշնիւ ծառայ, մուտ յուրախու-
թիւն տեառն քո. ամէն։

Ի ՏՕՆԻ ՍՐԲՈՅՆ

ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

Ո՛վ սուրբ Գրիգոր Լուսաւորիչ, որ առաջ անտանելի չարչարանքներովդ՝ էութիւնդ տանջուրս տարի խոր վիրապին մէջ անդադար աղօթելովդ՝ զիս շահեցար, հայր հաւատոյ ինծի եղար. քու քարոզութեամբդ գտայ ես աս սուրբ հաւատքս. որով սուրբ աւազանին միջոցաւութեան շնորհքին հասայ։ Բայց ես զայն շատոնց կորսնցուցի, հոգիս մեղքերով վիրաւորեցի, հաւատացեալ անուն ունեցայ, անհաւատի գործքեր ընող եղայ։

Կաղաչեմ այսօր քու բարեխօսութեամբդ ընդունիս ինծի մէկ շնորհք մը՝ որ հաւատքիս համեմատ գործք ունենամ. վասն զի մոլութիւններս՝ չար կիրքերս՝ տիրեր են՝ նման կռապաշտ թագաւորի, իմ սրտիս վրայ.

ինչպէս որ դու Տրդատայ անհաւատութեան՝ բռնութեան՝ հպարտութեան՝ աշխարհասիրութեան յաղթեցիր չարչարանքներդ քաշելով ու աղօթքով, ընդունէ ինծի ալ շնորհք՝ որ ես ալ հոգևորապէս պատերազմելով և աղօթքէ չլճանձրանալով՝ իմ չար ունակութիւններուս յաղթեմ։

Եւ ինչպէս որ զՏրդատ շահեցար, շակեցիր, հաւատացեալ՝ խոնարհ՝ աստուածասէր ըլլիր, ես ալ Տրդատայ պէս զիս շակեմ, առաքինի ըլլամ։ Թող դարձեր եմ իմ գարշելի մեղքերովս, դու հայր սուրբ՝ միրութեան շնորհքը նորէն ինծի դարձընելով Տրդատայ պէս իմ գարշելի մեղաւոր կերպարանքս փոխես, շնորհքով զարդարես։

Եւ ինչպէս որ սատանաները թող չէին տար կռատուն քակելու, դու խաչակնքելով մը մէկէն քակեցիր, եկեղեցի շինեցիր, սատանկ ալ այսօր երկընչէն վրաս խաչ հանելով օրհնէ իմ սիրտս՝ ուր սատանաները բռներ նստեր են կռատուն դարձուցեր են մոլութեամբ ու մեղքերով, թող չէն տար

գառնալ ու ապաշխարել, աս քարոզ-
ցեալ սիրաս այսօր քու օրհնելովդ
փոխուի, Հոգւոյն սրբոյ տաճար ու
եկեղեցի ըլլայ։

Յայրուն տօնի նորին.

Ո՛վ Ճշմարիտ հովիւ հոգւոց, նայէ
մէյմը երկնքէն իմ խեղճութեանս ու
ողորմելութեանս վրայ. լսէ այսօր իմ
ձայնիս, չեմ արժանի քու ողորմու-
թեանդ, վասն զի կամաւորապէս մե-
ղանչեցի։ Բայց քու բարեխօսութիւնդ
այսօր քու տօնիդ օրը զօրաւոր է առա-
ջի Աստուծոյ, մի բարկանար վրաս՝ այլ
ողորմէ. մի զրկեր զիս այսօր քու շը-
նորհքէդ. վասն զի քու անունդ վրաս
կոչուած է, քու որդիդ եմ, պտուղ
եմ քոց չարչարանաց և աղօթից. իմ
կորուելուս ատանան չուրախանայ,
չըսէ՝ որ քու զաւակիդ մէկը կորսըն-
ցուցի։

Ինչպէս որ Ճշմարիտ հաւատքիդ
զիս ժառանգ ըրիր, անանկ ալ այսօր
քու վարքիդ հետևող ըրէ, որ հարա-

զաս որդւոյ պէս վարքովս ալ քեզի նմանիմ։ Դու քարոզութիւնդ պըտ-զաբեր ընելէն եաւ՝ բիւրաւոր հոգի-ներ շահելէն եաւ ամէն բան Թողու-ցիր, Սեպուհ լեռը քաշուեցար, հոն ճգնութեամբ ու աղօթքով անցուցիր մնացած կեանքդ, օրինակ տալով ինծի՝ որ ամէն բաներէն վեր Թէ և ուրիշ-ներուն հոգւոյ շահը ըլլայ, իմ հոգիս պէտք է առաջ հոգամ, ուրիշներուն հոգը մէկդի Թողում։

Անոր համար ես ալ այսօր ամէն բա-ներէն աւելի աս կը խնդրեմ, ինծի հա-մար զօրաւոր շնորհք մը առնես, որ Թողում ուրիշ հոգերը՝ միայն ես իմ հոգիս հոգամ, սովորական մեղքերէս ես կենամ, աղէկ մը խոստովանելով առաջադրութեանս վրայ հաստա-տուն մնամ։ Վասն անուան քո ոմ հայր երանեալ, տուր ինծի այսօր աս շնորհքը, որ տակէց եաքը բարեգոր-ծութեանց հետ ըլլալով արքայութեան ժառանգ ըլլամ։ Երկինքը քովդ նստ-ելով Աստուծոյ երեսը՝ տեսնելու ու քե-զի հետ մէկտեղ զԱստուած փառաւո-

ընելու արժանի ըլլամ, ան առենը ե-
ւ ունենամ քու հարազատ որդիդ, քու
արդեամբդ և բարեխօսութեամբ
փրկութիւն գտնելով յԱստուծոյ։

Ի ՏՕՆԻ ՍՐԲՈՅՆ

ՅԱԿՈԲԱՅ ՄԾԲՆԱՅ

ՀԱՅՐԱՊԵՏԻ

Որչափ որ կը վախենք աստուա-
ծոյին բարկութենէ՝ որ մեր մեղքերը
կը պատժէ զարհուրելի ժանտախտին
պատժովը, այնչափ ալ աւելի աղա-
չանքով քեզի կը դիմենք ո՛վ հրաշա-
գործ սուրբդ Աստուծոյ, որ ամէն
ցաւէ՝ բայց մ՛ալ աւելի ժանտախտէ
կը պահես ո՛վ որ քեզի կը դիմէ։ Ցի-
րաւի՝ իմ մեղքերուս համար քիչ է առ
պատիժս, բայց ես աւելի կը վախեմ
հոգւոյս համար քան թէ մարմ-
նոյս, չըլլայ թէ ասանկ ժանտախտով
բռնուած ըլլալով զրկուիմ սուրբ խոր-
հուրդներէն, կամ թէ չնկրնամ աղէկ

պատրաստութիւն տեսնել. անանկով հոգիս կորսուի։

Հիմա ո՛վ սուրբդ Աստուծոյ, քու համարձակութիւնդ որ մեծ է Աստուծոյ առջին, մանաւանդ ասանկ ժանտախտէ խաչբսելու համար, ընդունէ իմ աղաչանքս չնայելով անարժանութեանս վրայ. պահէ զիս երբոր ճամբան կերթամ, երբոր ներս դուրս կը մտնեմ կելլեմ, վասն զի միշտ վտանգի մէջ կը քալեմ, ապաւէն մը չունիմ բաց 'ի քու հզօր պաշտպանութենէդ։ Զէ թէ մինակ ինծի համար կաղաչեմ, այլ նաև իմ ամէն ազգականներուս ու մերձաւորացս համար, որք միաբան քու ոտքդ կկենանք, արտասուելով կաղօթենք որ փրկես խաչես աս սատկիկ ու ահաւոր պատուհասէն Աստուծոյ։

Թէ որ Դաւիթ մարգարէին աղաչանքին չդիմացաւ պատուհասող հրեշտակն Աստուծոյ, այլ անբան անասուններուն պատարագով բարկութիւնը անցուց, սուրը ձգեց, հաշտուեցաւ, հիմա՝ երբ մենք ամէնքս

միաբան զանմեղ դառն անարատ՝ զՅիսուս միածին՝ պատարագ հանելով սուրբ սեղանին վրայ՝ անանկ կաղաչէնք քեզմով զամենասուրբ Երրորդութիւնը, ինչպէս աստուածային բարկութեան սուրը էտ չիդառնայ։ Ո՛վ սուրբդ Աստուծոյ, քու հայրութիւնդ այսօր է որ պիտոր ցուցնես մեր վրայ, քու պաշտպանութեամբդ այսօր զմեզ պաշտպանէ, որով և Աստուծոյ անհուն ողորմութիւնը և գթութիւնը փառաւորուի քու բարեխօսութեամբդ։ Մենք ալ ցնծութեամբ ասենք քու սուրբ յիշատակդ, և միշտ երախտագէտ ըլլալով գոհանանք Աստուծոյ բարերարութեանը վրայ հոս և 'ի հանդերձեալն արքայութեան մէջ. ամէն։

Ի ՏՕՆԻ ՍՐԲՈՅՆ ԱՆՏՈՆԻ

ԱՆԱՊԱՏԱԿԱՆԻ

Ո՛վ սուրբ հայր Անտոն, դլուխ ճգնաւոր անապատականաց, առաջնորդ հոգեւոր վարուց. դո՛ւ սրբութեանցդ ինչպէս պէտք էր ծառայել Աստուծոյ՝ մարդկինքերէ փախչելով, երկրաւոր մամուռքները թողլով, երկնային խորհուրդները մտածելով, դո՛ւ սրբութեանցդ զմարմինը ճգնութեամբ զսպել, աղօթքով մտածականով զմայլիլ, սատանայի փորձութիւններու դէմ դնել. Աստուծոյ միայն ծառայել, անանկով դժոխքի կրակէն նաև մարմնաւոր կրակէն պահպանող ու պաշտպան եղար մեզի։

Այսօր որ քու սուրբ ծնիդ օրն է, յիշէ՛ ո՛վ սուրբդ Աստուծոյ, ինչ քաշեցիր ինչուան որ աս շնորհքները առիր, իմ քաշածներս ալ տե՛ս հիմա, յիշէ. մէկ զօրաւոր շնորհք մը Հոգւոյն սրբոյ տո՛ւ ինծի համար, որ էս ալ

վարքս բոլորովին փոխեմ, քու վարուցդ հետևիմ։ Ցիշէ հիմա ինչ փառքի մէջ կը զմայլիս, քաշածներուդ վարձքը կը վայելես, իսկ ես ասանկ ողորմելութեան մէջ կը տառապիմ աշխարհքիս՝ մարմնոյ՝ և տառանոյն փորձութիւնները կը քաշեմ. դուռ որ ան փորձութիւնները քաշելով վրայ եկար, յաղթեցիր, վերէն երկնքէն վրաս նայելով փորձ եղողն պէս ողորմէ։

Մէկ դիէն մեղքերնուս հոգևոր կրակը զմեզ կը տանջէ, մէկալ դիէն մարմնաւոր կրակն զմեզ կը պատժէ։ Դուռ ով հզօր պաշտպան և բարեխօս, ան հոգևոր կրակին մեղքէն զմեզ պահէ մարմնաւոր կրակն ալ մարէ՛, Աստուծոյ բարկութիւնը վրանիրնէս հեռացուր։ Վասն զի անիրնիս տեղիրնիս քու հզօր պաշտպանութեանդ յանձներ ենք, քեզի ապաւիներ ենք հաւատով։ Քու բարեխօսութեամբդ, ով սուրբդ Աստուծոյ, արժանի ըրէ քրիստոնէական հանգստութեամբ առ աշխարհքիս մէջ անիրնիս խաղաղ անփորձ նստիլ, որ բարի գործքերու հետ

ելլալով անդին ալ արքայութեան մէջ զքեզ տեսնել, և քեզի հետ մէկտեղ զամենասուրբ Երրորդութիւնը միշտ փառաւորելու արժանի ըլլանք. ամէն։

Ի ՏՕՆԻ ՍՐԲՈՅ ՀՌԻՓՍԻՄԵԱՆՑ

ԵՒ ԳԱՅԻԱՆԵԱՆՑ

Ո՛վ լոյս հաւատոյ, ո՛վ սէր ապառաժային, որ այսօրուան սուրբ կուսանաց միտքը լուսաւորեցիր, արտերը-նին բորբոքեցիր։ Ի՞նչ հաստատութիւն շնորհաց՝ որ աշխարհքիս թագաւորութիւնը մէյմը ձգեցին, մէյմըն ալ երբոր ատուրնին եկաւ, ելլդարձան, ջուղեցին, քաջութեամբ մեկդի նետեցին։ Ի՞նչ սէր Յիսուսի, որ թագաւորութիւնը մերժելէն հետև ալ՝ չարաչար տանջանք յանձն առին, Յիսուսին համար կեանքերնին տուին։

Երբոր ես ատոնք կը մտածեմ, իմ վարքիս վրայ նայելով կը զարհուրիմ։ ո՞րչափ հեռու եմ ես ատոնց ճամբէն, որ աշխարհիս մեծութիւնը, փառքը,

հանգստութիւնը աղէկ կը սեպեմ, իսկ Աստուծոյ տուած խաչը՝ նեղութիւնը՝ դժար կը սեպեմ, կը տժգոհամ։ Հիմա այսօրուան սուրբ կուսանաց արդիւնքովը, ոչ Հոգիդ սուրբ, առջևդ կկենամ կաղաչեմ, անոնց հաւատքին՝ անոնց սիրոյն՝ մէկ շնորհքը տուր ինծի ալ, որ ես ալ անոնց ճշմարիտ քրիստոնէութեանը նմանիմ։ Մի նայիր իմ անարժանութեանս վրայ, այլ յիշէ ան օրը՝ երբոր աս սուրբ կուսանքը մէկ դիէն տանջանք կը քաշէին, մէկալ դիէն բորբոքեալ սրտիւ քեզի աղօթք կընէին։

Ես ալ հիմա անոնց աղօթքը քեզ կը մատուցանեմ, և կը խնդրեմ որ տաս ինծի անոնց շնորհքը մաքրութեան և յարատևութեան. տակից եաքը լեզի երևնայ ինծի աշխարհիս հանգստութիւնն ու վատքը, և սիրելի ըլլայ Յիսուսին խաչը և բաժակը՝ որ իրեն սիրոյն համար ինչուան արիւնս թափելու յանձն առնում։ Աս սուրբ կուսանաց արիւնը պատճառ եղաւ մեր հաւատքին լուսաւորութեանը, ասոնց

բարեխօսութեամբն ալ լսէ իմ աղաչանքիս, հաւատքս լուսաւորէ որ հաւատքս գործքով կատարող ըլլամ. յոյսս հաստատուն ըրէ, որ ամօթով չելլեմ, Աստուծոյ սէրը սրտիս մէջ վառէ, որով զգայարանքներս սուրբ մաքուր պահեմ, աշխարհի՝ մարմնոյ՝ սատանայի յաղթող ըլլալով սրբոց հետ մէկտեղ զամենատուրբ Երրորդութիւնդ փառաւորելու արժանի ըլլամ. ամէն:

ԱՂՕԹՔ ԱՌ ՊԱՇՏՊԱՆ ՍՈՒՐԲ

ՍՔԱՆՉԵԼԱԳՈՐԾ

Ո՛վ սուրբդ Աստուծոյ ընտրեալդ 'է Հոգւոյն սրբոյ, ես անարժանս թէպէտ լցեալ եմ մեղօք, բայց համարձակելով 'ի հզօր բարեխօսութիւն քո՝ կընտրեմ զքեզ պաշտպան, և կաղաչեմ որ քոյ բարեխօսութիւնդ անպակաս ընես ինծի համար, հանիս ինծի երկնային զօրութեամբդ՝ որչափ որ հոգևոր ու մարմնաւոր վտանգներու մէջ եմ,

և որչափ որ զքեզ օգնութեան կանչեմ ինձի։

Յիշէ՛ զի սուրբդ Աստուծոյ՝ որ աստուածային անհուն զօրութիւնն զքեզ խալսցընելով աս աշխարհիս փորձութենէ՝ անանկով ժառանգ եղար երկնային արքայութեան, կը վայելես, կը զմայլիս հիմա աստուածային տեսութեամբ. իսկ ես դեռ աշխարհքիս մէջը ըլլալով, խռովութեան ու ալէկոծութեան մէջ եմ. հոգիս ալ մարմինս ալ միշտ կը չարչարուի, մեղքով ալ լեցուած ըլլալով՝ չեմ կրնար համարձակիլ շիտակ դիմել առ Աստուած՝ զոր մեղքերովս բարկացուցի։ Քեզի կը համարձակիմ իմ պակասութիւններս բանալ. դու ալ վերէն երկնքէն շուտ մը ձայնս լսելով՝ միջնորդ ըլլաս Աստուծոյ, ամէնէն առաջ մեղքերուս թողութիւն առնուս. զիս հաշտեցընես Աստուծոյ հետ. Հոգւոյն սրբոյ զօրութիւնը ինձի պարգևել տաս, որ քանի փորձութիւն բերեն ինձի սատանան, մարմինս, ու աշխարհ, մեղքի մէջ չինամ, վրայ ելլեմ։

Անկէց եաքը ինչ որ մարմնաւոր կա-
րօտութիւն ունենամ, քնելի դիմեմ,
գոնէ ալ հանիս հոգաս՝ որ իմ հոգիս
ալ կարենայ անդրադառնալ Աստուծոյ ծա-
ռայել։ Հիւանդութեանս առենը հա-
սիր բժշկէ, առուստուրիս մէջ շնորհք
տա՛ր ինծի առանց մեղաց արդարու-
թեամբ ընելու, և յաջողութիւն տո՛ւր
չափաւորապէս վաստակելու, ո՛րչափ
որ պէտք է որով ապրինք Աստուծոյ
ծառայելու համար։ Շատ ճախորդու-
թիւն, շատ կարօտութիւն չունենանք,
ըլլայ թէ մեր միտքը սիրտը աւելի
զբաղեցընենք անով աշխարհային հո-
գերու մէջ, որով հոգիներնուս միտ
ըլլայ։ Զանազան փորձանքներէ, կը-
րակէ, մահտարաժամէ, գո՛ւռ մեր տու-
նը պահես, յանկարծական մահուա-
նէ փրկես, քաղաքական չար պա-
տահմունքներէն որ կրնան հանդիպիլ
նստելու՝ ելլելու առեննիս, ծովու վը-
րայ, ցամաքի վրայ, ճամբորդութեան
մէջ, տանը մէջ, զմեզ ամէնքս պա-
հես միշտ ու պահպանես։

Ամէն բանէն աւելի կը խնդրեմ, մեռ-

նելու առենը քովս գանուիս որ հոգևոր պատրաստութիւնս ամբողջ տեսնելով ինչպէս որ պէտք է, անանկով քեզի հետ մէկտեղ զամենատուրբ Երրորդութիւնն փառաւորելու արժանի ըլլամ երկինքը։ Եւ ալ կառաջադրեմ՝ որ միշտ քեզի ծառայեմ սուրբդ Աստուծոյ, քու անունդ պատուեմ ուքարոզեմ 'ի փառս ամենակալին Աստուծոյ։

Հայը մեր որ յերկինս է։
Ողջոյն քեզ Մարիամ։

Հիւանդանոցեան մէջ, կամ ուրիշ վանգնէրու մէջ ու հիւանդ աղջիկ ալ պուրջէ։

Որ բուժեցեր զանբուժելիս,
Զիմոյս բուժեա՛ ըզցաւ անձինս,
Ի դառնութեան ժամանակիս,
Հա՛ս 'ի թիկունս, անսա՛ ձայնիս։
Որ զանարժանս, և զարժանիս,
Միօրինակ յիշես, հայիս.
Զիմոյս յիշեա՛ զանձինս կարիս,
Գիծած աչօքդ յիս հայեսցիս։
Եւ ապահաս քոյին շնորհիւդ,
Ճարտար մատամբքդ յիս մերձեսցիս։
Բարեխօսող հըզօր բանիւդ,
Փարատեսցես ըզվիշտս վտանգիս. ամէն։

ԱՂՕԹՔ

ԱՌ ՊԱՀԱՊԱՆ ՀՐԵՇՏԱԿ

Ո՛վ պահապան հրեշտակ, դու եմ որ յատուկ պահապան գրուած եմ յԱստուծոյ իմ անձիս վրայ, քեզի յանձնուած է հոգիս ու մարմինս որ պահես։ Կաղաչեմ զքեզ որ իմ անարժանութեանս համար զիս թողուս, տեսնելով զիս մեծամեծ մեղքերու մէջ չարաչար պլըշտիկուած, որ դանիլ կը բերեն քու հրեշտակային բնութեանդ. չըլլայ որ զիս երեսէ ձգես, այլ օրինակ առնելով Յիսուսէն, որ մեղաւորներուն քովը կերթար շահելու համար, դու ալ նայէ որ զիս շահիս։ Անոր համար ո՛րչափ մեծ մեղաւոր ըլլամ՝ զիս մի թողուր, քու պաշտօնդ լման կատարէ զիս պահելով ամէն հոգևոր և մարմնաւոր վտանգներէ, անոր տեղը չար սատանան հալա-

ծէ քովէս, իրեն բերած փորձութիւն-
ները խափանէ, տանս մէջ խաղաղու-
թեամբ պահէ, ամէն խռովութենէ և
մեղքէ հեռու պահէ, Ճամբու առու-
տուրի մէջ՝ խօսքս, գործքս, և կամքս
դու շակէ 'ի բարին, որ ամէն օրուան
գործքս 'ի փառս Աստուծոյ ընեմ, Ա-
ստուծոյ կամքը կատարեմ։

Քեզ յանձն ըրաւ զիս Աստուած,
դու հոգա ով հրեշտակդ Աստուծոյ,
բարեկամ ազգի մարդկան, որ հա-
ւատքս լուսաւոր մնայ, գործքով կա-
տարեմ հաւատքս, յոյսս զօրանայ,
սէրս շատնայ, բաց յԱստուծոյ չսի-
րեմ ուրիշ բան։ Երբոր աղօթքի նըս-
տիմ, սատանան որ խիստ հակառակ է
աղօթքի, ձանձրութիւն կը բերէ,
միտքս կը ցրուէ, դու ան տեղն զսա-
տանան հալածէ, միտքս վրաս ժողվե-
լու օգնութիւն ըրէ, և իմ ըրած ա-
ղօթքս Աստուծոյ առջևն հանել տուր,
Աստուծոյ հաճոյական ընդունելի ը-
նել տուր։ Ամէնէն աւելի կաղաչեմ
որ մեռնելուս տեղն քովս գտնուելով,
քու պահպանութեամբդ չար սատանա-

ներբը վերնաբերով, Ճանապարհորդակից ըլլաս մէկտեղ տանելու զիս երկնային սուրբ լեռը՝ Փրոտոսի առջին, և ահաւասիկ դատաստանին առնելը իմ տեղս խօսելով և բարեխօսելով, քու օգնականութեամբդ արժանի ըլլամ զԱստուած տեսնել, և սրբոց հրեշտակաց հետ զԱստուած օրհնել յաւիտեան. ամէն։

G. Busato Dis. A. Tedeschi Inc.

Quoqu[…] Zinchi zulpu[…]
f. […] Ut pauper[…] pecunia[…] impu[…]

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

ՄԱՀՈՒԱՆ

Եւ դուռ էղէրսուռ պարբասուռ. ղի յորամ ժամու ոչ ան ունէցիք, գայ ուրդի մարդոյ։ Արթնուան կացէք, ղի ոչ գիտէք ղօրն, և ոչ ղժամն։

Թէպէտ ամէն օր պէտք է քրիստոնէին աղօթքով և զղջումով պատրաստ կենալ մեռնելու, բայց այս հետևեալ աղօթքներս կրնայ շաբաթը անգամ մը, կամ ամիսը անգամ մը զուրցել. սով երկու հոգևոր շահ կրնայ շահիլ։ Մէյմը՝ մահուան յիշատակը միշտ աչքին մէջ կը պահուի, որ է ընդհանուր հարկաւոր խրատ տուրը զրոց։ Երկրորդ՝ մահուան ատենը չկրնալով ընել, հիմակուան ըրածները ընդունելի կըլլան Աստուծոյ։ Այսքէց զատ՝ ասոնք անանկ աղօթքներ են, որ կրնան նաև զղջման աղօթքի տեղ անցնիլ ամէն խոստովանանքէն առաջ կամ ետև։

Աղօթք պատրաստութեան 'ի մահ.

Երբեմն կը հանեմ, տէր իմ, այն օրը որ պիտոյ ձգեմ աս մարմնոյս բանտը, եկեղեմ երևնամ Աստուծոյդ առջին, ըղդայարանքներս կապուած կըլլայ, չեմ կրնար ան առեղը իմ պատրաստութիւնս տեսնել, հիմա ողջութեանս առեղը կընեմ խնդրուածքս էտքի օրուանս համար։

Դու, տէր իմ, հիմակուան ըրած աղօթքս ընդունիս՝ երբ թէ ան առեղը ընէի, և ողորմիս ինծի ան թշուառութեան օրը երբեմն աչուընեբս չեն տեսներ, ականջներս չեն լսեր, միտքս խաւարած կըլլայ, սիրտս և բոլոր մարմնոյս ալէկոծութեան մէջ կեցնայ. վասն զի բոլոր մարմնոյս շէնքը պիտոյ քակուի, աւրուի, ան առեղը յիշէ տէր իմ, քու ստեղծուածդ ինչ ղծառայ քո, որ կեանքը լմնցուցած՝ ուրչափ տարի որ ապրիլ դրեր էիր յաւիտենից, կը թողու հիմա այս մարմինը գերեզմանի մէջ հողին տակը. խակ

հոգիս կենին դատատանիդ առջին իր վճիռը լսելու։

Ան օրը՝ յորում մարդ մը չիկրնար ենծի օգնութեան հասնիլ, ան ժամն՝ յոր սուրբք և արդարք կը դողան, դու ալ ահեղ դատաւորդ, արդարութեան սթռոը նստած, անաչառ պիտոր դատես իմ ամէն գործքս՝ պզտիկ ու մեծ, հոգևոր ու մարմնաւոր, և եռքի վճիռը պիտոր տաս կամ կորուստ յաւիտենից, և կամ կեանք յաւիտենական։

Ա՛խ, յիշես ան ատենը, տէր իմ, աղաչեմ, որ թէպէտ ծանրացեալ եմ մեղօք, բայց քու ձեռաց ստեղծուածն եմ, դո՛ւ ստեղծեցիր, դու ապրեցո՛ զիս յաւիտենական մահուանէ։ Յիշէ՛ տէր իմ, թէպէտ անթիւ են իմ մեղքերս՝ զորս ամէն զգայարանքներուս գործեցի պզտիկուց սկսեալ, բայց դո՛ւ ըրիր աս սիրոս՝ աս միտքս՝ աչքս՝ բերանս և ամէն զգայարանքներս, հիմա ինչպէս թողուս՝ որ աս քու ձեռագործդ դատապարտուի, ինչպէս թողուս՝ որ աս քու ստեղծուածդ՝ թշնամւոյդ սատանային ձեռքը անցնի։ Աղաչեմ տէր իմ,

վան արարչագործութեան սիրոյդ՝ որ-
ով կը սիրես ամէն քու արարածդ,
և չես ուզեր որ սաեղծուածներդ մէկ
պղտիկ մ՚ալ կորսուի, ան սիրոյդ
համար մի թողուր որ կորսուիմ, վասն
զի քու պատկերդ եմ։

Սաղմոս.

Մի մոռներ 'ի դատաստան ընդ-
ծառայի քում, զի ոչ արդարանայ ա-
ռաջի քո ամենայն կենդանի։

Օգնեա մեզ Աստուած փրկիչ մեր,
վասն մեծի փառաց անուան քո։

Խօսեցայ լեզուաւ իմով և ասացի.
ցոյց ինձ տէր զկատարած իմ, և զթիւ
աւուրց իմոց քանիսն է, զի գիտացից
թէ որչափ պակասեալ է յինէն։

Ահա չափով եդեր զաւուրս իմ, և
կար զօրութեան իմոյ որպէս ոչինչ է
առաջի իմ, սակայն ամենևին ընդհան-
նոյն է ամենայն մարդ մեղի։

Ապաքէն որպէս 'ի պատկերի շրջի
մարդ, սակայն 'ի զուր խռովի. դան-
ձէ, և ոչ գիտէ ում ժողովէ։

Իսկ արդ՝ ոմ է համբերութիւն իմ, թէ ոչ դու տէր, կամ կար զօրութեան իմոյ՝ թէ ոչ 'ի քէն։

Ապացի դու Էս Աստուած իմ, և 'ի ձեռս քո է ժառանգութիւն իմ։

Փրկեա՛ զիս 'ի ձեռաց թշնամեաց իմոց, և 'ի հալածչաց իմոց։

Երևեցո՛ զերեսս քո 'ի ծառայս քո, ապրեցո՛ զիս տէր ըստ ողորմութեան քում, տէր մի՛ յամօթ եղէց, զի կարդացի առ քեզ։

Ո՞րպէս զի բազում է ողորմութիւն քաղցրութեան քո տէր, զոր պահեցեր երկիւղածաց քոց։

Ա՛յլ աղօթք։

Երբոր իմ ըրածներս կը յիշեմ, վարքս միտքս կը բերեմ, կը յուսահատիմ բոլորովին, վասն զի դու ստեղծեցիր որ քեզ ծառայեմ, զքեզ սիրեմ յամենայն սրտէ, յամենայն զօրութենէ մտաց, Էս չէ թէ ամենն սըրտով չեմ սիրած, հապա ամենևին չեմ սիրած, մանաւանդ քու թշնամւոյդ՝

աշխարհի՝ մարմնոյ՝ սատանայի ծառայեր եմ՝ գոնե տպավորեցիր որ երբայրս ալ սիրեմ, ես չէ թէ չեմ սիրած, հապա թշնամութիւններ ըրեր եմ՝ առէլով, զրկելով, ոխ պահելով, բամբասելով։ Երբոր ասոնք իմ գիմացս բերէ սատանան գատաստանի առջին, երբոր մէկիկ մէկիկ յիշեցընէ քու արդարութեանդ առջին, աս հոգին ինձ է, ինծի ծառայեց ըսելով ուզէ զիս իր հետը տանելու, ես ինչ պիտոր ընեմ ան սարսափելի տեղը. ուրիշ ճար չունենալով հիմակուընէ կը վազեմ կը փաթթուիմ տուրբ խաչին ոտքը, և կաղաղակեմ։ Ո՛վ արդարութիւն Աստուծոյ՝ ես մահապարտ եմ, գատապարտուած եմ, բայց նայէ ինչ տեղ ապաւիներ եմ. աս տուրբ խաչն է՝ որ Մարիամ Մագդաղենացւոյն մեղքը լուաց, աւազակը արբացուց, Բարաբան խաչացուց, հեթանոս հարիւրապետը փրկեց, ես որ աս տուրբ խաչին պլուսեր կեցեր եմ, մէկը զիս չկրնար քաշել առնել, մէկը զիս չկրնար գատապարտել։

Եւ դու, ո՛վ բարի Յիսուս, յիշէ որ Քոյի օրդ ինչ նեղութիւններ քաշեցիր. խաչին վրայ թեւերդ բացիր զիս մեղաւորս գրկելու համար, հինգ վիրաց վերաւորեցար, սուրբ արիւնդ դեռի մը պէս վազցուցիր, որ իմ մեղքերս իմ աղտաւորութիւնս լուանաս. ահա հասաւ ան օրը՝ ան ժամը՝ որ զիս սրբես, զիս գրկելով ազատես թշնամիներուն ձեռքէն՝ որ կուզեն զիս տանել։

Ամէն բարեկամներէ նաև երկնաւոր Հօրէն թողուեցար, բայց ինչպէս որ դու մեղաւորները չթողուցիր, քու կողդ բացիր, տեղի ապաստանի ցուցիր, Քոյն ալ մեղաւորաց համար գլուխդ խոնարհեցընելով՝ սուրբ հոգիդ երկնաւոր Հօրդ ձեռքը ուղարկեցիր, պահէ անանկ է նէ զիս զմեղաւորս քու խաչիդ զօրութեամբը։ Վասն զի իմ հոգիս ալ ամէն տեղծուածներէն թողուած՝ ապաւինելու տեղ կը մնայ. քու խաչելեալ գիրկդ կը դիմէ, բացուած կողդ մէջը կապաւինի, ընկալ զիս, թող տո՛ր որ քեզի գամ։ Ահա կը թողում զաշխարհ,

քու ձեռքդ կաւանդեմ իմ հոգիս, նե-
րէ՛ մեղքերուս, մի ձգեր երեսէդ, վա-
սին զի դու ես Աստուած փրկիչ իմ։
առաջի քո է ամենայն ցանկութիւն
իմ, առ քեզ փափաքի հոգի իմ։

Աղաչեմ Յիսուս փրկիչ իմ, վասն
փրկագործութեան սիրոյդ՝ որով զիս
սիրեցիր, և իմ փրկութեանս համար
այսչափ չարչարանք քաշեցիր, աս
ժամէս զիս փրկէ, աստուածային ար-
դարութենէ զիս ազատէ։

Սաղմոս.

Տէր, փրկեա զմեզ, և քաւեա ըզ-
մեղս մեր վասն անուան քո։

Փրկեա զիս՝ի թշնամեաց իմոց, տէր,
զի զքեզ ապաւէն ինձ արարի։

Պանդուխտ եմ ես առաջի քո, նրժ-
դեհ և անցաւոր որպէս ամենայն
հարք իմ։

Թոյլ արա՛ ինձ զի հանդիսայց. մինչ-
չև երթեալ լցեմ, ուստի ոչ ևս դառ-
նիցիմ։

Հանեա զոգի՝ի նոցանէ, պակասին
և՝ի հող դառնան։

Առաքեա զոգի քո և ստանան զնո-
սա և նորոգես զերեսս երկրի։

Գարձ անձն իմ՝ի հանգիստ քո, զի
տէր օգնեաց քեզ։

Փրկեաց զանձն իմ 'ի մահուանէ,
հաճոյ եղէց առաջի տեառն յերկրին
կենդանեաց։

Լէր իմ Աստուած պաշտպան, և
տուն ապաւինի ապրեցուցանել զիս,
զի հզօրիչ իմ և ապաւէն իմ դու ես։

Վասն անուան քո տէր առաջնոր-
դեցեր ինձ, և սնուցեր զիս, և հանցես
զիս յորոգայթէ յայսմանէ որ թաղուա-
ցաւ ինձ։

Դու ես պաշտպան իմ տէր, և 'ի
ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ։

Այլ աղօթք.

— Յոյս մեր Բանդ Աստուած, և միջ-
նորդ փրկութեան մերոյ Յիսուս Քրիս-
տոս, երբոր հոգեվարութեանս ատենը
կը հասնիմ, երբոր ես վերջին թոշակս
առած սուրբ հաղորդութեամբ կը
պատրաստուիմ քու դատաստանիդ

առջին եղնելու, ուրիշները կը պատ-
բաստուին հողին տակը զիս թաղելու,
սատանաները՝ այսք չարութեան՝ օ-
գոյն մէջը կը լեցուին հոգիս արդիլե-
լու որ զԱստուած չտեսնեմ, իրենց
պէս արտաքին խաւարը մնամ. բան-
սարկուն իր նախանձէն լեցուած, ար-
քանեակներով վրաս պիտոր վազէ, դա-
տաստանիդ առջին պիտոր քաշէ, ար-
գարութեամբ պիտոր ուզէ զիս դատա-
պարտել տալ, իմ մեղքերուս թիւը
առջիդ թափելով, մահացու և ներելի
մեծ ու պզտիկ մեղքերս յիշեցնելով,
դու արդար անաչառ դատաւորդ թէ
որ ան տեղը արդարութիւնդ մինակ
նայելու ըլլաս, էս պարտաւոր կե-
նեմ, կը դատապարտուիմ յաւիտե-
նից կորուստը. բայց մեկալ կողմէն
յիշէ ան տեղն քու դթութիւնդ, մա-
նաւանդ ամմէնէն աւելի յիշէ քու ը-
ստածներդ։ Դու ըսիր, տէր իմ, ան-
տուտ բերնովդ. Ոչ ոք ուրիշ 'ի սմանէ՝
մի մեռանիցի։ Եթէ ոք ուրիշ 'ի հայրէ յայս-
մանէ՝ թերցէ 'ի յաւիտեան։ Հիմա էս եմ
որ ճաշակեր եմ քու տուրբ հացդ,

որ է քու սուրբ անմահական մարմինդ, մէկ մարմին և արիւն եղէր եմ քու հետդ, ինչպէս պիտոր դատապարտես մեռցընես յաւիտենական մահուամբ, ինչպէս կրնաս մոռնալ քու խօսքդ իմ չարութեանս համար։ Դուն ըսիր որ. Ես հինգանի եմ վասն հօր, և որ ուրիշն ալ է, և նա հինգնի վասն իմ։ Ես չէ թէ միայն մէկ անգամ, հապա շատ անգամ ճաշակեր եմ զքեզ, ով անմահ հաց, և խմեր եմ սուրբ արիւնդ անմահ բաժակէն, ան անգին արիւնը՝ որուն մէկ կաթիլը հերիք է ամէն աշխարհ փրկելու։

Յիրաւի ես արժանի եմ բիւր դատապարտութեան, վասն զի ուրիշ անթիւ մեղքերէս զատ՝ քու սուրբ մարմինդ ալ անարժանութեամբ ու սրբապղծութեամբ առեր եմ շատ անգամ. բայց տէս տէր, որ քու սուրբ արիւնդ իմ սիրտս ընդուներ եմ, ինչպէս դատապարտուի ասանկ քրիստոնեայն. ինչպէս խոպալիկ ըլլայ սատանայն իմ մարմինս՝ որ քու սուրբ մարմնովդ կերակրուած է։

Անանկ է նէ մինակ ասոր համար որ չըլլայ թէ սատանան ծաղը ընէ աւետարանին խօսքը, կաղաչեմ իմ մեղքերս քու սուրբ արեանդ համար լուանաս, քաւես, գոցես, և քու սուրբ մարմնովդ անմահացընես յաւիտենական կեանք։ Մի ասասցէ թշնամին թէ յաղթեցի նմա, կամ նեղիչք իմ ցնծասցեն, թէ ես սասանեցայց։ Ես յոդրմուելիւնս քո տէր յուսացայ, ցնծացաւ սիրտ իմ'ի փրկութեան քումմ, օրհնեցից զտէր զբարերարդ իմ։ Լուր մեզ Աստուած փրկիչ մեր, յոյս ամենայն ծագաց երկրի։ Եւ ով է մեր յոյսը և փրկիչը, եթէ ոչ դու Յիսուս, ով է մեր բարեխօսը, եթէ ոչ դու Նորոց կտակարանաց միջնորդ Յիսուս, որոյ հեղումն արեան առաւել խօսի քան զՀաբելին։

Տէր, առ ո՞վ երթիցուք, բանս կենաց յաւիտենականաց ունիս, և մեք հաւատացաք և ծանեաք։ Տէր, որո՞ւն երթանք, որո՞ւն խնամք ասանկ թշուառութեան օրը, ուր մէկ բարեկամ մը չեկրնար օգնել. քեզի կը դիմենք, որուն քովը

անանկ խօսք կայ որ յաւիտենական կեանք կը բերէ։ Ամանկ ըսաւ Պետրոս առաքեալը, երբոր ըսեց որ քու սուրբ մարմինդ պիտոր ըլլայ մեզի հաց կենդանարար։ Քու խօսքդ բռնելով թէ ո՛վ որ սուրբ մարմինդ և արիւնդ ճաշակէ, յաւիտենական կեանք կունենայ, աս անսուտ խօսքիդ բոլորով սրտիւ հաւատալով, քու սուրբ մարմնովդ կերակրեցայ, ինծի թոշակ ճանապարհի առի։ Թէ որ գործք մը չունիմ, գոնէ հաւատքիս համար հասիր ինծի, ազատէ զիս արդար բարկութենէդ, վասն զի հաւատացաք թէ՝ Դու ես որդի Աստուծոյ կենդանւոյ։ Մատիցուք այսուհետև համարձակութեամբ առաջի աթոռոյ շնորհացն նորա, զի ընկալցուք ողորմութիւն, և գտցուք շնորհս՝ի դէպ ժամանակի օգնականութեան։

Սաղմոս.

Կերկցեն անանկք և յապեսցին, օրհնեսցեն զանէր, որ խնդրեն զնա։

Կերան և երկիր պագին նմա ամենայն պարարքք երկրի, առաջի նորա անկցին ամենեքեան որ իջանեն 'ի հող։

Անձն իմ նովաւ կեայ, և զաւակ իմ ծառայեսցէ նմա։

Պատմեսցի տեառն ազգ որ գալոցն է։

Որպէս գթայ հայր 'ի վերայ որդւոց իւրոց, այնպէս գթացի տէր յերկիւղածս իւր։

Զի նա գիտաց զստեղծուածս մեր, և յիշեաց թէ հող եմք։

Մարդոյ որպէս խոտոյ են աւուրք իւր, որպէս ծաղիկ վայրի՝ այնպէս ծաղկէ։

Ընչէ 'ի նմա հոգի, և ոչ է, ոչ ևս երևի տեղի նորա։

Բայց ողորմութիւն տեառն մինչ յաւիտեան յաւիտենից 'ի վերայ երկիւղածաց իւրոց։

Տէր յերկինս պատրաստեաց զաթոռ իւր. արքայութիւն նորա ամենեցուն տիրէ։

Այլ նա ինքն դիւաց էր, քաւէր ըզմեղս նոցա, և ոչ ապականէր։

Յաճախէր դարձուցանել զբարկութիւն իւր։

Յիշեաց թէ մարմին են նոքա, հոգի որ երանէ՝ այլ ոչ ևս դառնայ։

Այլ աղօթք.

Տէր, առանց քեզ ես մէկ ոչինչ մըն եմ, առանց քեզ թշուառութիւն եմ, նոյն ինքն մեղք եմ, ամէն աշխարհիս բարիք՝ չարիք են, առանց քու օգնութեանդ կկնիմ, կոչընչանամ։ Մի թողուր զիս երբեք։ Տէր իմ, քու ստեղծուածդ եմ, քու արեամբդ փրկուած, մի թողուր ապարինչ իմ, թագաւոր, լոյս, կեանք և ամենայն ինչ իմ։ Ես զքեզ ուրացայ գործքերովս, ես քեզի թշնամութիւն ցուցի, դու ինծի գթութիւն ցոյց։ Իմ բնութիւնս մէկ որդ մը, հող և ապականութիւն

մին է, դու ինքդ ասուածութիւն, լոյս, կեանք, բարերարութիւն, գթութիւն, որ չես կրնար ուրիշի չարիք հասուցանել։ Միշտ ներող, միշտ գթած, գթա՛, ներէ՛ ինծի ու մարդասէր տէր Հոգի ասենս, երբոր պիտոր լմընեամ, երբոր պիտոր երթամ մէկ աշխարհ մը որ չկայեմ։ Առաջնորդ, ուղեկից լեր տէր մարդասէր աս Ճամբուս մէջ՝ որ ըսիր. Ես եմ Ճանապարհ, և Ճշմարտութիւն, և կեանք։

Սաղմոս.

Դարձոյց զանձն իմ առ իս, և առաջնորդեաց ինձ 'ի Ճանապարհս արդարութեան վասն անուան իւրոյ։

Թէպէտ և գնացից ես 'ի մէջ ստուերաց մահու, ոչ երկեայց 'ի չարէ՝ զի դու տէր ընդ իս ես։

Ողորմութիւն քո տէր զհետս իմ եկեսցէ զամենայն աւուրս կենաց իմոց. բնակիլ ինձ 'ի տան տեառն ընդ երկայն աւուրս։

Տէր ապաւէն եղեր մեր ազգէ մինչև յաւիտ։

Հաղար ամ յաչս տեառն որպէս օր երեկի զի անց, որպէս պահ մի գիշերոյ։

Ամենայն աւուրք մեր նուազեցան, և 'ի բարկութենէ քումմէ խռովեցաք։

Ժամանակ ամաց մերոց անդադար որպէս սարդի, և թիւ աւուրց մերոց 'ի նոսա եօթանասուն ամ։

Ապա թէ առաւել ևս ուժասուն ամ, որ ինչ աւելի քան զայն՝ ցաւօք և հեծութեամբ։

Դարձ տէր, մինչև յե՞րբ. մխիթարեա՛ 'ի ծառայս քո։

Հայեաց տէր 'ի ծառայս քո, և 'ի գործս ձեռաց քոց, առաջնորդեա՛ որդւոց նոցա. և եղիցի լոյս տեառն Աստուծոյ 'ի վերայ մեր։

Ամ աղօթք.

Ո՛վ որ վասն իմ երկինքը թողուցիր, երկիրս եկար, մարմին առիր մարդ եղար, ողորմեա՛ ինձ։

Ո՛վ որ վասն իմոյ փրկութեան երանելի արարչիս վրայ աշխատեցար, 'ի հասեալ ժամուս ողորմեա՛ ինձ։

Ո՛վ որ վասն իմ արժանի համարեցար սուրբ արիւնդ թափելու, 'ի ցաւագին ժամուս ողորմեա՛ ինձ։

Դու ան տէրն ես, որ զիս ազատելու համար անչափ խորհուրդներ սահմանեցիր։

Դու ան Աստուածն ես, որ իմ փրկութեանս ճամբայ բանալու համար՝ անչափ գանձ շնորհաց բացիր բաժնեցիր։

Հիմա ես հասեր եմ իմ վերջի ատենս, կը մեռնիմ, քեզի կուգամ, մի դարձըներ՝ երեսդ. մի պարապ հաներ քու անչափ աշխատանքդ ո՛վ տէր զօրութեանց։ Յիսուսիդ անուանը ապաւիներ եմ բոլորով սրտիս, անուն որ

'ի վեր է քան զամենայն անուն, յորոյ անուն ամենայն ծունր կրկնեսցի երկնաւորաց, երկրաւորաց և անդարձեալոց։ Զարթո՛ Յիսուս զզօրութիւնս քո, և եկ 'ի կեցուցանել զմեզ։ Աստուած զօրութեանց դարձո՛ զմեզ, երևեցո՛ զերեսս քո 'ի մեզ և կեցցուք։

Յիշէ՛ քու խօսքերդ որ ըսիր. Այժմի դոփոսոփան է աշխարհիս այսորիկ, այժմի իշխան աշխարհիս այսորիկ ընկեսցի արտաքս։ Դուրս ելի՛ հալածէ սատանան, որ իշխան եղեր է աշխարհիս. դու որ լիմպոսին դժոխքը քակեցիր, արդարոց հոգիքը սատանային ձեռքէն խլեցուցիր։

Յիշէ՛ քու խօսքդ որ ըսիր. Ես է՛ յորժամ բարձրացայ յերկրէ, զամենեսին յիւրս առնցի։ Ես ալ ան հաւատացեալներուն համրանքին մէջէն եմ, դու որ բարձրացար փայտին վրայ, ձեռուընդերդ տարածեցիր խաչին վրայ մեղաւորները գրկելու՝ զիս ալ գրկէ, զիս ալ քեզի ձգէ ամենակալ ձեռքովդ, չըլլայ թէ յափշտակէ զիս առիւծը։ Նայեաց յիս աչօք ողորմութեան քո։

Իսկ արդ՝ յիշեա և տես թէ ո՞վ է իմ հանդիսատ, մինթէ՝ 'ի զո՞ւր լինչ առեղծեր զամենայն որդիս մարդկան։ Ո՞վ է մարդ որ կեցցէ և ոչ տեսցէ զմահ. կամ փրկեսցէ զանձն իւր 'ի ձեռաց դժոխոց։ Ո՞ւր են ողորմութիւնք քո առաջինք, զոր երդուար Դաւթի Ճշմարտութեամբդ քով։

Ո՛վ խաչ փրկութեան, ապաւէն յաւուր մահուան։ Ո՛վ խաչ աղբիւր բարութեան, մեղաւորաց ապաստան։ Ահա տեսանեմ զտէրն իմ Քրիստոս բազկատարած խաչէն կախուած, որ գլուխը խոնարհեցընելով, թևերը բանալով, պատրաստ կեցեր է զիս գրկելու, քաղցր ձայնիւ զիս կը կանչէ երկինքը։ Եկայք առ իս ամենայն աշխատեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ։ Ա՛ս ձայնով կանչելով, քու տուրը արիւնդ յիշելով՝ 'ներսէ տէր իմ, 'ներսէ իմ ծանր մեղքերուս. թո՛ղ որ պարզերես ելլայ քու առջիդ աս իմ հոգիս, ու քու տուրքերուդ հետ զքեզ փառաւորէ յաւիտեան։ Բարի Յիսուս լո՛ւր ինձ, առաջնորդ լեր։

Սաղմոս.

Հոգի քո սուրբ և բարի առաջնորդեսցէ ինձ 'ի յերկիր ուղիղ։

Վասն անուան քո տէր կեցուսցես զիս, արդարութեամբ քով հանցես 'ի նեղութենէ զանձն իմ։

Ողորմութեամբ քով սատակեսցես զթշնամիս իմ, և կորուսցես զամենայն նեղիչս անձին իմոյ, զի ես ծառայ քո եմ։

Տէր լուր աղօթից իմոց, և աղաղակ իմ առ քեզ եկեսցէ, մի դարձուցաներ զերեսս քո յինէն։

Յաւուր նեղութեան իմոյ խոնարհեցո առ իս զականջն քո։

Սպառեցան որպէս ծուխ աւուրք իմ, և ոսկերք իմ որպէս խոտ չորացան։

Հարայ ես որպէս խոտ, և ցամաքեցաւ սիրտ իմ. կցեցաւ ոսկր իմ 'ի մարմին իմ։

Աւուրք իմ որպէս հովանի անցին, և ես որպէս խոտ ցամաքեցայ։

Աղօթք Յիսուսի 'ի վերջին կտակի խրատում, 'ի ժամու մահուան վասն ամենայն քրիստոնէից։ Յոհ. ԺԷ.

Յիշէ տէր իմ Յիսուս, որ երբոր ցաւագին օրդ հասաւ, մեռնելու պատրաստութիւնդ տեսանայր իմ փրկութեանս համար, ան օրը աշխարհանորոյդ կատակ ընելէն ետև երբոր ցաւագին արտիւ աղօթք ընել երկնաւոր հօրդ ամէն քրիստոնէից փրկութեան համար՝ որոնց մէկն ալ ես եմ։ Ես հիմա իմ հոգեվարութեանս առէն ան քու աղօթքդ քեզի կը մատուցանեմ, քու Աղօթքովդ քեզ կաղաչեմ, որ ըզհայր Աստուած փառաւորելով, եռքը իրեն աղաչանք ընելով քրիստոնէից համար, ասանկ ըսիր։

Ես վառն նոցա աղաչեմ, զորս եպուրն ինձ, զի քո են։

Հիմա ես ալ ծառայ քո՝ հօրն երկնաւորի որդի եմ սուրբ միրտութեամբ, անանկ է նէ ինծի համար ալ աղաչեցիր

ան առէնը։ Հիմա ալ աղաչէ խնդրէ քաւութիւն, թողութիւն և փրկութիւն։

Պահէա վնասա յանուն քո։ Սուրբ արա վնասա ճշմարտութեամբ քով քոյր։

Անանկ է նէ պահել տուր զիս հիմա սատանային յարձակմանէն, պահել տուր սատուածային արդար դատաստանէն՝ որ հիմա բացուի պիտոր իմ վրաս, և արքէ մաքրէ ամէն մեղքերուս աղտոտութիւնը։

Ո՛չ վան նոցա միայն աղաչէմ, այլ և վան ամենայն հաւատացելոց բանէ՝ նոցա յիս։

Ահա աս խօսքդ որ զուրցեցիր, յոյս փրկութեան է ինծի, խօսք մխիթարութեան և քաջալերութեան իմ աս ցաւագին առէնս։ ցուցիր՝ որ չէ թէ միայն առաքելոց համար ըսիր աս աղաչանքը, այլ նաև ամենայն հաւատացեալ քրիստոնէից համար որ աշխարհ պիտոր գան, որոնց մէջն ես ալ կամ։ Մեղաւոր եմ՝ բայց հաւատացեալ, չարագործ՝ բայց զղջացեալ, բոլորովին յուսացեալ 'ի քեզ Փրկիչս, յոյս իմ 'ի մանկութենէ իմմէ,

յոյս իմ 'ի ժամանակի ծերութեան իմոյ, և այսօր յոյս իմ յաւուր մահուան իմոյ։

Եւ պէտուն պէր էպուր ինչ, էպու նոցա, պէ էջեն մի՝ որպէս ես մէք մի էմք։

Հայր երկնաւոր՝ ասէր, կաղաչեմ որ մէկ ըլլան մեզի հետ, միանան մեր աստուածութեան փառքը տեսնելով, ինչպէս որ մենք ալ մէկ ենք։ Օրհնեալ լեցի ան բերան Յիսուսի, գովեցի և փառաւորեցի ան լեզուն Քրիստոսի, որ ինծի համար սանկ զօրաւոր բարեխօսութիւն կընէ։

Հայր, պէրս էպուրն ինչ համիմ պէ ուր էան էմ, ես նոքա ինչեն ընդ իս, պէ պէսանիջեն պէտուն ինմ։

Փառք մարգասիրութեան քո Յիսուս, որ ան ցաւագին օրդ, քու ցաւերուդ տանջանքներուդ մտմտուքը մէկդի թողում՝ իմ փրկութիւնս կը հոգայիր, զիս մեղաւորս հօրդ հետ հաշտեցընել կաշխատէիր։ ինծի համար միջնորդութիւն կընէիր՝ որ գաս ուր ես, ես ալ հոն ըլլամ, քու փառքդ տեսնեմ։ անանկ է նէ ես ասկէց ետքը

ինչու համար տրամիմ տարակուսիմ իմ փրկութեանս համար։

Յիշէ տէր իմ Յիսուս, աս եաքի աղօթքդ որ ըրիր ինծի համար, վասն զի խիստ ցաւագին արտիւ ըրիր. իմ ցաւագին առենս ալ հասեր է, զիս քովդ անդ. հիմա իշխան աշխարհիս այսորիկ պիտոր գայ իմ վրաս մեղք գինուելու, դատաստան քաշելու, զիս կորանցընելու. դու զանիկայ կորանցուս, դատապարտէ, դու որ չես ուզեր քուկինդերէդ մէկը կորանցընել։ Աստուածային արդարութեան դատաստանը ինչ որ զուրցէ իմ վրաս դատաստանին մէջ, ես միշտ աս քու աղօթքդ քեզի կը յիշեցընեմ, քու աղօթքովդ քեզի կաղաղակեմ, ուրիշ ըսելիք չունիմ. և կը հաւատամ որ առանկ աղաչանքովդ չեմ կորսուիր, այլ յուսալով ապաւինելով քեզի կուգամ տէր գթութեան, և Աստուած ամենայն ողորմութեան։

Սաղմոս.

Արդ՝ ընդէր արտասում ես անձն իմ. կամ ընդէր խռովես զիս, յուսա՛ առ Աստուած, խոստովանեա՛ նմա, փրկիչ երեսաց իմոց Աստուած է։

Ես օրհնեցից զօրհնութիւնս տեառն, և ցնծացայց առաւօտուց յողորմութեան քում։

Զի եղեր իմ պաշտպան, և տուն ապաւինի յաւուր նեղութեան իմոյ օգնական իմ։

Քեզ սաղմոս ասացից Աստուած ապաւէն իմ, Աստուած ողորմութեան իմոյ։

Ոչ թագեաւ ոսկր իմ 'ի քէն զոր արարեր 'ի ծածուկ, և կար զօրութեան իմոյ ընդ ստորինս երկրի։

Զանգործս իմ տեսին աչք քո, և 'ի գիրս քո ամենեքեան գրեցան։

Փորձեա զիս Աստուած, և ծանիր զսիրտ իմ. քննեա զիս և ծանիր զշաւիղս իմ, և տես թէ իցէ՞ն անօրէնութիւնք 'ի ճանապարհս իմ. և առաջ-

նորդեա ինձ 'ի Հանապարհս քո յա-
ւիտենից։

Դու յարուցեալ գթացցես 'ի վե-
րայ Սիոնի, ժամանակ գթալոյ նորա
հասեալ է ժամ։

Պակասեցան 'ի ցաւոց կեանք իմ, և
ամք իմ յոգւոց եղանեալոյ։

Աղօթք առ տէրն Աստուածածինն.

Ո՛վ տիրուհի վիսատաբան մեր, ե-
կաւ հասաւ այն ատենը՝ որ ինծի հա-
մար խօսիս բարեխօսես ահաւոր ա-
տենին մէջ Քրիստոսի առջին։

Ո՛վ պաշտպան մեր, եկաւ ատենը
պաշտպանելու զիս սատանային ձեռ-
քէն. ցըցու քու պաշտպանութիւնդ,
քու մայրական զօրութիւնդ։

Ո՛վ հարսն ընծայեալ յերկրէ յեր-
կինս, մեք երկրաւորքս զքեզ հարս
խրկեցինք երկինքը ամենասուրբ Եր-
րորդութեան, որ ասանկ սոսկալի օրս՝
մեր ողորմելիութեան համար։

Դու այն Եսթեր տիկինն ես, որ մեկ
խօսքով զՀաման թշնամին՝ սատանան՝

կորընցուցիր, ամէն հաւատացեալ-
ները մահուանէ ազատեցիր. ազատէ
զիս յաւիտենական մահուանէ. կոր-
ընցու հիմա բանարկու սատանան.
որ իմ եաւէս կը պտըտի կորնցընելու։

Դու այն օրինակեալն Յուդիթ ան-
կին ես, որ զՀոլոփերնէս՝ ապտայէլը
ապաննեցիր, խեղճ քաղաքը Բեթ-
ղուա՝ սուրը եկեղեցին մահուան պա-
շարմանէ խալըսեցիր. ահա եկեր է
թշնամին սատանայ, իմ մեղքերուս զիս
պաշարեր է. եկիր ցրցու քու զօրու-
թիւնդ. և հոգիս խալացու այս տագ-
նապէս, այս պաշարմանէս։

Միայն քու բարեխօսութիւնդ զիս
պիտոր փրկէ, թէ որ դու այսօր քու
անկնութեան իշխանութիւնդ չիբանե-
ցընես, մայրական պաշտպանութիւնդ
չիցուցընես, չիբարեխոսես, ես կոր-
սուած եմ, իմ աղօթքներս անարժան
են, պիղծ են Աստուծոյ առջին.
իմ ճգնութիւններս ապաշխարութիւն-
ներս ոչինչ են, պիրաս միտքս շիտակ
չեն, Աստուծոյ հաճոյ չեն։ Դու ես
միայն մայր Ճշմարիտ, որ իմ աղաստաս-

թիւնս կրնաս գոյել, իմ գէշութիւնս ծածկել. վասն զի մէկ խօսքդ՝ երկուք չըլլար Քրիստոսի առջին։

Թէ որ երկրաւոր թագուհիներ մահապարտ մարդը շնորհք խնդրելով կազատեն մահուանէ, ուրչափ փառք պիտոր ըլլայ Տիրամայրը, երբոր դատաստանին օրը ամէնուն ալ յայտնի ըլլայ՝ որ իմ փրկութիւնս յուսահատեալ էր, միայն քու ձեռքովդ եղաւ փրկուիլս, միայն քու բարեխօսութիւնդ պահեց զիս արդար դատաստանէն Աստուծոյ։ Ան ատենը ուրախութեամբ կարենամ էս ալ քեզի հետ երգել քու երկնային երգդ. Մեծացուցէ անձն իմ զտէր, և ցնծացէ հոգի իմ Աստուծով փրկչաւ իմով։ Ողորմութիւն արար յազգաց յազգս երկիւղածաց նմա, և արար զօրութիւն բազկաւ նովաւ։

Եւ դու տէր իմ Յիսուս նախախնամող ամենայնի, ինձի պէս մեծ մեղաւորը՝ մարդ բարեխօսութեամբը փրկելով, փառաւորէ մարդ անունը. ինձի պէս ողորմութեան անարժանը՝ որ-

ժանաւոր ըրէ տէր իմ, նայելով քու մօրդ միջնորդութեանը. այս ընելով մօրդ անունը բարձրանայ ամէնուն առջին։ Դու պատուէր տուիր պատուէրդ զծնողս. դու զիս մեղաւորս և անարժանս թէ որ նեղուելով փրկես, ամէնէն աւելի կը պատուես զմայրդ թագուհին հրեշտակաց, որ է պարծանք աշխարհի, անգին գանձ եկեղեցւոյ, ապաստան մեղաւորաց, փրկութիւն յուսահատելոց 'ի ժամու մահուան։

Ա՛ս աղօթքներէս զատ՝ թէ որ կուզես, կրնաս Եօթը խոցին աղօթքները ընել։ Ա՛ւագ շաբթուան աղօթքները, ու մեծպաքին Վերջերորդ շաբթուան աղօթքները։

ԱՂՕԹՔ

ՎԱՍՆ ՆՆՋԵՑԵԼՈՑ

Տէր Յիսուս Քրիստոս, արարիչ և փրկիչ ամենայն աշխարհի, որ յարութեամբ ամենայն աշխարհ ուրախացուցեր. յիշէ այսօր քու արարչական սիրոյդ մեր ննջեցեալց հոգիները, ողորմէ, ազատէ իրենց տանջանքէն՝ որ ունին քաշելու. մանաւանդ մեր ծնողաց հոգիքը, ու որոնց համար աւելի պարտական ենք աղօթելու։ Յիշէ նոյնպէս անցիշատակ հոգիները, քու սուրբ ծննդեանդ ու մարգանալուդ համար կաղաչենք՝ թողութիւն տուր այսօր անոնց յանցանացը։

Յիշէ քու սուրբ չարչարանքներդ, հինգ վէրքդ, սուրբ անդին ալիւնդ՝ որ մեզի համար թափեցեր. և արեամբդ բարեխօսելով ինձ՝ սատուածային արդար դատաստանին բարկութիւնը։ Տուր այս ժամուս միխիթարութիւն,

թեթեւութիւն, մանաւանդ ազատութիւն իրենց ամենանքներէն, որ հրեշտակաց և արքոց մէջ խառնուելով, անոնց հետ մէկտեղ օրհնեն զքեզ յաւիտեան. ամէն։

Ա՛յլ աղօթք.

Ողորմէ՛ տէր իմ ողորմէ՛, դու որ երկընչէն ինչար, մեզի համար մարմնացար. դու որ խաչին վրայ ամենակարող Հեռուբինեարդ տարածեցիր, գամուեցար, ու մեզի համար սուրբ արիւնդ թափեցիր. դու որ անմահ բնութիւն ըլլալով՝ մեզի համար մեռար գերեզման մտար. դու որ նորէն ողջընթալով, յարութիւն առնելով, մեռած բնութիւններս կենդանացուցիր, ամենեւս ալ յոյս յարութեան արարիր, աշխարհս նորէն վերկեցիր, ու համբառնալով երկինքը նստար ընդ աջմէ հօր։

Ա՛ս ամէն բաներն որ քաշեցիր տէր իմ մեզի համար՝ յիշէ, անչափ ննջե-

ցեալքը քու անդամներդ միտքդ բերը, քու արդիւնքներդ պարապ մի հաներ, ցրցուր քու հզօր կարողութիւնդ տեր իմ առաջի սրբոց և հրեշտակաց. ողորմէ մեր ննջեցեալց, սրբոցդ հետ մեկտեղ այսօր արժանի ըրէ բնակակից ըլլալ, զքեզ օրհնել յաւիտեան յաւիտենից. ամէն։

Սաղմոս. ԼԵ

Տէր, յերկինս է ողորմութիւն քո, ճշմարտութիւն քո մինչև յամպս։

Որպէս զի բաղուսմ արարեր զողորմութիւն քո Աստուած, այլ սրբոցդ մարդկան 'ի հոլանի թեւոց քոց յուսացին։

Արբեսցին նոքա 'ի պարարտութենէ տան քո, և զուրկս փափկութեան քո ասցես ըմպել նոցա։

Ի քէն է տէր աղբիւր կենաց և լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս։

Ծագեա՛ զողորմութիւնս քո ոչ ճանաչեն զքեզ, զարդարութիւնս քո՝ ոչ ուղիղ են սրտիւք։

Մ՛յլ աղօթք.

Ո՛վ Յիսուս, որ պարսխին մէջ անչափ արտմեցար, որ ինչուան աբիւն քրտնեցար մեր փրկութեանը համար, ազատէ այսօր մեր մարմնաւոր ծնողաց հոգիները։

Ո՛վ Յիսուս, որ մեր փրկութեանը համար ձեռուընդ ոտուընդ ծակեալով խաչին վրայ քաշկռտուելով դամուեցար, յիշէ, ազատէ այսօր ան հոգիները, որ հոգևորապէս մեզի ծընող եղան։

Ո՛վ Յիսուս, որ խաչին վրայ ծարաւեցար մարդկային փրկութեանը համար, բժշկէ մեր ենջեցեալաց ծարաւը, որ կը ծարուին կը փափագին ասուածային տեսութեանդ, ցրցուս այսօր արքայութեան մէջ քու փառքդ մեր ազգականաց հոգիներուն։

Ո՛վ Յիսուս քաղցրագութ, որ մեր փրկութեանը համար քացախ ու լեղի ճաշակելով համբերեցիր, փրկէ այսօր այն հոգիները՝ որոնց աւելի պարտականութիւն ունինք աղօթելու։

Ո՛վ Յիսուս միսիթարութիւն վշտա-
ցեալց, յիշէ՛ այն որոմութիւնը՝ երբոր
երկնաւոր Հօրէն թողուեցար մեր մեղ-
քին համար, թող մի տար այս հոգի-
ները, միսիթարէ այսօր քու տեսու-
թեամբդ այն հոգիները՝ որոնցմէ մենք
բարերարութիւն մը տեսանք այս աշ-
խարհիս մէջ։

Ո՛վ սուրբ արիւն խաչելեալ Մխիթ-
նի, ով անհուն արդիւնք զենման պա-
տարիգի, որ խորանին վրայ անմեղ
գառան պէս զոհուելով կը պատարա-
գուիս։ Այս պատարագիդ անհուն որ-
դեանցը համար կաղաչենք, յիշէ՛ այն
սուրբ հոգիները՝ որ քեզի սիրական են,
բայց իրենց պակասութեանց պատիժը
վճարելու համար կը պատժուին տա-
ռուապային արդարութեամբ։ Յիշէ՛
տէր քու առջի ողորմութիւններդ։
Թէ որ հին առենը անբան անասունց
պատարագի մը համար իրենց պատի-
ժը կը դադրեցընէիր, քանի՛ առելի
պէտք է ողորմիս քու անմահ գառիդ
պատարագին համար, զոր որ մեզի և
մեր ննջեցելոց համար կը պատարա-

դիս։ Յիշէ՛ տէր իմ Յիսուս, ինչ տրտմութիւն որ քաշէցիր չարչարանաց առեալ, երբոր քու բարեկամներդ, ծանօթներդ, ամէնն ալ զքեզ թողուցին, չկար մէկը որ զքեզ մխիթարէր։ Ան տրտմութեանդ համար մխիթարէ այսօր մեր բարեկամներուն և ծանօթներուն տրտմեալ հոգիքը։ Ո՛վ Յիսուս ամենակարող, որ մեզի համար անանկ ցաւ քաշէցիր՝ որ ամէն կարողութիւնդ պակսեցաւ, ուժէ կտնալով, բոլոր արիւնդ թափելով, դլուխդ խոնարհելով, անանկ հոգիդ ալանդեցիր, մարդկային փրկութեանը համար մեռար։ Ազատէ այսօր տէր իմ ալն հոգիները՝ որոնց մենք պատճառ եղանք մեղաց։ Փրկէ տէր իմ ամէն հոգիները, և արքայութեան քո ժառանգ ըրէ որ զքեզ փառաւորեն յաւիտեան։ Ամէն։

Ի խորոց կարդացի առ քեզ, և ալլն։

ԱՂՕԹՔ

ԱԲ ԵՕԹՆ ԽՆԴՈՒԹԻՒՆՍ

ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ

Ամառային խնդրանքներ.

Խնդամ և ուրախ լեր ով ընդունարան շնորհացն Աստուծոյ. յիշէ՛ զոր ուրախութիւնդ երբեմն Դաւթիկ հրեշտակն ուրախութեան աւետիսդ միոյն քեզ տուաւ, անչափ կանուց մէջ դու միոյն ընտրուեցար առաջի Հօրն երկնաւորի՝ մարմնոյն ըլլալ Բանին Աստուծոյ, ոչի և բնակարան անբաւականութեան, և անդր հեռի մեկուկ գործակից ըլլալ փրկագործութեան մարդկային ազգի։ Յիշելով զամենայն մեծ շնորհքդ և անճառելի ուրախութիւնդ սուրբ Աստուածածնին, յիշէ

այսօր իմ ողորմելիութիւնս, որ զանազան թշուառութեան մէջ ընկած, անբաւ փորձութեանց մէջ ձգած, աշխարհս ծովուն մէջը կը տառապիմ կը նեղիմ մարմնաւոր և հոգեւոր տառապանօք, և մինակ յոյս իմ դու ըլլալով քեզի ապաւիներ եմ բոլորով սրտիս։ Յիշելով աս իմ թշուառութիւնս, և քու առջի խնդութիւնդ, ուր ինծի այսօր մէկ շնորհք մը հոգեւոր ուրախութեան, փարատելով ինծմէ ան ամէն տրտմութիւնները, յուսահատութիւնները, որ իմ մեղքերս ինծի կը բերեն։

Ողջոյն քեզ Մարիամ։

Ս. երկրորդ խնդութիւնն.

Խնդա՛ և ուրա՛խ լեր ընտրեալդ 'ի մէջ ամենայն կանանց. յիշէ՛ ան ուրախութիւնդ երբոր մայր Աստուծոյ եղար, կուսութեամբ ծնար զԻսանն Աստուած, ուսկից որ սերոբէները քերոբէները կը գոչան, դու անիկայ զաւակ ունեցար, գիրկդ տանելով, ձեռ-

քովդ շշաւիելով համարձակ վայելեցիր, մայր եղար անոր՝ որ աշխարհս յոյսն էր և փրկութիւն, և ամենուն ուրախութիւն։ Յիշէ՛ ոմ սուրբ կոյս ան ուրախութեան ժամը, և յիշելով ասուր ինծի ալ այսօր մէկ ուրախութիւն մը, յոյս տալով իմ մեղացս թողութեան, որ թողութիւն առնելով մեղքերուս՝ ես ալ Յիսուսի բնակարան ըլլամ շնորհօք։ և յոյս առնեմ զինքը տեսնելու արքայութեան մէջ երեն սրբոցը հետ։ ամէն։

Ողջոյն քեզ Մարիամ։

Ա. երրորդ խնդրութիւնն.

Խնդա՛ և ուրա՛խ լեր սուրբ Սատուածածին։ պաշտպան, յոյս և բարեխօս ամենայն քրիստոնէից։ յիշէ՛ ան ուրախութիւնը՝ երբոր տեսար միածին որդիդ երկինքէն ելած քովդ եկուամահուանդ առնելու, երկինքը տանելու համար։ սերովէներ քերովէներ՝ դասք դասք հրեշտակաց՝ և ամենայն սուրբք ընկերանալով, օրհնելով, ուրախանա-

լով առին երկինքը տարին։ Յիշէ՛ ան ուրախութեան ժամը, և տնանկ ան-պատմելի խնդութեանդ համար՝ որ Յիսուս միածնիդ քեզի պարգևեց, պարգևէ ինծի ալ այսօր յոյս ապաւինութեան, տուր ինծի քու հզօր պաշտպանութիւնդ. օրչափ մարմնաւոր փորձանք գայ վրաս, օրչափ հոգևոր փորձութիւն գայ առաջիս՝ աշխարհքէ ու իմ մարմինէս, քու հզօր ներկայութ պաշտպանութեամբդ հանեմ, պահես, պաշտպանես։ Այս պաշտպանութիւնդ ցուցընես ինծի մանաւանդ մեռնելուս առեն երբոր ամէն ալ զիս կը թողուն կը հեռանան, ան առեն քու մայրական պաշտպանութիւնդ առնելով մխիթարուիմ։

Ողջոյն քեզ Մարիամ։

Ա՛ն չորրորդ խնդրուածքիւնն.

Խնդա՛ և ուրա՛խ լեր կոյս անարատ. յիշէ՛ ան ուրախութիւնը որ ունեցար, երբոր առաջ որ երկինքը ամէն սրբոց մէջ անչափ հաճեցաւ քու վրադ

ամենասուրբ Երրորդութիւնը, որ քո-
վը առաւ, ընդ աջմէ մարդացեալ Յի-
սուսին նստեցուց, և անանկ անձառե-
լի փառաք լեցուց՝ որ մէկուն խելքը չի-
հասնիր, միայն ամենասուրբ Երրոր-
դութիւնը գիտէ, և դու վայելելով կը
զմայլիս յաւիտեան։ Ա՛ս խնդութիւնդ
յիշելով՝ մի ձգէր զիս ասանկ թշուա-
ռութեան խեղճութեան մէջ, ինծի
ալ մէկ քիչ մը ան փառքին պատրաս-
տէ։ Եւ որպէս զի ես ալ հասնիմ ան
փառքին, սուր որ վարքս շտկեմ, զըղջ-
մամբ ու բարեգործութեամբ աշխա-
տիմ, անանկով սուր որ յոյս ունե-
նամ արքայութեան և երանութեան.
յոյս զԱստուած տեսնալու, և զքեզ
մայրդ Աստուծոյ ան փառացը մէջ։

Ողջոյն քեզ Մարիամ։

Ա՛ս հիւսկերոյդ խնդութիւնն.

Խնդա՛ և ուրախ լեր դուստր լուսոյ
Հօրն երկնաւորի. յիշէ՛ ան ուրախու-
թիւնը որ ունեցար երբոր Հայրն երկ-
նաւոր տեսնելով քու ծայրագոյն խո-

նարհաւթիւնդ՝ զքեզ դրաւ թագուհի երկնի և երկրի. մայրական հոլանաւորութեամբ պաշտպանել զսուրբս, զբնութեամբդ դարձուցանել զմեղաւորս: Քոյ փառքովդ զարդարուեցաւ լեցուեցաւ ան երկնային դրախտը, երկինքը եղած ամէն սուրբք և ամէն գասք հրեշտակաց յառուկ ուրախութիւն ունեցան՝ տեսնելով զկոյս ամենախոնարհ ան փառքը բարձրացած. և բոլոր եկեղեցին Քրիստոսի՝ մեծ ուրախութիւն կիմանայ յիշելով քու փառքդ, որ եղար պարծանք քրիստոնէից, փառք Ադամայ և Եւայի: Ա՛ խնդութեանդ համար տուր ինծի այսօր ոմ թագուհի, տիրուհի երկնի և երկրի, շնորհք մը արդիւնաւորելոյ, որպէս զի չէ թէ միայն մեղքերէ կըազատուիմ, հեռանամ, հապա նաև արգիւնք վաստակիմ. քանի որ կեանք ունիմ, շունչս վրան է, առենս պարապ չանցընեմ, այլ ամէն գործքս 'ի փառս Աստուծոյ ընելով վարձք շահիմ: Տուր ալ որ որչափ խաչ և նեղութիւն ունենամ, ան նեղութեանս մէջ

մէկ ուրախութիւն մը խմնեամ Աստուծոյ համար քաշելով, երեն կամացը ապաստան ըլլալով օրհնեմ զՀայրն երկնաւոր, որ առանկ մեծութեան զքեզ բարձրացուց։

Ողջոյն քեզ Մարիամ։

Աստ վեցերորդ խնդութիւնն.

Խնդա՛ և ուրա՛խ լեր մայր Բանին Աստուծոյ. յիշէ՛ ան ուրախութիւնը ան վարձքը որ ունեցար, երբոր քու սիրելի որդիդ միածին՝ որպէս զի առաջի հրեշտակաց և ամենայն արքոց պատուէ զքեզ երեն մայրը մայրական պատուով ինչպէս որ արժանն է, ըզքեզ առաւ գործակից իր գառաստանին։ Արդարութեան գառաստանը երեն պահեց, զթութեան և ողորմութեան գառաստանը քեզի յանձնեց. և կատարեալ իշխանութիւն տուաւ՝ որ ինչ շնորհք ուզես իրմէ, իսկոյն պիտոր ըլլայ, կատարուի. որով հիշար յոյս ամենայն արդարոց քրիստոնէից, յոյս և ապաստան մեզաւորաց։ Անան-

կով ան ծառանելդ՝ որ այս աշխարհիս մէջ յաւուրկ ջերմեռանդութեամբ մը քեզ կը ծառայեն, զքեզ կը դովաբանեն, յաւուրկ շնորհք մը պիտոր առնեն աս աշխարհս, և անդին երկինքը յաւուրկ վարձք մը ու փառք. իսկ ան մեղաւորներդը որ քեզի կը դիմեն, աս աշխարհս շնորհք դարձի և ապաշխարութեան պիտոր առնեն, և անդին փառք յաւիտենական սուրբերուն հետ։

Հիմա ես որ գլուխն եմ մեղաւորաց, և ապօթքով՝ ետօթը խնդութիւններդ յիշեցնելով քեզի կը դիմեմ, ուր ինծի այսօր կարաչեմ շնորհք դարձի և ապաշխարութեան, որ ծանր մեղքերուս թողութիւն գտնեմ, և շնորհք ներողութեան և քաւութեան և ամէն մեղքերուս պատիժներուն. վասն զի իմ չարաչար մեղքերուս համար շատ պատիժ քաշելու արժանի եղայ։ Որպէս զի քու դթութեամբդ և միջնորդութեամբդ Յիսուսին անաչառ դատաստանէն խալըսելով, և պատժէն ազատելով, արքայութեան մէջ Սա-

տուծոյ փառացը հետ քու փառքդ ալ տեսնելու շուտով արժանի ըլլամ, օրհնեմ զՅիսուս միածին յաւիտեան, որ սատանկ փառաց զքեզ հասցուց։

Ողջոյն քեզ Մարիամ։

Առ հօրեղբարդ Խնդրութիւն.

Խնդա՛ և ուրա՛խ լեր Հարան անա-բատ Հոգւոյն արքոյ. յիշէ՛ ան ուրա-խութիւնը որ ունեցար, երբոր տեսար որ Հոգին սուրբ քու ամենամաքուր կուսութեանդ վրայ զմայլելով, զքեզ դրաւ գահնստեան իր ամէն շնորհաց, անանկ որ մէկ շնորհք մը չթաժնուիր չտրուիր մէկու մը ինչուան որ քու ձեռքէդ չանցնի, Ինչ մեծութիւն, ինչ փառք որ կը վայելես ով ամէնօրհնեալ սուրբ Աստուածածին, ոչ երբէք պի-տոր անցնի, այլ պիտոր մնայ յաւի-տեան յաւիտենից։ Կարդացէ՛ սուրբ Աստուածածին, ասա խնդութեանդ և ասա փառքիդ համար տուր ինծի շնորհք ընդունելութեան, որ ընդունիմ ինչ

շնորհք որ պէտք է հոգւոյս և մարմնոյս ինծի և ամէն ազգականներուս, կենդանեաց և մեռելոց։ Ինչ շնորհք որ պէտք է փրկութեան համար, զոր որ ձեռքիդ մէջը ունիս ասուածային շնորհաց գանձը, և մայրական գթութեամբ խնամես ամէն հաւատացեալները՝ հանէ ասուածային գանձէն ան շնորհքները, և արժանի ըրէ ընդունելու զիս անարժանս, որ քու բարեխօսութեամբդ աս աշխարհիս մէջ Աստուծոյ կամքը կատարելով, անդին ալ արքայութեան արժանի ըլլալով, զովեմ, փառաւորեմ զքեզ, և քեզմով զՀոգին սուրբ, որ ասանկ տիրուհի գրաւ զքեզ իր ամէն շնորհաց։

Ողջոյն քեզ Մարիամ։

ԱՂՕԹՔ

ԱՌ ԵՕԹՆ ՎԷՐՍ ԽՈՑՈՒԱԾՈՑ

ԿՈՒՍԻՆ ՄԱՐԻԱՄՈՒ

Ամ առաջինն.

Ո՛վ ցաւագին տուրբ կոյս Աստուա-
ծածին, յիշէ՛ քու առջեւ խոցդ՝ երբոր
Սիմէոն ծերունեւոյն բերնովը լսեցիր
թէ ան կուսածին որդիդ, որ կը դըր-
կեւ՝ կը սիրես, առեն պիտոր գայ որ
նշան հակառակութեան ըլլայ. անանկ
բաներ պիտոր տեսնես՝ որ սիրտդ խո-
ցուի, իբր թէ տուր խոթէին սրտիդ
մէջը։ Ամ խօսքս լսելէն ետեւ՝ տուրը
սրտէդ չելլաւ, Յիսուս չիչարչարուած՝
դու սկսար սրտիդ մէջը խոցուիլ ու
չարչարուիլ. քանի կը նայէիր միածին

Յիսուսին վրայ, սիրտդ ուրախանալուն տեղը կը տրտրէր կը տագնապէր, որդեօք ինչ նեղութիւններ պիտոյք քաշէ կը մտածէիր, այն մտածմունքներով երանութիւրեք տարի կը տանջուէիր:

Ասոնք յիշէ սիրտայրը, որ ինծի համար քաշեցիր. որ պէս զի ես փրկուիմ, ես չքաշեմ տառապին ձեռքէն. Յիսուս միածին յանձն առաւ իմ տեղս քաշելու, անով քեզի ալ ընկաւ քաշելու աս խոցը: Եւ յիշելով առջի քաշած վէրքդ, կարաչեմ՝ որ այսօր իմ արախս մէջը տպաւորես զսուր զրոյցմանն և արտասուաց, որ ինչուան 'ի մահ ոչ երբէք պակսի իմ արտէս ցաւն ապաշխարութեան. Հոգւոյն սրբոյ շընորհքովը սկսիմ լալ իմ մեղքերս, որ պատճառ եղան Յիսուսին չարչարանաց, և քու տառնկ խոցուելուդ:

Ասոնցով Յիսուս ըլլայ ինծի կանդնելու պատճառ և ոչ դէպ երթալու. Յիսուս ըլլայ իմ արախս խորհուրդը, իմ մարմնոյ յայտնութիւնը, տպաւորութիւնը: Մտածմամբ ու տպաշխարութեամբ անցընեմ իմ մնացած կեանքս,

պրով փառաւորուի առաջի սրբոց և հրեշտակաց քու առջի խոցիդ արդիւնքը իմ վրաս։

Հայր մեր որ յերկինս ես։

Ողջոյն քեզ Մարիամ։

Առ երկրորդն.

Ո՛վ ցաւագին ամէնօրհնեալ կոյս Մարիամ. յիշէ քու երկրորդ քաշած խոցդ, երբոր Հերովդէսին ձեռքէն փախար յԵգիպտոս. սրբոյն Յովսեփայ հետ երկայն Ճամբորդութեան նեղութիւնը քաշեցիր, որպէս զի զՅիսուս խաչցընես Հերովդէսին կոտրածէն՝ որ կուզէր սպաննել։ Ահա ես եմ ան Հերովդէսը՝ որ առաջ կեղծաւորութեամբ երկրպագել կուզեմ Յիսուսի՝ եռքը սպաննել. վայ ինծի, քանի անգամ անարժանութեամբ առնելով հաղորդութեան սուրբ խորհուրդը, որոնց մէջը իրաւունք ուզէր եմ սպաննել զՅիսուս։

Այլ դու ախրամոյր, այսօր յիշելով քու քաշածդ, տուր ինծի մեկ

դառնալու շնորհք մը։ Ինչպէս որ ա-
ռաջ փախար յԵգիպտոս, հեռացու-
ցիր զՅիսուս հալածչին ձեռքէն, եաթը
դադարելով հալածումը՝ դարձար նո-
րէն հոն եկար, զՅիսուս հետդ բերե-
լով՝ շնորհքն ալ արքայութիւնն ալ
հոն բերիր, ըրէ՝ որ ես ալ դադրիմ
մեղանչելէս՝ որ պատճառ կըլլայ զՅի-
սուս հալածելու, սրտէս փախցընե-
լու։ Իմ դադրելովս՝ դու ալ զՅիսուս
դարձընես բերես նորէն իմ սրտիս մէ-
ջը շնորհօք. անանկով սիրաս նորէն Յի-
սուսին բնակարան ըլլայ, և քու երկ-
կրորդ խոյնդ արդիւնքը ինծի համար
ալ շահաւոր ըլլայ, ապրեցընելով յա-
ւիտենական կորստենէ։

Հայր մեր որ յերկինս ես։
Ողջոյն քեզ Մարիամ։

Ա. Երրորդն.

Ո՛վ մայր ցաւագին, հերիք չեղաւ
առջի քու քաշածներդ, հետդ տանե-
լով բերելով զՅիսուս տառապանքով
աչխատանքով Եգիպտոսի երկրին մեջ

բորդութեան մէջ, հապա երբոյրդ անդամ մեծ վէրք կրեցիր սրտիդ մէջը՝ երբոր խրատեցին կորսընցուցիր զՅիսուս Յերուսաղէմ՝ նոր ճամբորդութեանդ մէջ. երեք օր սիրտդ արտրեցաւ պարտելով վիսառելով թէ ուր գտնես այն անկարուստ գանձն աշխարհի Յիսուս։ Երբոր տաճարին մէջ գտար, ցաւագնեալ սիրտդ չդիմացաւ, մայրական սրտով քու քաշած տառապանքդ բացիր յայտնեցիր Յիսուսի։

Հիմա իմ սիրտս կորսնցուցեր է ըզՅիսուս, բայց ամենևին հոգ չունի պարտելու վիսառելու, այլ միկդի թողլով զՅիսուս, իր հանգստութիւնը՝ երջանկութիւնը արարածոց մէջ օտար տեղեր կը վիսառէ, և ոչ տաճարի մէջ՝ սուրբ գործքերու մէջ, ամենիով մէկ հանգստութիւն մը չնկրնար գտնալ. Յիսուս ալ իր երեսը դարձուցած՝ ինծմէ պահուեր է, չերևնար։ Կամակ զրկուած ըլլալով Յիսուսի տեսութենէն ու խօսակցութենէն, հիմա զքեզ կաղաչեմ, մայր ցաւագնեալ, բաց այսօր քու քաշածներդ, զուրցէ

Յիսուսի. Զի՞նչ գոր գոր ծեր ուրիշ։ Ինչո՞ւ թաղուցեր աս խեղճ հոգին, որ կը պտըտի զքեզ գտնելու, և չկրնա՛ ուր գտնէ։ Աս զուրցելով, ամա՛ ոյսօր ինծի համար մէկ նոր յարատեւութեան շնորհք մը, որ մեղքերս զղջալէն ետև ալ ոչ երբէք մեղանչեմ, և մեղքով չկորանցընեմ իմ սրտէս զՅիսուս։ Այլ միշտ Յիսուսին հետ մէկ տեղ բնակեալ կեցը ըլլամ, իր Հօրը տանը մէջ տաճարի մէջ փնտռեմ զՅիսուս ուր կը գըտնուի։ Ես ալ միշտ հոն մնամ, հոն տեսնուիմ իր հետը՝ որ է աղօթք և բարեգործութիւն, հեռու կենամ տեղծուածներէն՝ ուսկից կը փոխէի Յն։

Հայը մեր որ յերկինս է։

Ողջոյն քեզ Մարիամ։

Աչ չորրորդն.

Ո՛վ մայր ցաւագին, ի՞նչ եղաւ արդեօք սիրտդ, երբոր քեզի խմացուցին՝ որ ան սիրելի միածին որդիդ բռնեցին, չարագործի պէս դատաւորներու առջին տարին, ամէն հրէաներուն ժո-

ղովքը վրան ժողվուած քահանայա-
պետին առջին մահապարտ վճռեցին,
ապտակեցին, Պիղատոսի առենին մէջ
ճեռուընները կապեցին, չարաչար ծե-
ծեցին, գլուխը փշով պսակեցին. սուտ
թագաւոր ճեւացընելով ծաղր ընելով
սուրը երեսը թքին, և հիմա պիտոր
տանին խաչ հանելու։

Ասանք թէ որ հասարակ մարդու մը
վրայ լսուի, մէկու մը սիրտ չդիմա-
նար՝ որչափ օտար մարդ ըլլայ, ո՛ւր
մնաց անմեղ միածնի վրայ մայրը լսէ,
տանկ կուսածին Աստուածորդի, և
տանկ մայր Աստուծոյ կոյս անարատ-
կան։ Ա՛խ, ինչ խօսքեր են, ինչ խոր-
հուրդներ, ինչ տեսիլ անարդանաց.
ինչ տեսիլ չարչարանաց խելքէ մոքէ
վեր. և սակայն տանկ մայր ըլլալով սիր-
տը դիմացուցիր, եռեւէն գացիր տես-
նելու, որ գու ալ Յիսուսի քահանա-
յուԹե խորհուրդին մասնակից ըլլաս։

Վասն զի ասչափ մեծ խորհուրդնե-
րուն ասչափ գառնակսկիծ չարչարա-
նաց պատճառ է՝ ես անարդ որդս եմ, ե՛ս
Բորաբբա մարդասպան աւազակս եմ.

որպէս զի Էս Բարաբբա փրկուիմ, ինքն Յիսուս քահանայապետաը յանձն առաւ իր չարչարանքով զինքը զոհել, պատարագ մատուցանել իմ մեղքերուս թողութիւն քաւութիւն վասաքէքլու համար. դու ալ մայր Աստուծոյ, որդւոյդ հետ մէկտեղ քաշելով գործակից եղար իմ փրկութեանս, մեծ խորհուրդներուն տեղեակ ու խելամուտ ըլլալով Սիմէոն ծերունւոյն խօսքը միտքդ բերիր. իմացար որ քու Յիսուս միածինդ անդէղջ հրէաներուն գլխուն պիտոր ըլլայ ատուածապատնութեամբ, ինծի պէս մեղաւորիս կանգնուին պիտոր ըլլայ փրկագործութեամբ, որ հեթանոս ազգէ դարձած՝ հաւատացեալ հրէաներուն անգրանկութիւնը առի, բայց մահացու մեղքերուէս կորսնցուցի անգրանկութիւնս ալ, անմեղութիւնս ալ և զՅիսուս ալ. ես եղայ պատճառ՝ որ բռնեցին, չարչարեցին, էառին ալ խաչուելէ վճռեցին։

Տեսար ինծի պէսոր մէկ յատուկ շնորհք և օգնութիւն մը, փորձութիւն

նեղէ պահուելու, աշխարհին մարմնոյ՝ սատանայի խաբէութիւններուն չհաւատալու։

Հայր մեր որ յերկինս ես։
Ողջոյն քեզ Մարիամ։

Աղ հիւանդերորդի.

Ո՛վ մայր ցաւագնեալ, ինչ եղաւ սիրադ, երբոր Յիսուսին բռնուիլը լսեցիր, էլար զինքը դատելու և տեսնելու, և առջի սեսնելդ ան էղաւ որ զՅիսուս կուսածին՝ աչքովդ սեսար աբիւնլուայ եղած, խաչը շալկած կը տանէին խաչելու։ Սիմէն իր քովն էղողները՝ գահիճներ զինուորներ, կատաղի անդութ հրէաներ. մէկ հատիկ իրեն իբր օգնական՝ Սիմէոն կիւրենացի, որ խաչին ծայրէն բռնած հետը կերթար, վասն զի Յիսուսին վրայ ուժ չէր մնացած ամենեին զարնելէն՝ ծեծելէն, իր սուրբ արիւնը վազցնելէն։ Մէյմըն ալ սեսար՝ որ ան ամենակատարող Բանն Աստուած՝ որ բոլոր աշխարհս ձեռքին վրայ կը տանի, ուժը

հատնելէն դեռեւն ընկաւ աչքիդ առ-
ջին, անդուլթ դահիճները ողորմելուն
տեղը՝ զարնելով կուզէին վեր վերցը-
նել։

Ա՛խ, ինչ եղաւ արդեօք ան առեր
մայրական սիրտդ. թէ որ օտար կա-
նայք Երուսաղէմի կուլային կողբային,
որ չէին անանկ ճանչնար իր ատուած-
ութիւնը, ինչ եղար արդեօք ան ա-
տեր դու որ բոլորովին կը ճանչնա-
յիր իր ատուածութիւնը, իր կուսա-
ծին ըլլալը, իր սուրբ վարքը, իր ան-
մեղութիւնը։ Ինչ եղաւ քու սիրտդ
երբոր նայէրու առենդ՝ քու աչքդ Յի-
սուսին աչքին դպաւ, ինչպէս դորո-
վեցաւ ճմլեցաւ սիրտդ։

Ա՛յն ալ երբոր միտքդ բերիր
Սիմէոն ծերունւոյն խօսքը՝ և Ատուա-
ծոյ կամքը՝ մարդարէներուն բերնով
առաջուցմէ զուրցուած որ ան քու
միածին որդիդ ատանկ պիտոր չարչա-
րուի, արիւնլուայ ըլլայ, դեռինը էյ-
նոյ, որ բոլոր ազգ մարդկան փրկուի,
այսչափ բաղմութիւն մեղաւորաց ոտք
ելլեն կանգնին, դու ալ Յիսուսին հետ

միակամ, միաբան սրտով Հօրն երկնաւորի նուիրեցին։ Մարդիկ առաջ Աբրահամ նահապետին վրայ կը զարմանային, թէ ինչ սրտով տեսաւ իր անմեղ զաւակը Իսահակ որ իր վրայ փայտը շալկած լեռը կելլէր որ մորթուի։ Հիմա հրեշտակները կը զարմանան՝ որ Բանն Աստուած իր վրայ շալկեր է խաչափայտը Գողգոթա լեռը կելլէ՝ խաչուելու մեղաւորաց համար, և երեն կուսածին մայրը հեռը կերթայ իր աչքովը տեսնելու։

Ահա ան մեղաւորներուն գլուխն եմ եմ, զիս փրկելու համար Յիսուս ան խաչը տարաւ, դու ալ երեն հետ մէկ տեղ խաչուեցար, իմ չարաչար մեղքերս քաւելու համար մէկ տեղ խորվեցար։ Անանկ է նէ ո՞վ մայր Աստուծոյ, ո՞չ իմ արժանաւորութեանս համար՝ հապա միայն Յիսուսի և քու քաշածներդ պարապ չելլալուն համար՝ այսօր մէկ զօրաւոր շնորհք մը պարգևէ ինծի հինգերորդ խոցիդ համար, որ Յիսուսին չարչարանքները խաչուելը՝ ես ալ պայծառ տեսնեմ հաւատոյ

աչքով, մեղացս դարձութիւնը իմանամ, Հնարիս զղջմամբ ապաշխարեմ։ Շնորհք ալ տուր որ ես ալ Յիսուսի նման յօժարութիւն ունենամ խաչ քաշելու. գոնէ ինչ խաչ որ Աստուած խրկէ՝ սիրով քաշեմ ջոջգոհամ։

Հայր մեր որ յերկինս ես։
Ողջոյն քեզ Մարիամ։

Աստ վեցերորդն.

Ո՛վ սուրբ կոյս յաւագին, ինչ զարհուրելի տեսիլ եղաւ, երբոր Յիսուս խաչը շալկած հոգնած Գողգոթա լեռը հասաւ, հոն աչքովդ տեսար որ զինուորները խաչին վրայ տարածեցին՝ սուրբ ձեռաւքները քաշկըռտելով երկընցընելով խոշոր գամերով գամեցին. Ա՛խ, ինչ եղաւ մայրական սիրտդ՝ երբոր գամուելուն ձայնը լսեցիր. կիսմեռայնը՝ որ տախտակ չէր գամածնին, հապա մարմին կուռածին, մէկ հատիկ միածին որդւոյդ ձեռաւքները էին՝ որ տախտակի պէս կը գամէին։ Գամելէն

եռեւ աչքիդ առջին տեսար՝ որ ան կուսածին Յիսուսը մէկ աւազակի մը պէս խաչին վրայ մեկեցին, բարձրացուցին բոլոր աշխարհի անարդ աեսիլ մը ցըցուցին, որուն մարմինը չորս դին վիրաւորած, արիւնը դեռնին վրայ կը վազէր կը լուանար։

Յիշէ աս ամէն քաշածներդ սուրբ Աստուածածին. յիշէ առջիդ եղած ողորմելի տեսարանը, քու ցաւագին ժամուդ առեր, ուր թէ որ Աստուած հրաշքով չպահէր, հաղար անգամ կը մեռնէիր։ Եւ յիշելով ասոնք, բաց շնորհօք իմ հաւատքիս աչքն ալ, որ ինչպէս դու աչքիդ առջին տեսար, ուստեղմէ՝ արտէդ կսկիծը չհանեցիր, ես ալ անանկ մարդուս աչքիս առջին տեսնողի պէս ըլլամ աս կսկիծը, ոչ երբէք արտէս հանեմ Յիսուսին չարչարանքները, այլ միշտ յիշելով լամ ողբամ իմ մեղքերս, որ պատճառ եղան աս չարչարանքներուն, որով մէկ դին Յիսուս մարմնով խաչուեցաւ, մէկալ դին ալ դու անարատդ Յիսուսին հետ արտիդ մէջը մէկ տեղ խաչուեցար։

Եւ ես որ հիմա բոլորովին ապաւի-
նած փաթթուած կեցեր եմ աս տուրբ
խաչին տակը, այսօր կատարեալ թո-
զութիւն առնել տուր իմ պզտիկութե-
նէ ըրած մեղքերուս. վասն զի երբոր
արդարութիւնն ատուածային տես-
նէ Յիսուսի աս չարչարանքները, ու-
քու քաշածներդ ինծի համար, դու-
թը կը շարժի, ողորմութիւնը կը գա-
նայ. և ես կարդարանամ արդեամբք
չարչարանացն Յիսուսի և միջնորդու-
թեամբ քու վերացդ։ Անանկով սըր-
բոց հետ ընկերանալով, յաւիտեան
կը փառաւորեմ զամենատուրբ Երրոր-
դութիւնն, և զքեզ մայր կենաց և
փրկութեան կը մեծարեմ։

Հայր մեր որ յերկինս ես։
Ողջոյն քեզ Մարիամ։

Ամ հօրնեղբարդի.

Ո՛վ մայր ցաւագնեալ, որ միածին
որդւոյդ հետ ինչաւան եաքը քաշեցիր
սրտիդ մէջը՝ ինչ որ Յիսուս քաշեց իր
մարմնովը ինծի համար. Յիսուս ամ-

մէն բանը քաշեցնէ եւս, ամէն չարչարանքները լմնցուց. իր յաղթանակը տնկեց՝ արբաղնեալ հոգին աւանդելով երկնաւոր Հօրը ձեռքը։ Բայց քու խոցերդ, մայր ցաւագին՝ չլմնցան, այլ երբոր Յիսուս լմնցուց, դու ամէնէն սատակ խոցը ան առնը կրեցիր սրտիդ մէջ։ Երբոր աչքովդ տեսար Յիսուսին մեռնիլը. երբոր ղբկուեցար կենդանի տեսնելէն Յիսուսի, կենդանի Յիսուսին տեղ՝ մեռեալ Յիսուսը աչքիդ առջեւն խաչէն վար առին, գերեզմանը տուին. ան կենդանի դեղեցիկ Յիսուսը քեզմէ յափշտակեցին, հիմա բոլորովին խոցոտած, արեան մէջ թաթխած՝ նորէն քեզի տուին։

Ա՛խ, յիշէ ան ցաւագին ժամը ով մայր ցաւոց, արդեօք ինչ փոխուած տեսար. որ վէրքը կը նայէիր, արդեօք փշեղէն պսակը, արդեօք ձեռքին ծակերը, թէ ոտքին ու կողին, և բոլոր մարմնոյն պատուածքը. ինչ եղաւ ան առնը սիրտդ, ով մայր ծովացեալ վշտաց, յիշէ առնք որ ամէնն ալ իմ պատճառաւս քաշեցիր։

Հիմա ես գլուխս մեղաւորաց, մեղքերուս ծանրութենէն յուսահատած ահա առ առակալի օրը կը յիշեցնեմ ուվ մայր ողորմութեան։ Մեծ են Յիսուսի և քու քաշածներդ. մի թողուր որ մեղքերս պարապ հանեն զասունք. անտանելի են ան կսկիծները՝ որ սրտիդ մէջը կրեցիր, մի անպտուղ թողուր իմ չարութեանս համար։ Այլ՝ի խորոց սրտէ կաղաչեմ, յիշեցո՛ Յիսուսի դատաւորին, և յիշեցնելով՝ իմ փրկութիւնս հոգա. վասն զի թէ որ ես ինծի մնամ՝ չեմ կրնար փրկուիլ, առ է իմ միակ յոյս։

Դուն ես օրինակեալն Եմթեր ամէնն, իմ փրկութեանս համար զքեզ ընտրեց հայրն յաւիտենական, և առ քեզ հատուց։ Այսօր է օր փրկութեան. յիրաւի ատատիկ է բարկութիւն Հօրն երկնաւորի իմ վրայ՝ քան Արարչէն բարկութիւնը հրէից վրայ, վասն զի անեներելի են մեղքերս. բայց երբոր Եմթեր մէկ քանի խօսք մը խօսեցաւ հրէից փրկութեանը համար, փոխուեցաւ, ողորմեցաւ Արարչէն,

ինչուան թագաւորութեան կէսը անոր տուաւ, հրէաներուն մահուան վճիռը էս դարձուց, թուղթը պատռեց։

Ասոնք քու միջնորդութեանդ օրինակ էին ով մայր Աստուծոյ, որ եղար թագուհի երկնի և երկրի, և դանձարան շնորհացն Յիսուսի. երբոր ցուցընես աս քու եաքի խոցդ մէկալ խոցերուդ հետ մէկ տեղ, և մէկ քանի խօսքով բարեխօս ըլլաս իմ փրկութեանս համար, յիրաւի կը դթայ երկնաւոր Հօր սիրտը, իմ դատապարտութեանս վճիռն ալ կը պատռէ, զիս որդի ալքայութեան կընէ քու անուանդ համար։ Ան տեղը աս քաշածներդ պարտապ չէն ըլլար ինծի համար. ան տեղը էս ողորմելի մեղաւորս կըլլամ փառք պարծանք քու անուանդ, ամէնն ալ կիմանան՝ որ ինծի պէս մեղաւորը ալ տարար դատապարտուէր, միայն քու եօթն խոցիդ միջնորդութիւնը զիս փրկեց։

Անոր համար կաղաչեմ որ իմ կենդանութեանս տեղը աս իրեք շնորհքը ընես ինծի։ Ամէնը՝ երբոր սատա-

ման զիս փորձութեան մէջ ձգէ, ես ալ ինչ ատեն որ ըլլայ՝ երբոր քու եօթն խոցդ բարեխօս բռնեմ, օգնութեան կանչեմ, ան ատենը մէկէն երկընքէն հասիր ինծի, քու երկնային զօրութիւնդ խրկէ, զիս մեղքերէն պահէ, թող մի ասր՝ որ ան փորձութեան մէջը կենամ։ Երկրորդ՝ մեռնելէս առաջ կատարեալ զղջմամբ սուրբ հաղորդութեան խորհրդոյն արժանի ըլլէ։ Եւ երրորդ՝ ինչպէս որ Յիսուսին մեռնելու ատենը քովը գտնուեցար, արժանի ըլլէ ով մայր Աստուծոյ իմ մեռնելուս ատենն ալ՝ որ սուրբ հաղորդութեամբ մի մարմին՝ մի անդամ եմ եղած Յիսուսի, շնորհքով երկընքէն քու պաշտպանութեամբդ հասնելու զիս վախնարելու, և հոգւոյս թշնամիներէն ազատելու։

Ա. հիմակուան ըրած աղաչանքս՝ միածնիդ մեռած օրուանը համար կը խնդրեմ, ով մայր գթութեան, ընդունէ, լսէ, թէ որ մեռնելու ցաւագին օրս չկրնամ աղաչել։ Եւ մեռնելէս եւ ալ քու բարեխօսութեամբդ զիս

պարզերես հանէ Յիսուսի դատաստանին առջին, որ փրկութիւն դանելով զքեզ և քեզ զՅիսուս միայն յաւիտեան փառաւորող ըլլամ իր արքայութեան մէջ. ամէն։

Հայր մեր որ յերկինս ես։
Ողջոյն քեզ Մարիամ։

Թէ որ աս աղօթքները ամէն օր չես կրնար ըսել, սովորութիւն ըրէ գոնէ միայն եօթն ողջոյն ամէն օր մտադիրութեամբ զուրցելու։ Ինչ մարմնաւոր փորձանք ալ գայ ու ինչ մտքի փորձութիւն քերէ սատանան, միշտ սովորութիւն ըրէ սուրբ Աստուածածնին եօթն խոցը բարեխօս կանչելու հաւատքով. վասն զի եօթն խոցին ջերմեռանդութեամբը շատ հրաշքներ տեսնուած են։

ԱՂՕԹՔ

ԱՌԵՕԹՆ ԲԱՆՍ

ԶՈՐ ԱՍԱՑ ՔՐԻՍՏՈՍ Ի ԽԱՉԻՆ

Հայր, բոլոր դոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն.

Հայր երկնաւոր՝ աս ձայնս ուրիշի չէ, սիրելի Որդւոյդ ձայնն է, որուն վկայեցիր, եթէ Դա է Որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ: Հիմա աս հաճոյակատն Որդին թողեր է իր ցաւերը, զիս կը հոգայ, աս մեղաւորին մեղքերը մի յիշեր կըսէ, որ զինքն Յիսուս մեղքերուվս խաչ հանեցի, քամահրեցի, և աւելի նախատինք տուի արբապղծութիւն ընելով:

Ո՛վ արդարութիւն Աստուծոյ, զիս կուզես պատժել անհուն յաւիտենական պատժով, վասն զի զանհուն Աստուածդ անարդեցի. բայց ահա անհուն բանն Աստուծոյ է՝ որ ինծի համար կաղաղակէ. Հայր, Ո՛ղ դոյա։ Ինծի համար ինքը կը պատժուի, կը պատարագուի, երեն սուրբ արիւնը իմ վրաս կը քամուի. աս հերիք չէ՝ ցաւագին սրտիւ ալ կաղաչէ քեզի որ թողուս իմ մեղքս։ Հայր, Ո՛ղ դոյա։ Իրաւ՝ արդարութիւն քո որպէս սուրբ արեալ է, շիտակ դատաստան պիտոր տեսնէ, վասն զի իմ չար գործքերս կեցած են, պատիժ կուզեն, և ոչ ողորմութիւն, բայց զիս զարնելը՝ է նորէն զարնել, նորէն պատժել զԲանն Աստուած յաւիտենական, որ ինծի համար մարմին առած, խաչին վրայ դատապարտուած կը մրթուի, մրթուելու առեն ալ կողկողալով նորէն կը միջնորդէ։ Հայր, Ո՛ղ դոյա, զի ոչ գիտեն զինչ գործեն։ Պատճառն ալ տալով անանկ թողութիւն կը խնդրէ ինծի համար. վասն զի յիրաւի չգիտցայ որ մեղքը ինչ գէշ

բան է եղեր, զԱստուած անարգել մեղքով ուրչափ սոսկալի բան է եղեր. ինձի ասոնք ջուրի ձայն կուգային։ Բայց հիմա որ Ճանչցեր եմ մեղքս, խաչին պլլուեր եմ բոլոր սրտովս, զիս մէկը չկրնար անկէց հանել. որդին Աստուծոյ է որ կը վկայէ իմ ազատութեանս, կը բարեխօսէ ասանկ ուժգին բարեխօսութեամբ։

Ո՛վ անհուն ողորմութիւն աստուածային, եղեր խօսէ ինձի համար, խալըսէ զիս աստուածային արդարութեան ձեռքէն՝ ըսելով. յիրաւի արժանի է աս մեղաւորս բիւր դատապարտութեան, բայց որովհետև բոլորով սրտիս ապաւիներ է հիմա աս պատարագիս տեղը, կը նեղեմ կը թողում իր մեղքերը։ Ես ալ ըսելով աս աւետեաց ձայնը՝ օրհնեմ փառաւորեմ զՅիսուս միածին, օրհնեմ զՀայրն երկնաւոր և զՀոգին սուրբ, որ Յիսուսի ձայնին ըսելով ողորմեցաւ ինձի։

Այսօր ընդ իս իցես 'ի դրախտին.

Ո՛վ երջանիկ բարբառ՝ որ եկաւ հասաւ Յիսուսին բերնէն աւազակին ականջը, թէ դատապարտուելու տեղը՝ մեղքերուդ թողութիւն դտար, դժոխքին տեղը՝ դրախտը վաստակեցար։ Ո՛վ երջանիկ ժամ, երբոր մէկ մեղաւոր մը իր մահուան առէնը լսէ Յիսուսին բերնէն այս խօսքս։

Ա՛խ, մարդասէր Տէր իմ Յիսուս, որովհետև աւազակը քեզի խաչակից եղաւ, քեզ խաչեց, շնորհք մը տուիր՝ որ իրեն հաւատքը լուսաւորուեցաւ, քու սատուածութիւնդ ճանչցաւ, ճանչնալովը՝ իր մեղքը խոստովանեցաւ, և խոստովանելովը՝ ապաշաւնքի եկաւ արտովը քեզի դիմելով. Յիշեա՛ զի՝ Տէր, յորժամ գայցես արքայութեամբ քով։ Ասանկ ալ խոստովանելուն և ապաշխելուն համար՝ երկրորդ անգամ շնորհք տուիր, որ է շնորհք շնորհաց, արքայութեան հասցընելով, երկնաւոր դրախտը մտցընելով

Հիմա իմ հոգիս ալ խաչին տակը քեզի կաղաղակէ. Յիշեա՛ զիս Տէր, յորժամ գայցես արքայութեամբ քով։ Ա՛ս հոգիս որ զանազան մեղքերով լեցուած է, աւազակէն աւելի չարութիւններ սրբապղծութիւններ գործեր է, իր մահը մօտիկցած տեսնելով քեզ փրկիչդ կը գիմէ։ Տո՛ւր առաջ աւազակին պէս քեզի խաչակից ըլլալ, բայց շնորհք ալ տուր՝ որ աւազակին պէս համբերելով քաշեմ իմ խաչս, բիւր պատիժներու զիս արժանի սեպելով։ Լուսաւորէ հաւատքս՝ որ քու աստուածութիւնդ պայծառ տեսնեմ և հաւատամ, և հաւատքովս սրտանց զղջալով խոստովանիմ մեղքերս. միշտ քու արքայութեանդ բաղձանքով աւազակին պէս՝ իմ չարութիւններս ձգեմ, խաչին վրայ գամեմ թիւր և չար կամքս մեռցնելով, անանկով արժանի ըլլամ եաթի օրս քաղցր ձայնով քու բերանդ լսելու. Որովհետև մեղքդ ճանչցար, զքեզ պատժոյ արժանի սեպեցիր, իմ խրկած խաչս ալ համբերելով քաշեցիր, հաւատքովդ՝ գործ-

քովդ՝ զիս դաւանեցար, ես ալ այսօր երանութեան ձայնը կուտամ քեզի. Այսօր ընդ ինձ իցես 'ի դրախտին։

Կիւն դոռ, ահա որդի քո.

Ինչ ցաւագին ձայն քեզի համար սուրբ Աստուածածին, երբոր կուսածին Յիսուսը արիւնլուայ տեսնելէն ետև, աս խօսքս լսեցիր, որ է իբր Յիսուսին եռքի բարև տալը՝ ըսելով. Ես կը մեռնիմ կերթամ, զիս ա՛լ չես տեսներ մարմնով. իմ տեղս քեզի որդի ահա Յովհաննէս աւետարանիչը ըլլայ։ Աս ըսելով ինչ եղաւ սիրտդ, զՅիսուս թողուլ, Յիսուսին տեղը իր աշկերտը որդի առնել։ Բայց ինչ ուրախալի ձայն ինծի մեղաւորիս համար, վասն զի Յովհաննէս աշակերտին անուամբն ու օրինակովը՝ ամէն քրիստոնեայն ալ քեզի որդի ըրաւ Յիսուս, որոնց մէջը ես ալ կամ։

Մեր նախամայրն Եւա մեզի մահ բերաւ, ան մահը քու միածին Որդիդ վրան առաւ. այսօր մեզի համար փայ-

տէ կախուած կը մեռնի, որ Եւային կերած ծառին մահը մեր վրայէն վերցընէ. իսկ մեզի մայր կենաց՝ զքեզ դրրաւ դուստր Եւայի, դուստր Հօրն լուսոյ յաւիտենականի, որ մենք մեղաւորքս քեզի դիմելով կեանք փրկութեան գտնենք, յաւիտենից մահուընէ խալըսինք ճաշակելով զանմահ պըտուղն որովայնի քոյ։ Դու ես անանկ է նէ ասկէց ետքը մայր մեր կենաց և փրկութեան, և ոչ նախամայրն Եւա, որ Յիսուսին մեռնելէն առաջ դու մեռար. երմէ բաժնուեցար առ խօսքով. և մեզ այսչափ ցաւով ու կսկիծով որդի վասալիեցար, որդի վշտաց քոց, ինչպէս եղաւ Բենիամին երեն մօրը Հռաքելի, որդի անուանելի ցաւոց, որ Յիսուսին հետ մէկ տեղ խաչին քովխաչակից ըլլալով, սրտիդ մէջը մեռնելով զմեզ ծնար 'ի կեանսն յաւիտենից։

Հիմա շնորհակալ կըլլանք Յիսուսին անչափ սիրոյն՝ որ անչափ չարչարանաց մէջ իր քաշածը մէկդի ձգելով, զմեզ մեղաւորքս հոգաց. և ասանկ մայր փրկութեան մեզի դրաւ, որ է

յոյս մեր ամենեցուն։ Շնորհակալ կըլլանք քեզի ու նախամոյր փրկութեան մերոյ, ու մայր Աշմարիտ, որ Յիսուսին հետ մէկ տեղ գործակից ըլլալով մեր փրկագործութեանը համար՝ միատեղ քաշեցիր անոր հետ։ Անիկայ մարմնովը կը քաշէր, դու սրտով մէջը կը քաշէիր, եաթն ալ իր մահուան տեղը քովէն չբաժնուեցար, սիրտդ դիմացուցիր, խաչին տակը կեցար. անով արդիւնաւորեցար մէկ որդւոյ տեղ՝ բիւրաւոր որդիքներ ունենալ. հայր Աբրահամու պէս արդիւնաւորեցար մեզ մեղաւորացս տպատան ըլլալ։

Հիմա կաղաչենք մենք ամէնքս՝ որ ոչ միայն քու ծառադ ենք, այլև որդիք շնորհաց, խնամէ, պահէ, մայրական հովանաւորութիւնդ մեր վրայ ցըցու, որ չըլլայ թէ չար գաղանը սատանան զմեզ յափշտակէ, չըլլայ թէ պարապ ելլէ այսչափ կսկիծը՝ ցաւը՝ որ Յիսուսին հետ մէկտեղ քաշեցիր։ Տուր համարձակութիւն՝ որ քանի փորձութիւն գայ մեր վրայ աս աշ-

խարհիս մէջ, զքեզ ունենանք մեզ ապաւէն՝ մեր սիրտը մեր միտքը բանալու։ Մենք ալ եկեղեցւոյ որդիքս պարծինք արքայութեան մէջ քու անուանովդ՝ որ առաջ Բեթղեհեմի մէջ հաստատեր զՀայն անմահութեան պտուղ որոնայնի քո, իսկ այսօր նոյն պտուղը Գողգոթա լեռան վրայ խորվելով դառնակսկիծ չարչարանքով բաժնեցիր 'ի փրկութիւն աշխարհի մեզ մեղաւորացս, անանկով գործ փրկութեան մերոյ այսօր քու մայրութեամբդ խաչին տակը սահմանեցար։

Անոր համար կօրհնենք, երանի կուտանք քեզ մենք ամէնքս ազգք և ազգինք ով մայր Աստուծոյ, և մայր փրկութեան մեզ մեղաւորացս, և կաղաչենք՝ որ չնայիս մեր անարժանութեանը վրայ, այլ քու մայրութիւնդ ցուցնես մեր վրայ, հիմա մեղքերէ պահելով, սատանայի զօրութիւնը խորտակելով, եւ՝քը մեր մահուան առեն ալ շնորհքով քովերնիս դանուելով, որ չար սատանան հալածուի։ Ըրէ ով մայր կենաց և փրկութեան, որ քեզ-

մով արքայութեան հասնելով, աս ե-
րանութիւնս երկինքն ալ կարենանք
տալ քեզի, և քեզմով մեծացուցանենք
զանբաւ մարդասիրութիւնն Յիսուսի
յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Աստուած իմ, Աստուած իմ, ընդ-
դէմ բողեր զիս.

Տէր իմ Յիսուս Քրիստոս, երբոր
աս քու ողորմելի ձայնդ կառնեմ, սիր-
տըս կը տրորի, կը գորովի։ Քու սաս-
տիկ սէրդ ըրաւ որ ես պիտոր քաշէի
իմ չքաշելուս համար՝ դուն իմ մեղա-
ւոր կերպարանքս առիր, իմ տեղս դու
քաշեցիր։ Հայրն երկնաւոր վերէն տե-
սաւ որ իմ մեղաւոր կերպարանքս մոռր
ես, ինչ բարկութիւն որ ունէր իմ
վրաս, քու վրադ թափեց, երես դար-
ձուց։ Ա՛ս բանս քեզի ամէն տանջան-
քէն մեծ եկաւ. ա՛լ չդիմանալով խրե-
գանգատելով մը աղաղակեցիր. Աստուած
իմ, Աստուած իմ, ընդէ՞ր թողեր զիս։ Պատ-
ճառը կը փնտռես՝ որ ինչո՞ւ հայրն
Աստուած զքեզ ձգեց, վասն զի դու

չունէիր մէկ խիղճ մը, չունէիր մէկ ա-
ղաղ մը։ Ա՛խ, պատճառը իմ մեղքերս
էին, ես ինչ մեծ են եղեր իմ մեղքերս,
որ միայն իմ մեղքերուս պատիժը
քաշել ուզելուդ համար, ղբեզ ալ
ձգեց Թողուց Աստուած, Թէպէտ էիր
նոյն ինքն անմեղութիւն և արդարութիւն
արքայ։

Ա՛խ, տէր իմ, ես այսօր ճանչնալով
մեղքերուս ծանրութիւնը, կը սոս-
կամ, մեղայ գոչեմ։ ան ատենուան ո-
ղորմուկ ձայնդ՝ ազէկուսը սիրտդ
միտքդ բէր, դու ալ քու երեսդ մի
դարձներ ինծմէ, մի Թողուր զիս տէր
իմ Յիսուս, Աստուած իմ։ Վասն զի
կը տեսնեմ որ մեղքերուս ծանրու-
Թեանը համար՝ և անհերքելի ապե-
ղարխուութեանցս համար՝ զիս բոլորո-
վին Թողեր ես. չես խօսիր ինծի հետ
շնորհքով և ներշնչմամբ, ինչպէս որ
քու սիրելիներուդ հետ կը խօսիս. չես
բանար իմ միտքս, չես լուսաւորեր
հաւատքս, չես տաքցներ իմ սիրտս
ղբեզ սիրելու, աշխարհքէս հեռա-
նալու։

Ամանկ ջոր ցամաք մնալով իմ սիրտս ալ՝ հիմա քու խօսքովդ քեզի կաղաղակէ. Ամառած իմ, Ամառած իմ, ընդէր թողեր զիս, ընդէր անարդես զիս, ընդէր դարձուցանես զերեսս քո յինէն վասն մեղաց իմոց։ Ի՞նչ կըլլայ աս խեղճ ստեղծուածը՝ երբոր դու աչարկիդ երես դարձընես, երբոր դու փրկիչդ զիս չճանչնալ ցուցընես։

Ո՛վ Տէր իմ, չեմ կրնար էս ալ աս բանիս դիմանալ, կաղաղակեմ, դու Յիսուս ողորմա ինձ. ան ժամուն համար որ ամանկ թողուած եղար երկնաւոր Հօրէն իմ սիրոյս համար, դու հիմա մի թողուր զիս, այլ գթութեան աչքով նայէ, պահէ, պահպանէ մեղքերէ, և հոգւոր ու մարմնաւոր փորձանքներէ, ինչուան որ քու սուրբ երեսդ տեսցընելու արժանի ընես արքայութեան մէջ. ամէն։

Ծարաւի եմ.

Քիչ էին տէր իմ, ան քառասուն օրուան պաքը որ ինծի համար բռնեցիր, հիմա ծարաւութիւն ալ կը քաշես։ Մեծ սեպուհեցաւ Դաւիթ մարգարէին ծարուիլը՝ ու Բեթղեհեմին ջուրը չիմանալը. հիմա դու ջուրդ կենդանութեան՝ որ ամէն ջուրը ստեղծեցիր, չիկրցար կաթիլ մը ջուր գտնել ծարաւդ բժշկելու համար ով տէր զօրութեանց։

Փառք երկայնմտութեանդ տէր իմ, որ իմ փրկութեանս համար այսչափ հաղարապատիկ քաշեցիր. արարիչդ Ովկիանոս ծովու՝ ինչպէս էղաւ՝ որ դու կարօտ ըլլաս ջուրի, ծարուիս՝ և ջուր չգտնես։ Բայց քու ծարաւիլդ իմ փրկութեանս համար էր, և իմ հոգիս խաչցընելու։ Տեսնելով որ գըրախտին մէջ ծառին քով կը գտնուիմ, աշխարհ եկար՝ ծառին վրայ ելար, ինս կը փնտուէիր խաչին ծառին վրայ։ Բայց էս քու սիրած խաչիդ ծառին

քով չեմ գանուիր, այլ արդէլեալ մեղաց ծառերու քով կը գանուիմ։

Երբոր զիս չգտար խաչին վրայ, ողորմուկ ձայնով կանչեցիր. ա՜խ, Ս. դամ ո՞ւր ես, ծարաւի եմ քու վրկութեանդ. ինչպէս որ սամարացի կնոջէն ջուր ուզեցիր, անանկ ալ ինծմէ ջուր արտասուաց ապաշխարութեան ուզեցիր, որ ես գոնէ շարժիմ, դամ կամքդ կատարելու. հիմա է ըսիր ժամանակ ապաշխարութեան. քու ջուրդ արտասուաց ապաշխարութեան տուր ինծի, որ իմ արեանս հետ խառնեմ, Հօրն երկնաւորի ընծայեմ, որ մեղքերուդ քաւութիւն թողութիւն գտնես։ Բայց ես նեմանեցայ այն անողորմ դահիճներուն, որ ջուր արտասուաց տալուն տեղը՝ իմ սիրտս քար դարձուցի, լեղի ջուր տուի ապերախտութեան, քացախ ծանր մահուշափ մեղաց խմցուցի. իմ տեղս քարերը լացին, երկինք գետին ողբացին, իսկ ես անշարժ կեցայ, մանաւանդ թէ նորէ՛նոր մեղքեր գործեցի։

Այլ դու ողորմութեան Աստուած,

ինչպէս որ նոյն խաչ հանողները եռքը յապաշխարութիւն դարձուցիր, ասանկ ալ իմ սիրոս այսօր յապաշխարութիւն շարժէ, որ ըրած մեղքերուս վրայ լալով, քու ծարուութեանդ ջուր հացընեմ, անով փրկութեան հասնելով քու ծարաւդ բժշկեմ, կամքդ կատարեմ, յաւիտենական երանութեան արժանի ըլլալով։

Ամենայն ինչ կատարեալ է.

Ամէն բան կատարեալ է. ինչ որ Աստուած ապրպրեր էր ուզեր էր քեզմէ Յիսուս միածին, ամէն բան ըսմընցուցիր. ինչ սորվեցընել պէտք էր մարդկան՝ սորվեցուցիր, ինչ օրինակ տալ պէտք էր՝ գործքով տուիր, ինչ չարչարանք ու խաչ պէտք էր քաշել մարդկային փրկութեանը համար՝ քաշեցիր, ամէն Աստուծոյ հրամաններըը կատարեցիր, անոր համար հիմա համարձակութեամբ աղաղակեցիր առ Հայր երկնաւոր. Ամենայն ինչ կատարեալ է։ Ամէն Աստուծոյ հրամանքը ըսմընցած է։

Ահա Յիսուս, ես ալ աս կը փափաքիմ, և կը խնդրեմ քեզմէ որ տաս ինծի աս երեք շնորհքը։ Ուրիշներուն տրվեցընեմ քու կամքդ կատարելու. ուրիշներուն բարի վարքով աղէկ օրինակ տամ, և ոչ չար օրինակ. և ինչ խաչ որ խրկէ ինծի տտուածային նախախնամութիւնը՝ սիրով քաշեմ, քեզի նման ըլլամ։ Անանկով ես ալ կարենամ մահուանս առեն ըսելու. ամենայն ինչ կատարեալ է. ամէն Աստուծոյ կամքը կատարեցի. հիմա ալ բարի մտհուամբ կատարեմ իմ կեանքս։ Ինչպէս որ Պօղոս առաքեալդ սուրբ հոգին համարձակութեամբ կըսէր առ Աստուած. Զբարւոք պատերազմն պատերազմեցայ, զընթացն կատարեցի, զհաւատն պահեցի, այսուհետև կայ և մնայ ինձ արդարութեան պսակն։

Հայր, 'ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ.

Հայր Աստուած, քու ձեռքդ կը յանձնեմ իմ մարմնաւոր և հոգեւոր հոգս, որ եաքի օրս ալ հոգիս քու ձեռքդ աւանդեմ։ Սանկ սրվէցանք քու միածնէդ, և սանկ տեսանք։

Հիմա դու ո՛վ Հայր ողորմութեան, որ լսեցիր աս ողորմագին ձայնը քու միածին Որդւոյդ, որ իրեն հոգին քեզի առիր, այն ժամը Յիսուսին՝ այն խոնարհութիւնը՝ և չարչարանքը յիշելով, ողորմէ, զիս ալ արժանի ըրէ որ Յիսուսին վարքին հետևելով, հնազանդութեամբ ու ջերմեռանդութեամբ մեռնելով կարենամ ըսել եաքի օրս. Հա՛յր Աստուած, որ զիս ստեղծեցիր, պզտիկուց ինչուան հիմա մարմնաւոր և հոգեւոր բարեօք լցուցիր, հիմա ալ քու կամքովդ իմ օրերս լմնցուցի, քու ձեռքդ և ոչ օտարի կաւանդեմ զայն հոգին, որ դուն ստեղծեցիր. ա՛ռ, և քու երեսդ ցուցընելու արժանի ա-

ցաւ։ Հայը 'ի յԵրուսաղէմ պիտի ի՛մ։ ինչպէս որ Յիսուսին հոգին առիր, էս ալ անդամ եմ ամոր մարմնոյն, իմ հոգիս ալ մի բաժներ ամոր քովէն, այլ դուռ ամ, պահէ յաւիտեան, որ քուկդ է։

ԱՂՕԹՔ Ի ՍԱՂՄՈՍԷՆ

Ի ՊԷՍՊԷՍ ԴԻՊՈՒԱԾՍ

Սաղմոսը սուրբ հարք կը նմանցընեն դեղաձախի մը խանութի. ինչպէս որ հոն ամէն ցաւերու մարմնաւոր դեղը կը գտնես, ասանկ ալ ինչ հոգևոր կամ մարմնաւոր ցաւ ունենաս, անոր բարոյական դեղը սաղմոսին մէջը կը գտնես որ միտքդ կը բանայ, հոգիդ կը միխիթարէ, սիրտդ կը քաջալերէ։ Եւ որովհետև մէկ բանաստեղծութիւն մըն է Հոգւոյն սրբոյ խօսքերով զուրցուած, իր խօսքերուն մէջ մէկ գաղտնի զօրութիւն մը ունի խորունկ, որ մարդուն ներքի դիւ յատուկ տպաւորութիւն մը կընէ, ով որ հաւատքով ինչպէս որ պէտք է՝ զուրցէ։ Անոր համար սուրբ հարց աղօթքը սաղմոսն էր. և ինչուան հիմա եկեղեցւոյ ժամերգութեան մեծ մասը սաղմոսէն է։

Հոս ալ մէկ քանի դիպուածներու աղօթքներ կը գտնես սաղմոսէն, մեկնելով, խորհուրդները բացատրելով, հոգւոյն վրայ դարձնելով, որուն ներգործութիւնը կը գտնես թէ որ հաւատքով զուրցես։

Աղօթք 'ի սաղմոսէ 'ի ժամանակի հիւանդութեան.

Ողորմեա՛ ինձ տէր, զի հիւանդ եմ ես, բժշկեա՛ զանձն իմ, զի խռովեցան ոսկերքք իմ։ Զ։

Ողորմէ ինծի տէր իմ, ողորմէ վասն զի հիւանդ եմ. բժշկէ զիս տէր իմ, վասն զի ամմէն ոսկորներս կը ցաւին։

— Անձն իմ յոյժ խռովեցաւ, և դու տէր մինչև յե՞րբ։ Զ։

Բոլոր իմ անձս խիստ խռովութեան մէջ է հիւանդութենէս, դու ալ տէր իմ ինչուան ե՞րբ չես լսեր իմ աղօթքիս, չես ընդունիր իմ խնդիրքս զիս բժշկելով։

— Դարձ տէր, և փրկեա՛ զանձն իմ, կեցո՛ զիս տէր ըստ ողորմութեան քում։ Զ։

Տէր Աստուած, մէյմը ինծի դարձիր նայէ, փրկէ, ազատեցուր զիս քու ողորմութեամբդ։

— Զի ոչ ոք է որ 'ի մահու յիշէ զքեզ. կամ 'ի դժոխս խոստովան առնիցի առ քեզ։ Զ։

Ես ողջ ըլլալով քեզի կը ծառայեմ, բերնով սրտով քու անունդ կը փառաւորեմ, բայց մէյմը որ մեռնիմ, ալ չեմ կրնար զքեզ փառաւորել, և ոչ յիշել. մէյմը որ գերեզման երթամ, չիմնար բերան, չիմնար սիրտ որ զքեզ պաշտէ, զքեզ օրհնէ։

Վաստակեցայ ես 'ի հեծութեան ի-մում, լուացի զամենայն գիշեր զմահիճս իմ, և արտասուօք իմովք զանկողինս իմ թացի։ Զ։

Քանի որ աս ցաւիս մէջն եմ, հեծելէն հառաչելէն յոգնեցայ. մահիճս արցունք թափելէն լալէն լուացի, որ ինծի ողորմիս։

Ողորմեա ինձ տէր, զի նեղեալ եմ ես, խռովեցաւ 'ի սրտմտութենէ ակն իմ, անձն իմ և փոր իմ։ Ղ։

Դու ալ տէր իմ ողորմէ, վասն զի խիստ նեղած եմ, ջորս դիս խռովութեան մէջ, աչքս ալ, փորս ալ, բոլոր անձս ալ։

Պակասեցան 'ի ցաւոց կեանք իմ և ամք իմ յոգւոց եղանելոյ։ Ղ։

Ցաւին խառութենէն կեանքս պակ-

սեցաւ , հառաչելէն տարիներ հա-
տան։

Աղքատացաւ 'ի տկարութենէ զօ-
րութիւն իմ, և ոսկերք իմ խռովե-
ցան։ Ղ։

Ուժս տկարացաւ վասուժեալէն , ոսկորներս անհանգիստ եղան։

Տէր մի սրտմտութեամբ քով յան-
դիմաներ զիս , և մի բարկութեամբ քով խրատեր զիս։ Ղէ։

Տէր Աստուած , իմ մեղքերուս հա-
մար սրդոզելով մի յանդիմաներ , բար-
կանալով մի խրատեր , հապա հօր պէս խրատէ։

Ոչ դոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ յերեսաց բարկութեան քոյ։ Ղէ։

Ահա կը տեսնես՝ որ քու առանկ բարկանալէդ հիւանդացեր սրտիկեր եմ, իմ մարմնոյս չկայ մէկ բժշկութիւն մը։

Ոչ է խաղաղութիւն ոսկերաց իմոց , յերեսաց մեղաց իմոց։ Ղէ։

Իմ մեղքերուս համար ինչուան ոսկորներուս ալ հանգստութիւն չիմը-նայ։

Տառապեցայ և խոնարհ եղէ մինչև յոյժ, զօրհանապազ տրտում գնայի. զի անձն իմ լի եղև չարչարանօք, և ոչ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ։

Շատ չարչարեցայ, շատ տառապեցայ, տառապէլէս հիմա խիստ խոնարհ եղայ, իմացայ որ քեզի դէմ մեղանչելս՝ քու պատուիրանքներդ չպահելս՝ իմ հպարտութենէս կու գայ եղեր, անոր համար ամէն օր խիստ տրտում եմ, վասն զի կը տեսնեմ որ բոլոր անձս լեցուեցաւ չարչարանքով, մէկ բժշկութիւն մը չկայ իմ մարմնոյս։

Զարչարեցայ և խոնարհ եղէ մինչև յոյժ, մռնչէի առ հեծութեան սրտի իմոյ։ Լէ։

Անանկ ալ չարչարուեցայ, անանկ ալ խոնարհ եղայ՝ որ սրտիս հեծելէն ձայն կը հանեմ, կը մռնչեմ։

Ես 'ի տանջանս պատրաստ եմ, և ցաւք իմ առաջի իմ են յամենայն ժամ։ Մի թողուր զիս տէր Աստուած իմ, և մի 'ի բացեայ առնիր յինէն. հայեաց յօգնել ինձ տէր փրկութեան իմոյ։ Լէ։

Ամի, տէր իմ, թէպէտև պատրաստ եմ տանջանք քաշելու քու կամքդ կատարելու համար, և ցաւերս ամէն ժամ իմ դիմացս են, սակայն դու տէր Աստուած, մի թողուր զիս ատանկ, մի ալ ինձմէ հեռանար, նայէ որ ինծի օգնես, զիս փրկես։

Ի բաց արա՛ յինէն զտանջանս իմ, զի՝ի զօրութենէ ձեռին քո ես պակասեցայ։ Ղ.Ը։

Ա՛ս տանջանքս հեռացու ինծմէ, վասն զի քու ձեռքիդ ուժը պակսեցաւ ինծմէ։

Կշտամբութեամբ վասն մեղաց խրատեցեր զմարդ, մաշեցեր որպէս սարդի ոստայն զանձն նորա, սակայն ընդունայն է ամենայն մարդ։ Ղ.Ը։

Մեղքերուս համար սաստելով յանդիմանելով զիս խրատեցիր աս հիւանդութիւնը ինձի խրկելով, որ սարդիոստայնի մը պէս զիս բոլորովին մաշեցուց, բայց դու գիտես որ ամէն մարդ մէկ ունայնութիւն մըն է, չկրնայ ինչ կրնէ։

Դատ արա՛ ինձ տէր, զի ես յամբարձութեան իմում գնացի, ՝ի տէր յու-

ասցայ՝ զի մի եղէց հիւանդ։ Ամ։

Դու իրաւունք ըրէ, դատաստան կարէ տէր իմ, վասն զի ես հիմա շնաակ սրտով քեզի յուսացեր եմ քեզի ապաւիներ եմ, որ չի հիւանդանամ։ Փորձեա զիս տէր և քննեա զիս, փորձեա զերիկամունս իմ և զսիրտ իմ։ Ամ։

Թէ որ դու կուզես իմ համբերութիւնս իմ հնազանդութիւնս փորձել՝ փորձէ, չարչարէ, եղնցին կամք քո։ Թէ որ կուզես իմ մեղքերուս համար պատժել՝ պատժէ աս սիրտս, աս մարմինս։

Ես ասացի տէր ողորմեա՛ ինձ։ բժշկեա զանձն իմ, ես մեղայ քեզ։ Խ։

Բայց ես ալ աս կըսեմ, տէր, ողորմէ՛ ինձ, բժշկէ զիս։ մեղայ, քաւեա՛, ներեա՛։

Տէր օգնական է նմա 'ի մահիճս ցաւոց իւրոց։ և զամենայն անկողինս նորա դարձուցանէ 'ի հիւանդութենէ նորա։ Խ։

Թէ որ մէկը ցաւէն պառկի, մահճի մէջ ինայ, դու ես անոր օգնականը

որ կը բնակցընես, և իրեն մահձէն հիւանդութիւնը կը փարատես։

Համբերելով համբերի տեառն, և նայեցաւ առ իս, և լուաւ աղօթից իմոց։ Եհան զիս 'ի գբոյ սառապանաց, 'ի կաւոյ և 'ի տղմոյ։ Ղ։

Շատ համբերելէս ետև՝ վերջապէս նայեցաւ Աստուած վրաս, լսեց աղօթքս աղաչանքս, մահճէս զիս վեր հանեց, որ ինծի մէկ գուբ մը էր տառապանքի, մէկ գուբ մը էր տղմի պէս կաւի պէս կպած։

Տէր Աստուած իմ կարդացի առ քեզ՝ և բժշկեցեր զիս, տէր հաներ 'ի գժոխոց զանձն իմ, փրկեցեր զիս յայնցանէ որ իջանեն 'ի գուբ։ Ի։

Դարձայ ըսի, Տէր Աստուած քեզի աղաղակողներուն սիրտդ չեղիմանար. երբոր ես քեզի գիմեցի, դու ալ զիս բժշկեցիր, դերեզմանէն զիս խալսցուցիր, փրկեցիր զիս անոնց մէջէն՝ որ մեռնելով դերեզմանին գուբը կիյնան։

Ընդ երեկոյս հանդիցեն լալիք, առաւօտու եղիցի ուրախութիւն։ Ի։

Ան իրիկուն լալիրը կը դադրին, առաւուն կուրախանանք։

Ահ քեզ տէր կարդացի, և առ Աստուածդ իմ աղաչեցի, զինչ օգուտ է քեզ յարենէ իմմէ. Թէ ինչանեմ ես յապականութիւն։ Իթ։

Յաւիս ասեն աս կըսէի Աստուծոյ, և ասանկ կաղաչէի. Տէր Աստուած, Թէ որ հիմա մեղքերուս համար զիս պատժես, արիւնս քամես մեռցընես, տէր ես, կրնաս ընել, բայց ես ապականանելէս կորսուելէս եան՝ ինչ օգուտ կըլլայ քեզի։

Մինթէ հող խոսովան առնիցի՞ առ քեզ, կամ պատմեսցէ՞ զճշմարտութիւն քո։ Իթ։

Մեռածիս պէս հող պիտոր կարիմ, մինթէ մէկ հող մը կրնայ զքեզ պաշտել, կրնայ պատմել քու ճշմարտութիւնդ, մեծութիւնդ։

Լուաւ ինձ տէր և ողորմեցաւ, և տէր եղև ինձ օգնական։ Դարձոյց ըզսուգ իմ յուրախութիւն, զերծ յինէն զքուրձ, և ինձ զգեցոյց զուրախութիւն։ Իթ։

Ան խոսքերս լսելով Աստուած, ողորմեցաւ ինծի ու օգնեց, ինչ որքան

մութիւն որ ունէի՝ յուրախութիւն գարձուց. սուգի լաթերս վերցուց, ուրախութեան լաթեր հագցուց։

Լուաւ տէր ձայնի լալոյ իմոյ, լուաւ տէր աղօթից իմոց, և տէր զինդրուածս իմ ընկալաւ։ Զ։

Ամենկ լսեց Ամուսած իմ ձայնս, իմ լացս, ու խնդիրքս կատարեց։

Աղօթք՝ի սաղմոսէ, ՝ի նեղիլն՝ի թշնամեաց մարմնոյ և կամ հոգւոյ. որք են սատանայ, աշխարհ և մարմին։

Ա. քեզ տէր համբարձի զանձն իմ, Ամուսած իմ՝ի քեզ յուսացայ, մի ամաչեցից, և մի ծիծաղեսցին զինեւ թշնամիք իմ։ ԻԴ։

Տէր Ամուսած քեզի կը դիմեմ, քեզի կը յուսամ, չըլլայ որ ամօթով մընամ, թշնամիներս չենասան վրաս։

Եւ Ամուսած աղօթից իմոց յաղաչել ինձ առ քեզ, յերկիւղէ թշնամեացն փրկեա զանձն իմ։ ԿԴ։

Տէր Ամուսած լսէ իմ աղօթքիս որ

պիտոր ընեմ, թշնամւոյն վախը պա-
տեր է զիս, փրկէ ազատէ զիս անոր
ձեռքէն։

– Աստուած յանուան քում կեցո՛ զիս, և 'ի զօրութեան քում իրաւ ա-
րա ինձ։ Օտարք յարեան 'ի վերայ
իմ, և հզօրք խնդրեցին զանձն իմ և
ոչ համարեցան զքեզ Աստուած ա-
ռաջի իւրեանց։ ԾԳ։

Տէր Աստուած, քու անուանդ հա-
մար զիս ապրեցո՛ւ. քու զօրութեամբդ
իրաւունք ըրէ ինծի. վասն զի օտար-
ներ՝ զօրաւոր թշնամիներ իմ վրաս ե-
լան, զիս կուզեն կորսնցընել, զքեզ
Աստուծոյ տեղ՝ բանի տեղ չեն տեսներ։

– Աստուած յօգնել ինձ նայեաց, և
տէր յընկերել ինձ փութա։ Ամաչեա-
ցեն և յամօթ լիցին որ խնդրէին զան-
ձըն իմ, դարձցին յետս և ամաչեսցեն,
ոյք խորհէին ինձ չար։ ԿԹ։

Տէր Աստուած, նայէ որ ինծի օգ-
նես. ինծի շուտով ընկերանաս, որ ա-
մբոխեան թշնամիներս. ամօթով եմ
դառնան անոնք՝ որ ինծի վնաս մը կու-
զէին հասցընել։

Զարթիր և հայեաց տէր յիրաւունս իմ, Աստուած իմ և տէր իմ՝ի դատաստանս իմ։ և իրաւ արա՛ ինձ ըստ արդարութեան քում, տէր Աստուած իմ։ Մի ուրախ եղիցին յիս թշնամիք իմ, և մի ասասցեն՝ի սիրտս իւրեանց. թէ վա՛շ վա՛շ անձանց մերոց զի ընկլուզաք զնա։ ԼԳ։

Արթընցիր տէր իմ, նայէ. իրաւունք ըրէ, իմ դատաստանս կտրէ քու արդարութեամբդ՝ որ չըլլայ թէ թըշնամին ուրախանայ, իր սրտին մէջ ո՞խասրտելով զուրցէ թէ կորանցուցինք մենք աս հոգին։

Զօրացան յիս թշնամիք իմ և ատելիք իմ՝ի նանիր. ինչ զոր ոչ յափշտակեալ էր, տուժէի նոցա։ ԿԸ։

Թշնամիներս ատելիներս վրաս ուժ առին. և ան բանը որ չէի ըրած, չէի գրկած, ինծմէ կուզէին կառնէին։

Բազում եղեն քան զհեր գլխոյ իմոյ, ոչք ատէին զիս՝ի տարապարտուց։ ԿԸ։

Աս ատելիներուն համբանքը՝ որ պա-

բաղ տեղը զիս կառէին, գլխու մազերէն աւելի շատցան։

Զինէն խորհէին ոչ նստէին առ գրուն, զիս այլն առնէին ոչ ըմպէին գինի։ ԿԸ։

Ամէնն ալ որ դռնէրնէն նստէր էին, իմ վրաս կը խօսէին, իմ վրաս կը մոածէին, գինի խմելու տեղն ալ զիս ծաղը կընէին։

Եղաք մեք նախատինք դրացեաց մերոց, ծաղր և այլն կատականաց այնոցիկ՝ որ շուրջ էին զմեզ։ ՀԸ։

Անանկ եղաւ որ մեր դրացիներուն նախատինք մը եղանք, որ մեր քովինները ծաղր ու ամօթ եղանք։

Մինչև յե՞րբ, Աստուած, նախատէ թշնամին, բարկացուցանէ հակառակորդն զանուն սուրբ քո։ ՀԹ։

Ինչուան ե՞րբ ատանկ քամահրէ պիտոր թշնամին տէր իմ, զիս քամահրելով զքեզ ալ կը բարկացընէ։

Մինչև ցե՞րբ բարձրանայ թշնամին 'ի վերայ իմ, նայեա՛ և լուր ինձ տէր Աստուած իմ։ ՃՌ։

Ինչուան ե՞րբ պիտոր բարձրանայ

գոռոզանայ թշնամին իմ վրաս, նայէ՛, լսէ՛ ինծի տէր Աստուած իմ։

Արի տէր, ժամանեա՛ նոցա, և խա-փանեա՛ զնոսա. փրկեա՛ զանձն իմ յամպարշտաց, 'ի սրոյ և 'ի ձեռաց թշնամեացն։ ԺԶ։

Եղի՛ր տէր Աստուած, հասի՛ր անոնց վրայ ու խափանէ. ամբարիշտներէն, թշնամիներուս ձեռքէն փրկէ զիս։

Մինչև յաղերկել և 'ի ծերանալ՝ Աստուած իմ մի թողուր զիս։ Հ։

Մինչուան որ ծերանամ, մի թողուր զիս ձեռքէդ տէր Աստուած իմ։

Մի ընկենուր զիս տէր 'ի ժամանակս ծերութեան, 'ի պակասել զօրութեան ինոյ մի թողուր զիս։ Ասացին թշնա-միք իմ ինձ, և որ պաշարեցին զանձն իմ, խորհեցան 'ի միասին և ասացին. Աստուած եթող զնա, հալածեացուք և հասցուք նմա, զի ոչ ոք է որ փրկէ զնա։ Աստուած իմ մի հեռի առնիր յինէն, և Աստուած յօգնել ինձ նա-յեաց։ Հ։

Երբոր ալ ծերանամ, երբոր ուժս պակսի, ան առնեն ալ մի ձգեր, մի

թողուր զիս տէր իմ։ Վասն զի թշնամիներս անանկ առեալ կը ապատեն ըսելով. Աստուած ձեռքէ թողուց զայն հոգին. հիմա է առնելը, հանելիք, հալածելիք, վասն զի չկայ մեկը որ փրկէ։ Ա՛խ, տէր Աստուած, դու զայն ըսելով մի հեռանար ինծմէ, հապա ինծի օգնութեան հանելու նայէ։

— Ընդէ՞ր տէր կացեր 'ի հեռաստանէ, անտես արարեր 'ի դէպ նեղութեան ժամանակի։ Թ։

Ինչո՞ւ համար հեռուանց կեցեր էս մեղքերուս համար, բուն նեղութեանը առենը չէս նայիր երեսս։

— Արի՛ տէր, և մի զօրացի մարդ. դատեցին հեթանոսք առաջի քո։ Թ։

Ելի՛ր տէր Աստուած, որ մարդ չի զօրանայ իմ վրաս, հեթանոսներուն դատաստանը դու տես։

— Ամաչեցեն և խռովեցին յոյժ ամենայն թշնամիք իմ, դարձցին յետս և ամաչեցեն յոյժ վայրկենակի և խըռովեցին։ Զ։

Անանկ ալ ամէն թշնամիներս ամըչնան, շուտով ետ դառնան իմ հոգիս փորձելէն։

Տէր լոյս իմ և կեանք իմ՝ ես յուսմ՝ մի՞ երկեայց, տէր ապաւէն կենաց ի՞մոց՝ ես յուսմի՞ դողացայց։ Ի մերձենալ առ իս չարաց ուտել զմարմին իմ, նեղիչք իմ և թշնամիք իմ նոքա տկարացան և անկան։ Թէ պատրաստեսցի՝ ի վերայ իմ պատերազմ, ոչ երկիցէ սիրտ իմ. Թէ յարիցէ՝ ի վերայ իմ ճակատամարտ, սակայն և այսուիկ՝ ի քեզ տէր յուսացայ։ Զսան թշնամեաց իմոց մի մատներ զիս՝ ի ձեռս նեղչաց իմոց։ ԻԶ։

Տէր Աստուած, դու ես իմ լոյս ու կեանքս, ալ ես ուսկից պիտոր վախնամ, դու ես իմ ապաւէնս, ես ուսկից պիտոր դողամ։ Ինչ թշնամի որ ինծի մօտիկնայ ճնաս մը հասցընելու համար իրենք կիյնան կը ճնաուին։ Թէ որ վրաս պատերազմի ելլեն ծեծկուին թշնամիներս, սատանայ, մարմին ու աշխարհ, յոյսս քու վրադ դնելէն ետև՝ սիրտս ամենևին չիվախնար։ Անոր համար չըլլայ որ թշնամիներս ուրախանան, մի մատներ զիս իմ նեղիչներուս ձեռքը։

Տէր է իմ օգնական, և ես ոչ երկեայց, զի արասցէ ինձ մարդ։ Տէր է իմ օգնական, և ես տեսից 'ի թշնամիս իմ։ Բարի է յուսալ 'ի տէր քան յուսալ 'ի մարդիկ. բարի է յուսալ 'ի տէր, քան յուսալ յիշխանս։ ՃԺԸ։

Իմ օգնականս Աստուած է, անոր համար չեմ վախնար ինչ պիտոր ընէ ինծի մարդը. մանաւանդ թէ իմ թշնամիներուս պատիժ կը հասցընէ։ Անոր համար շատ աղէկ է Աստուծոյ վրայ դնել յոյսը, քան թէ մարդու կամ իշխաններու վրայ։

Ամենայն ազգք շրջեցան զինև, և անուամբ տեառն յաղթեցի նոցա։ Զօրութիւն իմ և օգնութիւն իմ տէր, և եղև ինձ 'ի փրկութիւն։ Աջ տեառն արար զօրութիւն աջ տեառն բարձր արար զիս, և աջ տեառն արար զօրութիւն։ ՃԺԹ։

Ամէն կերպ փորձութիւն բերին ինծի թշնամիներս, Աստուծոյ անունը տալով անոնց վրայ էլայ. վասն զի իմ զօրութիւնս ու օգնութիւնս Աստուած է. անիկայ զիս վրայ հանեց, զօրացուց։

Զի ահա թշնամիք քո տէր, զի ահա թշնամիք քո կորնչին, ցրուեսցին ամենեքեան ոչք գործեն զանօրէնութիւն։ Նուէս ակն իմ 'ի թշնամիս իմ։ ոչք յարուցեալ են 'ի վերայ իմ չարութեամբ, 'ի նոսա լուիցէ ունկն իմ։ Ղ.Ա։

Վասն զի հոգւոյս թշնամիները տէր իմ, քու թշնամիներդ են, որ անօրէնութիւն կընեն, ու ինծի գործել կուսան։ ցրուէ տէր իմ աս ամէն թշնամիները, որ իմ վրաս եկեր են չարութեամբ։

Խոստովան եղէց քեզ տէր, զի լաւ ինձ և եղեր ինձ 'ի փրկութիւն։ ՃԺԷ։

Հիմա կը խոստովանիմ, շնորհակալ կըլլամ տէր իմ որ ինծի լսեցիր, ու զիս փրկեցիր։

Աղօթք 'ի սաղմոսէ, 'ի խնդրելն ինչ 'ի տեառնէ.

Ծառեա՛ 'ի տեառնէ, և նա տացէ քեզ զինդրուածս սրտի քո. յայտնեա՛ առաջի տեառն զճանապարհս քո, և յուսա՛ 'ի նա։ ԼԶ։

Ուզէ Աստուծմէ, որ ան ալ քու սրտիդ խնդիրքը տայ. Աստուծոյ առջին հանէ, բայց քու ճամբադ, անոր յուսա՛։

Նա՛ արտասցէ և հանցէ որպէս զլոյս զարդարութիւնս քո, և զկիրաւունս քո որպէս զօր հասարակ։ ԼԶ։

Աստուած քու արդարութիւնդ դուրս կը հանէ լուսոյ մը պէս. և քու կիրաւունքդ յայտնի կընէ՝ օրհարաստակու

լսէ, քեզի օգնական պիտոր ըլլայ Աստուծոյ անունը։

Առաքեսցէ քեզ տէր օգնութիւն 'ի սրբութենէ իւրմէ, և 'ի Սիոնէ ընկալցի զքեզ։ ԺԹ։

Աստուած քեզի իր սրբութենէն օգնէ պիտոր, ու Սիոնէն որ է արքայութիւնը՝ զքեզ ընդունի պիտոր։

Յիշեսցէ տէր զամենայն պատարագս քո, և զուխտս քո ընդունելի արասցէ։ ԺԹ։

Որչափ պատարագ ու զոհ ըրիր, ամէնն ալ յիշէ Աստուած, ու քու ուխտդ ընդունելի ընէ։

Տացէ քեզ տէր ըստ սրտի քում, և զամենայն խորհուրդս քո նա կատարեսցէ։ ԺԹ։

Քու սրտիդ ուզածին պէս տայ քեզի Աստուած, ու քու ամէն խորհուրդներդ՝ մտքիդ եղածները անիկայ կատարէ։

Յնծասցուք մեք 'ի փրկութեան քում, յանուն Աստուծոյ մերոյ մեք մեծ եղիցուք։ ԺԹ։

Աստուած մեր խնդիրքը ատանկ կա-

տարբերով, մենք ալ ցնծանք ուրախանանք, Աստուծոյ անունովը մենք ալ մեծնանք։

Լցուսցէ տէր զամենայն խնդրուածքս, այժմ ծանեաք զի կենցայց տէր զօծեալ իւր։ ԺԹ։

Քու ամէն խնդիրքդ Աստուած լեցընէ, հիմա անով իմացանք որ Աստուած իր օծեալը Քրիստոս կենցուց, անով ամէն խնդիրքնիս կատարեց։

Հնազանդ լեր տեառն, և ծառայեա նմա, և մի նախանձիր ընդ այնոսիկ՝ որոց առակեալ լցեն ճանապարհք իւրեանց, ընդ մարդոյ որ գործէն զանօրէնութիւն. ԼԶ։

Դու ալ հնազանդ եղիր Աստուծոյ ու իրեն ծառայէ, մի նայիր, օրինակ մ՝առներ ան մարդիկներէն՝ որոնց ճամբան աւրուած է, ան մարդէն որ անօրէնութիւն կընէ։

Զի չարք վաղվաղակի ատակեսցին, բայց ոչք համբերեն տեառն, նոքա ժառանգեսցեն զերկիր։ ԼԶ։

Վասն զի չարերը շուտով պիտոր ատակին, բայց անոնք որ համբերեն

Աստուծոյ, բոլոր աշխարհ ժառանգէն պիտոր։

Աղօթք 'ի սաղմոսէ վասն ապաշխարելոյ յԱստուած.

Աստուած մեր ապաւէն և զօրութիւն, օգնական 'ի վերայ նեղութեանց՝ որ գտին զմեզ յոյժ։ Վասն այսորիկ ոչ երկիցուք մեք 'ի խռովել երկրի։ Խե։

Մեր ապաւէնը և զօրութիւնը Աստուած է, ոչչափ նեղութիւններ որ մեր վրայ եկան, ան է մեր օգնականը։ Անոր համար աս աշխարհիս մէջ որչափ խռովութիւն ըլլայ հոգւոյ ու մարմնոյ, չխռովինք, չերկիւղինք։

Ողորմութիւն իմ և ապաւէն իմ, օգնական իմ և փրկիչ իմ, ապաւէն իմ, և ես յուսամ 'ի նա։ ՃԽԴ։

Իմ ողորմութիւնս՝ ապաւէնս՝ օգնականս՝ փրկիչս՝ Աստուած է, յոյս բոլոր Աստուծոյ վրայ դրեր եմ։

Որ բնակեալն է յօգնութիւն բար-

ձրեալոյն, ընդ հովանեաւ Աստուծոյ յերկինս հանդիպէ։ Զ։

Գիտեմ որ ոչ որ Աստուծոյ օգնութեանը ապաւինելով կեցեր է, Աստուծոյ հովանաւորութեան տակը կը հանդչի ան մարդը։ Զ։

Զիարձրեալն արարեր քեզ ապաւէն, ոչ հասցեն առ քեզ չարք և տանջանք մի մերձեսցին 'ի յարկս քո։ Զ։

Երբոր զԱստուած քեզի ապաւէն ես ըրեր, ապահով կեցիր որ քեզի և քու տանդ չար մը, վնաս մը չըլլար, ոչ հոգւոյ և ոչ մարմնոյ։

Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո պահել զքեզ յամենայն ճանապարհս քո։ Զ։

Աստուած իր հրեշտակներուն ապրարեր է քեզի համար՝ որ քու ամէն ճամբուդ մէջը զքեզ պահեն։

Ի թևիկնամէջս իւր ընկալցի զքեզ, 'ի հովանի թևոց նորա յուսասցիս։

Որպէս զէն շուրջ եղիցի զքեզ ճշմարտութիւն նորա։ Զ։

Վասն զի Աստուած ան մարդը՝ որ իր թևերուն հովանաւորութեանը կը

յուսայ , անանկը իբր թէ իր վրայ շալկած կը պահէ . և իրեն ճշմարտութիւնը զէնքի պէս ջորս գիդ կը պահէ :

Ինձ մերձենալ առ Աստուած բարի է , և դնել առ տէր զյոյս իմ : ՀԹ :

Դու ալ կըսես ան առէնը՝ որ ինծի խնամ աղէկ բան է մօտիկնալ Աստուծոյ , ու իմ յոյս Աստուծոյ վրայ դընել :

Որ հովուեսդ Իսրայէլի նայեաց , որ առաջնորդես որպէս խաշին Յովսէփու : Զարթո՛ զզօրութիւնս քո , և էկ 'ի կեցուցանել զմեզ : Աստուած զօրութեանց դարձո՛ զմեզ , երևեցո՛ զերեսս քո 'ի մեզ և կեցցուք : ՀԹ :

Անանկ յոյս դնելով քեզի կաղաղակեմ տէր իմ , դու որ Իսրայէլին ազգը կը հովուես կառաջնորդես , նայէ ինծի , քու զօրութիւնդ առ եկու զիս ապրեցընելու : Տէր Աստուած , դարձուր մեզ մեղրութեան ճամբէն , քու երեսդ ցըցուր որ մենք ալ ապրինք :

Եղև տէր ապաւէն իմ . Աստուած օգնական յուսոյ իմոյ : ՂԳ :

Աս ըսելով իմ ապաւէնս, իմ օգնականս ասկէց էսքը Աստուած եղաւ։

Յառաջագոյն տեսանէի զոէր առաջի իմ յամենայն ժամ, զի է ընդաջմէ իմմէ, զի մի սասանեցայց։ ԺԵ։

Ես առաջուց ալ կը տեսնէի որ Աստուած ամմէն ատեն իմ առջիս էր, իմ աջ դիս կեցեր էր որ չըլլայ թէ ելնիմ։

Ո՛րպէս զի մեծ են գործք քո տէր, և յոյժ խոր են խորհուրդք քո։ Այր անզգամ զայս ոչ ծանիցէ, և անմիտն զայս ոչ առնու 'ի միտ։ ՂԱ։

Ինչպէս մեծ են քու գործքերդ տէր Աստուած. ինչպէս խորունկ են քու խորհուրդներդ քու մտածմունքներդ, որ անզգամ մարդ մը չիկրնար իմանալ, իր խելքը չիհասնիր։

Բայց միայն Աստուծոյ հնազանդ լեր անձն իմ, զի 'ի նմանէ է ինձ փրկութիւն։ Նա է Աստուած իմ և փրկիչ իմ, ապաւէն իմ զի մի սասանեցայց։ ՅԱստուծոյ է զօրութիւն իմ և փառք իմ, Աստուած օգնութեան իմոյ, յոյս իմ է առ Աստուած։ ԿԱ։

Միայն թէ դու անձն իմ, Աստուծոյ հնազանդ եղիր, վասն զի անկէց է իմ փրկութիւնս։ Անիկայ է իմ Աստուածս, փրկիչս, ապաւէնս, որ բան մը չըլլամ։ Իմ զօրութիւնս ալ փառքս ալ Աստուծմէ է, յոյս ալ Աստուծոյ վրայ է։

Ի տուէ ես ոչ երկեայց՝ զի 'ի մէր յուսացայ. Աստուծով դովեցեց զբանս իմ, յԱստուած յուսացայ և ոչ երկեայց, զի՞ արասցէ ինձ մարդ։ ԺԵ։

Ցորեկին ալ չեմ վախնար, վասն զի Աստուծոյ վրայ է յոյս. զԱստուած կը դովեմ, Աստուծոյ վրայ կը յուսամ, չեմ վախնար ինչ պիտոյ ընէ մարդը։

Սիրեցէց զքեզ մէր զօրութիւն իմ, մէր հաստատիչ իմ, ապաւէն իմ և փրկիչ իմ։ Աստուած օգնական իմ, և ես յուսամ 'ի նա, ապաւէն իմ, եղջիւր փրկութեան իմոյ ընդունելի իմ է։ ԺԷ։

Անկէց ետքը զքեզ կը սիրեմ մէր իմ, վասն զի իմ զօրութիւնս ես, ապաւէնս ու փրկիչս։ Դու ես մէր Աստուած՝ իմ օգնականս և ապա-

ւէն, որ ինձի խիստ հաճոյ է, իմ փրկութեանս ուժն է։

Օգնական իմ լեր տէր, և մի անարդեր զիս, և մի թողուր զիս Աստուած փրկիչ իմ։ Հայր իմ և մայր իմ թողին զիս, և տէր իմ ընկալաւ զիս։ ԻԶ։

Ինձի օգնութիւն լերէ Աստուած, մի քամահրեր զիս իմ մեղքերուս համար, մի թողուր զիս փրկիչ իմ։ Ես ան ատելիմանը հասայ՝ որ ամէն մարդիկ թողուցին զիս, ինչուան հայրս ալ մայրս ալ թողուցին, բայց Աստուած զիս ընդունեցաւ։

Պահեա զիս որպէս բիբ ական, ընդհովանեաւ թևոց քոց ծածկեսցես զիս յերեսաց ամբարշտաց որք տառապեցուցին զիս։ ԺԶ։

Հիմայ ալ կաղաչեմ տէր իմ, պահես զիս ինչպէս կը պահուի աչքին բիբը, թևերուդ հովանաւորութեան տակը պահէ զիս չար մարդիկներուն ձեռքէն, որ ինձի նեղութիւն տուին։

Տէր Աստուած զօրութեանց, ո՞նը ման է քեզ, հզօր ես դու տէր, և ճշմարտութիւն քո շուրջ է քեզ։ Քու են

երկինք և քո է երկիր, զաշխարհ լուսաւ լուրով դու հաստատեցեր։ Պարծանք զօրութեանց մերոց դու ես տէր, և 'ի կամս քո բարձր եղիցի եղջիւր մեր։

Դու ես տէր զօրութեանց, ում կը նմանի քեզի, քուկդ են երկինք ու երկիր, բոլոր աշխարհս դու ստեղծեցիր, մեր պարծանքը դու ես, քու կամքովդ բարձրացո՛ մեր եղջիւրը։

Օրհնեալ է տէր, զի լուաւ ձայնի աղօթից իմոց, տէր օգնական իմ և պաշտպան իմ։ Ի նա յուսացաւ սիրտ իմ։ օգտեցաւ և զուարճացաւ մարմին իմ, և ես կամօք իմովք խոստովան եղէց նմա։ Տէր զօրութիւն ժողովրդեան իւրոյ. ապաւէն փրկութեան օծելոյ իւրոյ։ Փրկեա՛ զժողովուրդ քո, և օրհնեա՛ զժառանգութիւն քո. հովուեա՛ և բարձրացո՛ զնոսա մինչև յաւիտեան։ Ամէն։

Օրհնեալ ըլլայ Աստուած, որ աղօթքս լսեց, իմ օգնականս ու պաշտպանս եղաւ սիրտս անոր վրայ յուսացաւ, յուսալովը օգուտը առաւ, մարմինս ալ ուրախացաւ, ես ալ

խոստովանելով շնորհակալ կըլլամ։ Տէր Աստուած՝ որ էս զօրութիւն ու ապաւէն ժողովրդեան, փրկէ քու ժողովուրդդ, օրհնէ քու ժառանգութիւնդ, հովուէ ու բարձրացուր ինչուան յաւիտեան։

Աղօթք 'ի սաղմոսէ 'ի ժամանակի նեղութեան.

Ի նեղութեան իմում էս առ տէր կարդացի, և առ Աստուած իմ աղաղակեցի։ ԺԷ։

Երբոր էս նեղութեան մէջ ընկայ, սիրտս ուրիշի մը չբացի, հապա միայնակ Աստուծոյ բացի։

Կեցո՛ զիս Աստուած, զի հասին ջուրք յանձն իմ. ընկլայ էս 'ի խորս անդնդոց, ուր ոչ գոյ ինձ հանգիստ։ ԿԸ։

Քեզի կաղաղակեմ տէր Աստուած, փրկէ զիս. վասն զի ինչպէս ջուրը մէկու մը վրայ վազէ, անանկ նեղութիւնները իմ վրաս վազելով եկան հասան. ինքը թէ խորունկ ծովու մը մէջ ընկած

ելլայն , անանկ չեմ կրնար ճար մը հանդստութիւն մը գտնալ։

Նեղութիւնք սրտի իմոյ բազում եղեն յոյժ , և 'ի վերատց իմոց հան զիս։ ԻԳ։

Իմ սրտիս նեղութիւններըը խիստ շատցան , աս նեղութիւններէն հանէ զիս կաղաչեմ։

Ընդէր մերժեցեր Աստուած 'ի սպառ , բարկացար սրտմտութիւն քո 'ի վերայ խաչն արօսի քո։ Յիշեա՛ զժողովուրդ քո զոր ստացար 'ի սկզբանէ , փրկեցեր զվիճակ ժառանգութեան քո։ ՀԳ։

Ինչո՞ւ ասանկ բոլորովին ձգեցիր զիս Աստուած , քու բարկութիւնդ վրաս է ելեր իմ մեղքերուս համար։ բայց յիշէ որ ես ալ քու արօսիդ ոչխարներէն եմ։ յիշէ որ քու ժողովրդէդ քու ժառանգութենէդ եմ , զորն որ շատ աշխատանքով առաջուց 'ի վեր վաստակեցար ու փրկեցիր։

Ընդէր դարձուցանես զձեռն քո , և զաջ քո 'ի միջոյ ծոցոյ քումմէ 'ի սպառ։ ՀԳ։

Անանկ ըլլալով հիմա ինչո՞ւ համար քու ձեռքդ ինծմէն բոլորովին կը դարձընես։

Խօսեցայ 'ի գիշերի ընդ սրտի իմում, հոգայի և տառապէր յիս հոգի իմ։ Մինթէ յաւիտենից մերժեսցէ՞ զիս տէր, և ո՞չ ևս յաւելուցու 'ի հաճել և ևս։ Կամ խապառ արդեւցէ՞ զողորմութիւն իւր յինէն։ Կամ մոռացի՞ գթալ Աստուած իմ և ևս. կամ արդեւցէ՞ ըզգթութիւն իւր բարկութեամբ իւրով։ ՀԶ։

Ա՛ս հոգը զիս անչափ տառա՛ որ գիշերը սրտիս մէջ էս ինծի կը մտմտայի կը տառապէի, արդէօք Աստուած զիս բոլորովին մերժէ՞ց, երբէք ձգէ՞ց, մէյմըն ալ ամենևին երեսս չինայի՞ չողորմի՞ պիտոր, չըլլայ որ կըսէի անանկ բարկացած ըլլայ որ ալ բնաւ պիտոր մոռնայ զիս, իր գթութիւնը կարէ՞ վրայէս։ Յաւուրս նեղութեան իմոյ զԱստուած խնդրեցի ձեռօք իմովք, 'ի գիշերի՝ առաջի նորա ոչ խաբեցայ։ Ոչ կամէր միխիթարել զանձն իմ, յիշեցի զԱստուած և ուրախ եղէ. հոգայի՝ և նըւաղէր յիս հոգի իմ։ ՀԶ։

Ամենի նեղութեան դէշ օրս ալ ես նորէն ձեռուընիս վէր վերցընելով Աստուծոյ կաղաչէի, շատ նեղութիւն քաշեցի, հասկըցայ աշխարհիս ոչնչութիւնը, զզուեցայ աշխարհիս փառքէն, մեծութենէն, մարդիկներէն, վասն զի սուտ են. ես անոնցմէ մէկ մխիթարութիւն մը չգտայ, յիշեցի ան առեն զԱստուած, հասկըցայ որ Ճշմարիտ բարեկամ ինծի Աստուած է միայն, զԱստուած յիշելուս ալ չխաբուեցայ, վասն զի մինակ զԱստուած յիշելը իմ սրտիս մէջ ուրախութիւն մը կը բերէր, իսկ երբոր հոգ մտմտուք կընէի, հոգիս մարելու պէս կըլլար։

Ո՛վ է Աստուած մեծ որպէս զԱստուած մեր. դու ես Աստուած որ առնես զսքանչելիս։ Յուցեր ժողովրդեան քում զզօրութիւն քո, փրկեցեր բազկաւ քով զժողովուրդս։ ՀԶ։

Վասն զի կը մտածէի, ինչ կայ մեծ ինչպէս է մեր Աստուածը. դու ես ըսի ան Աստուածը որ հրաշքներ կը գործես, դու ես՝ որ քու ուժդ ցուցիր քու ժողովրդեանդ վրայ, ու

իրենց նեղութեան մէջ հասար, փրկեցիր։

Ողորմեա՛ ինձ տէր, զի առ քեզ աղաղակեցի, զօր հանապազ ուրախ արա զանձն ծառայի քո զի առ քեզ տէր համբարձի զանձն իմ։ Զի դու տէր քաղցր և ուղիղ ես, բազումողորմ առ ամենեսեան, որք կարդան առ քեզ։

Յաւուր նեղութեան իմոյ կարդացի առ քեզ, և լուար ինձ։ Այլ դու տէր Աստուած իմ, գթած ես և ողորմած, երկայնամիտ, բազումողորմ և ճշմարիտ, նայեա՛ առ իս և ողորմեա՛ ինձ։ ԶԽ։

Ողորմէ՛ ինծի, վասն զի օտարի չդիմեցի, այլ քեզի միայն. ուրախացո՛ զիս միշտ քու ծառադ, վասն զի քեզի վերուցի սիրտս՝ որ քաղցր ես ու շիտակ, ամմէնուն վրայ կը գթաս՝ որոնք որ քեզի կը դիմեն, զքեզ կը կանչեն, ես ալ երբոր իմ նեղութեանս օրը ըլլ. քեզ կանչեցի, լսեցիր ինծի։ Անանկ ողորմած ըլլալովդ՝ հիմա ալ իմ վրաս նայէ ու ողորմէ։

Յաւուր նեղութեան իմոյ խնդրար-

հեցո՛ առիս զունկն քո , յորում ա-
ւուր կարդամ՝ առ քեզ , վաղվաղակի
լո՛ւր ինձ : ԶԲ :

Ա՛ս իմ նեղութեանս օրը լսէ՛ ինծի-
ան օրը որ քեզի կաղաղակեմ, շուտով
մոտիկ դիր ինծի :

Տո՛ւր մեզ օգնութիւն 'ի նեղու-
թեան , զի ընդունայն է փրկութիւն
մարդոյ : Ամառնոյ արասցուք զօրու-
թիւն , և նա 'արհամարհեսցէ զայնո-
սիկ որ նեղեն զմեզ : ԺԹ :

Օգնէ՛ մեզի մեր նեղութեանը մէջ ,
վասն զի պարապ է մարդու օգնու-
թիւնն ու փրկութիւնը , հապա միայն
մեր Ամառնոյը մենք պիտոր զօրու-
թիւն ընենք , ինքը մեր նեղիչները պի-
տոր քամահրէ :

Խնդրեցի 'ի տէառնէ և լուաւ ինձ ,
և յամենայն նեղութենէ իմմէ փրկե-
աց զիս : ԼԳ :

Ամենի խնդրեցի , Ամառնոյ ալ
լսեց ինծի , ու ամենէն նեղութենէ փրկե-
աց զիս :

Հայեցաւ առ 'ի նեղութիւնս նոցա ,
'ի լսել ձայնի աղօթից նոցա : Ցնչեաց

զուխտ իւր, և զղջացաւ ըստ բազում ողորմութեան իւրում. եւ զնոսա 'ի գթութիւնս առաջի ամենայն գերչաց նոցա։ ՃԵ։

Աստուած ասելով իրենց աղօթքներուն, նայեցաւ իրենց քաշած նեղութիւններուն վրայ, յիշեց իր ուխտը իրեն խոստմունքները, մեղքընցաւ իրեն անհուն ողորմութեամբը, և յիշելովը անանկ ըրաւ որ՝ որոնք որ գերի ըրեր էին, նեղութիւն կրուային, իրենք 'ի գութ շարժեցան վրանին։

Ի նեղութեան իմում եւ առ տէր կարդացի, և լուաւ ինձ տէր։ փրկեաց զանձն իմ 'ի շրթանց նենգաւորաց, և 'ի լեզուէ չարէ։ ՃԺԹ.

Շնորհակալ կըլլամ՝ որ իմ նեղութեանս առեն Աստուծոյ դիմեցի, ան ալ լսեց փրկեց զիս չար լեզուներէն, նենգաւորներէն։

Աղօթք 'ի սաղմոսէ, 'ի նեղութեան պրպտութեան մարմնոյ և հոգւոյ.

Ես աղքատ և անտանկ եմ Աստուած, օգնեա՛ ինձ, օգնական և փրկիչ իմ ես դու տէր իմ, մի յամենար։ ԿԹ։

Ես մէկ մարդ մըն եմ հոգեւոր և մարմնոյ աղքատ, տէր Աստուած օգնէ ինծի, մ'ուշանար, վասն զի դու ես իմ օգնականս ու փրկիչս։

Նայեա՛ ինձ, զի միամօր և աղքատ եմ ես։ ԿԳ։

Նայէ ինծի ու ողորմէ, վասն զի ես մինակուկ և աղքատ մարդ մըն եմ։

Ամենեքեան քեզ ապատեն, և դու տաս կերակուր նոցա 'ի ժամու։ Տաս դու նոցա և կերակրին, բանաս զձեռն քո, կերակրես զամենեսեան կամօք քովք։ ՃԳ։

Ո՛ըչափ որ աշխարհիս մէջ մարդ ու կենդանի կայ, ամենքը քեզի կը ապատեն, դու ալ ամենուն կերակուրը ի բնոց առնելն կը հացընես կուտաս։

Աղքատ և ցաւած եմ ես. փրկութիւնքդ ընկալցի զիս։ ԿԸ։

Հիմա ինծի չէ՞ս տար իմ կերակուրս հոգւոյ և մարմնոյ, որ մէկ աղքատ ու ցաւագար մըն եմ հոգւով ու մարմնով, ու կը սպասեմ քեզի տէր իմ, որ քու փրկութիւնդ ինծի հասնի։

Տէր Աստուած զօրութեանց, մինչև յե՞րբ բարկանաս յաղօթս ծառայից քոց։ Զամբեցեր մեզ հաց արտասուաց, և արբուցեր մեզ արտասուս չափով։ Աստուած զօրութեանց դարձ, հայեաց յերկնից և տես, այց արա այգւոյս այսմիկ, և դարման տար սմա զոր տնկեաց աջ քո։ ՀԹ։

Ա՛խ տէր Աստուած, գիտեմ որ մեղաւոր եմ, բայց ինչուան ե՞րբ պէտք բարկանաս իմ մեղքերուս համար, աղօթքս չլսես. քու տուած հացդ՝ ինծի մէկ արցունքի հաց մը եղաւ, մեղքերուս ծանրութենէն՝ նեղութիւնները վրաս շատնալէն՝ լալով կ՚ուտեմ, լալով կը խմեմ։ Տէր Աստուած զօրութեանց, մէյմը դարձիր, նայէ վերէն երկնքէն, տես հոգա։

վասն զի իմ հոգիս՝ իմ առնս՝ մէկ այ-
գի մըն է, զոր դու տնկեցիր, ես բան
մը չունէի, անանկ է նէ դու հոգա ա-
սիկայ զոր քու ձեռքդ տնկեց։

Մի յիշեր զմեզս մեր զառաջինս,
վաղվաղ եկեսցէ առ մեզ ողորմու-
թիւնքդ, զի աղքատացաք յոյժ։ ՀԸ։

Գիտեմ որ մեղքերս դեռ կը յի-
շես, անոր համար ասանկ զիս ձգեր
ես, կաղաչեմ տէր ալ մի յիշեր առջի
ըրած մեղքերս, շուտով հասցու ինծի
մէկ ողորմութիւն մը հոգւոյս և մար-
մնոյս, վասն զի աղքատութիւնը խիստ
տիրեց վրաս։

Մի դարձցի տնանկ ամաչեցեալ,
այլ աղքատն և տնանկ օրհնեսցեն զա-
նուն տուրբ քո։ ՀԹ։

Ես մէկ տնանկ աղքատ մըն եմ, ա-
ռաջ ինչ շնորհքներ ունէի՝ բոլորը
կորսնցուցի, հիմա ես խեղճ տնանկ
աղքատս ամօթով մի դարձըներ, այլ
անանկ ըրէ որ աղքատն ալ ու տը-
հանկն ալ քու անունդ օրհնէ։

Մի մոռներ գազանաց զանձն՝ որ
խոտավան առնիցի առ քեզ. և զան-

ձինա տնանկաց քոց մի մոռանար խա-
պառ։ Հգ։

Անգուլթ գազաններուն ձեռքը մի մտաներ զիս տէր իմ, որ զքեզ կը պաշ-
տեմ. կիրքերուս ձեռքը մի թողուր զիս տէր իմ, քեզի կը դիմեմ, մեզի պէս տնանկները մի մոռնար ինչուան եռքը։ Յամբարտաւանել ամբարշտի այրի աղքատն. արդեւցին 'ի խորհուրդս իւ-
րեանց՝ զոր և խորհեցան։ Անէք նորա (ամբարշտին) 'ի տնանկս հային։ Դա-
րանի յափշտակել զաղքատն։ Զի ա-
սաց (ամբարիշտն) 'ի սրտի իւրում թէ մոռացաւ Աստուած (զաղքատն), դարձոյց զերեսս իւր, զի մի տեսցէ խապառ։ Արի տէր Աստուած իմ, բարձր եղիցի ձեռն քո, և մի մոռանար զտնանկս։ Տեսանես դու զնա 'ի ցաւս, և 'ի սրտմտութիւնս հայիս. 'ի քեզ թողեալ է աղքատն, և որբոյն դու ես օգնական։ Թ։

Երբոր, ամբարիշտ մարդը ամբարտա-
ւանիլ գոռոզնալ կը սկսի, ան առնելը աղքատը կայրի. երբ տէր իմ, որ իրենց խորհուրդը ինչ որ մտածեցին՝ խափա-

նուլ։ վասն զի ամբարշտին աչքը ոչ-
նանկնելուն վրայ կը նայի, ծածուկ
ձամբաներ կը բանեցընէ որ իրեն յա-
փշտակէ՝ իրեն բանեցընէ աղքատը,
որովհետև դու զիս բոլորովին ձգեցիր։
Ամբարիշտն ալ՝ սատանան ալ՝ անանկ
կըսէ սրտին մէջը՝ որ Աստուած մոռցեր
է աս աղքատը, իր երեսը անանկ դար-
ձուցեր է իր մեղքերուն համար որ
բնաւ չուզեր տեսնել։ Ա՛խ, արի էլի՛ր
տէր Աստուած իմ, բարձրացո՛ւ քու
ձեռքդ, մի մոռնար զիս անանկս, կը
տեսնես ահա զիս ցաւերուս մէջ,
սրտմտութեան մէջ, մէկը չկայ օգնա-
կան, միայակ քեզի է թողուած աս աղ-
քատս. որը մարդուն դուս ես օգնականն։
Զարթի՛ր, ընդէ՞ր ննջես տէր. արի,
և մի մերժեր զմեզ խստաւ։ Զմի՞ դար-
ձուցանես զերեսս քո՝ ի մէնջ, մոռա-
նաս զաղքատութիւն և զնեղութիւնս
մեր. խգ։

Արթընցի՛ր, ինչո՞ւ կը քնանաս, է-
լի՛ր մի բոլորովին մերժեր զմեզ։ Ին-
չո՞ւ կը դարձընես մեզմէ քու երեսդ,
կը մոռնաս ինչ աղքատութիւն՝ ինչ
նեղութիւն որոկը քաշենք։

Ոչ խապառ մոռանայ տէր զաղքատն, համբերութիւն ունանկաց մի կորնչէ խապառ։ թ։

Աստուած ինչուան էաքը չիմոռնար աղքատը. ունանկներուն համբերութիւնը ինչուան էաքը չիկորսուիր։

Վասն տառապանաց աղքատին և հեծութեան ունանկին՝ այժմ յարեայց ասէ տէր. եդից զփրկութիւն իմ, և համարձակեցայց 'ի նոսա։ ծ։

Կը լսեմ ահա Աստուծոյ ձայնը որ կըսէ, որովհետև աղքատը շատ տառապանք քաշեց, շատ հեծութիւն հառաչանք ըրաւ, հիմա ես կելնեմ կը փրկեմ, համարձակութիւնս կը ցուցընեմ։

Խոտոտվան եղեցին տեառն ողորմութեանց նորա, սքանչելեաց նորա որդիք մարդկան։ Զի յագեցոյց զանձինս քաղցեալս և զանձինս կարօտեալս լի արար բարութեամբ։ Այք նստէին 'ի խաւարի և 'ի ստուերս մահու, կապեալ էին յաղքատութեան որպէս յերկաթս։ Աղաղակեցին առ տէր 'ի նեղութեան իւրեանց. 'ի վշտաց նոցա

ապրեցոյց զնոսա։ Օրհնեաց զնոսա և բազմացան յոյժ. և անասունք նոցա ոչ նուազեցան։ Օգնեաց անանկին յաղ-քաառութեան, առաջնորդեաց որպէս խաչին ազգի նոցա։ ՃԶ։

Մարդիկ ալ թող խոստովանելով, շնորհակալ ըլլան Աստուծոյ ըրած ո-զորմութիւններուն ու հրաշքներուն վրայ. վասն զի անօթիները կշտացուց, կարօտ մարդիկները բարեօք լեցուց։ Անոնք որ աղքատութեան մէջ իբր թէ երկաթի զարնուած կապուած էին, և իբր թէ խաւարի մէջ նստած մա-հուան դուռը հասեր էին, որովհետև Աստուծոյ աղաղակեցին իրենց նեղու-թեան առեն, Աստուած ալ զանոնք խալացուց, մանաւանդ թէ օրհնեց, որով իրենք ալ և իրենց անասուններն ալ՝ որ իրենց ապրանքներն էին՝ շատ-ցան։ Տնանկին՝ իր աղքատութեան մէ-ջը օգնութիւն ըրաւ, ու իբր ոչխարի մը առաջնորդ եղաւ, Ամէն։ ՃԷ։

Կերակրեաց զնոսա 'ի պարարտու-թենէ ցորենոյ. և 'ի վիմէ մեղր յագե-ցոյց 'ի նոսա։ Զ։

Յորենին պարարտութեամբը՝ աղէկ հացով զանոնք կերակրեց, ու մեղրով կշտացուց, անոնկ մեղրով որ մէկ վիմէ մը, քարէ մը բղխած էր. (և վէմն էր ինքն Քրիստոս։

Խնդրեցին, և եկն Լորամարգի, և հացիւ երկնից լցոյց զնոսա։ ՃԴ։

Մեռ ուզեցին, Լորամարգի խրկեց անոնց, ու երկնային հացով լեցուց։

Յիշատակ արար սքանչելեաց իւրոց. ողորմած գթած է տէր. կերակուր տայ երկիւղածաց իւրոց։ ՃԾ։

Իր հրաշքներուն յիշատակ ըրաւ. ողորմած գթած է Աստուած. իր երկիւղածներուն կերակուր կուտայ։

Զցանկութիւն անոնկաց լուաւ տէր, 'ի պատրաստութիւն սրտից նոցա հայեցաւ ունկն քո։ Դատ առնել որբոյն և անոնկին՝ զի մի ևս յաւելուցու մարդ 'ի մեծաբանել իւրում 'ի վերայ երեսաց երկրի։ Թ։

Տնանկներուն փափաքը ցանկութիւնը լսեց Աստուած. անոնց սրտին պատրաստութեանը հայեցաւ, որբոյն

ու մնանկին գառասանը տեսաւ, որ ամ մարդիկ մեծ մեծ չեռսին առ աշխարհիս վրայ։

Տրանջեցին զԱստուծոյ և ասացին միթէ կարող ելցէ Աստուած պատրաստել սեղան յանապատի։ Հրաման եւ ասիպոց 'ի վերուստ, և զդրուն երկնից եբաց, և տեղեաց 'ի նոսա մանանայ 'ի կերակուր։ Հէ։

Վասն զի տրանջացին Աստուծոյ վերայ ու ըսին, արդեօք կարող է Աստուած անապատի մէջ ուր որ հաց չկրնար հոն սեղան պատրաստել։ Աստուած ալ ասանկ ըսողներուն աչուընին խօթելու համար, երկինքին դռները բացաւ, վերէն ամպերէն մանանայ իջեցուց իրենց կերակուր։

Տեսցեն ուղիղք, և ուրախ եղիցին, և ամենայն անօրէն խցցէ զբերան իւր։ Ո՞վ է իմաստուն, որ պահեսցէ զայս, և 'ի միտ առցէ զողորմութիւնս տեառն։

ԺԶ։

Հիմա թող տեսնեն շիտակ սրտով եղողները, և ուրախ ըլլան. իսկ անօրէնները բերանին գոցեն. ով որ 'ի-

մատուն խելացի է, Աստուծոյ ողորմութիւնը թող իմանայ։

Այլ դու տէր արա՛ ընդ իս ըստ անուան քում, զի քաղցր է ողորմութիւն քո, և փրկեա՛ զիս, զի աղքատ և տնանկ եմ ես։ ՃԸ։

Հիմա դու տէր Աստուած, քու անուանդ համեմատ ըրէ՝ վասն զի քաղցր է քու ողորմութիւնդ՝ փրկէ զիս, վասն զի աղքատ ու տնանկ եմ։

Ծանեայ զի առնես տէր դատաստան աղքատի, և իրաւունս տնանկի։ ՃԼԹ։

Իմացայ՝ որ վերջապէս աղքատին դատաստանը կը կարես, և տնանկին իրաւունքը կընես։

Սուր հանին մեղաւորք, և լարեցին զաղեղունս իւրեանց, հարկանել զաղքատն և զտնանկն, սպանանել զայն որ խոնարհն է սրտիւ։ Սուրք նոցա մտցեն 'ի սիրտս նոցա, և աղեղունք նոցա փշրեսցին։ Լաւ է սակաւիկ ինչ արդարոյ, քան զբազում մեծութիւն մեղաւորաց, և բազուկք ամբարշտաց խորտակեսցին։ Շատատէ տէր զարդ-

դարս։ Մի ամաչեցնեն նոքա 'ի ժամանակս չարութեան, այլ յաւուրս սովոյ յագեցին։ ԼԶ։

Վասն զի մեղաւորները սուր հանեցին, իրենց նետը բացին՝ որ աղքատը ու անանկը զարնեն, ու ով որ խոնարհ է սպաննեն. բայց քու արդար դատաստանդ ընել կուտայ՝ որ ան մեղաւորներուն սուրները իրենց սրտերնին կը մտնեն, ու նետերնին կը կոտրին, իսկ արդարները կը հաստատուին. երբոր մէկ չարիք մը, մէկ փորձանք մը կուգայ, արդարները չեն ամչնար, այլ սովին օրերը կը կշտանան։

Մանուկ էի ես և ծերացայ, և ոչ տեսի զարդարն արհամարհեալ, և ոչ զաւակ նորա թէ մուրանայ հաց։ Զօրհանուապազ ողորմի և տայ փոխ. զաւակ նորա օրհնեալ եղիցի յաւիտեան։ ԼԶ։

Ես ողջայ էի՝ հիմա ծերացայ, դեռ չտեսայ որ արդար մարդը արհամարհուի, իր զաւակը հաց մուրայ, այլ ինքը ամէն օր ողորմութիւն ու փոխ կու տայ. այնպիսոյն զաւակը յաւիտեան օրհնեալ պիտոր ըլլայ։

\ Մեծամեծք աղքատացան և քաղցեան. բայց ոչք խնդրեն զտէր, մի պակասեցէ 'ի նոցանէ ամենայն բարութիւն։ ԼԳ։

Տեսայ որ հարուստներըը աղքատացան անօթութիւն քաշեցին. բայց ո՛վ որ Աստուծոյ կը դիմէ, ամէն բարիք անոնցմէ չպակսի պիտոր։

\ Մի երկնչիր յորժամ մեծանայ մարդ, և յորժամ բազում լինին փառք տան նորա։ \ Զի ոչ թէ 'ի մեռանել իւրոքեմ առցէ ընդ իւր զամենայն, և ոչ թէ ելցեն փառք տան նորա ընդ նմա։ ԽԸ։

Անոր համար մի վախնար երբոր մարդս կը մեծնայ, երբոր իր տունը փառքը փարթամութիւնը կը շատնայ, վասն զի իր մեռնելու օրը չեկեր նար հետը տանել իր ամէն բանը. իր փարթամութիւններն ալ չեն կրնար իրեն հետ գերեզմանը ելնալ։

\ Երկեցէ 'ի տեառնէ ամենայն զաւակն Իսրայելի. զի ոչ արհամարհեաց, և ոչ ատելագեաց տէր զաղօթս աղքատիս, և ոչ դարձոյց զերեսս իւր յի-

նէն , այլ 'ի կարգալ իմուամ առ նա՝ լուաւ ինձ։ ԻԱ։

Դուք Իսրայէլի ամէն զաւակքներ , (եկեղեցւոյ որդիքներ) , վախցէք Աստուծմէ , տեսնելով որ աղքատին աղօթքը չքամահրեց , իր երեսը ինծմէ չդարձուց , այլ երբոր իրեն դիմեցի կանչեցի , լսեց։

Զի փրկեաց զաղքատն 'ի հզօրէ , զաղքատն և զանտանկն՝ որոյ ոչ է իւր օգնական։ Անխայեսցէ նա յաղքատն և 'ի տնանկն , և զանձինս տնանկաց կեցուսցէ։ ՀԱ։

Աղքատը զօրաւորին ձեռքէն փրկեց Աստուած , անտանկ աղքատը ու տնանկը՝ որուն մէկ օգնական մը չկարտնուց վրայ խղճայ պիտոր ու ապրեցընէ։

Յարուցանէ զաղքատս յերկրէ , և բարձր առնէ զտառապեալս յաղբեւաց։ ՃԺԹ։

Գեղինը ընկած ըլլայ աղքատը , Աստուած կը յարուցանէ , աղմի մէջ նստած ըլլայ , վեր կը վերցընէ։

Տեսցեն աղքատք և ուրախ եղիցին ,

խնդրեցէք զԱստուած, և կեցցեն անձինք ձեր։ Զի լուաւ տէր տնանկաց, և զկապեալս իւր ոչ արհամարհեաց։ ԿԸ։

Աս բաներս թող տեսնեն աղքատները և ուրախ ըլլան, դուք ալ անանկ է նէ աղաչեցէք Աստուծոյ որ տպրինք. վասն զի Աստուած լսեց անանկներուն աղօթքը, և իրեն կապուած եղողները չքամահրեց։

Ընկեա՛ի տէր զհոգս քո, և նա կերակրէ զքեզ. և ոչ տայ յաւիտեան սասանութիւն արդարոյ։ ԾԴ։

Աստուծոյ վրայ ձգէ քու հոգդ, անիկայ զքեզ կը կերակրէ, ու յաւիտեան թող չիտար որ արդարը սասանի։

Այս աղքատ կարդաց առ տէր. և տէր լուաւ սմա, յամենայն նեղութենէ սորա փրկեաց զսա։ ԼԴ։

Աղքատ մը Աստուծոյ դիմաց աղաղակեց. Աստուած ալ իրեն լսեց, իր ամէն նեղութենէն փրկեց։

Պատրաստ արարեր քաղցրութեամբդ քով աղքատի Աստուած։ ԿԷ։

Տէր Աստուած, քու քաղցրութեամբդ ու անուշութեամբդ կերակուր պատրաստեցիր աղքատի։

Երկիր էտ զպտուղ իւր, և օրհնեաց զմեզ Աստուած Աստուած մեր։ Աստուած մեր օրհնեսցէ զմեզ, և 'ի նը մանէ երկիցեն ամենայն ծագք երկրի։ կՁ։

Անանկով երկիրը իր պտուղը աբաւաւ և մեր Աստուածը զմեզ օրհնեց։ Մեր Աստուածը թող զմեզ օրհնէ, և մենք ալ՝ ամէն աշխարհ ալ վախնանք Աստուծմէ։

Աղօթք 'ի տաղմոսէ յորժամ հոգին է 'ի յուսահատութեան.

Տէր, զի՞ բազում եղեն նեղիչք իմ, և բազումք յարեան 'ի վերայ իմ։

Տէր Աստուած, շատ կողմէն նեղութիւն ունիմ. շատ սատանաներ փորձութիւններ իմ վրաս եկան վազելով. հիմայ ալ եկեր են զիս կը յուսահատցընեն ըսելով.

Բազումք ասէին զանձնէ իմմէ՝ թէ

չէք փրկութիւն տրա առ Աստուած իւր։

Շատ բաներ միտքս կուգան՝ որ զիս կը յուսահատցընեն, մէյմը կը յիշեմ իմ մեղքերուս ծանրութիւնը, մէյմըն ալ կը յիշեմ որ մէկ բարիք մը ըրած չունիմ, մէկալ կողմէն ալ կը յիշեմ քու արդարութիւնդ, մանր փնտռող դատաստանդ. ասոնց բաներս երբեմն կը յիշեմ, կը յուսահատիմ. ատանանները ալ ինծի կըսեն որ քեզի փրկութիւն չկայ, պարապ կաշխատիս, չես կրնար փրկուիլ։

Զի լցաւ չարչարանքս անձն իմ, և կեանք իմ 'ի դժոխս մերձեցան, և համարեցայ ես ընդ այնոսիկ՝ որք ինքանեն 'ի գուբ։

Ա. մամուքներով բոլոր կեանքս լեցուեցաւ չարչարանքներով. իբր թէ դժոխքին դերեզմանին մօտիկցայ, և անանկ եղեր եմ՝ որ իբր թէ գերեզմանին մէջ նստած մեռեալ մը դրուած եր եմ, քանի որ կը մտածեմ թէ դըժոխքին արժանի եմ, և ոչ քու առաջդ, մէկ հանգստութիւն մը չունիմ։

Եդեն զիս 'ի գբի ներքնումն ,'ի խաւարի և 'ի ստուերս մահու։

Այս մտմտուքները օրէ օր զիս տապնապէլով, իբր թէ մէկ մութ խորունկ փոսի մը մէջ զիս խօթեր են, մեռածի մը պէս եղեր եմ։

Մատնեցայ, և ոչ ելանէի, աչք իմ տկարացան յաղքատութենէ։

Այս մտմտուքներուս մատնուեր եմ, չեմ կրնար ելլել խալըսիլ, յուսահատութեան մութ խաւարն աչքս փութթեր է, իմ հաւատքիս ու յուսալուս աչքերն ալ տկարացեր աղքատցեր են, զրկուած ըլլալով 'ի լուսոյ շնորհացդ, ու կըսեն.

Մինթէ մեռելոց առնիցես զքանչէլիս քո, կամ բժիշկք յարուցանիցեն, և խոստովան առնիցեն առ քեզ։

Այս իմ մեռած հոգւոյս արդեօք Աստուած հրաշք պիտոր ընէ, կամ բժիշկները արդեօք պիտոր ողջընցընեն, որ Աստուծոյ ծառայէ. զԱստուած պաշտէ։

Մինթէ ճանաչիցին 'ի խաւարի զքանչելիք քո, կամ արդարութիւն քո յերկիր մոռացեալ։

Արդեօք ասանկ մութ խաւար հոգւոյ մէջ քու հրաշքդ ճանչցուի պիտոր, կամ արդարութիւնդ մոռցուած հոգւոյս մէջ տեսնուի պիտոր։ Ասանկ կըսեն ինծի իմ խորհուրդներս. ես ալ չդիմանալով կաղաղակեմ.

\ Ընդէր տէր մերժես զանձն իմ կամ դարձուցանես զերեսս քո յինէն։

Ինչու համար ասանկ ձգեր ես տէր, ինչու ասանկ երեսդ դարձուցեր ես ինծմէ, ու չես լսեր։

\ Ես առ քեզ տէր աղաղակեցի, առաւօտու աղօթք իմ ժամանեսցեն առ քեզ։

Ա՛հ, տէր իմ, ես քեզի կաղաղակեմ, աս առաւուան աղօթքս քու առկանչդ հասնի։

\ Արի տէր, և փրկեա՛ զիս Աստուած իմ։

Եկիր տէր իմ, եկիր, ու փրկէ զիս Աստուած իմ աս նեղութիւններէն։

\ Այլ դու տէր օգնական իմ ես, փառք իմ, և բարձրացուցիչ գլխոյ իմոյ։

Դու ես ինծի օգնողը, ուրիշ մարդ

չունիմ. դու ես իմ փառքս, կընաս իմ ընկած շփոթած գլուխս վերը վերցնել, քաջալերել։

Տեառնդ է փրկութիւն 'ի վերայ ժողովրդեան քո, օրհնութիւն քո։

Քու գործդդ է տէր իմ փրկել քու ժողովուրդդ. ես ալ քու ժողովրդէդ մէկն եմ. զիս ալ փրկէ, որ իմ հոգիս ալ զքեզ օրհնէ ընելով.

Օրհնեա՛ անձն իմ զտէր, և մի՛ մոռանար զամենայն տուրս նորա։

Օրհնէ ո՛վ հոգի՛ ան Աստուածը, մի՛ մոռնար անոր բարիքները, զորս առաջուցմէ 'ի վեր քեզի ըրաւ։

Ո՞ քաւէ զմեղս քո, բժշկէ զամենայն հիւանդութիւնս քո։ Ո՞ փրկէ յապականութենէ զկեանս քո, պսակէ զքեզ ողորմութեամբ և գթութեամբ։ Ո՞ ընու 'ի բարութենէ զցանկութիւն քո, նորոգեսցի որպէս արծուոյ մանկութիւն քո։

Օրհնէ ան Աստուածը՝ որ քու մեղքերուդ քաւութիւն թողութիւն կուտայ. ինչ հիւանդութիւն որ ունիս տրտիդ մոքիդ մէջը՝ ամենն ալ կըբնա-

ցընէ , կեանքդ կը խաղցընէ աւ-
բուէլէն ապականուէլէն , կողրմի քե-
զի ու կը պահէ . քու ցանկութիւնդ
որ ունիս Աստուծոյ բարեացը շնոր-
հացը վրայ , ամէն բարեօք կը կատա-
րէ կը լեցընէ . միրտուԹեան շնորհ-
քը զոր կորսընցուցիր՝ նորէն քեզի
կը դարձընէ , ինչպէս որ ունէիր ման-
կուԹեան ատենդ . անանկոյ արծուոյ
պէս կը նորոգուի քու մանկուԹիւնդ :
Ան ատենը դու ալ կը դառնաս կը-
սես .

Ոչ ըստ մեղաց մերոց արար մեզ
ամէր , և ոչ ըստ անօրէնուԹեան մե-
րում հատոյց մեզ : Այլ որպէս բարձր
են երկինք յերկրէ՝ այնպէս զօացոյց
ամէր զողորմուԹիւն իւր 'ի վերայ եր-
կիւղածաց իւրոց :

Աստուած մեր մեղքին համեմատ
չըրաւ , մեր անօրէնուԹեանցը համե-
մատ չհատոյց , հապա որչափ որ
բարձր է երկինք գետնէ , անչափ շատ-
ցուց իր ողորմուԹիւնը անոնց վրայ՝
որ իրմէ կը վախնան :

Աղօթք յարժամ հոգին կայ 'ի փոր-ձութեան.

Հոգիս քաջ, հոգիս յաւիտենական, որ զիս քու մոլորեալ ոչխարդ դառնալու համար լեռնէ լեռ պտըտեցար երկայն ճամբորդութիւն ընելով. երկընքէն երկիրս իջար մարդ ըլլալով, մէկ ողորմելի ձայն մը ձգելով կանչեցիր, որ ես լսելով ան ձայնիդ եռեռէն դամ. Եկայք, ըսիր, առ իս ամենայն աշխատեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ: Իսկ ես որ անտառներու մէջ մոլորեալ ոչխարի մը պէս պտըտելով՝ մօտիկ էի գայլին բերանը իյնելու, լսեցի աս ողորմելի ձայնդ, ճանչցայ տիրոջս ձայնը, քեզի եկայ մկըրտութեան և խոստովանութեան խորհուրդներով: Բայց հիմա աշխարհ, մարմին և սատանայ, աս երեքը մէկ եղած նորէն կուզեն զիս քեզմէ բաժնել, ես ալ անոնց հեռանալով՝ նորէն կուզեմ ես զիս գայլին բերանը ձգել:

Հիմա դու ով հոգիս քաջ, ցցու

քու զօրութիւնդ , հանէ՛ շնորհացդ անուշ ձայնը , կանչէ՛ զիս շնորհքով որ չմոլորիմ, չեմ արժանի քու շնորհացդ, բայց գին արեան քո եմ, քու սուրբ արիւնդ և անչափ աշխատանքդ պարապ չերթայ , չկորսուի : Ո՛վ տէր դ՚ծուութեանց , հասէ՛ր ինծի օգնութեան , մի՛ ձգեր զիս երեսէդ . ո՞ւր է քու անուշ ձայնդ՝ որ ըսէր. Եթէ ոք ծարաւի ելցէ , եկեսցէ առ իս և արբցէ : Ո՞ւր է քու առաջնորդութիւնդ որ ըսէր . Ես եմ ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք : Ո՞ւր է քու յորդորանքդ որ ըսէր . Ոչխարք իմ ձայնի իմում լսեն , և ես ճանաչեմ զնոսա , և զկնի իմ գան , և ես տամ նոցա զկեանն յաւիտենական , և մի կորիցեն յաւիտեան . և մի՛ ոք յափշտակեսցէ զնոսա 'ի ձեռաց իմոց : Ա՛խ , ո՞ւր են աս ձայներդ , ասանք զուրցէ որ գայլերը փախչին , սիրտս շարժի , աչքս բացուի , ծարաւս բժշկուի , գէշ ոլորտ ջուրերը չխմեմ , այլ քեզմէ կենդանի աղբերէդ խմեմ , որ ասկէց ետքը ոչ երբէք ծարաւիմ , մէկու մը ձայնին մտիկ չի դնեմ , այլ միայն քեզի տէր իմ Յիսուս :

Սաղմոս.

Դու լուսաւոր առնես զՃրագ իմ. տէր Աստուած իմ, լոյս արա՛ ինձ 'ի խաւարի։

Քեզ փրկեցայց 'ի փորձութենէ. Աստուծով իմով անցից ընդ պարիսպս։

Վասն զի ո՞վ է Աստուած բաց 'ի տեառնէ, կամ ո՞վ է Աստուած բաց յԱստուծոյ մերմէ։

Ուսուցեր զձեռս իմ 'ի պատերազմ, և արարեր զբազուկ իմ որպէս զաղեղն հաստ. և եղուր ինձ զպաշտպանութիւն։ ԺԷ։

Բազում անգամ մարտեան ընդ իս 'ի մանկութենէ իմմէ. և ինձ ոչ յաղթեցին։ ՁԻԸ։

Իջուցեր զմեզ յորդայթ, եդիր նեղութիւն 'ի թիկունս մեր. և անցուցեր զմարդիկ 'ի վերայ գլխոց մերոց։

Փրկեցեր զմեզ Աստուած և քննեցեր, որպէս և քննի արծաթ։

Անցաք մեք ընդ հուր և ընդ ջուր, և հաներ զմեզ 'ի հանգիստ։ ԿԵ։

Աղօթք յուժամ հոգին կայ 'ի վրա-ուանգի մեղաց.

Դու ըսիր տէր իմ. Խնդրեցէք և առնուցուք. զոր ինչ խնդրեցէք 'ի հօրէ իմմէ յանուն իմ, տացէ ձեզ: Ասա՛նք քու խոստմունքներդ են, քու խօսքերդ քեզի յիշեցընել կուտանք, զոր որ չէս մոռնար, և խօսքէդ չէս դառնար, ինչ սրտով զուրցեցիր ան առենը յիշէ, ան սրտով իմ աղօթքս ընդունէ. ինծի հիմա օգնութեան հասիր, ես որ բոլորովին անարժան եմ, ուրիշ բանով չեմ կրնար աղաչել ասիպէլ զքեզ, բայց եթէ քու խօսքերովդ՝ և քու սուրբ արեամբդ: Ասա՛նք յիշելովդ տէր Յիսուս, մի թողուր որ ես կորսուիմ, քու արեամբդ փրկեալ հոգին պիտոր կորսուի:

Ա՛խ, տէր իմ, քու դառնակսկիծ չարչարանքներդ սիրտս կը շարժէ, արդար դատաստանիդ ձայնը ականջս կը դողացընէ, յաւիտենական պատիժը ականս

ՀԸ սարսափեցընէ. բայց այսչափ ան-
ու դողը հերիք չէն կրնար ըլլալ զիս
մեղքերէս դուրս հանելու, վրաս իշ-
խելը էն չեմ կրնար խալըսիլ, միշտ մեղ-
քի մէջ կեցնամ, միայն քու հրաշքդ
պիտոր ըլլայ որ զիս խալասցընէ, մե-
ռած հոգիս վերը վերցընէ, ինչպէս որ
վերուցիր դիւահար տղան։

Ամենքն ալ յուսահատեր էին, ա-
ռաքեալներն ալ բան մը չկրցան ընել,
տղուն հայրն ալ այնչափ հաւատք
չունէր, բայց մինակ առջևդ գալովը՝
քեզմէ խնդրելովը պարապ չհանեցիր,
չբժշկուելու հիւանդութիւնը բժշկե-
ցիր։ Հիմա ինծի ալ հրամէ, զիս առ-
ջևդ կանչէ ըսելով. Ահա՛ ես եմ։
Ան առենը կը տեսնեմ իմ հոգիս՝ որ
ան դիւահարին պէս դեռևնը կեցնի,
մեղքերու մէջ միշտ կը տապալուի,
մեղքերով կը փրփրայ. քանի հեղ որ
քու աշկերտներուդ՝ քահանաներուն
դնաց խոստովանելու, զինքը ցցուց-
աս մեղքերուս սատանան չկրցան՝ ելլ-
մէ հանել։ Թէ որ վարքս հարցընես,
կը լսես որ՝ ի մանկութենէ պզտիկուց

ասանկ էղէր եմ. իմ մեղքիս սատա-
նան պղտիկուցմէ ներսի գիւղս կապէր
է զիս չար սովորութեամբ։ Բաղում
անգամ 'ի հոս ալիանէ ղրա և 'ի ջոր, ղէ
կորուսոյ։ Երբեմն մէկ մեղքը, երբեմն
մէկալ մեղքը կը ձգէ. մէկմէկու ներ-
հական մեղքեր ընել կուտայ. ասանկ
հոգիս իրեն խաղալիկ ըրեր է կը չար-
չարէ, բայց իր միտքը զիս կորնցընել
է յաւիտենական հրոյն մէջ։

Թէ որ ինծմէ հաւատք կուզես ըսե-
լով. Ամենայն ինչ հնարաւոր է այնմ որ հա-
ւատայ, ես հաւատք չունիմ. վասն զի
սատանի է սատանային պատերազմը,
մօտիկ է վտանգը, մարմինս զիս միշտ
մեղքի կը քաշէ. անոր համար երկբայ-
ութեան մէջ եմ, տարակուսելով կը-
սեմ. Եթէ կարող ինչ է, օգնեա՛ մեզ պէր,
գթացէ՛լ 'ի վերայ մեր։

Դու Հարսա՛ բժիշկ հոգւոյ և մար-
մնոյ, տո՛ւր ինծի լոյս հաւատոյ ինչ-
պէս որ մէկ խօսելովդ ան գիւտահարին
հօրը հաւատքը լուսաւորեցիր, որ ա-
զաղակեց՝ Հաւատամ, օգնեա՛ անհաւատու-
թեանս իմամ։

Ան ատենը էս հաւատքովս առջեւդ կուգամ, դու ալ զօրութեամբդ կը սատակես սատանային. Հիմդ ե՞ խոսալ այս, էս պամ փեշ հրաման. Եվ՝ ի դմանէ ե՞ այլ ես մի մպանիցես՝ ի դա։ Սրդեօք պիտոր ըլլայ որ իմ հոգիս ալ աս խօսքս ըսէ, քու հրամանաւդ քովէս հեռանայ փորձութիւնը, մէյմըն ալ չդառնայ չդայ, զիս մեղքի վտանգի մէջ չձգէ։ Մի թողուր զիս տէր իմ Յիսուս, մի թողուր ասանկ. այլ ձեռքդ երկնցուս, ոտքի վրայ կանգնել տուր, ինչպէս որ կանգնեցիր ան դիւահարը. անով ամէն տեսնողները զարմանան՝ որ աս հոգին որ մեռած մը կէրևար, քու զօրութեամբդ կենդանացաւ, իր մեղքերը թողուց, շնորհաց մէջ մնաս։

Աղօթք՝ ի սաղմոսէ, ՝ի խնդրել օգնութիւն յԱստուծոյ.

Համբարձի զաչս իմ՝ ի լերինս, ուստի եկեսցէ ինձ օգնութիւն։

Երբոր էս նեղն ընկայ, պէտք եղաւ

ինծի մէկ օգնութիւն մը դնելու, աչ-
ուընէրս լեռներու վրայ վերուցի, ա-
նանկ իշխաններու՝ անանկ մեծերու՝
որ մէյմէկ լեռ կը նմանէին, որոնցմէ
կրնար ինծի մէկ օգնութիւն մը հասնիլ։

Օգնութիւն ինձ 'ի տեառնէ եկեսցէ, որ արար զերկինս և զերկիր։

Բայց իմացայ տեսայ՝ որ ան լեռնե-
րու պէս կեցած մարդիկները իշխան-
ները չէին կրնար ինծի օգնութիւն
մը ընել, հապա օգնութիւնս Աստուծ-
մէ միայն պիտոր ըլլայ, որ չէ թէ մի-
այն ան լեռները ան իշխանները, հա-
պա բոլոր երկինք ու երկիր ստեղծեց,
այնչափ է իր կարողութիւնը։

Մի տար 'ի սասանութիւն զոտն քո
և մի ննջեսցէ պահապան քո։

Միայն թէ դու մի սասանիր, մ'ե-
լներար հաւատքովդ, ոտքդ ամուր
պէտք է որ բռնես, որ է քու հա-
ւատքդ, թէ որ դու ասանկ հաւատ-
քէդ չասասանիս չերերաս, Աստուծոյ
դէմ չմեղանչես, իրաւ դիտցիր որ Աս-
տուած ալ որ քու պահապանդ է, չի
քնանար, արթուն կը մնայ ղքեզ պա-
հելու։

Որպէս ոչ ննջէ և ոչ 'ի քուն եր-
թայ պահապանն Իսրայէլի։

Ինչպէս յայտնի կը տեսնես որ Իս-
րայէլացւոց ազգին պահապանը՝ որ է
Աստուած, ոչ երբէք քուն եղաւ. իր
գործքերը յայտնի կը քարոզեն՝ որ
միշտ կը պահէր Աստուած հրէաները
հոգևոր ու մարմնաւոր վնասներէն,
թշնամիներէն։

Տէր պահեսցէ զքեզ, և տէր ընկալ-
ցի աջոյ ձեռամբն իւրով։

Ասանկ ալ զքեզ կը պահէ Աս-
տուած, ու իր աջ ձեռքովը կը բռնէ։

Արեգակն 'ի տուէ քեզ մի մեղկցէ.
և մի լուսին 'ի գիշերի։

Ինչպէս Իսրայէլացւոց ըրաւ՝ որ ցո-
րեկը արևը չնեղէլու համար՝ արևուն
առջին ամպ կը հանէր, ասանկ ալ ա-
նանկ բան մը կընէ քեզի Աստուած՝ որ
ոչ ցորեկուան թշնամիները զքեզ կը
նեղեն, և ոչ գիշերուան, թէ մարմնա-
ւոր և թէ հոգևոր թշնամիներդ սա-
տանաները, որ գիշեր ցորեկ կը պոռ-
ան զքեզ մեղք խօթելու։

Տէր պահեսցէ զքեզ յամենայն չա-
ր է, պահեսցէ տէր զանձն քո։

Աստուած զքեզ ամենայն չարիքնե-
րէ փրկանելոյ պիտոյ պահէ , հոգիդ
ալ պահպանէ։

Տէր պահեսցէ զմուտս և զելս քո
յայսմհետէ մինչև յաւիտեան։ ՃԻ։

Աչափս ըսեմ որ որոլհետև դու
Աստուծոյ ընկալ, հաւատքով անոր
դիմեցիր, մեղքէ զգուշացար, ասկէց
ետքը Աստուած ալ զքեզ ամէն բանի
մէջ, էլլէլուդ մանէլուդ առէն ալ՝
պահէ պահպանէ պիտոյ մինչև յաւ-
իտեան։

Օգնութիւն է մեզ յանուանէ տեա-
ռըն որ արար զերկինս և զերկիր։ ՃԻԳ։

Մերօգնութիւնը Աստուծոյ անուամ-
բն է, ան Աստուծոյ՝ որ երկինք գե-
տին առեղծեց։

Ա՛ռ քեզ տէր համբարձի զաչս իմ,
որ բնակեալդ ես յերկինս։ Որպէս աչք
ծառայի 'ի ձեռն տէրանն իւրոյ, որ
պէս աչք աղախնոյ 'ի ձեռն տիկնոջ
իւրոյ։ Այնպէս են աչք մեր առ քեզ
տէր Աստուած մեր, մինչև ողորմես-
ցիս 'ի վերայ մեր։ ՃԳԲ։

Քեզի կը վերցընեմ աչուըներս տէր

Աստուած որ երկինքը կը նստիս։ Ինչպէս որ ծառային աչքը իր տիրոջը վերայ է, և աղախնոջին իր խաթունին վրայ, անանկ ալ մեր աչքը քու վրադ է տէր Աստուած, ինչուան որ մեզի ողորմիս։

Թէ երանեմ յերկինս՝ դու անդ ես. և թէ իջանեմ 'ի դժոխս՝ և անդ մնա ես։ Թէ առից զթևս իմ ընդ առաւօտս, և բնակեցայց յեզերս ծովու, սակայն և անդ ձեռն քո առաջնորդեսցէ ինձ. և աջ քո ընկալցի զիս։

Ի՜նչ մեծ ես տէր Աստուած. թէ որ երկինքը երթամ, դու հոն ես, թէ որ դժոխքը դիրեզմանը իջնեմ, հոն ալ դքեզ մօտիկ կը գտնեմ, թէ որ ինծի թևերը առնեմ առաւուանց, ծովուն քովը նստիմ, հոն ալ քու ձեռքդ ինծի առաջնորդ կըլլայ, և քու աջ ձեռքդ զիս կը բռնէ։

Ողորմ յոյժամ հոգին է՝ ի տրամուրելուն.

Աչք ընդէր պրպտամ ես անձն իմ, կամ ընդէր խոովես զիս։ Ինչո՞ւ համար կը կը տրտմիս ողորմելի հոգիս, մեղքերդ ծանր են, զղջում ապէկ չունիս, քու խոստովանելդ զքեզ չիհանդարտեցըներ, չիտես ալ որ ինչպէս խոստովանիս, ո՛ր մէկը զուրցես, զուրցելէն ետև ալ չես հանդչիր։ Յուսա՛ առ Աստուած. խոստովանէ՛ նմա։ Մէյմը միտքդ վերը վերցու առ Աստուած. յոյսդ զօրացո՛ւ, ներդործութիւն յուսոյ ընէ։ Աստուած մեր՝ Աստուած ողորմութեան է. այն Աստուածն է որ ըսաւ, թէ որ մէկ օրուան մէջ եօթանասուն և եօթն անգամ մարդս մեղանչէ, բայց նորէն տրտմոց դառնոյն մարդը թողութիւն մեղաց կը գտնէ։ Այն Աստուածն է, որ Եսայեայ մարգարէին բերնովը կը զուրցէ. ինչպէս որ մայր մը իր զաւակը կը սիրէ, ինչ պակասութիւն ունի՝ կը դոցէ կը

արքէ, չուղէր որ ուրիշները վրայ զուրցեն, նախատեն, էս ալ մօրմէն աւելի եմ, կըսէ, Աստուած։ Ան տէրն է, որ մեղաւոր կինը սրտանց խոստովանելով իր մեղքերը՝ երբոր եկաւ ոտքն ընկաւ, լալով արցունքով լուաց, ազնուշ եղով՝ որ իր աղօթքին օրինակն էր՝ օծեց զՅիսուս, Յիսուսին սիրտը վրան գորովեցաւ, ոչ մեղքը իր երեսին տուաւ և ոչ ըսաւ որ դու ինծի ինչ արժանի ես մօտիկնալու. սէր տուաւ իրմէ, ինքն ալ սէր ցցուց ըսելով. Թողեալ լիցին սմա մեղք իւր բազումք։ Շատ մեղքեր ունի, բայց ամէնն ալ թողուի ըսաւ։ Դու անանկ է նէ յուսամ Աստուծոյ, խոստովանէ, պաշտէ, սէր ցցու. ան ատենը կը լսես մեղքերուդ թողութիւն, հոգւոյդ փրկութիւն. վասն զի փրկիչ մեր նոյն Յիսուսն է, փրկիչ երեսաց մերոց Աստուած է։

Սաղմոս.

Եթէ ասէի թէ ահա սատանէացն ոտք իմ, ողորմութիւն քո տէր օգնէր ինձ։

Ըստ բազում ցաւոց սրտի իմոյ՝ մըխիթարութիւն քո ուրախ առնէր զանձն իմ։ ՂԴ։

Եկայք ցնծացուք 'ի տէր, աղաղակեացուք առ Աստուած փրկիչ մեր։

Աստուած մեծ է տէր, թագաւոր մեծ 'ի վերայ ամենայն երկրի։ ՂԴ։

Քաղցր է տէր, յաւիտեան է ողորմութիւն նորա, ազգէ մինչև յազգ է ճշմարտութիւն նորա։ ՂԹ։

Ո յուսայ 'ի տէր որպէս լեառն Սիովն, մի սատանէացի յաւիտեան, որ բնակեալն է յԵրուսաղէմ։ ՃԻԴ։

Ի տէր յուսացայ, ո՞րպէս ասիցէք ցանձն իմ, փոփոխեաց 'ի լերինս որպէս ճնճղուկ։ Ժ։

Յղեալ և վարեալ առ արքայորբիւն երկնից 'ի սաղմոսք.

Աստուած Աստուած իմ, ես առ քեզ առաւօտ առնեմ, ծարաւեաց առ քեզ հոգի իմ, քանի պատիկ ես և մարմին իմ. կԲ։

Աստուած Աստուած իմ, ես առաւանց քեզի կը դիմեմ. վասն զի հոգիս քեզի ծարաւեր է, ուրչափ որ մարմինս ալ։

Վայ ինձ զի ընդ երկար եղև պանդխտութիւն իմ, զի բնակեցայ ես 'ի վրանս Կեդարու։ ճՃԹ։

Բայց ես ինծի վայ կուտամ, որ շատ ուշացաւ պանդխտութիւնս, շատ ատեն է՝ որ մնացի օտար երկրի վրայ աս աշխարհիս մէջ։

Առ դեռս բաբելացւոց անդ նստէաք և լայաք, որպէս յիշեցաք մեք անդ զՍիովն։ ճԼԶ։

Ա՛ս Բաբելոնի դեռին քով նստեր ենք, որ է Բաբելոն խառնակութեան աս աշխարհս, ու կուլայինք, յիշելով

միշտ Սիոնը՝ որ է երկնային խաղաղութիւնը։

Ուրախ եղէ ես ոյք ասէին ցիս, 'ի տուն տեառն երթիցուք մեք։ Հասեալ կային ոտք մեր առ դրունս քո Երուսաղէմ։ Հարցէք զողջունէ Երուսաղեմի և զշինութենէ՝ ոյք սիրէք զնա։ ՃԻԱ։

Անոնք որ ինծի կըսէին թէ Աստուծոյ տունը երթանք, խիստ կուրախանայի։ Ա՛խ, երկնային Երուսաղէմ, մեր ոտքը քեզի հասեր է, դուք ամէնքնիդ որ կը սիրէք երկնային Երուսաղեմի ողջոյնը, հարցուցէք, փնտռեցէք անոր շէնքը, անոր երջանկութիւնը։

Ո՞րպէս սիրելի են յարկք քո տէր զօրութեանց, ցանկայ և փափագէ անձն իմ՝ 'ի դաւիթս քո։ ՁԳ։

Ինչպէս սիրելի է ինծի քու տունդ տէր Աստուած, իմ անձս հոգիս խիստ կը փափագի որ գոնէ բակին մէջը բընակիմ։

Երանի ամենեցուն՝ որ բնակեալ են 'ի տան տեառն, յաւիտեանս յաւիտենից օրհնեսցեն զքեզ։ ՁԳ։

Երանի անոնց ամէնուն, որ Ա-

տուծոյ տանը մէջ բնակած են, յա-
ւիտեանս յաւիտենից թող զքեզ օրհ-
նեն։

Երանելի է այր՝ որոյ օգնութիւն
իւր 'ի քէն է, էլա եդ 'ի մտի իւրում
'ի հովտէս տրտմութեան 'ի տեղւոջ
յորում ուխտեաց։ Զգ։

Երջանիկ է ան մարդը՝ որուն օգնու-
թիւնը քեզմէ է Աստուած, աս տրտ-
մութեան ձորէն կուզէ ելլել երթալ
ան տեղն որ ցանկացաւ, ուխտ ըրաւ
երթալու։

Զօրհնութիւն ստացի որ զօրէնս
դնէ, դնացէ նա 'ի զօրութենէ 'ի զօ-
րութիւն, և երևեսցի Աստուած հրեշ-
տակաց 'ի Սիոն։ Զգ։

Ո՛վ որ անանկ օրէնք և ուխտ կը
դնէ իր տրտմն մէջ օրհնեմք կը վաս-
տակի Աստուծմէ, օրէ օր կը զօրանայ
շնորհքներով, ու Աստուած անոր երև-
նայ պիտոր իրեն հրեշտակներովը, եր-
կինքին Սիոնին մէջ՝ որ է արքայութիւնը։

Տէր Աստուած զօրութեանց՝ լսէ՛ր
աղօթից իմոց։ Վասն զի լաւ է ինձ մի
օր 'ի դաւիթս քո քան զհազարս։ Զգ։

Տէր Աստուած ամէն բանի կարող, իմ աղօթքիս ալ լսէ, զիս ալ ան տեղին արժանի ըրէ. վասն զի աղէկ է ինծի մէկ օր մը քու բակիդ մէջը նստիլ, քան թէ հազար օր ասն աշխարհս։

Զմի խնդրեցի 'ի տեառնէ և զսոյն աղաչեմ, բնակել ինձ 'ի տան տեառն զամենայն աւուրս կենաց իմոց. տեսանել ինձ զվայելչութիւն տեառն, և հրամանս տալ 'ի տաճարի նորա։ ԻԶ։

Մէկ բան մը կը խնդրեմ Աստուծմէ, ու ան կաղաչեմ, որ քանի որ ապրիմ, ամէն օր Աստուծոյ տանը մէջ բնակիմ, Աստուծոյ գեղեցկութիւնը տեսնեմ, և իր տաճարին մէջը հրամայեմ։

Տէր սիրեցի զվայելչութիւն տան քո, և զտեղի յարկի փառաց քոց։ ԻԵ։

Տէր Աստուած քու տանդ գեղեցկութիւնը սիրեցի, և քու փառքիդ տեղը՝ որ է արքայութիւնը։

Զինչ կայ իմ բնաւ յերկինս, կամ 'ի քէն զինչ ևս խնդրեցից յերկրի։ ԺԲ։

Ինչ ունիմ ես երկինքը, բայց միայն քեզ Աստուած. երկրիս վրայ ալ ինչ

կրնամ քեզմէ խնդրել, բայց եթէ ըզ-
քեզ Աստուած։

Նուաղեաց սիրտ իմ և մարմին իմ, Աստուած սրտի իմոյ, բաժին իմ Աստուած յաւիտեան։ ՀԲ։

Սիրտս մարմինս կը հալի կը մաշի ո՛վ Աստուած. դու ես իմ սրտիս Աստուածը, դու ես իմ բաժինս Աստուած յաւիտեան։

Ես արդարութեամբ երևեցայց երեսաց քոց, յագեցայց յերևել փառաց քոց։ ԺԷ։

Երբոր ես արդարութեան երեսիդ երևնամ, քու երեսդ տեսնեմ, ան ատենը կրնամ կշտանալ քու փառքդ տեսնելով։

Որպէս փափաքէ եղջերու յաղբերս ջուրց, այնպէս փափաքէ անձն իմ առ քեզ Աստուած։ ԽԲ։

Ինչպէս որ եղջերուն կը փափաքի աղբիւրի ջուրերուն, անանկ ալ իմ հոգիս քեզի կը փափագի տէր Աստուած։

Ծարաւի է անձն իմ առ քեզ Աստուած, հզօր և կենդանի, երբ եկից

երևեցայց երեսացդ Աստուծոյ։ ԽԱ։

Իմ հոգիս քեզի կը ծարաւի Աստուած, դու ես Աստուած կարող ու կենդանի, երբ պիտոյ գամ, քու երեսիդ երևնամ։

Եղեն ինձ արտասուք իմ կերակուր 'ի տուէ և 'ի գիշերի, և այն զի ասէին ցիս զօրհանապազ, Թէ ո՞ւր է Աստուած քո։ ԽԱ։

Այս բանիս համար իմ արցունքներս ինծի կերակուրի տեղ եղեր էին գիշեր ցորեկ. մանաւանդ երբոր ամէն օր ինծի կըսէին Թէ ո՞ւր է քու Աստուածդ, դու զանիկայ կորսընցուցիր մեղքերովդ։

Զայս որպէս յիշէի, տառապէր յիս անձն իմ, քաջալերէի զի մոլոր ընդ յարկաւ սքանչելեաց տանն Աստուծոյ։ ԽԱ։

Երբոր ասիկայ կը յիշէի, բոլոր անձս կը տառապէր տակնուվրայ կըլլար, բայց ես ինծի սիրտ կուտայի, որ մէյմը աս հրաշալի Աստուծոյ տունը մտնեմ։

Անձն իմ որպէս երկիր ծարաւի է

առ քեզ, վաղվաղակի լուր ինձ տէր, զի նուաղեաց յինէն հոգի իմ։ ՃԽԲ։

Իմ անձս մէկ ցամաք գետնի մը պէս ծարուած է քեզի Աստուած. շուտով լսէ կաղաչեմ, վասն զի հոգիս կը մաշի, կը հալի կը մաշի։

Աղօթք խրատական անձին հաւատացեալոյ 'ի Քրիստոս. զոր արարեալ է տեառն Ներսէսի Հայոց կաթողիկոսի.

Հաւատով խոստովանիմ և երկիր պաղատեմ քեզ Հայր և որդի և սուրբ Հոգի, անեղ և անմահ բնութիւն, արարիչ հրեշտակաց և մարդկան և ամենայն էղելոց, ողորմեա քո արարածոց և ինձ բաղմամեղիս։

Հաւատով խոստովանիմ և երկիր պաղատեմ քեզ անբաժանելի լոյս, միանակամ սուրբ Երրորդութիւն և մի աստուածութիւն, արարիչ լուսոյ և հալածիչ խաւարի, հալածեա 'ի Հոգւոյ իմմէ զխաւար մեղաց և անդիտութեան, և լուսաւորեա զմիտս իմ 'ի ժամուս յայսմիկ աղօթել քեզ 'ի հաճոյս և ընդունել 'ի քէն զինդրուածս իմ, և ողորմեա ինձ բաղմամեղիս։

Հայր երկնաւոր Աստուած Ճշմա-

րիա, որ առաքեցեր զորդիդ քո սիրելի 'ի խնդիր մոլորեալ ոչխարին. մեղայ յերկինս և առաջի քո. ընկալ զիս որպէս զանառակ որդին, և զգեցո ինձ զպատմուճանն զառաջին, զոր մերկացայ մեղօք. և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս:

Որդի Աստուծոյ, Աստուած Ճշմարիտ, որ խոնարհեցար 'ի հայրական ծոցոյ, և առեր մարմին 'ի սրբոյ կուսէն Մարիամայ վասն մերոյ փրկութեան, խաչեցար և թաղեցար և յարեար 'ի մեռելոց և համբարձար առ հայր, մեղայ յերկինս և առաջի քո, յիշեա զիս որպէս զաւազակն, յորժամ գաս արքայութեամբ քով. և ողորմեա:

Հոգի Աստուծոյ Աստուած Ճշմարիտ, որ ինքեր 'ի Յորդանան և 'ի վերնատունն և լուսաւորեցեր զիս միրտուութեամբ սուրբ աւազանին, մեղայ յերկինս և առաջի քո, մաքրեա զիս վերատին աստուածային հրով քով որպէս հրեղէն լեզուաւք զառաքեալսն. և ողորմեա:

Անեղ բնութիւն, մեզայ քեզ միաբոք խմովք, հոգւով և մարմնով իմով. մի յիշեր զմեղս իմ զառաջինս վասն անուանդ քում սրբոյ. և ողորմեա։

Տեսող ամենայնի, մեզայ քեզ խորհրդով, բանիւ և գործով. ջնջեա ընդ ձեռագիր յանցանաց իմոց, և գրեա զանուն իմ 'ի գոգրութեան կենաց. և ողորմեա։

Գնող գաղտնեաց, մեզայ քեզ կամաւ և ակամայ, գիտութեամբ և անգիտութեամբ. թողութիւն շնորհեա մեղաւորիս, զի 'ի ծննդենէ սրբոյ աւազանին մինչև ցայսօր մեղուցեալ եմ առաջի սատուածութեանդ քոյ՝ ընդդայարանօք իմովք և ամենայն անդամոք մարմնոյս. և ողորմեա։

Ամենախնամ տէր, գոր պահապան աչաց իմոց զերկիւղ քո սուրբ՝ ոչ եւ հայել յարտաս. և ականջաց իմոց ոչ տխորժել լսել զբանս չարութեան, և բերանոյ իմոյ ոչ խօսել զսատութիւն, և սրտի իմոյ ոչ խորհել զչարութիւն. և ձեռաց իմոց ոչ գործել զանիրա-

ութիւն, և ոչ ոչ դնալ 'ի Հանապարհս անօրէնութեան, այլ ուղղեա զչարժումն սոցա լինել ըստ պատուիրանաց քոց յամենայնի. և ողորմեա:

Հուր կենդանի Քրիստոս, զհուր սիրոյ քոյ զոր արկեր յերկիր, բորբոքեա յանձն իմ. զի այրեսցէ զաղտ հոգւոյ իմոյ, և սրբեսցէ զխիղճ մտաց իմոց, և մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ, և վառեսցէ զլոյս գիտութեան քո 'ի սրտի իմում. և ողորմեա:

Խմաստութիւն հօր Յիսուս, տուր ինձ զիմաստութիւն զբարիս խորհել և խօսել և գործել առաջի քո յամենայն ժամ 'ի չար խորհրդոց 'ի բաղնից և 'ի գործոց փրկեա զիս. և ողորմեա:

Կամեցող բարեաց տէր կամարար, մի թողուր զիս 'ի կամս անձին իմոյ դնալ, այլ առաջնորդեա ինձ լինել միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց. և ողորմեա:

Սրբոյ երկնաւոր, տուր ինձ զարքայութիւն քո, զոր խոստացար սի-

րեալեաց քոց, և զօրացո զսիրտս իմ առ-
տել զմեղս և սիրել զքեզ միայն, և
առնել զկամս քո. և ողորմեա։

Խնամող արարածոց, պահեա նշա-
նաւ խաչի քո զհոգի և զմարմին իմ 'ի
պատրանաց մեղաց, 'ի փորձութեանց
դիւաց և 'ի մարդոց անիրաւաց. և յա-
մենայն վտանգից հոգւոյ և մարմնոյ.
և ողորմեա։

Պահապան ամենայնի Քրիստոս, աջ
քո հովանի լեցի 'ի վերայ իմ 'ի տուէ
և 'ի գիշերի՝ 'ի նստել 'ի տան՝ և 'ի
գնալ 'ի ճանապարհ, 'ի ննջել և 'ի
յառնել, զի մի երբէք սատանեցայց,
և ողորմեա։

Աստուած իմ, որ բանաս զձեռն քո,
և ընուս զամենայն արարածս ողոր-
մութեամբ քով, քեզ յանձն առնեմ
զանձն իմ. զոս հոգա և պատրաստեա
զպէտս հոգւոյ և մարմնոյ իմոյ յայսմ
հետէ մինչև յաւիտեան. և ողորմեա։

Դարձուցիչ մոլորելոց, դարձո զիս
'ի չար սովորութեանց իմոց 'ի բարի
սովորութիւն, և թեհեռեա 'ի հոգի իմ
զսոսկալի օր մահուն և զերկիւղ դե-

հեռոյն և զսէր արքայութեանն. զի զղջացայց 'ի մեղաց, և գործեցից զարդարութիւն. և ողորմեա :

Սղբիւր անմահութեան, աղբերաց 'ի սրտէ իմմէ զարտասուս ապաշխարութեան որպէս պռունկին. զի լուացից զմեղս անձին իմոյ յառաջ քան զելանելն իմ յաշխարհէս. և ողորմեա :

Պարգևիչ ողորմութեան, պարգևեա ինձ ուղղափառ հաւատով և բարի գործով, և սուրբ մարմնոյ և արեան քո հաղորդութեամբ գալ առ քեզ. և ողորմեա :

Բարեբար տէր, հրեշտակի բարւոյ յանձն արասցես զիս քաղցրութեամբ աւանդել զհոգի իմ և անխռով անցուցանել ընդ չարութիւն այսոցն, որ են 'ի նեղքոյ երկնից. և ողորմեա :

Լոյս Աշխարհի Քրիստոս, արժանաւորեա զհոգի իմ ուրախութեամբ առնել զլոյս փառաց քոց 'ի կոչման աւուրն, և հանդիսել լուսով բարեաց յօրհնեալոն արդարոց մինչև յօր մեծի դալստեանդ քո. և ողորմեա :

Դատաւոր արդար, յորժամ գաս

փառաք հօր դատել զկենդանիս և զմեռեալս, մի մոռաներ 'ի դատաստան ընդ ծառայի քում. այլ փրկեա զիս 'ի յաւիտենական հրոյն, և լսելի արա ինձ զերանաւէտ կոչումն արդարոց յերկնից արքայութիւնդ. և ողորմեա :

Ամենողորմ տէր, ողորմեա ամենայն հաւատացելոց 'ի քէզ, իմոց և օտարաց, ծանօթից և անծանօթից, կենդանեաց և մեռելոց. շնորհեա և թշնամեաց իմոց և ատելեաց զթողութիւն՝ որ առ իս յանցանաց. և դարձո զնոսա 'ի չարեացն՝ զոր ունին վասն իմ, զի ողորմութեան քում արժանի եղիցին. և ողորմեա :

Փառաւորեալ տէր ընկալ զաղաչանս ծառայիս քո. և կատարեա 'ի բարի զկնդրուածս իմ բարեխօսութեամբ սրբուհոյ աստուածածնին և Յովհաննու մկրտչին, և սրբոյն Ստեփանոսի նախավկային, որոյն Գրիգորի մերոյ լուսաւորչին և սրբոց առաքելոց և մարգարէից և վարդապետաց և մարտիրոսաց և սրբոց հայրապետաց և ճգնաւորաց և կուսանաց 'ի

ամենայն սրբոց քոց երկնաւորաց և երկրաւորաց։ Եւ քեզ փառք և երկրպագութիւն անբաժանելի սուրբ Երրորդութեանդ՝ յաւիտեան յաւիտենից. ամէն։

ԱՂՕԹՔ

ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

ԵՕԹՆ ՍԱՂՄՈՍՔ

Սաղմոս Զ.

Տէր մի սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս, և մի բարկութեամբ քով խրատեր զիս։

Ողորմեա ինձ տէր, զի հիւանդ եմ ես. բժշկեա զոսկրս իմ, զի խռովեցան ոսկերք իմ։

Անձն իմ յոյժ խռովեցաւ, և դու տէր մինչև յե՞րբ։

Դարձ տէր, և փրկեա զանձն իմ. կեցո զիս տէր ըստ ողորմութեան քումմ։

Զի ոչ ոք է որ 'ի մահու յիշէ զքեզ, կամ 'ի դժոխս խոստովան առնի առ քեզ։

Վատթարեցայ ես 'ի հեծութեան

խմեմ, լուացի զամենայն գիշեր զմահիճս իմ, և արտասուօք իմովք զանկողինս իմ թացի։

Խռովեցաւ 'ի սրտմտութենէ ակն իմ. և մաշեցայ ես 'ի վերայ ամենայն թշնամեաց իմոց։

Ի բաց կացէք յինէն ամենեքեան, որք գործէք զանօրէնութիւն։

Լուաւ տէր ձայնի լալոյ իմոյ. լուաւ տէր աղօթից իմոց, և տէր զինդրուածս իմ ընկալաւ։

Ամաչեսցեն, և խռովեսցին յոյժ ամենայն թշնամիք իմ, դարձցին յետս և ամաչեսցեն յոյժ վաղվաղակի և խըռովեսցին։

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Սաղմոս ԼԱ.

Երանի ում թողութիւն եղև մեղաց, և ծածկեցան ամենայն յանցանք նորա։

Երանի առն, որում ոչ համարեցի

տէր զմեզս նորա. և ոչ գոյ նենգութիւն 'ի բերանս նորա։

Լուեցի ես և մաշեցան ամենայն ոսկերք իմ, առ ապաղաղել ինձ առ տէր զօրհանապազ 'ի տուէ, և 'ի գիշերի։

Ծանրեաց ձեռն քո 'ի վերայ իմ, դարձայ 'ի թշուառութիւն զի հարան յիս փուշք։

Զմեղս իմ ցուցից քեզ, և զանօրէնութիւնս իմ ոչ ծածկեցից 'ի քէն։

Ասացի թէ պատմեցից ինձէն զմեղս իմ. և դու թողցես զամենայն ամբարշտութիւնս մեղաց իմոց։

Վասն այսորիկ յաղօթս կացցեն առ քեզ ամենայն սուրբք՝ 'ի ժամ ընդունելի։

Բայց միայն 'ի ջուրցն հեղեղաց բազմաց, որ առնոսա ինչ ոչ մերձեսցի։

Դու ես ապաւէն իմ 'ի նեղութենէ յայմանէ, որ շուրջ եղեն զինեւ։

Ցնծութիւն իմ փրկեա զիս յայնցանէ, որ պաշարեցին զիս։

Խմաստուն արարից զքեզ և խելամուտս 'ի ճանապարհ յոր և գնասցես, և հաստատեցից 'ի վերայ քո զաչս իմ։

Մի լինիք որպէս զձիս և զջորիս, զի ոչ գոյ 'ի նոսա իմաստութիւն, 'ի սանձս և 'ի դանդանաւանդս ճմլէացեա զկզակս նոցա, որ առ քեզ ինչ ոչ մերձեացին։

Բազում տանջանք են մեղաւորաց, բայց ոյք յուսան 'ի տէր՝ ողորմութիւն տեսցեն շուրջ եղիցի զնոքօք։

Ուրախ եղէրուք՝ և ցնծացէք արդարք. 'ի տէր պարծեցարուք ամենեքեան, ոյք ուղիղ էք սրտիւք։

Փառք հօր. և այլն։

Սաղմոս ԼԷ.

Տէր մի սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս. և մի բարկութեամբ քով խրատեր զիս։

Զի նետք քո հարան յիս, և յիս հաստատեցաւ ձեռն քո։

Ոչ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ՝ յերեսաց բարկութեան քոյ։

Ոչ է խաղաղութիւն ոսկերաց իմոց յերեսաց մեղաց իմոց։

Անօրէնութիւնք իմ բարձրացան

քան զգլուխ իմ, որպէս բեռն ծանր ծանրացան 'ի վերայ իմ։

Նեխեցան և փտեցան վէրք իմ յերեսաց անզգամութեան իմոյ։

Տառապեցայ և խոնարհ եղէ մինչև յոյժ. զբրհանապազ արտասուս գնայի, զի անձն իմ լի եղև չարչարանօք, և ոչ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ։

Չարչարեցայ, և խոնարհ եղէ մինչև յոյժ. մռնչէի առ հեծութեան սրտի իմոյ։

Տէր առաջի քո է ամենայն ցանկութիւն իմ, և հեծութիւն իմ 'ի քէն ոչ ծածկեցաւ։

Սիրտ իմ խռովեցաւ յիս, և եթող զիս զօրութիւն իմ. լոյս աչաց իմոց և այս ոչ եղև ընդ իս։

Բարեկամք իմ և մերձաւորք իմ առաջի իմ մերձեցան և կացին, և մերձաւորք իմ հեռի եղեն յինէն։

Բռնադատէին զիս, և խնդրէին զանձն իմ, ոչք խորհէին չար 'ի վերայ իմ. խօսեցան զանօրէնութիւն, և զնենգութիւն զօրհանապազ խորհեցան։

Այլ ես որպէս խուլ զի ոչ լսէ, որ-

պէս համբ՝ որ ոչ բանայ զբերան իւր։

Եղէ ես որպէս մարդ՝ որ ոչ լսէ, և ոչ գոն խօսք 'ի բերան նորա։

Ես 'ի քեզ տէր յուսացայ. և դու լուիցես ինձ տէր Աստուած իմ։

Ասացի թէ մի ուրախ եղիցին յիս թշնամիք իմ. 'ի սասանել ոտից իմոց՝ 'ի վերայ իմ մեծամեծս խօսեցան։

Ես 'ի տանջանս պատրաստ եմ, և ցաւք իմ առաջի իմ են յամենայն ժամ։

Զանօրէնութիւնս իմ պատմեցից, և հոգացայց վասն մեղաց իմոց։

Իսկ արդ թշնամիք իմ կենդանիք են, և զօրացեալ են քան զիս, և բազում էին՝ որք ատէին զիս 'ի տարապարտուց։

Որք հատուցին ինձ չար փոխանակ ընդ բարւոյ. չարախօսէին զինէն, զի ես երթայի զհետ արդարութեան։

Մի թողուր զիս տէր Աստուած իմ, և մի 'ի բացեայ առնիր յինէն. հայեաց յօգնել ինձ՝ տէր փրկութեան իմոց։

Փառք հօր, և որդւոյն։

Սաղմոս Ծ.

Ողորմեա՛ ինձ Աստուած ըստ մեծի ողորմութեան քում, ըստ բազում գթութեան քում քաւեա՛ զանօրէնութիւնս իմ։

Առաւել լուա՛ զիս յանօրէնութենէ իմմէ, և՝ ի մեղաց իմոց սուրբ արա՛ զիս։

Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ, և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ։

Քեզ միայն մեղայ ես, և չար առաջի քո արարի։

Որպէս արդար եղիցես՝ ի բանս քո և յաղթող՝ ի դատելն քո։

Անօրէնութեամբ յղացաւ, և՝ ի մեղս ծնաւ զիս մայր իմ։

Դու ես զճշմարտութիւն սիրեցեր, զանյայտս և զծածկեալս իմաստութեամբ քով յայտնեցեր ինձ։

Ցօղեա՛ յիս մշակաւ և սուրբ եղէց. լուա՛ և քան զձիւն սպիտակ եղէց։

Լսելի արա՛ ինձ, զցնծութիւն և զու-

բախութիւն, և ցնծացեն ոսկերք իմ տառապեալք։

Դարձո զերեսս քո 'ի մեղաց իմոց, և զամենայն անօրէնութիւնս իմ քաւեա յինէն։

Սիրտ սուրբ հաստատեա յիս Աստուած, և հոգի ուղիղ նորոգեա 'ի փորի իմում։

Մի ընկենուր զիս, տէր, յերեսաց քոց, և զհոգի քո սուրբ մի հանիր յինէն։

Տուր ինձ ցնծութիւն փրկութեան քո, և հոգւով պէտութեան քո հաստատեա զիս։

Ուսուցից անօրինաց զճանապարհս քո. և ամբարիշտք առ քեզ դարձցին։

Փրկեա զիս յարեանէ Աստուած, Աստուած փրկութեան իմոյ, ցնծասցէ լեզու իմ յարդարութեան քումմ։

Տէր եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո։

Թէ կամեցեալ էիր պատարագս՝ մատուցանէաք, բայց դու ընդ ողջակէզս իսկ ոչ հաճեցար։

Պատարագ Աստուծոյ հոգի խո-

նարհ, զսիրտ սուրբ և զհոգի խոնարհ Աստուած ոչ արհամարհէ։

Բարի արա տէր կամաք քովք սիոնի, և շինեացին պարիսպք Երուսաղէմի։

Յայնժամ հաճեացիս ընդ պատարագս արդարութեան, յորժամ ուխտից պատարագս հանցեն 'ի սեղան քո զուարակս։

Փառք հօր, և այլն։

Սաղմոս ՃԱ.

Տէր լուր աղօթից իմոց, աղաղակ իմ առ քեզ եկեսցէ, մի դարձուցաներ զերեսս քո յինէն։

Յաւուր նեղութեան իմոյ խոնարհեցո առ իս զունկն քո, յորում առուր կարդամ առ քեզ վաղվաղակի լուր ինձ։

Սպառեցան որպէս ծուխ աւուրք իմ, և ոսկերք իմ որպէս խոտիւ չորացան։

Հարաւ որպէս խոտ, և ցամաքեաց

սիրա իմ, մոռացայ ուռել զՀաց իմ 'ի ձայնէ հեծութեան իմոյ։

Կցեցաւ ոսկր իմ 'ի մարմին իմ, նը-մանեցայ ես հաւալան յանապատի։

Եղէ ես որպէս բու յաւերակի, ոչնեցայ և եղէ ես որպէս ճնճղուկ միայն 'ի տանիս։

Նախատեցին զիս թշնամիք իմ զօր-հանապազ, և գովիչք իմ ինև երդ-նուին։

Զմոխիր որպէս հաց կերայ, և զըմ-պէլին իմ արտասուօք խառնեցի։

Յերեսաց բարկութեան սրտմտու-թեան քո, զի դու բարձրացուցեր, և խոնարհեցուցեր զիս։

Աւուրք իմ որպէս հովանի անցին, և ես որպէս խոտ ցամաքեցայ։

Դու սէր յաւիտեան կաս, և յի-շատակ քո յազգէ մինչև յազգ։

Դու յարուցեալ գթասցիս 'ի վե-րայ սիոնի, ժամանակ գթալոյ նորա հասեալ է ժամ։

Հաճեցան ծառայք քո ընդ քարինս նորա, և 'ի հողս նորա գթացին։

Երկիւղեն հեթանոսք յանուանէ քում

մէ, և ամենայն թագաւորք երկրի 'ի փառաց քոց։

Ենէ տէր զսիոնն, և երևեցի փառաք իւրովք 'ի նմա։

Հայեցաւ նա յաղօթս խոնարհաց, և ոչ արհամարհեաց զինդրուածս նոցա։

Գրեցի այս յազգ յայլ, ժողովուրդ զոր ստացեալ է՝ օրհնեսցէ զտէր.

Հայեցաւ նա 'ի բարձանց 'ի սրբութենէ իւրմէ, տէր յերկինից յերկիր հայեցաւ։

Լսել զհեծութիւն կապելոց, և արձակել զորդիս մահապարտաց։

Պատմել 'ի սիոն զանուն տեառն, և զօրհնութիւնս նորա յԵրուսաղէմ։

Ժողովել ժողովրդոց 'ի միասին, և թագաւորաց ծառայել տեառն։

Պատասխանի էա նմա 'ի ճանապարհի զօրութեան իւրոյ, զնուազութիւն աւուրց իմոց ասա ինձ, և մի՝ հանիր զիս 'ի կէս աւուրց իմոց, զի ազգէ յազգ են ամք քո։

Իսկզբանէ տէր զհիմունս երկրի հաստատեցեր, և գործ ձեռաց քոց երկինք են։

Նոքա անցանեն, և դու կաս և մընաս յաւիտեան։

Ամենեքեան որպէս զձորձս մաշեսցին, որպէս վերարկուս փոխեսցես զնոսա, և փոխեսցին։

Բայց դու նոյն իսկ ես, և ամք քո ոչ անցանեն. որդիք ծառայից քոց բնակեսցեն 'ի նմա, և զաւակի նոցա յաւիտեան յաջողեսցի։

Փառք հօր, և այլն։

Սաղմոս ՃԻԹ.

Ի խորոց կարդացի առ քեզ տէր, տէր լուր ձայնի իմում։

Եղիցին ականջք քո 'ի լսել զձայն աղօթից իմոց։

Թէ զանօրէնութիւնս քննեսս տէր՝ տէր, ո՞ կարէ կալ առաջի քո, զի 'ի քէն է քաւութիւն։

Վասն անուան քոյ համբերի տէր, համբեր անձն իմ բանի քում, յուսացաւ անձն իմ 'ի տէր։

Ի պահէ առաւօտու մինչև յերեկ-

կոյ 'ի պահէ առաւօտու յուսացաւ Իսրայէլ 'ի տէր։

Ի տեառնէ է ողորմութիւն բազում, և 'ի նմանէ է փրկութիւն, և նա փրկեաց զԻսրայէլ յամենայն նեղութեանց նորա։

Փառք Հօր, և այլն։

Սաղմոս ՃԽԲ.

Տէր լուր աղօթից իմոց, ունկն դիր խնդրուածաց իմոց Ճշմարտութեամբ քով.

Լուր ինձ արդարութեամբ քով. և մի մտանիր 'ի դատաստան ընդ ծառայի քում, զի ոչ արդարանայ առաջի քո ամենայն կենդանի։

Հալածեաց թշնամին զանձն իմ, խոնարհ արար յերկիր զկեանս իմ. նըստոյց զիս 'ի խաւարի որպէս մեռեալ յաւիտենից։

Զանձրացաւ յիս հոգի իմ, և սիրտ իմ խռովեցաւ յիս։

Յիշեցի զաւուրսն զառաջինս, խորհեցայ յամենայն 'ի գործս քո. յա-

բարձս ձեռաց քոց խորհեցայ և համբարձի առ քեզ զձեռս իմ։

Անձն իմ որպէս երկիր ծարաւի է առ քեզ, վաղվաղակի լուր ինձ տէր, զի նուազեաց յինէն հոգի իմ։

Մի դարձուցաներ զերեսս քո յինէն նմանեցիմ այնոցիկ՝ որ իջանեն 'ի գուբ։

Լսելի արա ինձ առաւօտու զողորմութիւնս քո, զի ես 'ի քեզ տէր յուսացայ։

Ցոյց ինձ ճանապարհ յոր գնացից. զի առ քեզ տէր համբարձի զանձն իմ։

Փրկեա զիս 'ի թշնամեաց իմոց տէր, զի զքեզ ապաւէն ինձ արարի։

Ուսո ինձ առնել զկամս քո զի դու ես Աստուած իմ։

Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ յերկիր ուղիղ։

Վասն անուան քո տէր կեցուսցես զիս, արդարութեամբ քով հանցես 'ի նեղութենէ զանձն իմ։

Ողորմութեամբ քով սատակեսցես զթշնամիս իմ. կորուսցես զամենայն նեղիչս անձին իմոյ, զի ես ծառայ քո եմ։

Փառք հօր, և այլն։

Աղօթք Մանուելի քազաւորին.

Տէր ամենակալ Աստուած Աբրահամու՝ Իսահակայ՝ Յակոբայ և զաւակի նոցա արդարոց. ամենակալ։

Որ արարեր զերկինս և զերկիր՝ և զամենայն զարդ նոցա. ամենակալ տէր թող զմեզս իմ։

Որ կատեցեր զծով բանիւ հրամանի քոյ փակեցեր զխորս, կնքեցեր ահաւոր և փառաւորեալ անուամբ քով սրբով. ամենակալ։

Որ ամենայն ինչ սարսէ՝ և դողայ յերեսաց ահի զօրութեան քոյ. ամենակալ։

Անբաւ է մեծվայելչութիւն փառաց սրբութեան քոյ, և սասանիկ է բարկութիւն սպառնալեաց քոց 'ի վերայ մեղաւորաց. անչափ և անքննին են ողորմութիւնք աւետեաց քոց. ամենակալ։

Դու տէր բարձրեալ՝ դթած, երկայնամիտ, բազումողորմ. և զղջանաս

'ի վերայ չարեաց մարդկան. ամենակալ:

Դու Աստուած ոչ երբեք ապաշխարութիւն վասն արդարոցն Աբրահամու՝ Իսահակայ՝ և Յակոբայ, որք ոչ մեղան քեզ. ամենակալ:

Այլ երբեք ապաշխարութիւն վասն իմ մեղաւորիս. զի մեղայ աւելի քան զաւազ ծովու, և բազմացան անօրէնութիւնք իմ. ամենակալ:

Զեմ արժանի հայել և տեսանել զբարձրութիւնս երկնից 'ի բազմութենէ անօրէնութեան իմոյ. ամենակալ:

Կորացեալ եմ ես 'ի բռնութենէ կապանաց երկաթից, և ոչ գոյ ինձ հանգիստ. ամենակալ:

Բարկացուցի զքեզ ամենայն, և չար առաջի քոյ արարի. կանգնեցի պատկեր՝ և բազմացուցի զցասումն քո. ամենակալ:

Եւ արդ տէր խոնարհեցուցանեմ զծունկս սրտի իմոյ, և հայցեմ 'ի քաղցրութենէ քումմէ. ամենակալ:

Մեղայ տէր մեղայ, և զանօրէնու-

թիւնս իմ ես ինձէն գիտեմ. ամենա-
կալ։

Աղաչեմ և խնդրեմ՝ի քէն, թող ինձ
ոէր, թող ինձ. և մի կորուսաներ զիս
ըստ անօրէնութեան իմոյ. ամենակալ։

Մի յաւիտեան բարկանար ինձ
ոէր, և մի յիշեր զչարիսն իմ, և մի
պարտաւորեր զիս ընդ ելեալս՝ի ներ-
քոյ երկրի ջարեօք. ամենակալ։

Զի դու Աստուած՝ Աստուած ա-
պաշխարողաց ես, և յիս ցոյց զբարե-
բարութիւնդ քո, զի անարժան եմ.
ամենակալ։

Կեցուսցես զիս ըստ բազում ողոր-
մութեան քում. և ես օրհնեցից զքեզ
զամենայն աւուրս կենաց իմոց. ամե-
նակալ։

Զքեզ ոէր օրհնեն ամենայն զուարթ-
թունք երկնից, և քո են փառք յա-
ւիտեանս. ամէն։

Փառք հօր և այլն։

Աղաչեմ և խնդրեմ՝ի քէն ոէր՝
թող ինձ զմեղս իմ։

Բազումողորմ ոէր, ողորմեաց ինձ։

Աստուած, քաւեա զիս զմեղուսդս։

Արարիչ իմ և յոյս Աստուած, գը-
թա յիս 'ի մեղուցեալ ծառայս, և ո-
ղորմեա ինձ բազմամեղիս։

Ամենօրհնեալ սրբուհի՝ և միշտ կոյս
Աստուածածին Մարիամ, բարեխօսեա
առ տէր վասն իմ մեղաւորիս։

Ամենայն սուրբք Աստուծոյ, բա-
րեխօսեցէք առ հայր յերկինս վասն
մեր մեղաւորացս։

Քրիստոս որդի Աստուծոյ անոխա-
կալ՝ ընկալ զաղաչանս մեր, զի 'ի քեզ
են ապաւինեալ անձինք մեր։

Յաղթող զօրութեամբ սուրբ և
կենդանարար և պատուական խաչիս
քով տէր՝ պահպանեա զմեզ։

Առաքեա տէր զհրեշտակ խաղա-
ղութեան քոյ, որ եկեալ պահեսցէ
զմեզ անխռովս 'ի տուէ և 'ի գիշերի։

Եւ մարգարէութեամբ քո յիշեա
զմեզ տէր, յիշեա զմեզ յորժամ դաս
արքայութեամբ քով, և ողորմեաց
մեզ։

Զարհուրեալ պողացաւ ամենամեղ
անձն. իմ յահեղ քոց պատասխանացդ

յաննեբելի տանջանացն։ Քանզի կամաւ մերձեցայ 'ի մեզս մեծամեծս, արդ կայ և ինձ աննեբելի պատուհասն։ Արդ անկեալ աղաչեմ փրկիչ և բարեբար, խնայեա յիս 'ի մեղուցեալս և ողորմեա ինձ բազմամեղիս։

Ամենակալ քաւեա զմեզս իմ, զի Աստուած ես ապաշխարողաց։ Եւ ըզհոգիդ սուրբ մի հաներ յինէն, զի Աստուած ես ապաշխարողաց։ Եւ փրկեա զիս յահագին հրոյն, զի Աստուած ես ապաշխարողաց։

Աստուածածին ապաւէն մեր և յոյս, բարեխօսեա առ որդիդ քո միածին, զի փրկեսցէ զմեզ 'ի հրոյն տանջանաց և պարգևեսցէ մեզ զերկնից արքայութիւնն։

Երգ պաղատանաց առ տէրն Աստուածածին.

Մայր սուրբ աքանչելի լուսոյն, որ զԱստուածն ամենայն յաւիտեանց յո-
րովայնի քումմ կրեցեր, և ցնծութիւն աշխարհի ծնար զԲանն Աստուած. ա-
ղաչեմք։ Մայր սուրբ բարեխօսեա։

Աղաչեա վասն մեր զառ 'ի քէն ըզ-
մարմնացեալն Աստուած, որ խոնարհ-
եցաւ 'ի հայրական ծոցոյ. էառ մարմին
ըստ մարդկային բնութեանն՝ առ-
նել խաղաղութիւն յերկինս և յերկրի.
ապա։

Աղաչեա Նէրել մեզ անտես առնել
զյանցանս մեր, և տալ օգնականութիւն
ընդդիմակաց լինել հակառակամարտից
'ի պատերազմի. ապաչեմք։

Աղաչեա. Զի լուցցեն պատերազ-
մունք, դադարեսցին յարձակմունք
թշնամեաց, տնկեսցի սէր և արդարու-
թիւն 'ի յերկրի. ապա։

Աղաչեա. Ազատեցուցանել յերկրի մերում զքաղցր բղխումն աղբերաց, զառատ պտղաբերութիւն բուսոց և տընկոց՝ առ 'ի զուարճալի լինել ամենայն հարկաւոր պէտոյից մերոց. աղա։

Աղաչեա. Զի միաբանեսցէ ղեկեղեցի իւր սուրբ. շինեալ 'ի վերայ հիմանն առաքելոց և մարգարէից. պահել անարատ մինչև յօր երևելոյ գալըստեանն իւրոյ. աղա։

Աղաչեա վասն մեր սրբուհի զմիածին քո զորդին. և վասն հոգւոցն հանգուցելոց՝ ընդունել յարքայութիւն երկնից, և տալ մասն և բաժին ընդ սուրբս ամենայն. աղա.

Յիշեա տէր և ողորմեա։

Եւ ևս առաւել զյորդորումն սիրոյ և զդործս բարեաց պարգևել մեզ խնդրեմք։

Տուր մեզ տէր Աստուած մեր։

Զանձինս մեր և զմիմեանս տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք։

Քեզ տեառնդ յանձն եղիցուք։

Ողորմեաց մեզ տէր Աստուած մեր՝

ըստ մեծի ողորմութեան քում. ասասցուք ամենեքեան միաբանութեամբ։

Տէր ողորմեա. տէր ողորմեա. մայր սուրբ բարեխօսեա առ տէր վասն մեր։

Սրբուհի Մարիամ, սաղմոր ոսկի և տապանակ կուսակրաթեաց. որ զ'ի վերուստ զհացն կենաց պարգևեցեր քաղցեալ բնութեանս. առ նա միշտ բարեխօսեա վասն քաւութեան մեղաց մերոց։

Ս. Գրիգորի Նարեկացւոյ աղօթք առ ամենասուրբ Տիրամայրն.

3.

Եւ արդ 'ի վերոյ այսքանեաց յուսահատութեանց և սխալուկս սրտաբեկութեանց, պակուցանողական սատակութեանց ատուածային բարկութեանց, ապդնապէտալ ոգւով թախծութեան խոպառ, ողաչեմ զքեզ սուրբ ատուածածին։ Հրեշտակ 'ի մարդկանէ. մարմնաւոր քերովբէ. երկնաւոր արքայուհի. անխառն երբեւ զօգ. մաքուր որպէս լոյս. անշաղախ

ըստ նմանութեան պատկերի արուեստ-
կին բարձրութեան. գերազանց քան ըզ-
բնակութիւն անկոխելին արքութեանց.
երանաւոր խոստմանն տեղի, եդեմ
շնչական. ծառ կենացն անմահից բացե-
ղէն արմատ պարուն ակեալ. 'ի բար-
ձրեալն հօրէ զօրացեալ և հովանացեալ,
հանգստեամբ հոգւոյն հանդերձեալ և
մաքրագործեալ. բնակութեամբ որդ-
ւոյն յարդարեալ և տաղաւարեալ:
Միածինն հօր՝ և քեզ անդրանիկ. որ-
դի քո ծննդեամբ՝ և տէր արարչու-
թեամբ: Ընդ անապատ մաքրութեանդ՝
և անբիծ բարի. ընդ անարատ արքու-
թեանդ՝ և խնամակալ բարեխոս. ընդ-
կալ զմաղթանս այսր աղերսանաց՝
քոյմ դաւանողիս, և մատո ընծայեա
ընդ սմին խառնեալ զբանն իմ նախնի՝
մեծիդ Ներսեղի 'ի քոյդ պաղատանս:
Հիւսեա միացո զմեզուցելոյս դառն
հեծութիւն ընդ քոյմդ երջանիկ և
խնկաւորեալ հայցուածոց՝ զոնդ
կենաց պտղոյն օրհնութեան. զի 'ի քէն
միշտ օգնեալ և բարեգործեալ, և 'ի
մաքրական քո ծնեալութիւնդ տպաւի-

նեալ և լուսաւորեալ, կենցից Քրիս-
տոսի որդւոյ քոյ և տեառն։ Օժան-
դակեա թեւոցդ աղօթիւք՝ խոստովա-
նեալ մայրդ կենդանեաց՝ և ելից իմ
յերկրէս հովուէ, առանց լլկանաց հե-
ատեալ 'ի կեանս օթեւանացդ պա-
տրաստութեան. զի թեթեւացի կատա-
րածն իմ ինձ՝ ծանրացելոյս անօրէ-
նութեամբ։ Արասցես ուն ինձ բեր-
կրութեան՝ զօրն իմ տագնապի՝ ոչ-
ջացուցիչ երկանցն Եւայի. բարեխո-
սեա խնդրեա ապաչէա, զի ըստ անձա-
ռելի մաքրութեանդ՝ և ահա զբանիդ
հաւատամ զընդունելութիւն։ Ար-
տասուօք օգնեա վառանդեցելոյս՝ գո-
վեալդ 'ի կանայս. ծունր խոնարհեցո
առ իմ հաշտութիւն՝ ծնողդ Աստու-
ծոյ. ընդ իմեամ թշուառիս հոգա՝
խորան բարձրելոյն. ձեռն տուր ան-
կելոյս՝ տաճար երկնային. փառաւո-
րեա զորդիդ քո 'ի քեզ ատուածա-
օրէն ինձ հրաշագործել քաւութիւն
և ողորմութիւն՝ աղախին Աստուծոյ
և մայր։ Բարձրացի պատիւ քո ինև,
և ցուցցի փրկութիւն իմ՝ քեզ։ Եթէ

զիս գացեա՝ ակրամայը, թէ ինձ ողորմեացիս՝ սրբուհի, թէ զկորուսեալս շահեացիս՝ անարատ, թէ զհարթուցեալս յանձանձեացես՝ երջանիկ, թէ զամաչեցեալս յառաջ մատուցես՝ բարեշնորհ, թէ յուսահատելոյս ինձ միջնորդեացես՝ միշտ սուրբ կոյս, թէ զմերժեալս ընտանեցուցես՝ մեծարեալդ Աստուծոյ, թէ յիս ցուցցես զգթածութիւն՝ լուծիչդ անիծից, թէ զծփեալս հաստատեացես՝ հանդիստ, թէ 'ի խռովութեանցս յուզմանց փոխեացես զիս՝ խաղաղարար, թէ վրիպելոյս ինձ հնարաւորեացես՝ դարձեալ. թէ վասն իմ մացես 'ի հանդէս՝ մահու նահանջիչ, թէ զդառնութիւնս իմ անուշեացես՝ քաղցրութիւն, թէ զբաժանմանն իմ խորոց քակտեացես՝ հաշտութիւն, թէ զանմաքրութիւնս իմ բարձցես՝ եղծման ընդոանիչ, թէ զմտանեալս մահու փրկեացես՝ կենդանի լոյս, թէ զլալեացս ձայն հատցես՝ բերկրութիւն. թէ զկորտակեալս կազդուրեացես՝ դեղ կենաց, թէ 'ի կործանեալս յիս ակնարկեացես՝ հոգե-

լից, թէ ողորմութեամբ ինձ պատա-
հեսցես՝ կտակ նուիրեալ։ Օրհնեալդ-
միայն 'ի շրթունս անբիծս լեզուաց
երջանկաց. ահա կաթիլ մի կաթին
քումդ կուսութեան յանձն իմ ան-
ձրևեալ կենաց ինձ զօրէ, մայրդ բար-
ձրելոյ տեառն Յիսուսի արարչին երկնի.
և բնաւին երկրի, զոր անճառապէս
ծնաբ բովանդակ մարմնովն և համայն
աստուածութեամբն, որ փառաւո-
րեալն է ընդ հօր և հոգւոյն սրբոյ էու-
թեամբ, և անքննութեամբ մերոյին
բնութեամբս միացելով, ամենայն և
յամենայնում, մի յերրորդութենէն.
նմա փառք յաւիտենից յաւիտեանս.
ամէն։

Ներգործութիւն հաւատոյ.

Հաստատուն հաւատքով կը հաւա-
տամ, ինչպէս որ յայտնած է Աս-
տուած ուղղափառ եկեղեցւոյ. թէ
Աստուած մէկ է, անձինքը երեք, հա-
ւասարք և զանազանք, որ Հայր և Որ-
դի և Սուրբ Հոգի կը կոչուին. թէ Որ-

գին՝ մարմնացաւ, մարդացաւ Հոգւով սրբով՝ ի Մարիամայ կուսէն, մեզի համար խաչին վրայ մեռաւ, յարեաւ, երկինք վերացաւ, և պիտի գայ աշխարհքիս եռքը կենդանիներն ու մեռեալները դատելու. արդարներուն յաւիտենական արքայութիւն տալով և մեղաւորաց դժոխք. կը հաւատամ դարձեալ ան ամէն բաներուն որ կը հաւատայ ու կը սովորեցնէ սուրբ եկեղեցին։

Ներգործութիւն յոչսոյ.

Ո՛վ Աստուած իմ, որովհետև ամենակարող ես և ամենաբարի և ամենագութ, Յիսուսի փրկչին մերոյ չարչարանաց և մահուան արդեամբք՝ կը յուսամ որ կը պարգևես ինձի յաւիտենական կեանքը, զոր խոստացար բարի քրիստոնէից, ինչպէս որ քու օգնութեամբդ ես ալ կ՚առաջադրեմ ըլլալ։

Ներգործութիւն սիրոյ.

Ո՛վ Աստուած իմ, որովհետև գեղ-
ցագոյն բարի ես, ամենայն արտովս կը
սիրեմ զքեզ, ամէն բանէ վեր. և ա-
ւելի յանձն կ՚առնեմ յամենայնէ զբը-
կուիլ՝ քան թէ զքեզ դառնացընել,
քու սիրոյդ համար անձիս պէս կը սի-
րեմ նաև զուրիշներն ալ։

Ներգործութիւն զղջման.

Ո՛վ Աստուած իմ, ամենաբարի ըլ-
լալուդ, և ամէն բանէ աւելի զքեզ
սիրելուս, կը զղջամ ու կը ցաւիմ ճըշ-
մարիտ արտով զքեզ դառնացընելուս,
և քու առաջդ շնորհքովդ հաստատա-
պէս կ՚առաջադրեմ մէյմ՚ ալ չմեղան-
չելու և ամենայն մեղաց առիթներէ փոխ-
ուիլ։ Հայր մեր. Ողջոյն քեզ։

Իղձք գաւակցուրիւն հօրանց գաւոց ուղղիք Աստուածածնին.

Ի ԿԻՐԱԿԷԻ

Մայր գաւագին,
Հար ըզսիրտ իմ
Ցաւով քոյին,
Զոր կրրեցեր
Ի տաճարին,
Ցորժամ գուժեաց
Քեզ Ծերունին
Զանցըս սրրոյն
Ընդ քոում անձին։

ՑԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

Մայր գաւագին,
Հար ըզսիրտ իմ
Ցաւով քոյին,
Զոր յԵգիպտոս
Ի փախըստին
Կրեցեր յածել
Զաստուածորդին։

ՑԵՐԵՔՇԱՌԱԹԻ

Մայր ցաւագին.
Հար ըզսիրտ իմ
Ցաւով քոյին,
Զոր առ 'ի գիւտ
Կորուսելոյ
Կրեցեր որդւոյդ։

Ի ԶՈՐԵՔՇԱՌԱԹԻ

Մայր ցաւագին,
Հար ըզսիրտ իմ
Ցաւով քոյին,
Զոր 'ի տեսիլ
Որդւոյդ կրեցեր,
Մինչ խաչ 'ի յուսա
Բարձեալ տանէր։

Ի ՀԻՆԳՇԱՌԱԹԻ

Մայր ցաւագին,
Հար ըզսիրտ իմ
Ցաւով քոյին,

Զոր 'ի տեսիլ
Որդւոյդ կրեցեր
Կալով խաչին
Քո առընթեր։

ՅՈՒՐԲԱԹՈՒ

Մայր ցաւագին,
Հար ըզսիրտ իմ
Ցաւով քոյին,
Զոր կրեցեր
Խոցմամբ կողին,
Եւ ըզմեռեալ
Որդւոյդ մարմին
Մինչ 'ի խաչէն
Վայր իջուցին,

Ի ՇԱԲԱԹՈՒ

Մայր ցաւագին
Հար ըզսիրտ իմ
Ցաւով քոյին,
Զոր 'ի թաղման
Քո միածնին
Ցիշատակաւ
Կրեցեր նորին։

Պատրաստութիւն առ սուրբ Ծնունդն Քրիստոսի.

Օրհնեալ է ժամն այն, ում կոյս Մարիամ, յորում եղեր մայր Աստուծոյ։
Ողջոյն քեզ, և այլն։

Տասնիցս կրկնեալ.

Օրհնեալ է ժամն այն ում կոյս Մարիամ, յորում ծնար զՈրդին Աստուծոյ։
Ողջոյն քեզ, և այլն։
Օրհնեալ է առաջին շնորհն կաթին ում կոյս Մարիամ, զոր դիեցաւ 'ի ըստեւանց քոց որդին Աստուծոյ։
Ողջոյն քեզ, և այլն։
Օրհնեալ է առաջին համբոյրն, ում կոյս Մարիամ, զոր եառեր աստուածային շրթանց որդւոյն Աստուծոյ։
Ողջոյն քեզ, և այլն։

Աղօթք երկոյի ձրագալուցին 'ի շրու�մն հազար ողջունիցն.

Ո՛վ հզօր գշխոյ հրեշտակաց, սըրբութիւն և մայր Քրիստոսի, գթած և ողորմած տիրուհի. անարժան ծառայս (այս անուն) խոնարհեալ յամենասուրբ ոտս քո՝ աղաչեմ զքեզ, ընկալ յինէն 'ի տառապեալ և 'ի մեղուցեալ ծառայէ քումմէ զՀնգեսին զուրախական խորհուրդս սուրբ վարդապետին քո, և զհազար ողջոյնսն՝ հանդերձ օրհնութեամբքն, զորս մատուցի անարժանապէս քում մեծութեանդ։ Եւ այժմ աղաչեմ քեզ, տիրամայր և կոյս, ընկալ վասն իմ 'ի նորածին որդւոյ քումմէ շնորհս փոխանակ հազարացն, զի 'ի կենդանութեան զղջացեալ 'ի բոլոր սրտէ, և 'ի մահու հասից անվտանգ 'ի կեանսն յաւիտենից։

ԳՈՎԱՍԱՆՔ

Աստուածածնին.

Տէր ողորմեա :
Քրիստոս ողորմեա :
Տէր ողորմեա :
Քրիստոս ողորմեա :
Քրիստոս ընկալ զաղաղատանս մեր :
Հայր երկնաւոր Աստուած :
Որդի փրկիչ աշխարհի Աստուած :
Հոգի սուրբ աստուած Ճշմարիտ :
Սուրբ Երրորդութիւն և միաստուածութիւն :
Սրբուհի Մարիամ :
Սուրբ աստուածածին :
Սուրբ կոյս կուսանաց :
Մայր Քրիստոսի :
Մայր շնորհաց լի :
Մայր սրբութեան :
Մայր ողջախոհութեան :
Մայր անհարանացեալ :
Մայր անբիծ :
Մայր ցանկալի :
Մայր հիանալի :
Մայր ստեղծողին :

բարեխօսեա վասն մեր : ողորմեա մեզ :

Մայր փրկչին։
Կոյս ամենաղգաստ։
Կոյս պատուական։
Կոյս հռչակելի։
Կոյս կարող։
Կոյս գթած։
Կոյս հաւատարիմ։
Հայելի արդարութեան։
Անթառամ խմաստութեան։
Պատճառ ցնծութեան։
Անօթ հոգւոյն սրբոյ։
Անօթ պատուական։
Անօթ ջերմեռանդութեան։
Վարդ խմանալի։
Աշտարակ դաւթեան։
Աշտարակ փղոսկրեայ։
Ոսկեղէն տաճար։
Տապանակ ուխտի։
Դուռն երկնից։
Արուսեակ առաւօտեան։
Բժիշկ հիւանդաց։
Ապաւէն մեղաւորաց։
Մխիթարիչ սգաւորաց։
Քրիստոնէից օգնական։
Տիրուհի հրեշտակաց։
Տիրուհի նահատակաց։
Տիրուհի մարգարէից։
Տիրուհի առաքելոց։
Տիրուհի մարտիրոսաց։
Տիրուհի վկայից։

բարեխօսեա վասն մեր։

Տիրուհի կուսանաց։
Տիրուհի ամենայն սրբոց։
Տիրուհի անարատ յղացեալ։
Պահպանիչ որդեգրաց։
Գառն Աստուծոյ, որ բառնաս զմեղս աշխարհի։
Քաւեա տէր զյանցանս մեր։
Գառն Աստուծոյ, որ բառնաս։
Լուր մեզ տէր։
Գառն Աստուծոյ, որ բառնաս.
Ողորմեա մեզ։
Քրիստոս լուր մեզ։
Լուր մեզ հանապազ զքեզ աղաչեմք։

Աղօթք.

Տէր Աստուած մեր, որ անճառելի ողորմութեամբ քով էղեր մարդ, և որդի մարդոյ լինել հաճեցար, և առ 'ի կուսէն ծննդեամբ անժամանակ ծնունդդ Հօր 'ի յերկինս՝ ընտրեցեր քեզ մայր 'ի յերկրի, և այժմ աղաչեմք, արա զմեզ արժանի ջերմեռանդն աղօթիւք փառաւորել զանուն նորա, և հրաշափառ մայրութեան նորա լինել բարեբանիչս և զգեղեցիկն փառս նորա մեծացուցանել, որ ըզ-

քեզ Հոգւով սրբով յղացաւ, և կուսութեամբ ծնաւ, որում հնազանդեղեր Թագաւորդ յաւիտենից, տէր մեր Յիսուս Քրիստոս. որ ես օրհնեալ ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյն յաւիտեան. ամէն:

ՑՈՒՑԱԿ

Հարկաւորութիւն աղօթից 5
Աղօթք 'ի յառնելն յանկողնոյ 7
Աղօթք առաւօտեան 8
Երեկոյեան աղօթք 16
Աղօթք վասն աւուրց եօթնեկի 23
Պատրաստութիւն խոստովանութեան . . 37
Աղօթք զղջման և առաջադրութեան . . 64
Պատրաստութիւն առ սուրբ խորհուրդ հաղորդութեան, և շնորհակալութիւն . 76
Աղօթք զկնի հաղորդութեան 86
Աղօթք զկնի հաղորդութեան առ սուրբ կոյս Աստուածածին 93
Խօսակցութիւն Քրիստոսի ընդ հոգւոյ՝ զկնի հաղորդութեան 97
Աղօթք 'ի ժամ պատարագի 141
Մոտաճութիւնք 'ի խորհուրդ պատարագին 144
Ի տօնի ծննդեան Քրիստոսի 185
Ի տօնի անուանադրութեան Յիսուսի . . 189
Ի տօնի յայտնութեան 190
Ի տօնի մկրտութեան 193
Ի տօնի տեառն ընդ առաջին 196

Կրթութիւն աղօթից 'ի մեծ պահս . . . 199
Աղօթք վասն առաջին շաբաթուն մեծ պահոց 202
Աղօթք վասն երկրորդ շաբաթուն . . . 212
Աղօթք վասն երրորդ շաբաթուն 222
Աղօթք վասն չորրորդ շաբաթուն . . . 234
Աղօթք վասն հինգերորդ շաբաթուն . . 255
Աղօթք վասն վեցերորդ շաբաթուն . . . 271
Աղօթք վասն աւագ շաբաթուն 289
Ի տօնի զատկին 314
Յերկրորդ աւուր 318
Յերրորդ աւուր 319
Ի տօնի աւետման 323
Ի տօնի Համբարձման 327
Ի տօնի Հոգեգալստեան 331
Յերկրորդ աւուր 333
Յերրորդ աւուր 335
Ի տօնի վարդավառին 336
Յերկրորդ աւուր 338
Ի տօնի վերափոխման 340
Յերկրորդ աւուր 342
Ի տօնի Ծննդեան սուրբ Աստուածածնի . 345
Ի տօնի խաչին 348
Յերկրորդ աւուր 350
Ի տօնի ընծայման 352
Ի տօնի անարատ յղութեան 354
Ի տօնի Ծննդեան Յովհաննու կարապետի 357
Յայլում տօնի նորին 360
Ի տօնի սրբոյն Յովսեփայ Աստուածահօր 362

Ի ծննի սրբոյն Գրիգորի Լուսաւորչի . . 366
Յայլում ծննի նորին 368
Ի ծննի սրբոյն Յակոբայ Մծբնայ Հայրապետի 370
Ի ծննի սրբոյն Անտոնի անապատականի 373
Ի ծննի սրբոց Հռիփսիմեանց և Գայիանեանց 375
Աղօթք առ պաշտպան սուրբ սքանչելագործ 377
Աղօթք առ պահապան հրեշտակ 381
Աղօթք պատրաստութեան մահուան . . 384
Աղօթք Յիսուսի 'ի վերջին կռակի իւրում, 'ի ժամու մահուան վասն ամենայն քրիստոնէից 406
Աղօթք առ սուրբ Աստուածածին . . . 411
Աղօթք վասն ննջեցելոց 415
Աղօթք առ Տօթն խնդութիւնս սուրբ Աստուածածնին 429
Աղօթք առ Տօթն վէրս խոցուածոց կուսին Մարիամու 431
Աղօթք առ Տօթն բանս զոր ասաց Փրկիչն 'ի խաչին 451
Աղօթք 'ի սաղմոսէ 'ի պէսպէս դիպուածս 469
Ի ժամանակի հիւանդութեան 470
Ի նեղին 'ի թշնամեաց մարմնոյ և հոգւոյ 478
Ի խնդրելն ինչ 'ի տէրանէ 487
Վասն ապաւինելոյ յԱստուած 490
Ի ժամանակի նեղութեան 497

*

Ի նեղութեան աղքատութեան մարմնոյ և հոգւոյ 504
Յորժամ հոգին է 'ի յուսահատութեան 517
Յորժամ հոգին կայ 'ի փորձութեան . . 524
Յորժամ հոգին կայ 'ի վտանգի մեղաց . . 527
Ի խնդրել օգնութիւն յԱստուծոյ . . . 530
Յորժամ հոգին է 'ի տրտմութեան . . . 535
Իղձ և փափագ առ արքայութիւն երկնից 'ի սաղմոսէ 538
Աղօթք իւրաքանչիւր անձին հաւատացելոյ 'ի Քրիստոս. — Ներսէս Շնորհալի 545
Աղօթք ապաշխարութեան 553
Աղօթք Մանասէի թագաւորի 567
Երգ պաղատանաց առ սուրբ Աստուածածնին 572
Աղօթք առ ամենասուրբ Տիրամայրն. — Գրիգոր Նարեկացի 574
Ներգործութիւն հաւատոյ 578
Ներգործութիւն յուսոյ 579
Ներգործութիւն զղջման 580
Իղձք ցաւակցութեան եօթանց ցաւոց սուրբ Աստուածածնին 581
Պատրաստութիւն առ սուրբ ծնունդն Քրիստոսի 584
Աղօթք երեկոյի ճրագալուցին 'ի լրումն հազար ոգեւունիցն 585
Գովասանք Աստուածածնին 586

40

40